ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԸ XVII-XIX դդ.



ԵՐԵՎԱՆ 2007

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРТАК МАГАЛЯН

АРЦАХСКИЕ МЕЛИКСТВА И МЕЛИКСКИЕ ДОМА В XVII-XIX ВВ.

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԸ XVII-XIX ԴԴ.

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2007

ՀՏԴ 941 (479.2Հ)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 200

*Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը*

*Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Պ. Չոբանյան
Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Լ. Դանիելյան,
պատմական գիտությունների թեկնածու Ֆ. Մայիլյան*

*Գիրքը տպագրվել է Կուսապատի Աթաբեկյանների
մելիքական տոհմի շառավիղ Հրաչիկ Աթաբեկյանի
դրամական մասնակի աջակցությամբ*

Մաղալյան Ա. Վ.
Մ 200 Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ. -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 327 էջ + 2 մամուլ ներդիր:

*Մենագրությունը նվիրված է հայոց պատմության կարևորա-
գույն շրջափուլերից մեկի՝ Արցախի մելիքությունների պատմութ-
յանը: Աշխատության մեջ արխիվային նորահայտ նյութերի, վիմա-
գրերի և պատմագիտական գրականության հիման վրա քննարկված
են Արցախի մելիքների իրավասությունների և պարտականություն-
ների հետ կապված հարցերը, ինչպես նաև ներկայացված է այնտեղ
իշխող մելիքական տների տոհմաբանությունը: Գրքում ցույց է
տրված հայոց իշխանության շարունակականությունը Արցախում՝
ընդհուպ մինչև այդ երկրամասի միավորումը Ռուսաստանին:*

*Աշխատության հավելվածում գետեղված 50 փաստաթղթերը,
որոնց մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ, նոր լույս են
սփռում Արցախի մելիքությունների պատմության մի շարք հիմնա-
հարցերի վրա:*

*Գիրքը նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթեր-
ցող լայն հասարակայնության համար:*

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8080-0714-7
© Մաղալյան Ա. Վ.
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Սույն ուսումնասիրությունը նվիրված է Արցախի մելի-
քությունների ավելի քան երկդարյա պատմաշրջանին: Այդ
մելիքությունների պատմությունը հայոց պատմության
կարևորագույն օղակներից է: Թեև նախախորհրդային և
խորհրդային շրջանի հայ հեղինակների կողմից գրվել են Ար-
ցախի ուշ միջնադարյան շրջանի պատմությանը նվիրված մի
շարք աշխատություններ, այնուհանդերձ, կարծում ենք, որ
Արցախի մելիքությունների պատմությունը դեռևս բավարար
չափով լուսաբանված չէ, և այդ իշխանությունների պատ-
մության շատ հարցեր կարիք ունեն նորովի լուսաբանության:
Մասնավորապես, նման հարցերից է Արցախի մելիքների իրա-
կանացրած գործառույթների շրջանակի հանգամանալից
քննությունը: Առ՝այսօր հավուր պատշաճի ուսումնասիրված
չէ նաև Արցախի մելիքական տների տոհմաբանությունը: Հենց
հարցերի այդ շրջանակի քննությանն էլ նվիրված է սույն աշ-
խատությունը: Ուսումնասիրության արդիականությունը պայ-
մանավորված է նաև ադրբեջանցի պատմաբանների կողմից
Արցախի պատմության խեղաթյուրված ներկայացմամբ:*

*Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու
ընդարձակ գլուխներից, վերջաբանից և հավելվածից: Աշխա-
տության առաջին գլխում քննության ենք ենթարկել Արցախի
մելիքների իրավասությունների և պարտականությունների
հետ կապված զանազան հարցեր. անդրադարձել ենք մելիք-
ների իրականացրած դատավարությանը և հարկային պարտա-
վորություններին: Մի առանձին ենթագլուխ էլ նվիրված է Ար-
ցախի մելիքների՝ իրենց գավառների հոգևոր գործերին, մաս-
նավորապես՝ պաշտոնավարող հոգևորականների նշանակմանը
և եկեղեցաշինությանը ունեցած մասնակցությանը:*

*Աշխատության երկրորդ գլխում ներկայացրել ենք Արցա-
խի մելիքությունները և դրանցում իշխող մելիքական տների*

տոհմաբանությունը: Գիրքը կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր մելիքական տան տոհմաբանությանը զուգահեռ, հիմնականում՝ նորահայտ արխիվային նյութերի հիման վրա, ներկայացվի նաև տվյալ մելիքության պատմությունը: Այստեղ հստակորեն ցույց է տրված հայոց իշխանության շարունակականությունը Արցախում՝ ընդհուպ մինչև այդ երկրամասի միավորումը Ռուսաստանին:

Առհասարակ, համոզված ենք, որ Արցախի մելիքությունների անցած ուղին խորապես ըմբռնելու համար խիստ կարևոր նշանակություն ունի մելիքական տների տոհմաբանության ուսումնասիրությունը, ինչը նաև մեզ հնարավորություն է տվել խուսափել նախորդ հեղինակների թույլ տված մի շարք սխալներից: Այստեղ մելիքական տների տոհմաբանությանը նվիրված ենթագլուխներին կցել ենք նաև այդ տների տոհմածառերը, որոնք կազմել ենք տոհմածառերի կառուցման միջազգային ստանդարտ նիշերով:

Եվ, վերջապես, մեր կողմից հայտնաբերված և օգտագործված փաստաթղթերի մի մասը, որոնք վերաբերվում են Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարյանների տոհմի՝ XIX դ. առաջին երեսնամյակի գործունեությանը, զետեղել ենք այս աշխատության հավելվածում: Այդ վավերագրերը հավաստի և արժեքավոր բազմապիսի տեղեկություններ են պարունակում Անդրկովկասում ռուսական տիրապետության հաստատման շրջանում ապրած Մելիք-Շահնազարյանների տոհմի ներկայացուցիչների, ինչպես նաև նոր ժամանակների թելադրած պայմաններին հարմարվելու նրանց ջանքերի մասին:

Սույն ուսումնասիրությունը շարադրել ենք մեծաթիվ ձեռագրերի, արխիվային վավերագրերի, XVII-XVIII դարերի հայ պատմագիրների և նախախորհրդային ու խորհրդային շրջանի պատմաբանների աշխատությունների հիման վրա:

XVII դարի հայ պատմագրության խոշորագույն ներկայացուցիչը Առաքել Դավրիժեցին է: Նա իր «Պատմությունը»

սկսել է շարադրել 1651-ին և, որոշ ընդմիջումներով շարունակելով, ավարտին հասցրել 1662 թ.: Դավրիժեցու երկն ընդգրկում է հայ ժողովրդի 60 տարվա՝ 1602-1662 թթ. պատմությունը: Նրա աշխատությունը արժեքավոր սկզբնաղբյուր է նաև Իրանի[1], Թուրքիայի և Վրաստանի պատմության համար: Անշուշտ, իր ժամանակների կտրվածքով երկի արդիականությունն էլ պատճառ է դարձել, որ այն հրատարակվել է տակավին 1669 թ. Ամստերդամում, հեղինակի կենդանության օրոք, դառնալով տպագրության արժանացած առաջին պատմագրական աշխատությունը հայ իրականության մեջ:

Մեզ համար հատկապես կարևոր են թուրք-պարսկական պատերազմների, Շահ-Աբբասի հրամանով 1604 թ. հայոց գերեվարության և հայ ազնվականության բեկորների մասին Դավրիժեցու հաղորդած տեղեկությունները: Նա ուշագրավ տվյալներ է հաղորդում իրենց օսմանյան բռնատիրությունից փրկելու խնդրանքով Շահ-Աբբասի մոտ գնացած հայ իշխանավորների մասին, որոնք էին «յաշխարհէն Աղուանից և յազգէն Հայոց» «Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՈսկանապատ գեղջէ. Օղլան Քէշիշն և իւր եղբայր Ղալաբէկն ի Հաթերք գեղջէ: Ջալալ բէկն իւր եղբօր որդւովքն ի Խաչենայ: Մելիք Սուջումն ի Դիզակայ. Մելիք Փաշիկն ի Քօչիզ գեղջէ. Մելիք Բաբէն ի Բրխու գեղջէ. Մելիքսէթ եպիսկոպոսն ի Վերին Ջակամայ ի Մելիքզատայ գեղջէ. Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանածախ գեղջէ»[2]: Դավրիժեցին մեծ հիացմունքով է խոսում նաև Գեղարքունիքի Մելիք Շահնազարի մասին, որն էր «յազգէն Հայոց և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր»[3]: Այս իշխանավորներից շատերի անունները այսօր հայտնի են շնորհիվ Դավրիժեցու աշխատու-

[1] Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978:
[2] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 16:
[3] Նույն տեղում, էջ 96:

թյան, բացի այդ, վերոբերյալ տողերը ցույց են տալիս, որ չնայած ասպատակիչների անընդմեջ հարվածներին, հայ ազնվականության չառավիղները շարունակում էին պաշտպանել իրենց գոյությունը:

Դավրիժեցու գրքում տեղ են գտել նաև այլ հեղինակներին պատկանող գլուխներ: Մասնավորապես՝ նրա «Պատմութեան» մեջ, որպես առանձին գլուխ, մուծված է Հովհաննեսիկ Ծարեցու ժամանակագրությունը, որի բնագիրը ներկայումս պահվում է Մատենադարանի թիվ 2776 ձեռագրում[4]: Այս երկն առանձին, որպես ինքնուրույն ստեղծագործություն, հրատարակվել է 1859 թ. «Ճռաքաղ» հանդեսում[5], այնուհետև՝ Վ.Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրությունների» Բ հատորում[6]: Հովհաննեսիկ Ծարեցու ժամանակագրությունը սկսվում է 1572-ից և շարունակվում մինչև 1600 թվականը: Այստեղ ուշագրավ տեղեկություններ կան օսմանյան Մուսթաֆա Լալա փաշայի 1578 թ. դեպի Անդրկովկաս կատարած ավերիչ արշավանքի և Արցախում 1579-1580 թթ. տեղի ունեցած սարսափելի սովի ու մահտարաժամի մասին: Այս երկը կարևոր է այն առումով, որ հեղինակն ականատես է եղել իր նկարագրած դեպքերի մեծ մասին:

XVII դարի մյուս սկզբնաղբյուրը, որից օգտվել ենք այս աշխատությունը գրելիս, վաճառական Զաքարիա Ագուլեցու օրագրությունն է[7], որն ընդգրկում է 1647 թ. մարտի 5-ից մինչև 1681 թ. հոկտեմբերի 11-ը հեղինակի կյանքում տեղի ունեցած հիշարժան դեպքերի համառոտ շարադրությունը: Նրա օրագրությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում

[4] Մատենադարան, ձեռ. 2776, էջ 266ա-271ա:
[5] Յոհաննիսիկ վարդապետի համառօտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան, «Ճռաքաղ», Մոսքուա, 1859, տետր Գ, էջ 69-76, տետր Դ, էջ 105-113:
[6] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 235-255:
[7] **Զաքարիա Ագուլեցի**, Օրագրություն, Ե., 1938:

բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի մասին[8], և ինչպես իրավացիորեն նկատել է Լ. Բաբայանը, «մեր միջնադարյան ոչ մի պատմագիր ժողովրդի տնտեսական կյանքը, շահագործումը, կեղեքումն ու կողոպուտը դրամական արժեքներով ու չափերով չի տվել, ինչպես դա արել է Ագուլեցին»[9]:

Անդրկովկասի XVIII դարի առաջին քառորդի պատմության համար չափազանց կարևոր սկզբնաղբյուր է Գանձասարի կաթողիկոս և հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» աշխատությունը[10]: Թեև այս երկից պահպանվել է միայն մի պատառիկ՝ 1699-ից մինչև 1723 թ. տեղի ունեցած կարևոր անցքերի պատմությունը, այնուհանդերձ այդ բաժինը հարուստ նյութ է տալիս պարսից շահ Սուլթան Հուսեյնի հրամանով 1699-1702 թթ. անցկացված աշխարհագիր-մարդահամարի, Արցախում 1702 թ. Ատրպատականի կուսակալ Միրզա Թահիրի իրականացրած հարկահավաքման և լեզգիների՝ 1722 թ. Արցախ կատարած ավերիչ արշավանքի մասին: Այստեղ մեզ համար կարևոր է նրա հաղորդումը Վարանդայի տիրակալ Մելիք-Բաղիր Մելիք-Շահնազարյանի մասին, որին հաջողվել է մեծամեծ նվերների գնով իր հպատակներին փրկել լեզգիների գերեվարությունից: Արժեքավոր են նաև վրաց Վախթանգ VI թագավորի՝ Գանձակ գալու և այնտեղ հայ-վրացական զինուժի հանդիպման մասին հեղինակի հաղորդած տեղեկությունները: Այստեղից իմանում ենք, որ այդ ժամանակ Արցախի մելիքները միասնաբար կարող էին դուրս բերել 10-12 հազարանոց բանակ:

[8] Այս երկի քննությունը տես **Иоаннисян А.,** Дела и дни Захария Акулисского, "Историк-марксист", 1937, N 1, с. 139-152, Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Ե., 1984, էջ 162-168:
[9] Բաբայան Լ., նշվ. աշխ., էջ 165:
[10] Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868:

Եսայի Հասան-Ջալալյանի պատմությունը չափազանց կարևոր է այն առումով, որ հեղինակն իր նկարագրած իրադարձությունների մեծ մասի ականատեսը կամ անմիջական մասնակիցն է եղել: Ցավոք, նրա պատմության մեզ հասած հատվածն ընդհատվում է 1723 թվականով, այլապես մենք կունենայինք XVIII դարի 20-ական թվականների հայոց ազատամարտի ամբողջական տարեգրությունը:

Հաջորդ տասնամյակի իրադարձություններին անդրադառնալիս օգտվել ենք Աբրահամ Կրետացու, Հակոբ Շամախեցու և Քյուրչուք Արութինի աշխատություններից: Այդ երկերի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին պարսից» աշխատությունը[11], որն ընդգրկում է 1734-1736 թթ. տեղի ունեցած անցքերի պատմությունը: Կրետացին նկարագրում է Թահմազ Ղուլի խանի (ապագա Նադիր շահի) արշավանքներն Անդրկովկասում, իր հանդիպումները նրա հետ և Նադիրի թագադրությունը Մուղանի դաշտում: Այս պատմությունից ենք տեղեկանում Նադիր շահի թագադրման հանդեսին Դիզակի Մելիք-Եգանի մասնակցության մասին:

Հակոբ Շամախեցու երկից[12] քաղել ենք տեղեկություններ Նադիրի հզորացման, նրա կողմից Իրանի շահ Թահմասպ Բ-ին 1732 թ. գահընկեց անելու և փոխարենը շահի մանկահասակ որդուն՝ Աբասին, գահ բարձրացնելու վերաբերյալ: Այդ քայլով Նադիրը դառնում էր Իրանի փաստացի տիրակալը:

[11] Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին պարսից, Վաղարշապատ, 1870: Այս երկի վերջին հրատարակությունը տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուս. թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Ղորղանյանի, Ե., 1973:
[12] Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Ե., 1940, նույնի՝ Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.

Նադիր շահի գործունեությանը նվիրված հայկական մյուս սկզբնաղբյուրը թամբուրահար Քյուչուք Արութինի «Պատմութիւն Թահմազ Ղուլու» հայատառ թուրքերեն հուշագրությունն է, որի տեքստը այժմ պահվում է Մատենադարանի թիվ 2722 ձեռագրում[13]: Այս ծավալով ոչ մեծստեղծագործությունը առաջին անգամ հրատարակվել է թուրքերենով 1800 թ. Վենետիկում, այնուհետև՝ թարգմանվել և հրատարակվել ֆրանսերեն[14]: Այս երկի հայերեն թարգմանությունը լույս է տեսել 1941 թ.[15]: Սույն հուշագրության հեղինակ Քյուչուք Արութինը թուրքական դեսպանության կազմում Պոլսից ուղևորվել է Իրան, մասնակցել Նադիր շահի հնդկական արշավանքին և թողել այդ արշավանքի հավաստի նկարագրությունը: Հեղինակը չափազանց պատկերավոր ներկայացրել է նաև «երկրորդ Ալեքսանդր» հորջորջված Նադիրի մարդկային հատկանիշները՝ անսահման դաժանությունը՝ նույնիսկ իր հարազատների նկատմամբ, խարդախությունը, ագահությունը և նախանձը:

Երկի կարևոր հատվածներից են նաև Մուղանում Նադիրի գահ բարձրանալու և նրա հրամանով գահընկեց արված շահ Թահմասպ Բ-ի սպանությանը նվիրված գլուխները, որոնք հեղինակը շարադրել է այդ դեպքերին քաջատեղյակ մարդկանց պատմածների հիման վրա: Առհասարակ, այս երկը կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Նադիրի ժամանակաշրջանի Իրանի, այլև Աֆղանստանի և Հնդկաստանի պատմության համար:

XVIII դ. կեսերի սկզբնաղբյուրներից կարևոր նշանակություն ունի Մատենադարանի թիվ 7816 ձեռագրի վերջում

[13] Մատենադարան, ձեռ. 2722, էջ 34-49:
[14] **Aroitine Tambouri,** Journal sur la Conquete de l'Inde par Nadir Schah traduit du tare par V. Artin Pacha. "Bulletin de l'Institut Egyptien", V, vol. VIII, Cairo, 1914, pp. 168-232.
[15] Քյուչուք Արութին, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», 1941, թիվ 1, էջ 101-128:

տեղ գտած փոքրածավալ ժամանակագրությունը[16], որի վկայությունների մեծ մասը վերաբերում են 1734-1758 թթ. Արցախում տեղի ունեցած հիշարժան իրադարձություններին: Ժամանակագրությունն ավարտվում է 1758 թվականով, ուստի այն, ամենայն հավանականությամբ, գրվել է 1750-ականների վերջերին կամ 1760-ականների սկզբին: Այս ժամանակագրական հատվածը, չնայած իր համառոտ ծավալին, հաղորդում է ստույգ տեղեկություններ Արցախի մելիքներից երկուսի՝ Ջրաբերդի Ալլահղուլի սուլթանի և Գյուլիստանի Մելիք-Թամրազի սպանությունների կոնկրետ ամիսների վերաբերյալ: Սա նաև մի վառ օրինակ է, թե ինչպես ձեռագրի մեկ անկյունում «կուչ եկած» ընդամենը տասնհինգ տողանոց ժամանակագրական փոքրիկ հատվածը կարող է անգնահատելի տեղեկություններ մատուցել պատմաբաններին:

Արցախի մելիքությունների հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության XVIII դարի պատմության համար կարևոր սկզբնաղբյուր է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբռ» աշխատությունը[17]: Այս մեծարժեք երկի Ժ գլխում հեղինակը ձգտում է հիմնավորել Գանձասարի կաթողիկոսության նկատմամբ Ս. Էջմիածնի առաջնության իրավունքը, տալիս է ուշագրավ տեղեկություններ Գանձասարի ու նրանց հակաթոռ կաթողիկոսների աթոռակալական պայքարի և նրանց հաշտեցնելու գործում Ամենայն Հայոց կաթողիկոսների մասնակցության վերաբերյալ: 1760-ական թվականներին Սիմեոն Երևանցին այդ դեպքերի անմիջական մասնակիցն է եղել և այդ շրջանում Հովհաննես Հասան-Ջալալյանի ու Իսրայել Ջրաբերդցու միջև բռնկված աթոռակալական պայքարում նախապատվությունը տվել է առաջինին՝ որպես Էջմիածնի գերագահությունն ընդունող կաթողիկոսի:

[16] Մատենադարան, ձեռ. 7816, էջ 20բ: Հրատարակությունը տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 396:
[17] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Ե., 2003:

XVIII դարի երկրորդ կեսի սկզբնաղբյուրներից ուշադրության ենք արժանացրել նաև Մադրասի հայրենասիրական խմբակի հրատարակած «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» քաղաքական-հրապարակախոսական աշխատությունը[18] և Հովսեփ Արղության հիշատակարանը[19], որոնցում կան փոքրիկ, սակայն ոչ պակաս կարևոր տեղեկություններ Արցախի մելիքությունների վերաբերյալ: Երկու դեպքում էլ ներկայացվում են նույն մելիքները՝ Ջրաբերդի Մելիք-Ադամը, Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, Դիզակի Մելիք-Եսային, Վարանդայի Մելիք-Շահնազարը և Խաչենի Մելիք-Միրզախանը: Սակայն, «Նոր տետրակի» ընդհանուր բնույթի ծանոթություններին Հ. Արղության հիշատակարանը ավելացնում է նաև նույն մելիքների զինուժի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ: Բանն այն է, որ 1780-ական թվականներին կրկին ռուսաց արտաքին քաղաքականության օրակարգ էր մտել կայսրության տարածքը դեպի հարավ ընդարձակելու ծրագիրը, և ցարական իշխանավորների խնդրանքով Հ. Արղության տված տեղեկությունները ունեին գործնական նշանակություն:

Ուշագրավ է նաև «Նոր տետրակի» հաղորդումը Արցախի մելիքությունների թուլացման պատճառի վերաբերյալ. «Պարսիկները ոչ թե ինչ-որ քաջությամբ և ոչ էլ բնավ բռնությամբ մտան նրանց սահմանները, այլ նրանք իրենք պարսից իշխանին մտցրին իրենց երկիրը՝ հրապուրված սրանց հատուկ խորամանկ պատրանքներով, և այն օրվանից մինչև հիմա նա տիրում է իրենց: Բայց նրանք այն վիճակում չեն, ինչպես որոշ տեղերում մեր ազգակիցներից ոմանք, որոնք բացարձակապես հպատակ են դարձել,-այլ տակավին փրկության

[18] Նոր տետրակ, որ կոչի յորդորակ, Մադրաս, 1772-1773: Աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, թարգմանեց և ծանոթագրեց՝ Պ. Խաչատրյանը, Ե.,1991:
[19] Յովսէփ կաթուղիկոսի յիշատակարանը, «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Է, էջ 505-519, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ, Յովսէփ Արղութեան, Թիֆլիս, 1911, էջ 1-48:

հույս ունեն»: Այնուհետև հեղինակը միաբանության և միասնական պայքարի կոչ է անում հայորդիներին, որովհետև «սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե անսեր ու անմիաբան մեծ ազգը»[20]: «Նոր տետրակի» հեղինակը իրավացիորեն միասնական պայքարի մեջ էր տեսնում հայկական պետականության վերականգնման ճանապարհը: Ուստի պատահական չէ, որ օրվա հրամայականով ծնված այս գրքի՝ հայոց պատմության ու Հայաստանի աշխարհագրությանը նվիրված գլուխները հայերեն հրատարակությունից շատ չանցած թարգմանվել և հրապարակվել են նաև ռուսերեն[21]:

Արցախի մելիքությունների վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան նաև XIX դարի կեսերին ստեղծված պատմագրական երկերում, որոնցից ցանկանում ենք առանձնացնել Հակոբ Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու», Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) «Ճշմարտացի պատմություն» և Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Արցախի» աշխատությունները:

Այս երկերի շարքում կարևոր տեղ է գրավում Երուսաղեմի միաբան Հակոբ սրկ. Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» պատմագրական աշխատությունը՝ գրված «յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ»[22], որի ձեռագիրը պահվում է Մատենադարանում, 2734 թվահամարի տակ: Այս ձեռագրից XX դ. սկզբին կատարված մի ընդօրինակություն պահվում է Մատենադարանում 10659 թվահամարի տակ: Հ.

[20] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 103-104:
[21] Краткое историческое и географическое описание Царства Арменского, из древних писателей сего народа, яко верных источников, собранное и на Арменском языке в Индии изданное Яковом Шамировым, а ныне с Арменского на Российский язык переведенное подпоручиком В. Вагановым, СПб, 1786.
[22] Յակոբ սրկ. Զաքարեան, Պատմութիւն գաւառին Արցախու, Մատենադարան, ձեռ. 2734, էջ 1: Այս երկի հրատարակությունը մեր առաջաբանով և ծանոթագրություններով տե՛ս Մաղալեան Ա., Յ. Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիւ 1-12, էջ 317-394:

Զաքարյանի պատմության մեկ այլ արտագրություն՝ կատարված Մատենադարանի արխիվի նախկին վարիչ Հ. Աբրահամյանի ձեռքով, գտնվում է Մատենադարանում պահվող նրա անձնական ֆոնդում[23]: Երկը սկսվում է Արցախում վաչկատուն թուրքական ջիվանշիր ցեղի մի ճյուղի՝ սարջալուների ցեղապետ Փանահ խանի հաստատման և Շուշիի բերդի վերակառուցման ժամանակներից: Այս մասին հաղորդում է «Պատերազմ շահին ընդ խանին Ղարաբաղու» գլուխը, որտեղ խոսվում է նաև Սուլեյման սարդարի գլխավորությամբ 1793-1794 թթ. Արցախ ներխուժած պարսկական զորքերի պարտության, այնուհետև Իրանի շահ Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների, նրա սպանության և պարսկական բանակի խուճապահար փախուստի մասին: Այս հատվածի վերջում հեղինակը ներկայացնում է Քյուրակ-չայի պայմանագրի կնքումը, որը տեղի է ունեցել 1805 թ. մայիսի 14-ին, սակայն սխալմամբ որպես պայմանագրի կնքման վայր է նշում Թիֆլիսը: Այնուհետև, առանց ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմին անդրադառնալու, հեղինակն անցնում է ռուս-պարսկական հաջորդ պատերազմի որոշ ուշագրավ դրվագների ներկայացմանը: Այդ մասը, որը կրում է «Յաղագս վիպասանութեան. յայտարարութիւն գործեալ իրաց Հայկազն Մատաթեան Յօհաննէս սպասալարի ռուսաց» վերնագիրը, նվիրված է զոր. Վ. Մադաթովի (1782-1829) քաջագործությունների ներկայացմանը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում: Այստեղ հեղինակը վիպական շնչով պատմում է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի ճակատամարտի, Գանձակի գրավման և գեներալ Վ. Մադաթովի իրականացրած ղարադաղյան արշավանքի մասին: Հ. Զաքարյանի պատմությունը, չնայած որոշ փաստական սխալներին և ակներև չափազանցություններին, կարևոր սկզբնաղբյուր է Արցախի XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի պատմության համար:

[23] Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 259:

Վերոհիշյալ երկից մեկ տարով ավելի ուշ է գրվել Մ. Յ. Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկը[21]: Այս աշխատության հեղինակը ծնվել է 1798 թ. Հադրութում: Մանուկ հասակում գերվել է պարսիկների կողմից, տարվել Իրան, որտեղ և ներկայացվել է շահին, մահմեդականացվել ու կրթություն ստացել: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գտնվել է Արցախ ներխուժած Աբբաս-Միրզայի քեռու՝ Ամիր խան սարդարի զորաբանակում և ականատես եղել այնտեղ ծավալված մարտական գործողություններին: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո վերադարձել է Արցախ և մկրտվել՝ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի ձեռամբ:

Մ. Յ. Ներսեսովն իր աշխատությունը գրել է 1854 թ. Հյուսիսային Դաղստանի կառավարիչ իշխան Գ. Օրբելիանու պատվերով: Պատմագիտական արժեք են ներկայացնում միայն երկի VIII և IX գլուխները, որոնցում շարադրված է Արցախի մելիքությունների, Ղարաբաղի խանության և XIX դ. ռուս-պարսկական պատերազմների պատմությունը: Հատկապես արժեքավոր են Մ. Յ. Ներսեսովի տեղեկությունները Արցախի մելիքությունների սահմանների վերաբերյալ, որոնց միջոցով ճշգրտվում են մելիքություններից յուրաքանչյուրի կոնկրետ սահմանները: Նշենք, որ Րաֆֆու և Լեոյի երկերում մելիքությունների սահմանները տրված են ընդհանուր գծերով, և այդ առումով Ներսեսովի տեղեկությունները ունեն չափազանց կարևոր նշանակություն: Ահա սարակ, Մ. Յ. Ներսեսովի հաղորդած պատմական տեղեկությունները մեծ մասամբ հավաստի են ու անկողմնակալ, հաճախ նաև եզակի, քանի որ պարունակում են այլ աղբյուրներում բացակայող փաստեր[25]:

---

[24] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմ. բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ք. Կոստիկյանի, Ե., 2000:
[25] Այդ մասին տես Կոստիկյան Ք., Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Մ. Յ. Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի, «ՊԲՀ», 1999, թիվ 2-3, էջ 351-352:

XIX դ. երկրորդ կեսին է ստեղծվել Գտչավանքի վանահայր Առաքել վրդ. Կոստանյանցի երկհատոր «Պատմութիւն Արցախի» աշխատությունը[26], որը հանդիսացել է Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրության աղբյուրներից մեկը: Այդ առումով ավելորդ չէ այստեղ բերել Րաֆֆու խոսքը այս երկի մասին. «Առաքել վարդապետը, իրավ է, իր պատմության մեջ ժամանակագրական կարգ չէ պահպանել, նյութերը իրանց տեսակի համեմատ չէ դասավորել, և նրա աշխատությունը ավելի մի անկապ հավաքածու է, քան թե պատմություն, այսուամենայնիվ նրա գրքերը բովանդակում են իրանց մեջ թեև անմշակ, բայց բավական առատ նյութ պատմության համար: Երկու հատորները բաղկացած են 75 ընդարձակ գլուխներից և 428 երեսներից… Առաքել վարդապետի երկու հատորների մեջ կան և այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրև աղբյուր Ղարաբաղի մելիքների պատմության համար… Իսկ որ ամենից հետաքրքիրն է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանավոր անցքերի մասին, սկսյալ 1721 թվականից մինչև 1813 թ.: Այդ ժամանակագրությունը, հեղինակի ասելով, դուրս է բերել նա մի ձեռագիր Մաշտոցից, որը գրված է եղել տեր-Գասպար քահանայի ձեռքով»[27]:

Վերջին տողերի հիման վրա Բ. Ուլուբաբյանը սխալմամբ ենթադրել է, որ եթե «նրա ժամանակագրությունն սկսվում է 1721 թվականից և ավարտվում 1813-ին, ուրեմն ինքն ապրել է XIX դարի առաջին կեսին»[28]: Մինչդեռ, Մատենադարանի թիվ 3881 ձեռագրում, որն Առ. Կոստանյանցի ձեռքով 1886-1888 թթ. գրված պատմական նյութերի ժողովածու է, տեղ է գտել այս ժամանակագրության մեկ այլ խմբագրությունը, որը եզրափակվում է 1838 թվականով. «Ռուսաց թագաւորն, որ եկաւ

---

[26] Մատենադարան, ձեռ. 7822, 7823:
[27] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 609-610:
[28] Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 351, ծնթ. 1:

Թիֆլիզ և Երևան ման եկաւ գնաց 1838 ամին էր փրկչական թուին»[29]: Իսկ իր «Պատմութիւն Արցախի» երկի առաջին հատորի հիշատակարանում Առ. Կոստանյանցը պարզ գրել է. «Ի թուականիս փրկչական 1858ին սկսեալ և ի 1868ին աւարտեալ յաղագս չգտանելոյն տեղեկութեանց»[30]: Նույն երկի երկրորդ հատորի հիշատակարանում արդեն կարդում ենք. «Նաև յիշել խնդրեմ զանպէտ բանասէր աշխատասիրող գրքոյս՝ Առաքել վարդապետ Կոստանեանց, միաբան սրբոյ վանիցն Գտչոյ. ի թուականիս փրկչական 1870 ամի սկսեալ և ի 1880 ամի աւարտեալ»[31], այսինքն՝ սույն աշխատությունը գրվել է 1858-1880 թթ. ընթացքում:

Բացի այդ, երբ այս երկի ձեռագրերը վերադարձնելու առթիվ Րաֆֆու չարակամները մամուլում բանավեճ են սկսել նրա դեմ, մեծ գրողը իր գրչի ողջ զորությամբ նրանց պատասխանել է. «Եթե արժանապատիվ հայր սուրբը կամենում է ետ ստանալ յուր տետրակները, մենք մեծ ուրախությամբ կվերադարձնենք իրան՝ հայր սուրբին (ընդգծումը՝ Րաֆֆու-Ա. Մ.), բայց ուրիշի ձեռքը չենք տա: Միայն մեզ պետք է նախ բանակցություններ անել նրա հետ, եթե նա չի ցանկանում յուր տետրակների այն տեղերը, որ պատմական նշանակություն ունեն, տպված տեսնել, այն ժամանակ ետ կուղարկենք»[32]: Վերոբերյալից պարզ երևում է, որ Առ. Կոստանյանցը XIX դ. երկրորդ կեսի հեղինակ է՝ Րաֆֆու ժամանակակիցը, ինչն ամենևին էլ չի նսեմացնում նրա պատմագրական երկի արժեքը: Առանց այս երկի մենք առհասարակ չէինք ունենա Դիզակի մելիքության պատմությունը: Թերևս, դա էլ ի նկատի ունենալով Հայոց ազգագրական ընկերությունը Առ. Կոստանյանցի

[29] Մատենադարան, ձեռ. 3881, էջ 90ա-բ: Այս ժամանակագրության մեկ այլ օրինակը տե՛ս Յախումեան Ա., Նիւթեր ազգային պատմութեան, «Արարատ», 1914, թիւ Դ, էջ 371-374:

[30] Մատենադարան, ձեռ. 7822, էջ 6բ:

[31] Մատենադարան, ձեռ. 7823, էջ 8ա:

[32] **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 12, Ե., 1999, էջ 15-16:

աշխատության այդ հատվածը հրատարակել է որպես «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարի Ա պրակ[33]:

Արցախի մելիքությունների վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան նաև Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» երկում[34]: Չափազանց կարևոր նշանակություն ունի հեղինակի այն հաղորդումը, ըստ որի Նադիր շահը Խամսայի մելիքներին հանում է Գանձակի Զիադօղլի խաների ենթակայությունից և վերցնում իր ենթակայության տակ: Փաստորեն, մահմեդական պատմագիրը վկայում է Նադիրի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին: Այնուհետև հեղինակը խոսում է Փանահի ազգաբանության, նրա հզորացման, Իրանի Ադիլ շահից խանության ռաղամ կորզելու և Վարանդայի Մելիք-Շահնազարի թողտվությամբ Արցախում հաստատվելու մասին: Երկում ներկայացված է նաև Փանահի և նրա որդի Իբրահիմ խանի համառ պայքարը Խամսայի մելիքությունները իրենց հպատակեցնելու և Արցախում գերիշխանություն ձեռք բերելու համար, որն, ըստ էության, այդպես էլ նրանց չհաջողվեց: Չնայած Ադիգյոզալի երկում Ղարաբաղի խաների ազդեցությունը գերագնահատված է, այնուհանդերձ այս աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է Խամսայի մելիքությունների պատմության համար:

Արցախի մելիքությունների պատմության վերաբերյալ զգալի քանակությամբ նյութեր կան սփռված նաև զանազան փաստաթղթերի ժողովածուներում, որոնցից ցանկանում ենք առանձնացնել 1833-1838 թթ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի հրատարակած «Собрание актов, относящихся к обозрению ис-

[33] Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913:

[34] **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, Баку, 1950. Այս երկի հայերեն թարգմանությունը տե՛ս Միրզա Ադիգէոզալ-բէկ, Որպիսութիւնք խանացն Գանձակայ եւ Ղարաբաղու, Մատենադարան, ձեռ. 4463:

тории армянского народа» եռահատոր ստվարածավալ ժողովածուն[35], որն առ այսօր չի կորցրել իր պատմագիտական նշանակությունը, 1866-1904 թթ. Թիֆլիսում Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրապարակած «Ակտերի» 12 հատորները[36] և ՀԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարում» հանրահայտ քառահատորյակը:

Հատուկ ցանկանում ենք ընդգծել պարսկերեն վավերագրերի ժողովածուների կարևորությունը: Արցախի մելիքները, լինելով պարսից պաշտոնյաներ, իրենց իշխանության մեջ հաստատվել են Իրանի շահերի հրովարտակներով: Անգամ շահական հրովարտակներով են հաստատվել Ամենայն Հայոց և Գանձասարի կաթողիկոսների կաթողիկոսական իրավունքները: Այդ առումով սույն թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Հ. Փափազյանի կազմած «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի երկու պրակները[37] և նրա գործի շարունակող Ք. Կոստիկյանի կազմած երրորդ պրակը[38]:

Առանց վերոհիշյալ սկզբնաղբյուրների ուսումնասիրության պարզապես անհնար կլիներ սույն աշխատության ստեղծումը:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ կան նաև XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի հայ մամուլի էջերում: Մենք օգտագործել ենք «Ճռաքաղ» (Մոսկվա), «Կռունկ Հայոց աշխարհին», «Փորձ», «Լումայ», «Մուրճ», «Кавказская старина» (Թիֆլիս), «Արարատ» (Վաղարշապատ)

[35] Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I-III, М., 1833-1838.

[36] Акты, собранные Кавказской Археографической Комиссией (այսուհետև՝ АКАК), т. I-XII, Тифлис, 1866-1904.

[37] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, կազմեց Հ.Փափազյանը, պրակ I, Ե., 1956, պրակ II, Ե., 1959:

[38] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, կազմեց Ք.Կոստիկյանը, պրակ III, Ե., 2005:

և այլ պարբերականներ: Այդ հրապարակումներից հիշատակության է արժանի Ա. Երիցյանի «Ղարաբաղի մելիքները Վրաստանում 1800-1808 թթ.» հոդվածը[39], որի վերջում հեղինակը զետեղել է Արցախի մելիքների՝ Մինաս Լազարյանին հասցեագրած մի քանի նամակների ռուսերեն թարգմանությունները: Կարելի է նշել նաև Գ. Տեր-Հովհաննիսյանցի (Մուրացան) հոդվածը, որը Շուշիի կոնսիստորիայում պահվող վավերագրերի հիման վրա ներկայացրել է Արցախի առաջին թեմակալ առաջնորդ Բաղդասար Հասան-Ջալալյանի կենսագրությունը[40]: Սակայն, պետք է նկատել, որ մամուլում սփռված հոդվածներում լուսաբանվում էին Արցախի մելիքությունների պատմության միայն առանձին դրվագներ, իսկ այդ իշխանությունների ամբողջական պատմությունը շարունակում էր թաղված մնալ անհայտության խավարում:

Առաջին ուսումնասիրողը, որը ձեռնամուխ եղավ Արցախի մելիքությունների ամբողջական պատմության ստեղծմանը, ականավոր գրող Րաֆֆին էր: Նա 1881 թ. ուղևորվելով Արցախ կարողանում է զգալի քանակությամբ նյութեր հավաքել մելիքությունների պատմության վերաբերյալ և հաջորդ տարի ընթերցողների սեղանին է դնում «Խամսայի մելիքությունները» կոթողային աշխատությունը[41]: Մեծ գրողն իր առջև նպատակ էր դրել ցույց տալ, որ հայոց թագավորության անկումից հետո էլ երկրում շարունակում էին գոյատևել պետականության բեկորները: «Մեզանից առաջ հայոց պատմությունը սկսվում էր Հայկից և վերջանում էր Լևոն Զ-ով: Մենք եղանք առաջինը, որ անհայտության միջից գտանք մի կորած հայկական իշխանություն, երբ գրեցինք «Խամսայի մելիքութ-

[39] **Ерицов А.**, Карабагские мелики в Грузии с 1800 по 1808 г., "Кавказская старина", 1872, N 2, с. 34-45.

[40] Տէր-Յովհաննիսեանց Գ., Բաղտասար մետրապօլիտ Յասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, «Փորձ», 1880, թիւ 5, էջ 131-164:

[41] Վերջին հրատ. տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 417-639:

յունները»[42],-իր կատարած գործը այսպես է գնահատել Րաֆֆին: Նա նկատել է նաև, որ ավանդությունները Արցախի մելիքների պատմության ամենահարուստ մասն են կազմում, սակայն, միաժամանակ, իր երկում մեծ տեղ է հատկացրել ավանդություններին: Դա էլ դարձել է նրա աշխատության մեջ տեղ գտած թերությունների հիմնական պատճառը: Ամեն դեպքում Րաֆֆու աշխատությունը, իր թերություններով հանդերձ, այն ժամանակների համար խոշոր գիտական ձեռնարկ էր, արժանի բարձր գնահատականի:

Մեր աշխատությունը լիարժեք չէր լինի, եթե անտեսվեր երկրամասի քարե տարեգրությունը: Արցախի մելիքների գործունեության մասին պատմող բազմաթիվ վկայություններ են պահպանվել նրանց շինարարական արձանագրություններում, ամրոց-դղյակների պատերի և տապանաքարերի վրա, որոնք հատկապես կարևոր նշանակություն ունեն դեպքերի ժամանակագրության ու մելիքական տների ազգաբանության ճշտման, դրանցում բացակայող օղակների լրացման և այդ իշխանությունների ներքին կյանքի լուսաբանման համար: Շատ հաճախ տեղի վիմագրերը հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են ժամանակակից պատմիչների երկերում: Ուստի պատահական չէ, որ այդ նյութերը, որպես հավաստի սկզբնաղբյուրներ, շատ վաղուց իրենց վրա են հրավիրել ուսումնասիրողների ուշադրությունը: Դեռևս XVIII դ. սկզբում Արցախի վիմագրական ժառանգության ուսումնասիրմանը ձեռնամուխ էր եղել Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը[43], իսկ XIX դարում նրա գործը շարունակել են Հ.

---

[42] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 145:

[43] Մատենադարան, ձեռ. 7821 և 9923: Ընդ որում, թիվ 7821 ձեռագիրը, ինչպես երևում է հիշատակարանից, բնագրից ընդօրինակել է Բաղդասար Հասան-Ջալալյանը. «Ի ՌՄԾԸ (1809) թուին հայոց ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղտասար վարդապետի Ջալալեան, և որդւոյ Դանիէլ հազարապետին Տեառն Խաչենոյ» (էջ 18ա):

Իսկ թիվ 9923 ձեռագիրը արտագրված է Ս. էջմիածնի գրագիր Յովհաննես Ղրիմեցու ձեռքով. «Յամի տեառն 1822 յամսեանն յուլիսի մէկին ընդ

Շահխաթունյանցը[44], Ս. Ջալալյանցը[45] և այլք: Սակայն, երկ-
րամասի քարե տարեգրության ուսումնասիրման գործում կա-
րևոր ներդրումներ լինելով հանդերձ, նրանց ընդօրինակած
արձանագրությունների հավաքածուները համակարգված չէին
և չէին ընդգրկում Արցախի ողջ վիմագրական նյութը:

Առաջինը երախտաշատ գիտնական Մակար Բարխու-
տարյանցն էր, որը 1890-ական թվականներին, շրջելով անդր-
կուրյան հայաբնակ գավառներում ու Արցախում, տեղի վիմա-
գրական նյութը հավաքեց գրեթե սպառիչ ամբողջականութ-
յամբ և հրապարակ հանեց «Աղուանից երկիր եւ դրացիք»
(Թիֆլիս, 1893) ու «Արցախ» (Բաքու, 1895) մեծարժեք աշխա-
տությունները[46], որոնք մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց
պատմագիտական և աղբյուրագիտական նշանակությունը: Հե-
ղինակը ոչ միայն մեծ պատասխանատվությամբ հավաքել և
վերծանել էր վիմագիր արձանագրությունները, այլև ընդօրի-
նակել վանքերում ու անհատ անձանց մոտ պահվող ձեռագրե-
րի հիշատակարանները: «Պատմական Աղուանքի ու Արցախի
նկարագրութիւնը Մ. Բարխուտարեանցը դիտում էր որպէս
Աղուանքի պատմութիւնը շարադրելու համար նիւթերի հա-
ւաքման աշխատանքների նախապատրաստական փուլ»[47]:

սրբազնակատար եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս,
տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս
ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի
թուականութեան հայոց ՌճԿէ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Խ.
ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմն գրագիր Սրբոյ էջմիածնի» (էջ 2ա):

[44] Շահխաթունեանց Յ., Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842:

[45] Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփղիս, 1842, հ. Բ, Տփղիս, 1858: Ս. Ջալալյանցը թողել է նաև մի քանի անտիպ երկեր, որոնցից երկուսը՝ «Համառօտ պատմութիւն եւ աշխարհագրութիւն Աղուանից» (Մատենադարան, ձեռ. 2622, էջ 304ա-312բ) և «Կաթողիկոսք Աղուանից» (Մատենադարան, ձեռ. 8066, էջ 61ա-62բ) վերնագրերով, իրենցից ներկայացնում են Կաղանկատվացու և մեր մյուս պատմիչների հաղորդած տեղեկությունների ոչ քննական շարադրումը:

[46] Տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999:

[47] Նույն տեղում, էջ 8:

Հավաքված նյութի հիման վրա էլ նա գրեց «Պատմութիւն Աղուանից» երկհատոր աշխատությունը[48], որտեղ, սակայն, ինչպես դիպուկ նկատել է Բ. Ուլուբաբյանը, հեղինակը «հաճախ առկա նյութի ընձեռած տեղեկություններին անհարիր եզրակացություններ է հանգում, փաստերին տալիս կամայական բացատրություններ և, որ ավելի խոտելի է, պատմական ընթացքի այս կամ այն օղակի մասին բացակայող նյութերի փոխարեն հրամցնում է իր երևակայածն ու ենթադրածը»[49]: Ուստի նրա գիտական վաստակն առավել գնահատելի է տեղագրական բնույթի վերոհիշյալ աշխատություններով, որոնք «յետագայում բազմիցս օգտագործուել են գիտական ուսումնասիրութիւնների ժամանակ, ուղեցոյց ծառայել Արցախի յետագայ նկարագրութիւնների ընթացքում»[50]: Վիմագրագետ Ս. Բարխուդարյանը «Դիվան հայ վիմագրության» շարքի V պրակը[51] կազմելիս տեղում չգտած կամ չարակամորեն ոչնչացված արձանագրություններից շատերը վերցրել է Մ. Բարխուտարյանցի «Արցախ» գրքից: Սույն ուսումնասիրության մեջ ևս Արցախի մելիքների գործունեության, հաճախ նաև ծննդյան և մահվան թվականները կամ նրանց ընտանիքների կազմը ճշտելիս բազմիցս վկայակոչել ենք այդ աշխատությունը:

Մեր տեսադաշտից չեն վրիպել նաև Արցախի պատմությանը նվիրված ազգագրական բնույթի ուսումնասիրությունները: Այդ առումով նշելի է ազգագրագետ Ե. Լալայանի վաստակը, որն իր «Վարանդա» և «Գանձակի գավառ» աշխատություններում[52] տվել է հարուստ տեղեկություններ մելիքների հասարակական և իրավական գործունեության, ստացվածքի, զորքի և զինատեսակների, իրականացրած դատավարության, կենցաղավարության, զգեստի, ինչպես նաև մելիքների կանանց ու ժառանգների մասին: Այդ տվյալներից շատերը այսօր հայտնի են Ե. Լալայանի շնորհիվ:

Մելիքությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ նշանակալից քայլ էր 1913-1914 թթ. «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարի լույս ընծայումը: Այս մատենաշարի Ա պրակի մասին արդեն խոսել ենք, իսկ որպես Բ պրակ հրատարակվել է Կ. Տեր-Մկրտչյանի «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք» աշխատությունը[53], որտեղ հեղինակը մանրակրկիտ քննությամբ ցույց է տվել Մելիք-Շահնազարյանների ծագումը Դոփյան իշխանական տոհմից: Սակայն, պետք է նշել, որ այդ գրքում հեղինակը հիմնականում կանգ է առել Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմության վրա, իսկ նրանց Վարանդայի ճյուղին անդրադարձել է հպանցիկ, որովհետև, իր իսկ ասելով` դա «առանձին ուսումնասիրութեան նիւթ է»[54]:

Արցախի մելիքությունների պատմության վերաբերյալ փաստագրական հարուստ նյութ է կուտակված ականավոր պատմաբան Լեոյի «Հայոց պատմություն» քառահատոր ուսումնասիրության մեջ[55]: Իր ժամանակ հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրների, աշխատությունների և փաստաթղթերի հիման վրա նա ներկայացրել է մելիքությունների անցած հերոսական ուղին և նրանց խաղացած առանցքային դերը XVIII դարի հայոց ազգային-ազատագրական շարժումներում: Լեոյի աշխատությունները նոր հանգրվանի հասցրին Արցախի մելիքությունների պատմության ուսումնասիրությունը:

[48] Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, հ. Բ, Թիֆլիս, 1907:
[49] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 18:
[50] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 9:
[51] Դիվան հայ վիմագրության, V, Արցախ, կազմեց` Ս. Բարխուդարյան, Ե., 1982:
[52] «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, էջ 5-244, 1899, գիրք Ե, էջ 213-269, Լալայան Ե., Երկեր, հ. 2, Ե., 1988:

[53] Տեր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին,1914:
[54] Նույն տեղում, էջ 137:
[55] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, հ. 4, Ե., 1984:

Արցախի պատմության ուսումնասիրման գործում մեծ վաստակ ունի նաև նշանավոր պատմաբան Բ. Ուլուբաբյանը: Նրա աշխատությունները[56] նոր խոսք էին Արցախի հին և միջնադարյան շրջանի պատմության ուսումնասիրության բնագավառում: Սակայն, միաժամանակ, պետք է նկատել, որ իր երկերում Արցախի մելիքությունների պատմության հարցերին Բ. Ուլուբաբյանը անդրադարձել է հպանցիկ՝ հիմնականում հրապարակի վրա եղած նյութերի հիման վրա:

Արդեն մեր օրերում Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքներին նվիրված ուշագրավ աշխատություն է հրատարակել Ա. Ղուլյանը[57]:

Պետք է նկատել, որ Արցախի պատմության նկատմամբ օրավուր աճող հետաքրքրության պայմաններում վերջին տարիներին լույս են տեսել նաև մի քանի սիրողական բնույթի գրքեր: Նմանատիպ աշխատանքներից վկայակոչենք միայն մեկը՝ քաղաքագետ Դ. Բաբայանի գիրքը[58], որտեղ հեղինակը հանրահայտ փաստերի միակողմանի և կամայական մեկնաբանությունների հիման վրա առաջ է քաշել մի անհեթեթ վարկած, ըստ որի, ի՛բր... Փանահ խանին հատուկ խորհրդակցությունից հետո Արցախ են «հրավիրել» տեղի մելիքները: Նա մոռացության է տալիս այն պարզ իրողությունը, որ Փանահի և նրա որդի Իբրահիմի իշխանությունը, նրանց՝ Արցախում հաստատվելու առաջին իսկ օրից, իր սուր ծայրով ուղղված էր տեղի հայոց մելիքությունների և դրանց հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության դեմ: Պատահական չէ, որ Դ. Բաբայանը մինչև վերջ այդպես էլ չի պարզաբանում, թե ովքեր էին Փանահին Արցախ «հրավիրող» մելիքները: Սակայն, Արցախում այդ ժամանակաշրջանում իշխած բոլոր մելիքների անուններն էլ քաջ հայտնի են, և Արցախի պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտե, որ այդ մելիքներից երկուսը՝ Ջրաբերդի Ալլահղուլի սուլթանը (մահ. 1749) և Խաչենի Մելիք-Ալլահվերդին (մահ. 1755) սպանվել են հենց Փանահի կողմից՝ նրա Արցախում հաստատվելուց շատ չանցած: Ընդ որում, Մելիք-Ալլահվերդու մահով անդառնալի հարված էր հասցվում Խաչենի նշանավոր Հասան-Ջալալյանների տոհմի աշխարհիկ իշխանությանը: Փանահի որդի Իբրահիմի կողմից 1781 թ. սպանվեց Դիզակի Մելիք-Եսային, իսկ 1786-ին՝ Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը: Իբրահիմ խանի կողմից սպանվեցին նաև Դիզակի Մելիք-Բախտամը, Մելիք-Աբասը և Մելիք-Եսայու որդի Բաղդադ-բեկը, իսկ Մելիք-Եգանյանների տոհմի մի ճյուղը բռնությամբ մահմեդականացվեց: Այդ խաների ժամանակներից սկսվեց նաև այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ, որը, հակառակ Դ. Բաբայանի թյուր կարծիքի (էջ 58), իսկական չարիք դարձավ արցախահայության համար: Լավ կլիներ, որ այս գրչամարզանքների փոխարեն հեղինակը հստակեցներ, թե բազում վնասներից բացի, ի՞նչ օգուտ է տեսել Արցախի հայ բնակչությունը Շուշիի խաներից: Նրանց վարած քաղաքականության հետևանքներն է, որ համազգային վիթխարի ջանքերի գնով հաջողվեց թոթափել միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ: Ասվածին և չասվածին կարող ենք ավելացնել, որ փաստական բազմաթիվ սխալներով և արտառոց թյուրիմացություններով[59] լեցուն այս գիրքը ավելին չէ,

[56] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, Ոսկե շղթա, Ե., 1979, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Ե., 1981, Գանձասար, Ե., 1981, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998:

[57] Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Ե., 2001:

[58] **Бабаян Д.,** Политическая история Карабахского ханства в контексте арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007.

[59] Այսպես, ըստ Դ. Բաբայանի՝ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» երկի հեղինակը... Հովսեփ էմինն է (էջ 68), և, կամ, XX դ. կեսերին ապրած Տ. Տեր-Գրիգորյանը Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» աշխատությունը հրատարակել է 1868 թ. «Эривань»-ում (էջ 109): Նրան թվում է, թե Փանահ խանի դրածո Խաչենի Մելիք-Միրզախանը սեփական դրամ էր կտրում (էջ 57), այնինչ նա Փանահի դրամահատարանի կառավարիչն էր, որտեղ հատվում էր «Փանահաբադ» կոչվող արծաթե դրամը (այդ դրամական միավորի մասին տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 55-56):

քան գլխիվայր շրջված պատմություն: Նման պատրաստվածությամբ, և առանց մասնագիտական քննարկման, Արցախի պատմության վերաբերյալ աշխատությունների հրապարակումը, հատկապես մեր օրերում, կարծում ենք, անթույլատրելի է:

Եվ, վերջապես, Արցախի մելիքությունների պատմության հարցերով զբաղվել են նաև արտասահմանյան հետազոտողները, որոնցից ցանկանում ենք առանձնացնել Ռ. Հյուսենին[60]: Սակայն նրա հոդվածաշարը նվիրված է ոչ թե կոնկրետ Արցախի մելիքություններին, այլ ողջ Արևելյան Հայաստանի մելիքական տոհմերին առհասարակ: Այդ շարադրանքում Արցախի մելիքական տներին նա հատկացրել է ընդամենը մի քանի էջ՝ հիմնականում հաղորդելով հանրագիտարանային բնույթի տեղեկություններ:

Մելիքությունների պատմության ուսումնասիրության ուղղությամբ իր առաջին քայլերն է կատարում իտալացի երիտասարդ պատմաբան Ա. Ֆերարին[61]:

Թեև այս հետազոտողները, զուրկ լինելով Հայաստանում եղած արխիվային նյութերն ուսումնասիրելու հնարավորությունից, իրենց հոդվածները շարադրել են հիմնականում տպագիր աշխատությունների հիման վրա, այնուհանդերձ նրանց հրապարակումները ևս ունեն կարևոր նշանակություն արտասահմանյան շրջանակներում հայոց պատմության այս հերոսական էջերը մասսայականացնելու առումով:

[60] **Hewsen R.,** The Meliks of Eastern Armenia, "Revue des Etudes Armeniennes", 1972, IX, pp. 285-329, 1973-74, X, pp. 282-300, 1975-76, XII, pp. 219-243, 1980, XIV, pp. 459-470, Three Armenian Noble Families of the Russian Empire, «Հասկ», 1981-82, էջ 389-400, The House of Aghamaleanc Meliks of Erevan, «Բազմավէպ», 1984, թիւ 3-4, էջ 319-334:

[61] Le guerre di Dawit Bek, un eroe armeno del XVIII secolo, introduzione, traduzione e note a cura di A. Ferrari, Milano, 1997, **Ferrari A.,** Nobility and Monarchy in Eighteenth Century Armenia: Preliminary Remarks and Methodological Questions, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները», Ե., 2004, էջ 329-337, նույնի՝ Եան Պոտոցկին եւ նրա Հայաստանի ազատագրման ծրագիրը, «Բազմավէպ», 2006, թիւ 1-4, էջ 552-567, նույնի՝ Րաֆֆին և Ղարաբաղի հայ ազնվականությունը, «ԼՂՀ անցյալը, ներկան և ապագան», Ե., 2007, էջ 229-240:

Մենք սույն ուսումնասիրության շարադրմանը ձեռնամուխ ենք եղել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Հայաստանի ազգային արխիվում երկար պրպտումներ կատարելուց հետո: Օգտագործել ենք նաև Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվում (Российский государственный военно-исторический архив - РГВИА) պահվող որոշ վավերագրեր, որոնց պատճենները սիրահոժար մեզ է տրամադրել ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար Կ. Աթայանը:

Մելիքությունների պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևորություն ունեն Մատենադարանի զանազան ֆոնդերում, հատկապես՝ Կաթողիկոսական դիվանում պահվող վավերագրերը: Այդ փաստաթղթերի օգնությամբ մեզ հաջողվել է ճշտել որոշ մելիքների նշանակման, ինչպես նաև ծննդյան և մահվան տարեթվերը: Մի շարք վավերագրեր էլ մեզ թույլ են տվել ճշգրտումներ կատարել մելիքների տոհմացանկերում և լրացնել պակասող օղակները: Հատուկ կարևորություն ենք տվել այն վավերագրերին, որոնք հնարավորություն են ընձեռում ինչ-որ չափով լուսաբանելու մելիքությունների ներքին կյանքը և դրանց տիրակալների փոխհարաբերությունները: Օգտվել ենք նաև Կաթողիկոսական դիվանում պահվող որոշ պարսկերեն վավերագրերից, որոնց թարգմանության համար շնորհակալ ենք պատմագիտության թեկնածու Բ. Կոստիկյանին: Այդ փաստաթղթերում պատմական դեպքերը տրված են հիջրի տարեթվերով: Նման դեպքերում մենք հիջրի տարեթվերին ավելացրել ենք նաև նրանց համապատասխանող եվրոպական տարեթվերը, իսկ հիջրի թվականները եվրոպականի վերածելիս օգտվել ենք Հ. Օրբելու կազմած «Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления» գրքից[62]:

[62] **Орбели И.,** Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, М.-Л., 1961.

Արցախի մելիքությունների XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության վերաբերյալ տասնյակ արժեքավոր փաստաթղթեր ենք հայտնաբերել նաև Մատենադարանի Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Լազարյանների, Կյուրեղ Սրապյանի և Հարություն Աբրահամյանի ֆոնդերում:

Մեզ հետաքրքրող առանձին արխիվային նյութեր էլ քաղել ենք ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվի Լեոյի անձնական ֆոնդից:

Թվարկված, ինչպես նաև բազմաթիվ այլ սկզբնաղբյուրների, մենագրությունների և նորահայտ արխիվային վավերագրերի ուսումնասիրությունից հետո էլ 2000-2007 թթ. գրել ենք սույն աշխատությունը:

Վերջում մեր շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի աշխատակիցներին սույն գրքի քննարկման ընթացքում կատարած արժեքավոր առաջարկությունների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

1375 թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո, այնուհանդերձ, հայկական մի շարք լեռնային մանր իշխանությունների հաջողվեց պահպանել իրենց կիսանկախ գոյությունը:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև Հայաստանի 1555 թ. բաժանումից և 1639 թ. վերաբաժանումից հետո մեր հայրենիքի՝ Թուրքիային անցած մասում՝ Արևմտյան Հայաստանում, հայկական նման մանր իշխանությունների հետքեր պահպանվել էին Զեյթունում, Սասունում, Շատախում, Մոկսում և Դիարբեքիրի փաշայության մեջ մտնող Խույթի լեռնակղզում: Իսկ Հայաստանի՝ Պարսկաստանին անցած մասում՝ Արևելյան Հայաստանում, նման ինքնավար իշխանություններ պահպանվել էին Սյունիքում և Արցախում: Վերջինիս մասին տակավին 1307 թ. Հեթում Պատմիչը գրել է, որ երբ թաթար-մոնղոլները «կալան զմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափխազաց՝ որ ի Վիրս, և բաց ի գաւառէ անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալօյէն (Արցախ-Ա. Մ.): Այս երկու նահանգք գդէմ կալան Սարակինոսաց, և ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա»[63]: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Հովհաննիսյանը, «ներքին որևէ կապ չկար այդ հայ համայնքների միջև, բոլոր պարագաներում դրանք չէին դառնում ազգային անկախության հանդրվան- հզորը ներ»[64]: Այդ կիսանկախ իշխանություններից առավել տիրակալ- Արցախի մելիքություններն էին, որոնց ինքնիշխան են ները՝ մելիքները, մի քանի դար շարունակ հանդիսացել հայոց ազատագրական պայքարի դրոշակակիրներ: Ողջ միջնա-

[63] Հեթում Պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 24:
[64] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 89:

դարի ընթացքում իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Արցախը կարողացել էր դիմակայել օտար ներխուժողների ավերածություններին և պահպանել իր ոչ միայն քաղաքական ինքնուրույնությունը, այլև հայ ավատատիրական հասարակության բնորոշ սոցիալ-տնտեսական կառուցվածքը[65]:

Արաբերեն «մելիք» բառը նշանակում է իշխող, տիրակալ, թագավոր, իսկ նշանավոր լեզվաբան Հ. Աճառյանը սերված է համարում «mlk» «տիրել», «իշխել» ընդհանուր սեմական արմատից[66]: Միջնադարում այսպես են կոչվել Առաջավոր Ասիայի մուսուլմանական երկրների տիրակալները, իսկ ուշ միջնադարում՝ Արևելյան Հայաստանում իրանական տիրապետության շրջանում, մելիքներ էին կոչվում բնիկ ազնվականության մնացորդներից բարձրացած և իրենց տիրույթներում վարչական արտոնություն ունեցող ֆեոդալները: Մելիքներ էին կոչվում նաև գյուղերի, ավանների և քաղաքների թաղամասերի այն ավագները, որոնք պատասխանատու էին հարկերի գանձման համար:

Մելիքներից ոմանք իրենց հպատակությունն էին հայտնել նվաճողներին՝ նրանց հանդեպ կատարելով բոլոր պարտավորությունները: Սակայն, Սյունիքում և Արցախում մելիքները թեև ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, բայց ներքին կառավարման հարցերում, այսինքն՝ հարկահավաքման, դատավարության և այլն, ունեին գործելու լիակատար ինքնուրույնություն: Նրանք ունեին նաև զորք պահելու իրավունք:

Վերոնշյալ նահանգներում մելիքական իրավունքը, թեև հաստատվում էր շահի հրովարտակով, սակայն այն, ըստ էության, ուներ ժառանգական բնույթ: Այս հանգամանքը նպաստում էր մելիքական տների զորացմանը: «Սակայն աղբյուր-

[65] **Чобанян П.,** О некоторых вопросах истории Арцаха (XIII–XIX вв.), «ՊԲՀ», 2002, թիվ 3, էջ 159:
[66] Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1977, էջ 635:

ները ցույց են տալիս, որ մելիքական իրավունքն սկզբնապես հաստատուն ու անփոփոխ մի երևույթ չէր,-գրում է Բ. Ուլուբաբյանը,-այլ փոփոխվում էր այս կամ այն շահի կողմից, ենթարկվելով նրա կամքին ու հայկական աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքին»[67]:

Թեև XVI-XVIII դարերում Արևելյան Հայաստանում կային բազմաթիվ մելիքություններ[68], սակայն այդ իշխանություններից առավել անվանի էին Արցախի հինգ՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները[69], որոնց էլ վիճակված էր մեծ դեր խաղալ ուշ միջնադարի հայոց պատմության մեջ:

Հայկական ինքնավար այս իշխանությունները XVII դ. վերջերից փորձել են թոթափել պարսկական լուծը, իսկ 1724-1735 թթ. մարտնչել են Անդրկովկաս ներխուժած օսմանյան զորքերի դեմ, ինքնաբերաբար դաշնակցելով Իրանին: Այդ դաշնակցության մասին մի ուշագրավ վավերագիր հրապարակել է Հ. Աճառյանը, սակայն քանի որ այդ փաստաթղթերի ժողովածուից ժամանակին լույս է տեսել ընդամենը 40 թվագրյալ օրինակ, ուստի ավելորդ չենք համարում այստեղ բերել մի ընդարձակ հատված այդ վավերագրից. «Այն ժամանակ՝ երբ ճախորդ Ռումի ժողովուրդը այս նահանգը գրաւել ու տիրել էր, մենք էլ այդ անպիտան ցեղի վատ բնութեան և վատ վարքի համար, որ բացի դաշնագրերը եղծանելուց ուրիշ ճար

[67] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 417:
[68] Այդ մելիքությունների մասին տե՛ս **Hewsen R.,** The Meliks of Eastern Armenia, "REArm", 1972, IX, pp. 285-329, 1973-74, X, pp. 282-300, 1975-76, XII, pp. 219-243, 1980, XIV, pp. 459-470, Three Armenian Noble Families of the Russian Empire, «Հասկ», 1981-82, էջ 389-400, The House of Aghamaleanc Meliks of Erevan, «Բազմավէպ», 1984, թիւ 3-4, էջ 319-334:
[69] Մելիքությունների տարածքները պատկերացնելու համար նշենք, որ Գյուլիստանը մոտավորապես ընդգրկում էր ներկայիս Շահումյանի շրջանը և Մարտակերտի հյուսիս-արևելքը, Ջրաբերդը՝ Մարտակերտի հիմնական մասը և Քարվաճառի արևելքը, Խաչենը՝ հիմնականում Ասկերանը և Մարտակերտի հարավը, Վարանդան՝ Ասկերանի հարավը և Մարտունին, իսկ Դիզակը՝ Հադրութի, Ջեբրայիլի և Ֆիզուլու շրջանները (տե՛ս Մելքոնեան Ա., Հայկական Քարվաճառ եւ Աղահեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», 1993, թիւ 15, էջ 26):

չունէր, նրանց հետ կռուի դուրս եկանք և նրանց բոլորին քշեցինք: Դրանից յետոյ, երբ նորից այդ ցեղը ամբողջ ժողովրդով մեր վրայ եկաւ, որովհետև մեր ձեռքը չհասաւ ի քդանցս թագաւորին գերագահի, սուլերին Աստուծոյ՝ Շահ Թահմասբի, որ Խորասանումն էր, հիմնուելով այն վաղեմի սիրոյ և բարեկամութեան վրայ, որ Իրանի թագաւորների և Ռուսաց մեծափառ թագաւորի միջև կար, և իմանալով, որ նրանք էլ Գիլանի նահանգն են եկել՝ Ղզլբաշի օգնութեան փութալու. իր եղբօրը ուղարկեց օգնութիւն խնդրելու համար: Մի ժամանակ սպասելով՝ անշուշտ մի քանի արգելքների պատճառով՝ ուշացաւ և մենք կրկին ու կրկին այն ձախորդ ցեղի հետ պատերազմ ունեցանք. մերթ յաղթութիւն և մերթ պարտութիւն ունեցանք: Սպասում էինք ակնդէտ, որ մի կողմից մեզ օգնութիւն կհասնի և մեր վրէժը կլուծենք: Եւ յանկարծ արեգակն պետութեան և բարեբախտութեան թագաւորին աշխարհայնոց և հոգւոյն երկրայնոց, յաղթականն Շահ Իսմայիլ, մշտնջենաւորեսցէ Աստուած զթագաւորութիւն նորա, Գիլանի արևելից հորիզոնից ծագելով՝ մինչև Ատրպատականի հողը լուսաւորեց, Մասուլէի կողմից մինչև Զենգան ու Աբհար, և այնտեղից մինչև Մարաղա ու Քրդստան, մինչև Թաւրիզից վեց փարսախ, և այս կողմից՝ Մուղանից մինչև Շիրվանի և Գանձակի շրջակայքը՝ իր ժառանգական նահանգները իր տիրապետության տակ առաւ և 20-30 անգամ ձախորդ Ռումի հետ պատերազմեց և ամէն անգամ աշխարհակալութիւնը, յաղթութիւնը և յաջողութիւնը մահմետական բանակի կողմը եղաւ, այն անիծեալներին վանեց և ոչնչացրեց... Մեր բարօրութեան պատճառը և մեր տաճարների և եկեղեցիների շինութիւնը Իրանի թագաւորի պետութիւնից է եղել: Ռումին միշտ մեր տաճարները աւերել և ցրուել է. ո՛չ մի կերպ նրանց հետ վարուել կարելի չէ»[70]:

Գնահատելով հայերի բազմաթիվ ծառայությունները Իրանի Նադիր շահը 1736 թ. ճանաչել է Արցախի մելիքների

[70] Վաւերագրեր հայ-պարսկական յարաբերութեանց մասին, ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց՝ Հ. Աճառեան, Ե., 1927, էջ 79-83:

ինքնիշխանությունը և վերահաստատել նրանց դաշնային ինքնավարությունը՝ Խամսայի մելիքություններ (հինգ մահալ, պարսկերեն՝ «Մահալ-ե խամսե») անունով: Իսկ Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանը նշանակվել է Խամսայի մելիքությունների ընդհանուր կառավարիչ: Նա ուղղակիորեն ենթարկվում էր Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանին, որը նստում էր Ատրպատականի Թավրիզ քաղաքում: Մելիք-Եգանի մոտ էին հավաքվում Արցախի հինգ մելիքությունների հարկերը և նրա միջոցով հանձնվում շահական գանձարանին: Այսպիսով, «Անդրկովկասում Քարթլի-Կախեթի վրացական վալիության կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալ-ե խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկիություն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արաքսի ափը ձգվող հարակից տարածքները»[71]: Համեմատության համար նշենք, որ «իրանցիների կողմից վրաց թագավորները ճանաչված էին սոսկ որպես «կառավարիչներ» կամ «վալիներ» ու «խաներ»: Այդ արգելք չէր, որ վրաց նույն այդ իշխողները թագավորներ կոչվեին Վրաստանում և որպես այդպիսիներ նաև ճանաչվեին վրաց միջնադարյան հանրության կողմից»[72]: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայ իրականության մեջ էլ Արցախի մելիքությունները, փարված իրենց անառիկ լեռներին, մնացել էին այն միակ ուժը, որոնց հենքի վրա հնարավոր կարող էր վերստին հառնել հայոց պետության դեպքում կարող էր վերստին հառնել հայոց պետականությունը: Պատահական չէ, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «հայոց թագաւորաց ազնիւ զինվորաց մնացեալ ժառանգը»[73]:

Դա լավ գիտակցել են նաև աշխարհասփյուռ հայորդիները, որոնց համար Արցախի մելիքությունների ճակատագիրը

[71] Փափազյան Հ., Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼՀԳ», 1985, թիվ 5, էջ 78:

[72] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Ե., 1957, էջ 159:

[73] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 179.

միշտ էլ եղել է մտահոգությունների առարկա: Այսպես, հնդկահայ նշանավոր գործիչ «Շ. Շահամիրյանը Հնդկաստանում հայկական տպարանի հիմնադրումով ու մի շարք հրապարակախոսական գրքերի լույս ընծայմամբ փորձում էր ոգեկոչել հայ ժողովրդին ապստամբելու օտար տիրապետության լուծը թոթափելու համար: Ավելին, երկրի ճակատագրին իր առավել գործուն մասնակցությունը բերելու նպատակով ինքը ևս ցանկություն էր հայտնել տեղափոխվել հայրենիք: Այդ ցանկություններին ընդառաջելով ու վրաց իշխանի տիտղոս շնորհելով Շ. Շահամիրյանին, Հերակլ II-ը նրան էր նվիրել նաև այդ ժամանակ Վրաստանի իրավասության ներքո գտնվող հայկական Լոռի երկրամասը (1790 թ. նոյեմբերի 30)»[74]: Տակավին 1779 թ. հունվարի 15-ին Մադրասից Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին ուղղված նամակում Շ. Շահամիրյանը գրում է. «Թէպէտ քայքայեցաք յիշխանութենէ, հարստութենէ և նշանաւոր արանցէ, այլ շնորհօքն աստուծոյ ոչ իսպառ քակեցաք և բլաք որպէս իսրայէլ, եգիպտացիք, այսորիք և հունք. դեռևս գտանի միջի մերում մասնաւոր իշխանութիւն»[75], անշուշտ, ի նկատի ունենալով Արցախի մելիքությունները: Նամակի վերջում նա սիրո և միաբանության կոչ է անում մելիքներին: Իսկ երբ Շուշիի Իբրահիմ խանից հալածական Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Աբովը և Ջրաբերդ գավառի տիրակալ Մելիք-Մեջլումը հեռացել էին իրենց հայրենիքից, Շ. Շահամիրյանը հանդես եկավ նրանց հաշտեցնելու մի հետաքրքիր առաջարկությամբ: Այդ մասին տեղեկանում ենք նրա՝ 1792 թ. մայիսի 14-ին Մադրասից Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսին ուղղված նամակից. «Սիրելին իմ Մէլիք Ապաւն ցանկայ զի ի վարձու ունիցի ի մէնջ զքաղաքն Լօռի շուրջ պատեալ գաւառաւն, և ես հաճեցա տալ նմա՛, եթէ գործս այս հաճոյ թուեսցի կամաց

[74] Չոբանյան Պ., Հնդկահայ գաղթօջախի պատմությունից (նորահայտ վավերագրեր), «ՊԲՀ», 1988, թիվ 1, էջ 183:
[75] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 136-137.

Նորին Արքայական Բարձրութեան (Հերակլ II-ի-Ա. Մ.), և ես զայն, որ ի տկար մտաց իմոց կարելի պատմեցի Նորին Արքայական Բարձրութեանն. վասն բարութեան հասարակաց, որ կարելի է լինի ի պատճառէ բնակութեան Մէլիք Ապաւին ժողովրդեամբ իւրով ի Լօռի. նաևս յորդորեցի նմա՛, զի օգնական լինիցի մերոց մէլիքանոց, զի ազատապէս ունիցին զամրոցն Գիւլստան, և Ճարաբերդ գեղօրէիւք իւրովք ի ժառանգութիւն իւրեանց, միևնոյն պէս որպէս ունէին նախնիքն նոցա՛, այսինքն Մէլիքք Աթամ, և Յօվսէփն, և ի նոյն ժամանակի մի՛ մոռանայցէ զապստամբութիւնն Ապաւի և Մէջնումի ընդդէմ Իբրահիմ Ջհանշրին, որ բնականապէս ամենայն մարդ հաւատալ կարէ, զի թէ ապստամբութիւնն մէլիքանոց, և թէ կողոպտումն ընչից մէլիքանոց Իբրահիմ խանին, և յատկապէս միջոց երկայն ժամանակաւ ասպատակութեանն և յեղումն արեան երկուց կողմանց ո՛չ ի սրտէ Իբրայիմ խանին, և ոչ ի սրտէ Մէլիքք Ապաւ և Մէջնումին ո՛չ ելանէ, ուրեմն հնարն բանիդ, որ պահեսցէ զոցա՛ ամենեցուն ի խաղաղ կեանս այս է, որ որդին Մէլիք Ապաւի և որդիքն Մէլիք Մէջնումի, որ պատանդ կան ի Շօշ (Շուշի-Ա. Մ.), թողցեն զԳիւլստան հանդերձ Իգիրմիդօրթ և Գետաշէնովն որդւոյն Մէլիք Ապաւի, և Ճարաբերդն հանդերձ գիւղօրէիւքն որդւոյն Մէլիք Մէջնումի, զի կալով մնասցեն սիրով և միաբանութեամբ ընդ Իբրայիմ խանի, որպէս ի ժամանակի Մէլիքք Յօվսէփ և Աթամի, նաևս խաղաղութիւն խօսիլ ի մէջ Իբրահիմ Ջհանշրին, և Մէլիքք Մէջնում և Ապաւին, այս դաշամբ, զի Մէլիք Մէջնումն մասն ժողովրդեամբն իւրով բնակեսցի ի Շամքօր, և Մէլիք Ապաւն մասն ժողովրդեամբ իւրով ի Լօռի, կալով բարեկամ ընդ բարեկամս և թշնամի ընդ թշնամիս Իբրայիմ խանի»[76]: Այս առաջարկությունը, ինչպես ցույց տվեց կյանքը, թեև իրատեսական չէր, սակայն ինքնին մի վկայություն է հնդկահայ գաղթօջախում

[76] Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի արխիվ, թղթ. 81ա, վավ. 8:

Արցախի մելիքությունների ճակատագրի հանդեպ ունեցած սրտացավության:

Մատենադարանում պահվող մեկ այլ վավերագրում, այս անգամ գրված ռուսահայ գաղութում կարևոր դեր խաղացող Լազարյանների տոհմի անդամ Հովակիմի կողմից 1816 թ. օգոստոսի 12-ին և ուղղված Եփրեմ կաթողիկոսին, վերջինիս ծանուցվում է, որ նոր կուսակալ Ա. Երմոլովի հետ որպես նրա խորհրդականներ Անդրկովկաս են գալիս Ա. Սոկոլովն ու Ալ. Խուդաբաշյանը, և խնդրում է նրանց ու կուսակալի միջոցով կայսեր շնորհը խնդրել Արցախի մելիքների իրավունքների վերականգնման համար. «Միահետ ընդ ազնիւ Խուդաբաշեանին ողորմելեաց այդի մերազնէից, մանաւանդ վասն խղճալի մնացորդաց մէլիքաց Ղարաբաղու և Սղնաղու, որք զամենայն ստացուածս իւրեանց կորուսեալ՝ իբր զտառապեալ մուրացկանս ի Տփխիս քաղաքի և այլ ուրեք աստանդական շրջին չգտանելով զապրուստ իմն կամ զելս կացութեան, որոց միայն ձե՛զ է թողեալ, զօրէն ձեռնտու հովուապետի և օգնականի առաջնորդ լինելով զայցելութիւն ի Կուսակալէն և նորա ի դրանէ ողորմածագունեղ Կայսերն հայցելոյ, զի բաւ է լինելոց նոցա, եթէ դարձուսցեն ողորմելեացն այնոցիկ, գոնէ մասն ինչ ի գեղօրէից նոցա և ի հողոց, որով կարասցեն ապրել և անցուցանել զկեանս իւրեանց»[77]:

Այժմ, այս ընդհանուր բնույթի ծանոթություններից հետո տեսնենք, թե ինչ գործառույթներ են իրականացրել Արցախի մելիքները:

[77] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 62, պատճենները տե՛ս Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 178, թղթ. 155, վավ. 33:

Ա) ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԶԻՆՈՒԺԸ

Արցախի մելիքներն ունեին զորք պահելու իրավունք, որի զինվորները հավաքագրվում էին իրենց հպատակներից: Յուրաքանչյուր տուն պարտավոր էր մելիքի պահանջի դեպքում մի զինվոր տալ, իսկ անհրաժեշտության դեպքում զինվում էին զենք կրելու ընդունակ բոլոր մարդիկ: Զինվորն ինքն էր հայթայթում իր զենքերն ու ձին, իսկ եթե նա աղքատ էր լինում, ապա մելիքն էր տալիս: Մելիքները մշտապես պահում էին նաև մոտ 300 հոգուց բաղկացած թիկնազոր: Մելիքը համարվում էր իր զորքի ընդհանուր հրամանատարը, որի յուրաքանչյուր խումբն ուներ իր հարյուրապետը (յուզբաշին): Այս պաշտոնը ժառանգական էր, սակայն երբեմն մելիքները յուզբաշու կոչումով պարգևատրում էին նաև մարտերի ժամանակ առավել աչքի ընկնող զինվորներին:

Մելիքական զորքը զինված էր հրացանով, թրով և դաշույնով: Իսկ մելիքները մարտի գնալիս ձախ կողքից կապում էին կեռ թուր, առջևից՝ դաշույն, ձախ ուսով ձգում էին վառոդամանը, իսկ աջով՝ փամփշտակալը, որի մեջ շարված էին վառոդ պարունակող փամփուշտները: Մելիքին հետևող հրացանակիրը մշտապես նրա համար պատրաստ էր պահում մեկից երեք հրացան: Վառոդ պատրաստելը մելիքի արտոնությունն էր[78]:

Աղբյուրները վկայում են, որ արցախցի զինագործները նաև հրացաններ են պատրաստել մելիքական զորքի համար: Այսպես, Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետը XVIII դ. 20-ական թվականների հայոց ազատագրական շարժման օրերին՝ 1725 թ. օգոստոսին, ռուսաց արքունիքին զեկուցում է, որ «չաղեղ բան ան գտել արջիջի, էրկաթի և պղնձի» ու արցախցի զինագործները օրական շուրջ 10 հրացան են պատրաստում[79]:

[78] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 244-245, 252:
[79] Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. II, Е., 1967, с. 255.

Մելիքների զինուժը հանդիսացել է այդ իշխանությունների հզորության և անվտանգության գրավականը: Մելիքների զորքի թվաքանակը նրանց իշխանության երկարատև ժամանակահատվածում եղել է փոփոխական: Նրանք առավելագույն թվով բանակ ունեցել են 1720-ական թթ. ազգային-ազատագրական հուժկու պայքարի տարիներին: 1722 թ., ինչպես վկայում է Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, նրանք «գումարեալ կային անդ ի ձեռն Մելիքներաց, և չորս գլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց անուանքն են Աւան, Տրուան, Տահէին և Սարուխան, որ և սոքա հարիւրապետք և իւզպաշիք կոչէին: Սոքա ընդ Մելիքներացն Ղարաբաղու, զկնի առաջին դառնալոյն Վախտանկին և խախտելոյ իշխանութեան Պարսից, միաբանեալ ընդ ինքեանս զամենայն քաջասիրտ և արիական և զօրեղ մանկունս և երիտասարդս տանս Աղուանից, ըստ ինքեանց կազմեալ էին զօրս բազումս աւելի քան զերկոտասան հազար, և ամրացեալք յամուր վայրսն Արցախու»[80]: Իսկ Աղվանից հայաթոռ Ներսես կաթողիկոսը 1723 թ. մարտին Պետրոս I-ին հղած իր հայտնի նամակում գրում է. «Հայոց ասկէս քանի մի ընտրելագոյն զօրաւորք, որպէս յառաջ ևս եմք արզ արել, որ մէկ քանի հազար զօրք ունին ի լերանց ամուր տեղաց սղնախ են արել»[81]: Նրա մատնանշած մելիքները և յուզբաշիները նույն ամսին Պետրոս I-ին ուղղած նամակում հաղորդում են հետևյալը. «Մ[ի]մեանց ձեռս արկաք Ժ (10) և ԺԲՌ (12000) մարդ ժողովեցանք, պատերազմ մտանք կամ թէ լազկոյ հետ կամ թէ տանս Աղուանից թուրքաց հետ: Ամուր ծայրս քարանց սղնաղ կապեցանք, ի մեծի թագաւորիտ սուրբ աղօթիւն, շատ կոտորումն և յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց»[82]: 1723 թ. ապրիլին Մինաս վրդ. Տիգրանյանը գրում է, որ հայոց Եսայի պատրիարքը

[80] Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 47:

[81] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 27.

[82] Там же, с. 29.

Գանձակի և Ղափանի արանքում 12000 զորքով սպասում է ռուսների ժամանմանը[83]:

Մեզ է հասել Արցախի սղնախների զորահրամանատար Ավան յուզբաշու՝ 1724 թ. հունվարի 12-ի մի ուշագրավ տեղեկանքը իր անմիջական հրամանատարության ներքո գտնվող զինուժի թվաքանակի մասին, որտեղ կարդում ենք. «Մեք, Տոչի սղնաղին ուզբաշիքս և մեր թաբուն թալեղօվս, որ հազիր նարաղով կանք, ես՝ ուզբաշի Ավանըս, և ես՝ ուզբաշի Միրզէս, մեր թաբուն թալեղօվս կանք ԵՃ (500) թվանկաւոր սահաբ նարաղ, և էլ առանց նարաղ յազիր էլ մարթ կայ ԶՌԴՃ (6400), զրայ թուր և թվանկ չունենք»[84]: Իսկ Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետը 1724 թ. փետրվարի 5-ին ռուսաց կառավարությանն ուղղված զեկուցագրում հաղորդում է, որ «էս Դ, Ե (4, 5) սղնաղի Խայէրն յեփ չափղուն (ավարառության-Ա. Մ.) ան գնաման, ԻՌ (20000) մարթ այ դուս գնաման չափղուն, որ մարդայրօլ ան»[85]: Նույն թվականի մարտի 5-ին Պետրոս I-ին հղված մի գրության մեջ Արցախի սղնախների զորապետները ևս հաղորդում են, որ իրենք միասնաբար 20000 կռվող ունեն, որոնց կեսը, սակայն, անզեն է[86]: Քննելով 1720-ական թթ. հայկական զինուժի թվաքանակի հարցը, պատմաբան Պ. Հարությունյանը գտնում է, որ Արցախի սղնախներում ազատագրական շարժումներին ակտիվորեն մասնակցում էին ավելի քան 20000 կռվողներ[87]: Բնականաբար, վտանգի ժամանակ այդ թիվն ավելանում էր աշխարհազորի հաշվին:

Արցախյան զինուժի ռազմունակության մասին է վկայում այն փաստը, որ 1724 թ. ապրիլին Ղարաբաղի սղնախ-

[83] Там же, с. 33.

[84] Там же, с. 57.

[85] Там же, с. 67.

[86] Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 180, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 196.

[87] **Арутюнян П.,** Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 161.

ներից 2000 մարտիկներ Ավան յուզբաշու գլխավորությամբ օգնության են գնացել ղափանցիներին՝ նրանց իսկ խնդրանքով[88]:

1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական ամոթալի պայմանագրից հետո հայկական զինված ուժերը շարունակել են հերոսական պայքարը օսմանյան ռազմակալման դեմ: Ավելին, Անդրկովկասում թուրքական ծավալապաշտության առջև ծառացած ամենալուրջ խոչընդոտը հենց Արցախն ու Սյունիքն էին, որոնք այդ տարիներին ողջ տարածաշրջանում հայտնի էին պետականության խմաստ պարունակող Հայոց Սղնախներ (армянское собрание) անվանումով[89]: «Ստանձնելով այսքան բացառիկ մի դեր, որ փաթաթժում էին նրա վզին բացառիկ հանգամանքները,-գրում է Լեոն,-հայ զինվորությունը դառնում էր և երկրի գերագույն տերն ու տնօրենը, կենտրոնացնում էր իր մեջ ամբողջ իշխանությունը, և այնուհետև բանակցությունններն ու դիմումներն առանձին անհատների անունից չէին վարվում, այլ Հայոց Սղնախների անունից: Դա ժողովրդական մի զինվորություն էր, կառավարվում էր իր առաջնորդների, հրամանատարների խորհրդով, ուր իր տեղն ու ազդեցությունն ուներ նաև Գանձասարի կաթողիկոսը»[90]: Պատահական չէ, որ անգլիացի ճանապարհորդ Ջոնս Հանվեյը Հայոց Սղնախները համարել է հանրապետության նման մի բան[91]: Պատմաբան Զ. Արզումանյանը իրավացիորեն նկատել է, որ Արցախում և Սյունիքում սղնախների առաջացումը արդյունք էր 1722 թ. հայոց ապստամբության, և դրանց ստեղծումը հետապնդում էր այդ ապստամբության հետևանքով ձեռք բերված ազատության պաշտպանության նպատակ[92]: Այդ թվականներին տարածաշրջանում ստեղծված իրավիճակը լավագույնս ներկայացրել են Եսայի կաթողիկոսն ու Արցախի մելիքները՝ 1723 թ. նոյեմբերի 1-ին Պետրոս I-ին հղած նամակում. «Թագաւորն Պարսից յոյժ նուազեցաւ, և ոչ իսկ երևի, և իշխանութիւն օսմանցոյն տակաւին առ մեզ ոչ է հասեալ»[93]: Եվ հենց կենտրոնական իշխանության բացակայության այդ պայմաններում է, որ Հայոց Սղնախները, որպես ռազմաքաղաքական միավորումներ, իրականացրել են իրենց երկրամասի կառավարումը և անվտանգության ապահովումը: Իր ազատությունը պաշտպանելու նպատակով լեռնաշխարհի հայությունը դիմել է կենաց և մահու պայքարի:

Թուրքական բանակի հարձակումը Արցախի վրա սկսվել է 1725 թ. փետրվարին: Մարտի 1-ին Շահին, Սալահ և Ալի փաշաների գլխավորած 4700 հոգուց բաղկացած զորամասը մտել է Վարանդա ու տեղավորվել գավառի 33 գյուղերում: Սակայն, այդ զորամասի մուտքն Արցախ ավարտվել է անփառունակ վախճանով: Տեղացիները մի գիշերում ոչնչացրել են իրենց տներում տեղավորված թուրքերի մեծ մասին և նրանց երկու հրամանատարներին, իսկ Սալահ փաշային գերել են: Այդ դեպքի մանրամասներին տեղեկանում ենք Եսայի և Ներսես կաթողիկոսների ու Արցախի մելիքների՝ 1725 թ. մարտի 10-ին Պետրոս I-ին հղած նամակից. «Այժմս, որ մեր թուականս ՌՃՀԴ (1725) է մարտի ամսոյ մէկումն ԴՌԷՃ (4700) հեծեալ սայ ղօշուն եկին մեզ վերայ, Գ (3) փաշայ էր՝ Շահին, Սալահ և Ալի անուն: Մեք էլ տեսանք որ շատ են, կռուելով չէ լինիլ, յառաջ գնացինք ղօնաղ արինք, մեր գեղերանց վերայ բաժանեցինք, որն Բճ (200)-ով, Գճ (300)-ով, Դճ (400)-ով, Եճ (500)-ով տեղուտեղ կոտորեցինք, Բ (2) փաշան ևս սպանեցինք. Սալահ

---

[88] Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. I, Е., 1964, с. LVII, Յովհաննիսյան Ա., Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թիվ 1, էջ 104:
[89] **Aivazian A.,** The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, Yerevan, 1997, pp. 84-85.
[90] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 140:
[91] **Jonas Hanway,** A Historical Account of the British trade over the Caspian sea with the Revolutions of Persia, London, 1754, vol. III, part VIII, p. 252.

[92] Արզումանյան Զ., Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը, «ԼՀԳ», 1982, թիվ 9, էջ 85-86:
[93] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 48-49.

փաշան ողջ պահած ունիմք, ապա մէկ ՃԾ (150) մարդ փախան բրծան. ԲՃ (200) աւելի քրիստոնեա եսիր կայր, ազատեցինք»[94]:

Հարցաքննության ենթարկված Սալահ փաշան պատմել է Օսմանյան Թուրքիայի և կովկասյան լեռնականների միջև եղած հայկական սեպը վերացնելու իրենց մտադրության մասին. «Մեր թագաւորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկիրներիս Հայն և ղզլպաշն փչացնեմք,-խոստովանել է նա,-չուն որ Ռուս թագաւորի զօրքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. Հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի. Նաև ասաց այս փաշաս,-շարունակվում է վավերագրում,-թէ Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանտու և Պաքու վերա էինք գնացել, որ զատիմի մերն է»[95]: Սույն ուշագրավ փաստաթղթից ակնհայտ է դառնում, որ ժամանակը որևէ սրբագրում չի մտցրել մեր հարևանների ծրագրերում: Թուրքիայի, որպես ցեղասպան պետության, արմատները մխրճվում են դարերի խորքը:

Հայկական զինված ուժերի պայքարը թուրք նվաճողների դեմ շարունակվել է նաև հետագա տարիներին: Սղնախականներին քանիցս հաջողվել է հետ մղել թվական գերակշռություն ունեցող օսմանյան բանակի հարձակումները: 1725 թ. հուլիսի 25-ին Գանձասարից Եկատերինա I-ին ուղարկած նամակում Եսայի և Ներսես կաթողիկոսներն ու Արցախի մելիքները գրում էին, թե «այս երկրներս սարով և տեղով շատ ամուր են, և մեք այս խալղս ամէքն իւր երկրումն սղնաղ, սղնաղ եմք արել ամուր տեղերն, և ամէքս մէկ սղնաղին վերա նստած պահում եմք»[96]: Մեկ տարի անց՝ 1726թ. հունիսի 15-ին Եսայի կաթողիկոսն ու մելիքները Վախթանգ VI-ին ավետում

[94] Там же, с. 234.
[95] Там же, с. 249.
[96] Там же.

էին Խաչենում հայկական զինուժի տարած հերթական հաղթանակի մասին: «Յունիս ամսոյ Ժ (10)-ումն Գանջու զօշունն եկին Խաչինու վերայ,-գրում էին նրանք,-Ղազանչի, Ղապարթու, Ջանկաթաղ անուն գեղարանքն չափմիշ արին՝ կոտորեցին, եսիր, ապրանքն տարան: Մեք էլ տուս եկինք նոցա վերայ, աստուծով, կոխեցինք, կոտորեցինք՝ եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք»[97]:

1726 թ. աշնանը Սարը Մուստաֆա փաշայի գլխավորած օսմանյան բանակը արշավել է Ավան յուզբաշու սղնախի վրա: Ութօրյա կատաղի մարտերից հետո թուրքերին հաջողվել է գրավել սղնախի մի մասը, սակայն հայ ինքնապաշտպանները վճռական հակահարված են տվել թշնամուն: Ի վերջո, կորցնելով 800 ասկյարների և երկու զորահրամանատարների, Սարը Մուստաֆա փաշան գլխիկոր վերադարձել է Գանձակ: Այդ կռվի մանրամասներին տեղեկանում ենք Իվան Կարապետի՝ կանցլեր Գ.Գոլովկինին ուղղած զեկուցագրից, որտեղ կարդում ենք. «Բարդոյ Սարու Մուստայֆայ փաշէն Շամբախի եքան: Լսեց Շամբախուց յեդ դառցաւ, ուժօվ, ղուշումօվ և Հաջի Դավութ, ուր ախպէրն, ուր ղօշումօվն եկին Ավան ուզբաշուն սէղնաղին վերէն. Դ (4) օրն կռիվ տվին: Դ (4) օրէն յետ Ավան ուզբաշին ուր սէղնաղինց դուս էլավ, եկավ իմ սէղնաղն, որ է Թարխան և Բաղին և Սարգիս ուզբաշուն սէղնաղ էր: Ավան ուզբաշու դուս գոլէն յետ, Օհան և Սիմոն ուզբաշուն խետ Դ (4) օր էլ կռիվ տվին, որ դառցավ Ը (8) օրն, մինչի սէղնաղին կէսն առին, խիզան ոխջ բոլորեցին վերին սէղնաղ: Ներքի սէղնաղին որչան որ ձի և տավար կէր, տարան: Ը (8) օր թօփօվ և ղումպարօվն կռիվ տվին, շատ մարդ կոտորվէց: Ղախչաշմայ աղասին և յենդիչար աղասին էս կռվուն սպանեցին: Էտ Բ (2) մարդէն օր սպանեցին Սարու Մուստայֆա փաշէն քշերօվ վեր կացաւ Բ (2) օրէն ճանապարհն մի օր գնաց»[98]:

[97] Там же, с. 285.
[98] Там же, с. 290-291.

Այդ մարտերի մասին որոշ տեղեկություններ է թողել նաև թուրք պատմագիր Իսմայիլ-Ասըմ էֆենդի Չելեբի-Զադեն իր «Թարիխի Չելեբի-Զադե» երկում: «Սղնախցիների պարագլուխը, Ավան անունով մի հայ, թնդանոթով և խումբարայով եկել և Սղնախի վրա ամրացել էր,-գրում է նա: -Հաղթական (օսմանյան-Ա. Մ.) բանակը իր ղեկավարով Սղնախի գնդակի տակ գտնվող Շուշի գյուղը եկավ և հանկարծակի հարձակումով մինչև երեկո մի քանի թնդանոթով գնդակոծեց Սղնախներին: Այդ գիշերը սղնախցին իր տրամադրության տակ գտնվող հայերի հետ միասին փախավ»: Այնուհետև Չելեբի-Զադեն հրճվանքով պատմում է օսմանյան բանակի կատարած ավերառության և սպանությունների մասին. «Հաջորդ օրը իսլամական զինվորները գրավեցին նրանց ինչքերն ու ապրանքները և փախստականներից ձեռք ընկած 400 անկրոն հայերի սպանեցին: Ձմեռվա վերահաս ցրտերի պատճառով [սերասքերը] սղնախցիներին պատժելուց հետո շարժվեց դեպի Գենջե»[99]: Այստեղ թուրք պատմագրի չափազանցությունն ակնհայտ է: Պարզ է, որ սերասքերի` երկու օրվա ճանապարհը մի օրում գնալու պատճառը ոչ թե վերահաս ցրտերն էին, այլ հայերի վճռական հակահարվածը:

Պատահական չէ, որ մերձկասպյան ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Վ. Դոլգորուկովը 1727թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հղած զեկուցագրում զարմանքով նշում է. «Մարդկային բանականությունից վեր է հասկանալ, որ նրանք այդքան հզոր թշնամու դեմ դեռ կարողանում են պաշտպանվել»[100]: Երկու տարի անց` 1729 թ. նոյեմբերի 10-ին, Ավան յուզբաշին գեներալ Վ. Դոլգորուկովին ուղարկած նամակում գրում է, որ սղնախներում հազարավոր զինվորներ շա-

[99] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Ե., 1961, էջ 159:
[100] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 294.

րունակում են պայքարը` չմտածելով թուրքերին անձնատուր լինելու մասին[101]:

Արցախի մելիքների զորախմբերը օսմանյան ռազմակալման դեմ մղած իրենց հերոսական պայքարով 1730-ական թթ. մեծ աջակցություն են ցույց տվել Իրանի տիրակալ Նադիրին: Հատկապես 1735 թ. Գանձակի պաշարման ամիսներից հետո Արցախի և Սյունիքի հայոց մելիքների զորախմբերը ուղեկցում էին նրան ամենուրեք: Նադիրի պալատական պատմագիր Մուհամմադ-Քյազիմը հայ զինվորության առաջնորդների մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք-Եգանին, ապա հիշատակում Մելիք-Թամրազի և Մելիք-Հարությունի անունները: Ըստ նրա, այդ մելիքներն իրենց իշխանությունը տարածել էին մինչև Կուր և Արաքս ու սպառնում էին Գանձակի և Երևանի բերդերին[102]: Մելիքները ոչ միայն մասնակցում էին օսմանյան զորքերի դեմ մղվող մարտական գործողություններին, այլև ապահովում ռազմական հարկերի գանձումը իրենց մելիքություններում, պարեն և հանդերձանք հայթայթում Նադիրի բանակի համար: Գնահատելով թուրքերի դեմ մղված պայքարում հայերի բազմաթիվ ծառայությունները Նադիր շահը 1736 թ. ճանաչել է Խամսայի մելիքությունների ինքնավարությունը:

* * *

Խամսայի մելիքները ստիպված էին նոր մարտահրավերներին դիմակայելու Արցախում քոչվոր Ջիվանշիր ցեղի սարջալների հետ, երբ «անլու ճյուղի ցեղապետ Փանահի հայտնվելուց հետո, երբ «անլու ճյուղի ցեղապետ Փանահ խանի Ջուանշիր կաւ մեծ խմն հակառակութիւն ընդ Փանահ խանի Ջուանշիր կաւ մեծ խմն հակառակութիւնն տևեալ մինչև ցեօթն ամ դաւառին. այս ինչ հակառակութիւնն տևեալ մինչև ցեօթն ամ անընդհատ խմն շարունակութեամբ ընդ միմեանց պատերազ-

[101] Там же, с. 320.
[102] Փափազյան Հ., Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, թիվ 2, էջ 76, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 181:

մնալ յերկոցունց կողմանց եղեալ անմիւ արիւնհեղութիւն»[103]: Այդ ժամանակ Դիզակի Մելիք-Եսային առաջինն էր, որ գիտակցեց կանոնավոր զորախմբերի առկայության անհրաժեշտությունը: Նա, լինելով «հմուտ ամենայն հնարիցն մարտի՝ խրախոյս տայր և քաջալերէր, ուսուցանէր զամենայն հնարամարտութիւնս. աներկչոտ խրոխտաբար արձակելն ի վերայ մահաշէն թշնամեաց՝ աներկիւղ իսկ նահատակիլն՝ քան վատ անուն ժառանգելով կեալն: Նաև մնալ միշտ պատրաստ ի լսել գձայն պատերազմի»[104]: Բնավ էլ պատահական չէ, որ այդ գաղափարը ծնվել է Դիզակի Մելիք-Եսայու մոտ: Կտրված իր երկու դաշնակիցներից՝ Գյուլիստանի Մելիք-Հովսեփից և Ջրաբերդի Մելիք-Ադամից, նա հարկադրված էր միայն սեփական ուժերին ապավինած պատերազմելու Փանահի և Վարանդայի տխրահռչակ Մելիք-Շահնազարի դեմ: Առանց կանոնավոր և մարտունակ զորաջոկատների առկայության նա, բնականաբար, ի վիճակի չէր լինի երկար դիմակայել խանական զորքերի հարձակումներին:

Փանահի դեմ հաջողությամբ մարտնչում էին նաև Մելիք Եսայու դաշնակիցները՝ Մելիք-Հովսեփը և Մելիք-Ադամը: Նրանց «ամրոցի (Ջրաբերդի-Ա. Մ.) անմատչելիության շնորհիվ խանը չէր կարողանում հասնել իր նպատակին,-գրում է Միրզա Ադիգյոզալ-բեկը,-այլ լեռնափեշերին փռված ցանքերն էր իր զորքի ձիերի սմբակների տակ տալիս... Սակայն երկու մելիքները, չնայած անմասելի զրկանքներին, չորս տարի շարունակ ցույց տվեցին անսասանության և համառության օրինակներ: Այդքան երկար ժամանակի ընթացքում նրանք չնահանջեցին սպանության և ավարառության ճանապարհից՝ դրսևորելով համառության և հանդգնության օրինակներ: Նրանք գլխավորում էին [այժմ] հանգուցյալ Փանահ խանի դեմ մարտի եկած շրջապատի խաների զինված ջոկատները և

[103] Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, էջ 44:
[104] Նույն տեղում, էջ 49-50:



Խամսայի մելիքությունները
(քարտեզն ըստ Հայկական Համառոտ Հանրագիտարանի)

Արցախի մելիքությունների հոգևոր կենտրոնը՝
Գանձասար

Խաչենի Վախթանգ իշխանի մանրանկարը

Գյուլիստանի բերդը

Ջրաբերդ

Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյան
(1768-1808)

Առուստամ բեկ
Մելիք-Բեգլարյան



Մելիք-Աբովի գրություններից
(1796 թ.)

Դավիթ Մելիք-Բեգլարյանի
տապանաքարը Չինսուրայում

Գեներալ-լեյտենանտ
Անդրեյ Աքաբեկյան



Գարեգին Աքաբեկյան



Աքաբեկյանների ջրաղացը



Մելիք-Վանի Աքաբեկյանի
կնիքը



Աքաբեկյանների
զինանշանը

Հովսեփ-բեկ Աքաբեկյանի տապանաքարը

Դավիթ խան Մելիք-Շահնազարյան

ոչ մի քայլ չէին նահանջում նրա դեմ սկսած պայքարից»[105]: Ըստ էության, Փանահ խանին այդպես էլ չհաջողվեց իր իշխանությունը տարածել Դիզակի, Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքությունների վրա: Փանահի մահից հետո (1762) նրա որդին և հաջորդը՝ Իբրահիմ խանը (1762-1806), ստիպված էր դեռ երկար պայքար մղելու այդ ինքնիշխան հայկական մելիքությունների դեմ:

Արցախի մելիքները, թեև ոչ նախկին չափով, սակայն իրենց զինուժը պահպանել էին նաև XVIII դ. երկրորդ կեսին: Վրաց թագավոր Հերակլ II-ը 1769 թ. կազմած Վրաստանին սահմանակից մարզերի նկարագրության մեջ այդ մասին գրում է. «Խամսան մի տիրություն է, որի ամբողջ բնակչությունը հայեր են... Հայերն ունեն մեծ բերդ: Ջիվանշիրցիներից կռվի մեջ կմտնեն երկու հազար հինգ հարյուր հոգի, իսկ հայերից՝ չորս հազար հինգ հարյուր: Խամսայի հայերը կռվելու գործում չափազանց քաջ են»[106]: Վրաց թագավորը միաժամանակ նկատում է նաև, որ հայ մելիքների անմիաբանության պատճառով է ջիվանշիրցի ինքնակոչ Փանահ խանը հաստատվել Արցախում:

XVIII դ. 80-ական թթ. Արցախի մելիքները դեռևս պահպանում էին իրենց ռազմական կարողությունները: Այսպես, հայ-ռուսական բանակցությունների ընթացքում՝ 1780 թ. հունվարի 13-ին, Հովսեփ արք. Արղությանը զորավար Ալ. Սուվորովին տեղեկացնում է, որ Արցախի մելիքներից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ունի 1000 զինվոր[107], ...
սինքն՝ միավորվելու դեպքում նրանց զինվորական ուժը կ...
րող էր հասնել հինգ հազարի: Սակայն, ցավոք պետք է արձ...
նագրել, որ Արցախի մելիքությունների գոյության ավելի քան 200 տարվա պատմության մեջ մելիքների զինուժը, բացա-

---

105 **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с. 60.
106 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 94-95.
107 Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Յովսէփ Արղութեան, էջ 25:

ությամբ 1720-ական թթ., այդպես էլ չկարողացավ համախմբվել մեկ դրոշակի ներքո:

1790-ական թթ. սկզբին, երբ Շուշիի Իբրահիմ խանից հալածական Գյուլիստանի Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանը և Ջրաբերդի Մելիք-Մեջլում Մելիք-Իսրայելյանը ապաստանել էին Գանձակում՝ Ջավադ խանի մոտ, այնտեղից պարբերաբար իրենց հեծելախմբերով հարձակումներ էին գործում Իբրահիմ խանի դեմ: «Այդ արշավանքները տևեցին մի քանի տարի... Ամեն մի հարձակում վերջանում էր կոտորածով, հրդեհով, ավերածով և գերեվարությամբ: Ղարաբաղի թուրքերը սկսեցին այդ ժամանակ հայի ձևով հագնվել, որ չճանաչվեն: Ամեն մի թուրք, որ հայերի ձեռքն էր ընկնում, անխնա կերպով սպանվում էր: Արշավանքներն առաջնորդում էին Դալի-Մահրասան (Ավագ վարդապետը), Թյուլի-Արզումանը և շուշեցի զարգար Մելքումը: Նրանք այն աստիճան նեղի մեջ դրին Իբրահիմ խանին, որ բոլորովին կտրեցին Թարթառ գետի անցքը և ոչ մի մահմեդական չէր համարձակվում դեպի Գանձակի կողմերը անցկենալ»[108]: Այդ ժամանակների ծնունդ է «մուսուլմանի գլուխ՝ սխտորի գլուխ» արտահայտությունը[109]: Մելիքական ոչ մեծաթիվ հեծելախմբերը շարժունակության և տեղանքին քաջածանոթ լինելու շնորհիվ կարողանում էին առավելություն ստանալ խանական զորքերի դեմ մղվող կռիվներում: Այդ մարտերը թեև տեղային նշանակություն ունեին և չէին կարող մեծ խնդիրներ լուծել, այնուամենայնիվ Արցախի մելիքությունների պատմության հերոսական էջերից են: Այդ ժամանակների ժողովրդական հերոսների ոգով դաստիարակված արցախցի ֆիդայիների մի ողջ աստղաբույլ աչքի ընկավ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայոց ազգային-ազատագրական պայքարում:

108 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 495-496:
109 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 370:

* * *

Արցախի մելիքներից շատերը իրենց զորաջոկատներով ակտիվորեն մասնակցել են 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Այդ մարտերում աչքի են ընկել Վարանդայի տիրակալ Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի, Գյուլիստանի տիրակալ Մելիք-Աբովի որդու՝ Ռոստոմ-բեկ Մելիք-Բեգլարյանի և Գյուլյաթաղի Մելիք-Րովշան Մելիք-Ալլահվերդյանի հեծելախմբերը: Վերջինիս զորաջոկատում իր մարտական մկրտությունը ստացավ կուսապատցի Վանի յուզբաշին՝ ապագա նշանավոր Մելիք-Վանի Աթաբեկյանը, որի սխրագործություններին է նվիրված ռուս պատմաբան Վ. Պոտտոյի «Ղարաբաղի առաջին կամավորները» աշխատությունը[110]:

Կովկասի կառավարչապետ Պ. Ցիցիանովը 1804 թ. մայիսի 20-ին հավատարիմ ծառայության դիմաց կայսեր կողմից Մելիք-Ջումշուդին պարգևատրել է արծաթյա սրով[111]: Իսկ 1805 թ. մարտի 23-ի գրությամբ Պ. Ցիցիանովը, նշելով Մելիք-Ջումշուդի անձնվեր ծառայությունները Երևանյան արշավանքի ընթացքում, կայսեր անունից երախտագիտություն է հայտնել նրան[112]:

Արցախի մելիքների զորաջոկատները շոշափելի ներդրում են ունեցել ռուսական բանակի հաղթանակներում՝ դրանով նպաստելով իրենց հայրենիքի միավորմանը Ռուսաստանին:

Արցախի մի քանի մելիքներ իրենց զորաջոկատներով ցարական բանակի կազմում մասնակցել են նաև կովկասյան լեռնականների դեմ մղված ռազմական գործողություններին: Այսպես, Ջրաբերդ գավառի տիրակալ Մելիք-Վանի Աթաբեկյանը 1819 թ. օգոստոսին իր հեծելախմբով մասնակցել է Ղայ-

110 **Потто В.,** Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902. Այսուհետև հղելու ենք սույն աշխատության հայերեն թարգմանությունը՝ Պոտտո Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, Ե., 1974:
111 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 168, պատճեն:
112 Նույն տեղում, թղթ. 240, վավ. 170, պատճեն:

թաղի և Տաբասարանի հնազանդեցմանը: Այդ մարտերի ժամանակ Մելիք-Վանու ցուցաբերած խիզախության մասին է վկայում Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի կողմից 1821 թ. դեկտեմբերի 28-ին նրան տրված վկայագիրը, որտեղ կարդում ենք. «Թագավոր Կայսրը գնահատելով ծառայության նկատմամբ Ձեր գերազանց ջանասիրությունը և լեզգինների ու կուչինցիների դեմ մղած կռիվներում ցուցաբերած արիության համար Ամենաողորմածը բարեհաճել է Ձեզ պարգևատրել սույն գրության հետ ուղեկցող «քաջության համար» ոսկյա մեդալով, Գեորգիևյան ժապավենով»[113]: Այս կապակցությամբ Վ. Պոտտոն իրավացիորեն նշում է. «Ալեքսեյ Պետրովիչի (Երմոլովի-Ա. Մ.) ժամանակ քչերը կարող էին պարծենալ նման պարգևներով»[114]: Իսկ արցախցի մեկ այլ ազնվական՝ Վարանդայի Մելիք-Ջումշուդի որդի Բահրամ-բեկ Մելիք-Շահնազարյանը, 1818 թ. լեզգինների դեմ իրագործված արշավանքին մասնակցելու համար ստացել է պրապորշչիկի աստիճան[115]: Կարծում ենք, նա ևս Մելիք-Վանու նման այդ արշավանքին մասնակցել է իր զորաջոկատով:

Այս տոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Խաչատուր-բեկ Մելիք-Շահնազարյանը, 1831 թ. կովկասյան լեռնականների դեմ մղված մարտերում ցուցաբերած քաջության համար Նիկոլայ I-ի՝ 1833 թ. հուլիսի 11-ի հրամանագրով պարգևատրվել է Ս. Աննայի երրորդ աստիճանի շքանշանով[116]:

Արցախի մելիքները զինուժ ունեցել են նաև XIX դարի 20-ական թվականներին: Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի թափորի կազմում 1822 թ. Գյուլիստանում գտնված գրող Մ. Թաղիադյանը վկայում է, որ այդ «դաւառն բովանդակ կալուած էր անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսեփայ Փրինց-

113 Պոտտո Վ., նշվ. աշխ., էջ 40:
114 Նույն տեղում:
115 РГВИА, ф. 395, оп. 92, д. 154, л. 1.
116 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 121:

նեան և եղբարց. որ կարէր հանել ըստ հարկին՝ ձիաւորս հինգ հազար ի պատերազմ. ողջ հայս՝ արիս և քաջամարտիկս»[117]: Բերված փաստերը վկայում են, որ Արցախի մելիքներին հաջողվել է իրենց ռազմական կարողությունները պահպանել ընդհուպ մինչև մելիքությունների ժամանակաշրջանի ավարտը:

117 Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Ե., 1975, էջ 164:

Բ) ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արցախի մելիքություններում դատարանները եղել են տեղական կառավարման կարևոր օղակներ, իսկ մելիքների իրավասությունների մեջ է մտել նաև դատավարությունը: Մելիք-Շահնազարյանների դատաստանական գործի փաստաթղթերից մեկը վկայում է, որ Արցախի մելիքությունների կազմավորումից սկսած՝ «Խամսայի հինգ մահալների տիրակալները..., իշխելով այդ մահալներում, իրավունք ունեին, որով պատժում էին հպատակներին հանցագործությունների համար»[118]: Արցախի մելիքություններում դատավարության կարգի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հավաքել ազգագրագետ Ե. Լալայանը[119] և Հ. Մուսայելյանը[120]: Հիմնականում հենց այդ տվյալների օգնությամբ ենք պատկերացում կազմում մելիքական դատարանի մասին, որովհետև ժամանակին նրանց արձակած դատավճիռները չեն արձանագրվել:

Առհասարակ, դատավարությունն Արցախի մելիքություններում պարզ էր: Արցախի յուրաքանչյուր մելիքությունում դատական իշխանությունը կենտրոնացած էր տվյալ գավառի մելիքի ձեռքում: Ծանր հանցանքները քննում էր մելիքը, իսկ թեթևները և գյուղական վեճերը՝ նրա հաստատած տանուտերերը: Վերջին դեպքում նրանք գեղջավագի պաշտոնը զուգակցում էին դատավորի պաշտոնի հետ: Այդ դատարանները կարելի է անվանել տանուտիրական[121]: Ի տարբերություն Ղարաբաղի խանությունում գործող մահմեդական

[118] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 180, թ. 48:
[119] «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, N 1, էջ 253-255, Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 245-247:
[120] Մուսայէլեան Յ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, թիւ Գ, էջ 251-253:
[121] Թորոսյան Խ., Դատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1965, թիվ 12, էջ 94:

դատարանի, որի անդամները ղեկավարվում էին շարիաթով, դատավարության ժամանակ «հայերն առաջնորդվում էին ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմերով, իսկ որոշ դեպքերում էլ օգտվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»[122]: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հմուտ հայագետ Վ. Բաստամյանցը Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» իր հրատարակությանը կցած առաջաբանում գրում է. «հաւանական է», որ «Խաչենոյ երկրի իշխանները՝ Վախթանգը և նորա յաջորդները ի պատիւ Մխիթարի ընդունեցին նորա Դատաստանագիրքը, եթէ ո՛չ բոլորովին, գոնեա մասամբ, և գործադրում էին իւրեանց գաւառում»[123]: Իր առաջաբանի մեկ այլ էջում նա նշում է. «Գործածութիւն ունեցաւ, անշուշտ, Մխիթարի Դատաստանագիրքը բուն իսկ Հայաստանում, կամ գոնեա նորա մի քանի նահանգներում, մանաւանդ Խաչէն գաւառում: Վերջինիս վերաբերմամբ այս ենթադրութիւնը հաստատվում է Վենետիկի օրինակի հետևեալ փոքրիկ յիշատակարանով. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ, ի կամս իւր զգիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»[124]: Այս հիշատակարանի հիման վրա Գոշի «Դատաստանագրքի» մեկ այլ հմուտ ուսումնասիրող՝ Խ. Թորոսյանը ավելացնում է. «Վախթանգը, բարեկամի հանգամանքով, նախապես պետք է իմանար Դատաստանագրքի ինչ-ինչոցը, դրական վերաբերմունք ունենար դրա

[122] Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Ե., 1974, էջ 17, Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 36:
[123] Մխիթար Գօշ, Դատաստանագիրք հայոց, իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 178:
[124] Նույն տեղում, էջ 104: Այժմ այդ ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում 1237 թվահամարի տակ (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, կազմեց՝ Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 329, տես նաև՝ «Բազմավէպ», 1848, թիւ 8, էջ 119):

նկատմամբ, որպեսզի հեղինակը կարողանար նման մի հանձնարարականով («անխախտ ուղղությամբ վարել պատուիրան սորին») Դատաստանագիրք նվիրել նրան»[125]: Իսկ Վախթանգ իշխանի մահից (1214 թ.) մինչև Արցախի մելիքությունների կազմավորումն ընկած դարերի ընթացքում Խաչեն գավառում իշխանությունն անընդմեջ գտնվել է նույն` Հասան-Ջալալյան տոհմի ձեռքում: Ինքնին ծագում է ենթադրությունը, որ Խաչենի Վախթանգ իշխանի շառավիղները` Հասան-Ջալալյան մելիքները, ևս կարող էին ծանոթ լինել Գոշի «Դատաստանագրքին» և որոշ դեպքերում կիրառել այն իրենց դատավարությունների ընթացքում: Սակայն, փաստերի բացակայությունը, ինչպես նաև դատավարությունների բանավոր լինելը, հնարավորություն չեն տալիս վերջնական պատասխան տալ այս հարցին: Հստակ է սակայն, որ Արցախի մելիքություններում, ամբողջությամբ վերցված, դատավարության ելքը հիմնականում կախված էր սովորութային իրավունքի նորմերից և մելիքի կամքից, որը հպատակների համար օրենքի ուժ ուներ:

Մելիքական «դատավարության համար հատուկ շենք չկար. դատը տեսնվում էր մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Շատ անգամ պատահում էր, որ մելիքը փողոցում, հրապարակում էլ դատ էր կտրում»[126]: Դատավարության հատուկ օրեր չկային, սակայն նախընտրելի օրը կիրակին էր, երբ մելիքի ենթակայության ներքո գտնվող շրջակա գյուղերի բնակիչները ևս գալիս էին գանգատվելու կամ բողոքարկելու տանուտերերի արձակած վճիռները: Այս դեպքում, այնպես, ինչպես «իշխանական դատարանը վճռաբեկ ատյան էր ստորին դատարանի նկատմամբ»[127], այնպես էլ մելիքական դատարանը հանդես էր գալիս որպես վճռաբեկ ատյան տանուտիրական դատարանի նկատմամբ: Մելիքի վճիռը

___

[125] Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ ԼԸ-ԼԹ:
[126] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 245-246:
[127] Թորոսյան Խ., նշվ. աշխ., «Տեղեկագիր հաս. գիտ.», 1965, թիվ 12, էջ 96:

վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր: Մելիքի վճռից դժգոհողները երբեմն անցնում էին թշնամի մելիքի կողմը կամ համալրում խանի լրտեսների բանակը:

Մելիքների իրականացրած դատավարության գործընթացը չափազանց պարզ էր: Վկաներ չլինելու դեպքում հաճախ միայն երդումը բավարար էր դատավճիռ կայացնելու համար, և ի պատիվ նահապետական սովորույթներով ապրող այդ մարդկանց, «ոչ միայն շատ հազիվ էին պատահում սուտ երդվողներ, այլև երբեմն հանցանքը հանձն էին առնում, որպեսզի չերդվեն»[128]: Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում դատավճիռ կայացնելը տաստանական երդման հիման վրա դատավճիռ կայացնելը տարածված է եղել նաև այլուր: Մասնավորապես, Երևանի խաստանական երդման հիման վրա դատավճիռ կայացնելը
տարածված է եղել նաև այլուր: Մասնավորապես, Երևանի խանության քաղաքացիական գործերի քննությունն ուսումնասիրած Ե. Շահազիզը գրում է, որ գանգատավորներին լսելուց հետո շարիաթական հոգևոր դատարանի անդամները «նախ հարցուփորձ են արել պատասխանողի վկաներին, հետո հայցվորի. եթե վկաներ չեն եղել, առաջարկվել է երկու կողմին երդվել, եւ այդ դեպքում առավելությունը տրվել է պատասխանողին»[129]: Համադրելով այս երկու տեղեկությունները` կա-
րող ենք պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանի դա-
տավարության գործընթացի մասին առհասարակ:

Արցախի մելիքություններում կատարողական իշխանությունը ևս գտնվում էր մելիքների ձեռքում: Հայ իրավունքի պատմության մասնագետ Խ. Թորոսյանը իրավացիորեն նշում է. «Հայկական թագավորության, կամ իշխանապետության, կամ իշխանությունների գոյության պայմաններում աշխարհական դատարանները առաջնակարգ դեր են խաղացել ոչ միայն այն փաստի ուժով, որ միաժամանակ դատավորներ էին իրենք` մարմնավոր բարձրագույն ու տեղական իշխանության ներկայացուցիչները (տվյալ դեպքում` մելիքները-Ա. Մ.), այլև

___

[128] Նույն տեղում, էջ 246:
[129] Շահազիզ Ե., Հին Երևանը, Ե., 2003, էջ 113:

ցարդ արժանի ուշադրության չարժանացած այն կարևոր պատճառով, որ նրանց ձեռքին էր հարկադրանքի ուժը, այդ բառի զինական-ոստիկանական իմաստով. հանգամանք, առանց որի իրավունքը ոչինչ է»[130]: Արցախյան իրականության ուսումնասիրությունը ևս խոսում է այս տեսակետի իրավացիության օգտին: Իրենց տիրույթներում ունենալով գործելու լիակատար ինքնուրույնություն, մելիքները նշանակում էին բազմազան պատիժներ՝ կախված հանցագործության բնույթից և իրենց հայեցողությունից: Ամենատարածված պատիժները ծեծը և տուգանքն էին: Վերջինս մելիքները վերցնում էին իրենց օգտին, ինչն, անկասկած, «տեղիք էր տալիս չարաշահումների»[131]: Նշելի է, որ «միայն տուգանքների արդյունքը տալիս էր Շահնազարին 20 հազար ռուբլի»[132]:

Տրվում էին նաև այլ պատիժներ: Այսպես, երբեմն հանցապարտներին արգելափակում էին մելիքի ախոռում կամ տան սենյակներից մեկում, որը ծառայում էր որպես բանտ: Իսկ անբարոյական կանանց սպառնում էր անվանարկությունը, երբ նրանց նստեցնում էին էշի վրա, պոչը ձեռքը տալիս, երեսին մուր քսում և պտտեցնում գյուղով, կամ անուղղելիներին կապում էին ձիու պոչից և քարշ տալիս: Մելիք-Հովսեփ Ա-ն այդպես սպանել է պոռնիկ Մարիամին[133]:

Մելիքը իր հպատակների հայրն էր համարվում, և հիմնականում գթասրտությամբ էր վարվում նրանց հետ, սակայն առավել ծանր հանցանք գործողներին իրավունք ուներ մահապատժի դատապարտելու: Արցախի մելիքների՝ ինքնուրույն մահապատժի դատավճիռներ կայացնելու մասին են վկայում

130 Թորոսյան Խ., Ընդդատությունը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 8, 1967, էջ 91:
131 Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականություն-ները, «ԲՀԱ», 1966, թիվ 1, էջ 200:
132 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 23, նույնի՝ Խոջայական կապիտալ, Ե., 1934, էջ 168:
133 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 246-247:

նաև հնդկահայ ականջալուր-ժամանակակիցները: «Նոր տետրակում» մասնավորապես Ջրաբերդի Մելիք-Ադամի այդ իրավունքի մասին կարդում ենք. «Ինքնագլուխ (անկախ-Ա. Մ.) իշխան է, այնպես որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորին, վնասապարտին կամ դատապարտելիին, ով էլ որ նա լինի, ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որևէ մեկի հրամանի»[134]: Իսկ Պարսկաստանի անցյալին լավատեղյակ հասարակական գործիչ Գ. Շիրմազանյանը 1857 թ. ապրիլի 27-ին Թավրիզից Գ. Ախվերդյանին ուղղած մի ուշագրավ նամակում գրում է. «Ղարաբաղու մելիքներն ոչ մինին չէին նմանիլ..., միայն նշանակյալ հարկն կը տային և յուրյանք յուրյանց գլխու մարդ կը սպանեին, կը պատժեին»[135]: Մեզ են հասել նաև մի քանի մահապատժի ենթարկվածների անուններ: Այսպես, Մելիք-Աբով Գ-ը անհնազանդության համար Բոնի-սում ծառից կախել է տվել Փանոսենց Հայրապետին, իսկ Մելիք-Բեգլարը հրամայել է սպանել հովիվ Հախվերդուն՝ գլխին շիկացրած երկաթ դնելով[136]:

Համեմատության համար նշենք, որ ի տարբերություն Արցախի մելիքների, Երևանի մելիքները չեն ունեցել մահա-պատժի դատավճիռ կայացնելու իրավունք, այլ իրականացրել են միայն վճռաբեկ ատյանի գործառույթներ: Գերմանացի ճանապարհորդ բարոն O. Հակստհաուզենը այդ մասին գրում է. «Եթէ ոք ի շինական դատարան մտեալ և անբաւական եղանէր, բողոքէր սոցա. նոյնպէս ի մեծամեծ վէճս դիմէին առ սոսա. ամենայն վճիռ սոցա լինէր բերանացի. ունէին իշխանութիւն բանտարկելոյ և դատելոյ պատժովք, այլ ոչ ի մահ, որ գործ էր

134 Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Ե.,1991, էջ 102-103:
135 Հովհաննիսյան Ա., Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանա-կությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «ՊԲՀ», 1963, թիվ 2, էջ 213-214:
136 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 246-247:

միայն Սարտարին Երևանայ»[137]: Նա Խաչատուր Աբովյանի՝ իրեն հաղորդած տեղեկությունների հիման վրա ներկայացնում է նաև Երևանի մելիք Սահակ Մելիք-Աղամալյանի իրականացրած դատավարությունը. «Զկնի սկիզբն լինէր դատաստանի. բողոքարկուք յառաջ բերէին զբողոքս, յանցաւորք զպատասխանին: Սահակ իբրև լսէր զբանս երկոցունց կողմանցն ևս, տայր ապա վճիռ արդար և անփոփոխելի, վասն զի ճանաչէր լաւապէս ամենեցուն զներքին բնաւորութիւնս, և զյանցաւորս խստիւ պատուհասէր»[138]:

Առհասարակ, փաստերը վկայում են, որ հզոր և մարտերում կոփված մելիքները կարողացել են իրենց հեղինակությամբ կարգ ու կանոն հաստատել սեփական գավառներում: Այստեղ տեղին է մեջբերել Առաքել Կոստանյանցի տեղեկությունը Դիզակ գավառի 1746-1781 թթ. տիրակալ Մելիք-Եսայու արդարադատության վերաբերյալ. «Անհնարին էր զերծանելն ի ձեռաց նորա, ոչ կաշառօք և ոչ միջնորդական բարեխօսութեամբ. իւրաքանչիւրոցն ըստ չարագործութեան հատուցանէր պատիժ և պատուհաս. զմահապարտսն խեղդամահ առնէր. ոմանց զմի ձեռն հատանէր և ոմանց զաչսն հանեալ կուրացուցանէր. արդարև դողայր և սարսէր նահանգն, որ ընդ իշխանութեամբ նորա էր. վէճ և կռիւ կանանց մանաւանդ բարձրաձայնելն միանգամայն վերացուցեալ էր յամենայն բնակչաց. նաև գողութիւն, պոռնկութիւն, մարդասպանութիւն և այլ ինչ չար պատահարս բոլորն ի գաւառէն ի բաց հեռացուցեալ»[139]: Իր արդարադատությամբ ոչ պակաս հռչակված էր նաև Դիզակ գավառի մեկ այլ տիրակալ՝ Մելիք-Աբասը, որը «զդատողութիւն մեղաւորաց և վնասակար անձանց ամենևին իսկ առանց արծաթսիրութեան և կաշառաց առնէր, զմահապարտսն զամե-

---

137 Օգոստոս ֆոն Հակստհաուզեն, Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս եւ ի Վիրս, Վաղարշապատ, 1872, էջ 185-186, տե՛ս նաև Շահազիզ Ե., նշվ. աշխ., էջ 90-91:
138 Նույն տեղում, էջ 188-189, Շահազիզ Ե., նշվ. աշխ., էջ 89:
139 Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, էջ 45:

նայն սպանէր առանց ազատութեան. կախէր զոմանս ի վերայ մեծի ճանապարհի զկախաղանէ. զոմանս հրամայէր ծառայիցն սրախողխող առնել առաջի աւազակաց և հասարակութեան, զի մի ոք այնուհետև վստահասցի զնոյն գործել չարութիւն: Արդարև սարսեալ դողայր գաւառն առաջի նորա»[140]: Վկայակոչված փաստերը գալիս են ապացուցելու, որ Ղարաբաղում 1750-ական թթ. խանության հաստատումից հետո էլ տեղի յուրաքանչյուր մելիքությունում դատավարության իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի ձեռքում:

Մելիքների իրավասության ներքո էին գտնվում նաև, մերօրյա տերմինաբանությամբ, քաղաքացիական գործերի քննությունն ու լուծումը: Մելիքների թույլտվությամբ են կատարվել իրենց հպատակների ամուսնությունները: «Յուրաքանչյուր պսակի հրաման տալիս հպատակները մելիքին վճարում էին 3-6 ռուբլի, ռուսական փողով հաշված... Երբ հարսը ուրիշ գյուղ էին տանում, պարտավոր էին ավելի վճարել»[141]: Այդ կապակցությամբ Ե. Լալայանը հաղորդում է մեկ այլ ուշագրավ մանրամասնություն, ըստ որի երբեմն «պսակի գրավոր, կնքած հրաման տալու փոխարեն մելիքը բավականացել է միայն յուր համրիչը տալով, որ ներկայացրել են քահանային, և սա կատարել է պսակը»[142]:

Իհարկե, ավանդաբար հոգևոր իշխանության իրավասությանը վերաբերվող այդ գործերում հաշվի է առնվել նաև եկեղեցականների կարծիքը: Այսպես, վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1815 թ. հունիսի 30-ին Եղիա քահանային ուղղված նամակում վերջինիս պատվիրել է. «Զի գզիր Խաչատուրի տղայ Աւետիքն և Գասպարի դուստր Հուռումն որոյ աղագաւ մէլիք Բաղրն (Մելիք-Բեգլարյան-Ա. Մ.) և քահանայքն և քովխէքն գրեալ էին թէ տղայն այրի է և աղ-

---

140 Նույն տեղում, էջ 74:
141 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 243:
142 Նույն տեղում, էջ 252:

ջիկն երեսուն և հինգ տարեկան է և գերի անկեալ ես, որոց լիցի հրաման պսակելոյ: Արդ ուրեմն գրեմ քեզ, որ եթէ ճշմարտապէս այն աղջիկն կամ ԼԵ (35) կամ Լ (30) տարեկան լինի և կամ ԻԵ (25) տարեկան լինի պսակեսցիք զնոսա, իսկ եթէ ոչ ծանուսջիք մեզ առանց պսակելոյ»[143]:

Մելիքները երբեմն միջամտել են նաև իրենց հպատակների ամուսնալուծություններին: Մասնավորապես, «Մելիք-Հովսեփ Ա-ին գանգատվում է Մուսին, թե կինը յուր հետ լավ չի վարվում: Սա էլ հրամայում է անմիջապես նրան բաժանել և մի ուրիշի հետ պսակել, որ և կատարում են»[144]: Իսկ Մատենադարանում պահվող 1816 թ. ապրիլի 27-ին գրված մեկ այլ փաստաթղթում Գանձակի Հարություն վարդապետը գանգատվում է Ներսես Աշտարակեցուն, թե «եկեալ աստ մէլիք Ուսուբեան մէլիք Բաղըրն ստիպմամբ հարկադրէ զիս բաժանել իւր պօլնեցի Խաչատուր այրն՝ որոյ խաբէութեամբ աստ պսակեցեալն է»[145]: Սակայն, այս դեպքերում, կարծում ենք, գործ ունենք ոչ թե օրինաչափությունների, այլ հարկադրանքի ուժով պայմանավորված մելիքական կամայականությունների հետ:

Մելիքների համաձայնությամբ են կայացվել նաև որդեգրման գործողությունները: Այսպես, XVII դ. կեսերին Գանձասարի կաթողիկոսությունում ծայր առած աթոռակալական պայքարին վերջ տալու նպատակով «Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ համաձայնություն կայացվեց, ըստ որի, Պետրոսը (Խանձքեցի-Ա. Մ.) դառնում է Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Հասան-Ջալալյան տոհմի անդամը»[146]: Դրանով նա, որպես Հասան-

[143] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 648:
[144] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 241:
[145] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 475:
[146] Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք, «ԼՂԳ», 2000, թիվ 1, էջ 90:

Ջալալյան տոհմի անդամ, իրավունք էր ստանում հաջորդել իրեն որդեգրած Գանձասարի Գրիգոր կաթողիկոսին:

Նույնիսկ այն ժամանակ, երբ մելիքություններից այլևս ոչինչ չէր մնացել, մելիքների ժառանգները «թեպետ ոչ դատավոր, բայց որպես գյուղի ամենազդեցիկ և հեղինակավոր մարդ, դատ էին կտրում, կամ գյուղական դատավորների և տանուտիրոջ վրա ճնշում գործելով, դատը իրենց կամեցածի պես վճռել տալիս: Գյուղացիները այս բեկերին գյուղական պաշտոնյաներից ավելի խելացի և ավելի հեղինակավոր անձնավորություն համարելով, սիրով նրանց էին դիմում և խընդրում վերջացնել իրենց դատը»[147]: Բնականաբար, այս դեպքերում մելիքների ժառանգները բանեցրել են իրենց նախնիների երբեմնի իրավասությունները:

Այսպիսով, եղած փաստերի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Արցախի մելիքները, առաջնորդվելով հիմնականում սովորութային իրավունքի նորմերով, իրականացրել են դատավարություն, որը, սակայն, բավարարել է նահապետական կացութաձևով ապրող մարդկանց պահանջները:

[147] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 254-255:

Գ) ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի մելիքները, ներքին կառավարման հարցերում ունենալով գործելու լիակատար ինքնուրույնություն, պատասխանատու էին պետական հարկերի գանձման և ժամանակին շահական գանձարանը մուծելու համար: Ընդ որում, «եթե տարեկան հարկը մելիքը չէր վճարում շահական գանձարանին, նշանակում էր նա ապստամբել է»[148]:

Այնուհանդերձ, Արցախի մելիքությունների պատմության մեջ հայտնի է մի դեպք, երբ Վարանդայի 1730-1736 թթ. տիրակալ Մելիք-Հուսեինը, օգտվելով թուրք-պարսկական պատերազմի ժամանակ ստեղծված խառը իրավիճակից, հարկ չի վճարել: Ժամանակակիցները այնքան են կարևորել այս փաստը, որ այդ մասին արձանագրել են մելիքի շիրմաքարին.

«Սա ոչ ետ հարկ թագաւորի,
Ամուր պարիսպ էր աշխարհի,
Թագ, պարծանք հայոց ազգի,
Պատերազմեաց հետ օսմանցի,
Յոժ կոտորեաց ազգէն տաճկի»[149]:

Սույն ենթագլուխը նվիրված է նմանատիպ մեկ այլ դեպքի պարզաբանմանը, որի վերաբերյալ մի տեղեկության հանդիպեցինք Մատենադարանում 7429 թվահամարի տակ պահվող XIX դ. կեսերի հեղինակ Միքայել-բեկ Մելիք-Շահնազարյանի «Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին» ձեռագիրը ուսումնասիրելիս: Նկատենք, որ թեև Բ. Ուլուբաբյանը սույն երկը իրավացիորեն համարել է «հիշյալ տոհմի զարմիկների երևակայության մարզին վերաբերող ետնաստեղծ պատմություն»[150], սակայն ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ այն, գրված լինելով հիմնականում ավանդազրույցների հիման վրա և ունենալով Մելիք-Շահնազարին արդարացնելու անթաքույց միտում, այնուհանդերձ պարունակում է նաև մի քանի ուշագրավ դրվագներ, որոնք կարող են որպես բանալի ծառայել Արցախի մելիքությունների պատմության որոշ չբացահայտված հարցերի լուսաբանման համար: Այդ հարցերից մեկն էլ վերաբերվում է Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի հանգամանքների պարզաբանմանը: Ձեռագրում այդ մասին կարդում ենք. «Մելիք-Միրզաբեկն ապստամ[բ]վում է Նադիրից և հարկ չի տալիս. կարծում է թէ շահ Հուսէյին[ն] է ու ինքն Մելիք-Հուսէյինն»[151]:

Հարկ է ճշտել, որ Վարանդայում Մելիք-Հուսեինի իշխանության ժամանակ Իրանի շահը ոչ թե Սուլթան Հուսեինն (1694-1722) էր, ինչպես գրված է ձեռագրում, այլ նրա որդի Թահմասպ Բ-ը, որը «Սպահանի պաշարման ընթացքում կարողանում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին, որտեղ 1722 թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում, նաև իր անունով խութբա է հնչեցնում, դրամներ հատում և հրամանագրեր հրապարակում: Թեև նրա իշխանությունը ավելի շատ ձևական էր, այն տևում է շուրջ 10 տարի»[152]: Ժամանակակիցները նրան բնութագրել են որպես «անբաղդ և անարի և գինեմոլ» անձնավորության[153]: Եվ հենց այս զուտ ձևական իշխանություն ունեցող շահին է, որ հարկ չէր վճարում նրա խակ 1142 հ. թ. զի հեջջե ամսի (1730 թ. հունիսի 17 –

[148] Պողոսյան Ֆ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1966, թիվ 1, էջ 204:
[149] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441, Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 45, Դիվան, V, Արցախ, էջ 149:
[150] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 404:

[151] Միքայէլ-բեկ Մելիք-Շահնազարեան, Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա:
[152] Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, III, էջ 23, Կոստիկյան Ք., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2004, XXIII, էջ 356:
[153] Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), էջ 36:

հուլիսի 17) հրովարտակով Վարանդա գավառի տիրակալ նշանակված Մելիք-Հուսեինը[154]։

Սակայն, Թահմասպ Բ-ի պարտությունները թուրքական բանակից առիթ են ընձեռում շահի զորավար Թահմազ-Ղուլի խանին (ապագա Նադիր շահին) նրան գահընկեց անելու համար, որից հետո «ի տեղի նորա կարգեաց թագաւոր զփոքրագոյն մանուկ որդի նորա և անուանեաց զնա Շահ Աբաս։ Յայսմ ամի թուական մեր էր ՌՃՁԱ (1732) յօգոստոսի ԻԲ (22)»[155]։ Նադիրը մանկահասակ շահին առնում է իր խնամակալության տակ, սակայն չբավարարվելով այդքանով, 1736 թ. փետրվարին Մուղանի դաշտավայրում իրեն շահ է հռչակում, իսկ հետագայում հրամայում մահապատժի ենթարկել Թահմասպ Բ-ին և նրա փոքրահասակ որդուն[156]։

Իսկ Վարանդայում 1736 թ. վախճանված Մելիք-Հուսեինին հաջորդում է նրա եղբայր Մելիք-Բաղիի որդի Մելիք-Միրզաբեկ Բ-ը։

Նադիր շահը Հնդկաստան արշավելուց և 1739-ին Դելին գրավելուց հետո[157], տիրանալով այդ երկրի անբավ հարստություններին, 1151 հ. թ. զի հեջջե ամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատել է հարկերի զգալի մասից[158]։ Այս հրովարտակը չէր տարածվում ալաֆե և ուլուֆե* ու սուրսաթ** կոչված հարկերի

[154] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 173, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, էջ 184։

[155] Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները, էջ 37։

[156] Նրանց մահապատժի մասին տե՛ս **Քյուչուք Արուքին**, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», 1941, թիվ 1, էջ 127։

[157] Այդ արշավանքի մասին տե՛ս **Мухаммад-Казим,** Поход Надир-шаха в Индию, М., 1961, **Кишмишев С.,** Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889, с. 179-211.

[158] Հրովարտակի բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Арунова М.,** Фирман Надир-шаха, «Советское востоковедение», 1958, N 2, с. 116-119, **Арунова М., Ашрафян К.,** Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 87-93։

* Ալաֆե և ուլուֆե - գյուղերում իջևանող պետական պաշտոնյաների գրաստներին տրվող կերը։ Այս տուրքը մեծ մասամբ հատուցվում էր մթերքով (խոտ, դարման, գարի և այլն)։ Շատ դեպքերում, սակայն, այն փոխարինվում էր դրամական տուրքով (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 272)։

վրա[159]։ Բնականաբար, հրովարտակը չի շրջանցել նաև Մելիք-Միրզաբեկի հպատակներին։

Պետական հարկապահանջությունը նոր թափով վերսկսվեց «1742 թ., երբ Նադիրը նվաճել էր նաև Միջին Ասիան և պատժիչ արշավանքի դուրս եկել դեպի Դաղստան... Աղբյուրները վկայում են, որ հարկերի գանձումը կատարվում էր բազմապատկված չափերով»[160]։ Հատկապես հարկերի կտրուկ բարձրացում է նկատվում Նադիր շահի կառավարման վերջին տարիներին[161]։ Այսպես, ըստ 1745 թ. գրված մի հիշատակարանի՝ «յոյժ նուազեաց ազգս Հայոց վասն հարկապահանջութեան սորա (Նադիրի-Ա. Մ.), և բնաւք ոչ մնաց գիւղ, գաւառք, և ոչ ապրանք, և զամենեսեան ցրուցան եղեալ, նաև ոչ մնաց վանք և յանապատ վասն ես հարկապահանջութեան»[162]։ Այդ ծանր հարկապահանջության շրջանում է, որ Ջուղահայ անվանի աշուղ Բաղեր Օղլի (Բաղերի որդի) Ղազարը իր «Ի վերայ Նադրին՝ վասն տառապեալ ազգին հայոց» բանաստեղծության մեջ բացականչում է.

«Աստուա՛ծ, դու մեզ մին ճար արայ,
Շահ՝ թամամ աշխա՛րհ այ ուզում,
Աշխարհ քանդում՝ վարայ-վարայ,
Ողջ հազար-հազա՛ր այ ուզում»[163]։

** Սուրսաթները ռազմական արշավանքների ժամանակ հարկատու բնակչության վրա դրվող այն պարտավորություններն էին, որոնք հատուցվում էին մեծ քանակությամբ հացահատիկով և այլ մթերքներով։ Ռայաթները ոչ միայն պարտավոր էին կարճ ժամկետում տալ պահանջված քանակությամբ մթերքները, այլև սեփական գրաստներով տանել այն և բանակատեղիում հանձնել զորամասի հրամանատարությանը (նույն տեղում, էջ 271)։

[159] **Арунова М.,** Фирман Надир-шаха, с. 119.

[160] Փափազյան Հ., Ճշվ. աշխ., «ԲԵՀ», 1972, թիվ 2, էջ 83։

[161] **Тер-Мкртчян Л.,** Положение армянского народа под игом Надир-шаха, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1956, թիվ 10, էջ 95, նույնի՝ Армения под властью Надир-шаха, М., 1963, с. 65։

[162] «Արարատ», 1888, թիւ Ա, էջ 32-33։

[163] Մնացականյան Ա., Անտիպ էջեր միջնադարյան հայկական պոեզիայից, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», թիվ 2, 1950, էջ 187։

Հավանաբար այդ ժամանակ է, որ Մելիք-Միրզաբեկը՝ տեսնելով իր հպատակների թշվառությունը, խուսափել է հարկային պարտավորությունները կատարելուց, մի հանցանք, որի համար ենթարկվել են դաժան պատիժների: Այս խորապատկերում հավաստի է թվում նաև ձեռագրի հաղորդումը Մելիք-Միրզաբեկի՝ հարկային պարտավորությունները չկատարելու համար մահապատժի ենթարկվելու մասին:

Այդ ըմբոստությունը, ըստ նույն ձեռագրի՝ ավարտվում է նրանով, որ Նադիր շահը Մելիք-Միրզաբեկին ներում խոստանալով կանչում է արքունիք, որտեղից, ինչպես դիպուկ նկատել է հայ մեծ պատմաբան Մ. Չամչյանցը, «գրեթէ երբէք անվնաս ոչ թողոյր զոք գնալ»[164]: Մելիք-Միրզաբեկը ևս չի խուսափել Նադիրի դատաստանից: Շարունակելով պատմությունը, ձեռագրի հեղինակը իրեն բնորոշ գեղջկական ոճով ներկայացնում է նաև նրա դատաստանը. «մին կիշեր հանկարծ վերան են հասնում 10 հօգով, քանդիր քցում չիլինքն՝ խեղդում»[165]:

Վերջին տեղեկության իսկությունը հաստատվում է նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի տվյալներով. «Նադիր շահը նրանցից (Մելիք-Շահնազարյաններից-Ա. Մ.) ոմն Միրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում և ասում. «Սա Շիրուլենների ցեղից է»[166]: Ի դեպ, Րաֆֆու գրչի տակ պարանը վերածվել է դահճի սրի[167]: Այս դեպքը, ինչպես վկայում է Մելիք-Միրզաբեկի տապանագիրը[168], տեղի է ունեցել 1744 թ. նոյեմբերի 10-ին, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ բռնակալներին հատուկ հիվանդագին կասկածամտությունը Նադիրին մղում էր անլուր դաժանություն-

[164] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 815:
[165] Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա:
[166] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 42:
[167] Րաֆֆի, Ընտ. աշխ., էջ 451, Մուսայէլեան Յ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, թիւ Գ, էջ 240:
[168] Դիվան, V, Արցախ, էջ 149:

ների նույնիսկ իր հարազատների, այդ թվում և որդու՝ Ռզա-
կուլի Միրզայի նկատմամբ[169]:

Ասվածից հետո նոր իմաստ և բովանդակություն է ստա-
նում Մելիք-Միրզաբեկին մահապատժի ենթարկելուց առաջ
Նադիր շահի ասած. «Սա Շիրուլենների ցեղից է» արտահայ-
տությունը: Շերոյեն կամ Կավադ Բ-ը (628 թ. փետրվար-սեպ-
տեմբեր) Սասանյան շահերից է եղել, որը գահ է բարձրացել
628 թ. փետրվարի 28-ին՝ իր հայր Խոսրով Փարվեզին գահ-
ընկեց անելով: «Կավադ Շերոյեի համաձայնությամբ՝ Խոսրով
Բ-ի ամենամոտիկ «մերձավորները» 628 թ. փետրվարի 29-ին
սպանեցին նրան: Առհասարակ գոյություն ունի այն կարծիքը,
որ Արևելքի պատմության մեջ Կավադը ամենաարյունախում
տիրակալներից մեկն է եղել: Գահի համար պայքարի ընթաց-
քում նա կյանքից զրկեց նաև իր տասնյոթ եղբայրներին»[170]:
Բնականաբար, Դոփյանների տոհմից սերված Մելիք-Շահնա-
զարյանների տան անդամ Մելիք-Միրզաբեկը ոչ մի կապ չու-
ներ Շիրուլենների ցեղի հետ: Այսինքն՝ վերոհիշյալ արտահայ-
տությամբ Նադիր շահը Մելիք-Միրզաբեկին մեղադրել է ան-
հավատարմության և անհնազանդության մեջ:

Ամփոփելով՝ նշենք, որ փաստորեն Մելիք-Միրզաբեկը,
հետևելով իրեն նախորդած Մելիք-Հուսեինի օրինակին, հարկ
չի մուծել շահական գանձարանը, ինչի համար էլ Իրանի գա-
հակալ Նադիր շահի կողմից ենթարկվել է մահապատժի:

* * *

Շահական գանձարանին հարկ վճարելուց բացի, Արցախի
մելիքությունների բնակիչները պարտավոր էին հարկ վճարել
նաև իրենց գավառների մելիքներին: Այդ մելիքական հարկը,

[169] Բրատիշչեւ Վ., Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց, թրգմ. Յարութիւն Ղաւթեան Ջուղայեցի, Մատենադարան, ձեռ. 9648, էջ 63ա-բ:
[170] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 149:

որը հայերի մեջ հայտնի էր մելիքյանա անունով, իսկ շահական հրովարտակներում հիշվում էր որպես ռուսում*, հավաքական մի հարկատեսակ էր, որն «ընդգրկում էր այն ամենը, ինչ բնակչությունից հավաքվում էր հօգուտ մելիքի»[171]: Այսպես, ըստ Ե. Լալայանի տվյալների՝ յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր մելիքին տալ հացահատիկի 1/5 մասը, ռուսական փողով հաշված մոտ երեք ռուբլի գլխահարկ, յուրաքանչյուր 25 տուն մի ծառա և 30 տուն մի աղախին՝ մելիքի տանը ծառայելու համար, ինչպես նաև ամեն տնից տարեկան մի իշաբեռ փայտ[172]: Բացի սրանցից, Ե. Լալայանը հիշատակում է նաև սալյան կոչվող տուրքը, որի ինչ լինելը նա չէր կարողացել պարզել, և որը, սակայն, կարծում ենք ոչ այլ ինչ էր, եթե ոչ սալյանե կոչվող տուրքը, որը ևս գանձվում էր հացահատիկից[173]: Բացի այս տուրքերից հպատակները «պարտավոր էին մելիքի համար աշխատել տարեկան մի քանի օր, ցանել և հավաքել բերքը»[174]: Մելիք-Շահնազարյանների դատաստանական գործի փաստաթղթերից մեկում մեկնաբանվում է, որ «մելիքները իրենց կոչման համաձայն, իրենց կառավարման ներքո գտնվող ժողովրդից ստանում էին որոշակի հացահատիկային և դրամական եկամուտներ, որոնք կոչվում էին մելիքյանա... Մելիքները կառավարում էին միայն ժողովրդին և որպես վարձատրություն նրանցից ստանում էին վերոհիշյալ եկամուտները»[175]: Այդ հարկերից ազատ էին միայն հոգևորականները, տանուտերերը, գզիրները և սափրիչները:

* Ռուսում - բառացի նշանակում է «կարգ», «սովորույթ»: Այսպես էին կոչվում այն բոլոր տուրքերը, որոնք գանձվում էին ոչ թե անմիջապես պետության, այլ պետական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնյաների ու հոգևորականության օգտին (տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, էջ 119):

171 Պողոսյան Ֆ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1966, թիվ 1, էջ 204:

172 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 242-243:

173 Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 129:

174 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 180, թ. 31, 50, պատճենը տե՛ս Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 261, թ. 17:

175 Նույն տեղում, թղթ. 240, վավ. 180, Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վ. 261:

Դ) ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԵՆՑ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻՆ

Հայոց անկախ պետականության չգոյության պայմաններում, հայտնի է, որ քաղաքական իշխանության գործառնությունները իրականացրել է Հայ Առաքելական եկեղեցին: Այդ առումով, հետաքրքիր է տեսնել, թե Արցախի մելիքություններում, որտեղ պահպանվել էին պետականության մնացորդները, ինչ մասնակցություն են ունեցել մելիքները իրենց գավառների հոգևոր գործերին:

Արցախի մելիքներն ակտիվորեն մասնակցել են նաև Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների ընտրություններին և, ինչպես իրավացիորեն նկատել է Ֆ. Պողոսյանը, «եթե ժողովրդի ստորին խավերը հանձին կաթողիկոսի տեսնում էին սոսկ հոգևոր առաջնորդի, ապա մելիքները աշխատում էին նրան օգտագործել իրենց ֆեոդալական նպատակների համար, ուստի և նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր անցկացնել անպայման այն թեկնածուին, որի վրա մեծ հույսեր էր դրել»[176]: Մելիքների մասնակցությունը Գանձասարի կաթողիկոսների ընտրություններին լուսաբանված է այդ կաթողիկոսության XVII-XIX դդ. պատմությանը նվիրված Լ. Մկրտումյանի մենագրության մեջ[177], սակայն այն հարցը, թե ինչ մասնակցություն են ունեցել մելիքներն իրենց գավառների հոգևոր գործերին, դեռ չի դարձել առանձին քննության առարկա, ուստի ստորև կփորձենք գոնե մասամբ լրացնել այդ բացը:

XVIII դ. սկզբին, հաստատվելով Դիզակ գավառի Տող գյուղում, Մելիք-Եգանի հայր Ղուկաս վարդապետը նորոգել է Գտչավանքը և այնտեղ հաստատել միաբանություն: Նրա մահից հետո Մելիք-Եգանի կամքով Գտչավանքի առաջնորդ է

176 Պողոսյան Ֆ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1966, թիվ 1, էջ 203:

177 Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Ե., 2006:

դարձել Մեսրոպ վարդապետը: Այդ մասին տեղեկանում ենք վերջինիս տապանագրից. «Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոպ վարդապետին. Թվին ՌՃՀԲ (1723) լուսահոգի Մելիք Եկանն ձեռնադրել տուավ եպիսկոպոս, կարգեց Կոխչայ վանիցն առաջնորդ. որ եկի հաստատեցի սուրբ աթոռս. Ի Թվին Հայոց ՌՃՂՁ-ին (1747) առ Աստուած փոխեցաւ. ով որ կարդայ մէկ բերան ողորմի ասէ»[178]: Ուշագրավ է, որ հանդուցյալ հոգևորականի կյանքում Մելիք-Եգանի կամքով եպիսկոպոս ձեռնադրված լինելու հանգամանքն այնքան կարևոր է համարվել, որ այդ մասին չեն մոռացել արձանագրել նրա շիրմաքարին:

Սակայն, սրանով չի սահմանափակվել Մելիք-Եգանի մասնակցությունն իր գավառի հոգևոր գործերին: Ինչպես գրում է պատմագիր Առաքել Կոստանյանցը, նա նաև «գրաղում հին քայքայեալ եկեղեցիս և վանորայս նորոգեալ»[179]: Պատմագրի այս տեղեկության իսկությունը հաստատում են վիմագրերը: Այսպես, մելիքանիստ Տող ավանի Ս. Հովհաննես եկեղեցու մուտքի ճակատակալ քարին փորագրված արձանագրությունը վկայում է. «Թվին ՌՃՁԵ (1736): Այս սուրբ Ոհանէս եկեղեցուս գլուխն նորոգեց Ղուկաս վարդապետի որդի Մէլիք Եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ. ով կարդայ մեկ բերան Աստուած ողորմի ասէ»[180]:

Մելիք-Եգանը, լինելով այդ ժամանակաշրջանի հայ ամենանշանավոր իշխանավորներից մեկը, շինարարական գործունեություն է ծավալել նաև Դիզակի մելիքության սահմաններից դուրս: Նրա միջոցներով 1743 թ. կառուցվել է Տաթևի Մեծ անապատի գավիթ-սրահը: Այդ մասին վկայում է գավթի արևմտյան պատին փորագրված արձանագրությունը. «Յիշա-

178 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 202, Դիվան, V, Արցախ, էջ 185:
179 Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, էջ 22:
180 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 198, Դիվան, V, Արցախ, էջ 177:

տակ է Մելիք Եկանին, որ Ե (5) թուման տուաւ գաւիթն շինելոյն, որ գլուխն սրբատաշ քարանց շինեցինք»[181]:

Մելիք-Եգանի եկեղեցաշեն գործունեությունը շարունակել է նրա որդի Մելիք-Եսային: Տողի Ս. Ստեփանոս եկեղեցու դռան ճակատակալ քարի արձանագրությունը փաստում է. «Թվին ՌՃՂՁ (1747). յիշատակ է սուրբ Ըստեփանոսի եկեղեցուս գլուխն, որ նորոգեաց Մէլիք Եկանի որդի Մէլիք Իսային. յիշատակ է հոգոյ»[182]: Առաքել Կոստանյանցը Գտչավանքի պատմությանը նվիրված իր երկում գրում է, որ «Հայաստանն այսու եղանակաւ ընդ նմին ժամանակի ծաղկեալ պահէին՝ իւրաքանչիւր գաւառ զվանս իւրեանց. ամենայն անձն ջանայր տալ յիշատակս. և մեծամեծ իշխանք և որք ունեւորք են և հարստացեալք՝ նոցա առաջին հոգս այն էր, զի թողցեն յայսմ աշխարհի զբարի անուն և ազնուագոյն յիշատակ»[183]: Փաստերը վկայում են, որ Արցախի մյուս գավառների մելիքները ևս եկեղեցաշեն գործունեությամբ հետ չեն մնացել Դիզակի տիրակալներից:

1815 թ., երբ Ամենայն Հայոց կաթողիկոսության միջնորդությամբ և ռուսական կառավարության հրամանով վերացվել է Աղվանից կաթողիկոսությունը և նրա փոխարեն հաստատվել մետրոպոլիտություն, Սարգիս Հասան-Ջալալյանը կաթողիկոսականի փոխարեն ստացել է մետրոպոլիտական տիտղոս: Սակայն, վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու հաջողվել է «փաստացի վերահսկողություն հաստատել Սարգիս մետրոպոլիտի հոգևոր իշխանության տակ գտնվող թեմերում»[184]: Ուստի պատահական չէ, որ Մատենադարանում պահ-

181 Դիվան հայ վիմագրության, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1960, էջ 35, տես նաև Հասրաթյան Մ., Տաթևի Մեծ անապատի ճարտարապետական անսամբլը, «ԲԵՀ», 1969, թիվ 1, էջ 255:
182 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 199, Դիվան, V, Արցախ, էջ 177:
183 Կոստանեանց Առ., Պատմութիւն Գտչայ վանուց, Մատենադարան, ձեռ. 3966, էջ 5ա:
184 Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 209:

վող Ներսես Աշտարակեցու արխիվում մենք հայտնաբերել ենք մի շարք վավերագրեր, որոնց մեջ կան ուշագրավ տվյալներ Արցախի գավառներում զանազան հոգևորականների քահանայագործության հետ կապված մելիքների՝ Աշտարակեցուն արված միջնորդությունների մասին, որոնք, որպես կանոն, բավարարվել են: Այսպես, Ներսես Աշտարակեցին 1815 թ. փետրվարի 16-ի գրությամբ՝ կապված ոմն Դանիել քահանայի քահանայագործության հետ, Ջրաբերդի և Գետաշենի մելիքներին թեև հիշեցնում է, որ «քահանայն ուր որ ձեռնադրեալ լինի, անդ պարտի քահանայութիւն առնել, և առանց հարկաւոր պատճառի կամ առանց հրամանի իւր արքեպիսկոպոսին թէ կամիցի գնալ յայլ վիճակ, քահանայութիւն նորա չէ ընդունելի», «բայց զի ձեր հասարակութեան առաջին խնդիրն էր առ իս, և պայազատ Սէրան բէկն ես յատուկ միջնորդ էր ի ձեր դիմաց, թէ մեզ մեղք և թէ արդարութիւն ներեցաք մեզ, յիշեալ տէր Դանիէլին ի պատիւ երեսաց ձերոց և հրաման առ արժանապատիւ Յարութիւն վարդապետ յաջորդն մեր թոյլատրել նմա և կարգել քահանայ եկեղեցւոյ ձերում»[185]: Նույն օրը գրած մեկ այլ նամակով Ներսես Աշտարակեցին Գանձակի Հարություն վարդապետին պատվիրել է անսալ Ջրաբերդցիների և գետաշենցիների խնդրանքին և Դանիել քահանային թույլատրել պաշտոնավարելու նրանց եկեղեցում, որովհետև «ի պատիւ գերապատիւ մէլիքացն և քէվխայիցն և ամենայն այլ միջնորդացն և իւր իսկ Սէյրան բէկին՝ զմտաւ ածեալ թէ լաւ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ քան ի ձեռս մարդոյ. թէպետ և ընդդեմ կանոնաց ևս էր, վերստին ընտրելի համարեցաք ի պատիւ երեսաց պատուելի խնդրողացն թոյլատրել զի պաշտեսցէ նա այդր զիւր քահանայութիւն»[186]: Ավելացնենք, որ նամակներում որպես «յատուկ միջնորդ» հիշված Սեյրան բեկը Ջրա-

185 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 240:
186 Նույն տեղում, թղթ. 164ա, վավ. 241:

բերդի համբավավոր Մելիք-Իսրայելյանների տոհմի անփեսան էր՝ Մելիք-Հաթամ Բ-ի դուստր Սհարնազի ամուսինը:

Մեկ տարի անց նույնաբնույթ խնդրանքով՝ այս անգամ կապված Գեորգ քահանայի քահանայագործության հետ, Վարանդայի հասարակության անունից Ներսես Աշտարակեցուն է դիմել տեղի տիրակալ Մելիք-Խուդադադ Մելիք-Շահնազարյանը: Եվ, ինչպես տեղեկանում ենք Ներսես Աշտարակեցու՝ 1816 թ. հունվարի 29-ին Վարանդայի հասարակությանն ուղղված նամակից, թեպետ «այնպիսի խնդիր չունէր զտեղի ի մէջ բարեկարգ կառավարութեան. բայց զի յոյժ սիրելի պայծառ. մէլիք Խուդադադն էր միջնորդ, ի պատիւ երեսաց նորա գրեցի ես հոգևոր կառավարութեան մերում թոյլատրել նմա յիւրումն քահանայական պաշտօնի»[187]:

Ունենք փաստաթղթեր, որոնք վկայում են, որ այսպես է եղել ոչ միայն Արցախում: Մատենադարանում պահվում է մելիքներ Ալլահվերդու, Բաղոյի, Մարտիրոսի, Սևոյի, որոնց որ վայրի մելիքներ լինելը դժվար է ենթադրել, և մի քանի ռեսերի 1768 թ. խնդրագիրը Սիմեոն Երևանցի կաթողիկոսին, որով խնդրում են Ստեփանոս վարդապետին ձեռնադրել և ուղարկել իրենց վանքը կառավարելու: «Մենք ամէնքս միաբանք քոյ գարշապարդ համբուրեմք,-կարդում ենք խնդրագրում,-որ մեծ պարոնի և մեր պարոն աղիցներէն և մեր խաթրնէրից, մեր վանք անտեր է, փուչ խօսաց ականջ չի անէս, քո տունն է սուրբ առաքեալն, մեր ամէնից թագն դուն ես, մեր տանուտէր հրամանքդ ես, թէ մեր խաթրն կուզես և պարոնքէրաց, հալբաթ Ռ (պատճենում՝ հազար-Ա. Մ.) հալբաթ վանք անտէր է մնացէ, Ըստեփաննոս վարդապետն ձեռնադրես, օրհնես, յղես դայ, մեր վանքի ճամրն նա կու քաշէ»[188]: Կարելի է բերել նաև այլ օրի-

187 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 915: Հրատարակությունը տես Մաղալյան Ա., Փաստաթղթեր Վարանդայի Մելիք-Շահնազարյանների տոհմի վերաբերյալ, «ԲՅԱ», 2005, թիվ 2, էջ 4:
188 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 11, բնագիր, պատճենները տես Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 7, թղթ. 156, վավ. 206:

նակներ, սակայն, կարծում ենք, այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ մելիքները ակտիվ, իսկ երբեմն էլ վճռորոշ մասնակցություն են ունեցել իրենց գավառներում պաշտոնավարող հոգևորականների նշանակման գործում:

Մելիքների իշխանության ժամանակաշրջանի ավարտից հետո անգամ երբեմն նրանց ժառանգները միջնորդություններ են արել իրենց բնակավայրերում այս կամ այն հոգևորականի նշանակման խնդրանքով: Այսպես, Մատենադարանում մենք հայտնաբերել ենք Գյուլիստանի Մելիք-Յրեյդունի որդի Բեգլար-բեկ Մելիք-Բեգլարյանի՝ 1857 թ. փետրվարի 1-ին Գանձակից Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին ուղղած գրությունը, որով քահանա է խնդրել Խրխափոր գյուղի համար: Նկատի ունենալով այդ նամակի կարևորությունը մեզ հետաքրքրող մի շարք հարցերի առնչությամբ, այն բերում ենք գրեթե ամբողջությամբ: «Յառաջագոյն բնակութիւնս իմ էր ի Ղարաչինար կոչեցեալ հայրանիստ գեղջն մերում,-գրում էր Բեգլարբեկը,-ուր բնակէի ի թիւս եղբարց իմոց, իսկ այս երկու ամք են, յորմէ հետէ տեղափոխեալ անդի զտունն իմ, գնացեալ բնակիմ հանդերձ գերդաստանեօքս ի վիճակ իմ ի մէջ եղբարցս պատկանեցեալք ի գիւղն Խրխափոր, ուր կան բաց յինէն և քսան տուն բնակիչ հայազն ժողովուրդք, և եկեղեցին պայծառ, որոց քահանայն էր անդանօր Տէր Յովակիմն Բեկլարեան, այլ չգիտեմ, թէ այս քահանայ առ ի՞նչ աղագաւ ինքնակամ, առանց տնօրէնութեան հոգևոր կառավարչացն եկեալ անդի՝ գնացեալ է և մնայ առանց պաշտօնի ի գիւղն Էրքէջ, ուր գոյ սեփհական քահանայ...

Առ ի չկարելոյ տանել զայսպիսի պակասութիւնս, թէպէտ և խնդրամատոյց եղեալ եմ կօնսիստորին Հայոց Ղարաբաղու, և կրկնեալ բազմիցս զնոյն խնդրուած վասն տալոյ մեզ զքահանայ, կամ զյիշեալ Տէր Յովակիմն, որ գնացեալ է ի գիւղն Էրքէջ, վերադարձուցանել առ մեզ՝ ի նախկին տեղին իւր, սակայն ի կօնսիստորէն ի վաղուց հետէ ո՛չ ինչ տնօրէ-

նութիւն չգայ, և մեք ընկղմեալ կամք ի խորս ի յայսպիսիս յուսահատ տարակուսանաց վասն քահանայի ի նախատինս սրբալոյս հաւատոյս մերոյ. ըստ որում՝ եթէ քրիստոնեայ եմք, անպատճառ պիտոյ է մեզ քահանայ: Յաղագս որոյ ածելով զվերոյիշեալ աղետալի ցաւս իմ ընդ ժողովրդեանն ի հայրական մտադրութիւն Ձեր, ողորմա՛ծ Տէր, ամենախոնարհաբար խնդրեմ ի Սրբութենէ Ձերմէ ցաւակցական գթով բարեհաճել հրամայել կօնսիստորին Ղարաբաղու կամ ում հարկն է, որպէսզի, տնօրինեսցեն առաքել դարքել ի միջի մեր զքահանայ զոմն հաստատուն, վասն զմեզ կառավարելոյ, և թէպէտ գիւղս մեր սակաւաթիւ իցէ ժողովրդեամբն, բայց ես խոստանամ ինքս մեծապէս ձեռնտու լինել նոյնպէսի քահանային ամենայն կերպիւ ի յապահով ապրուստ նորա»[189]: Սույն և նմանատիպ մի շարք այլ փաստերը վկայում են, որ ինչպես այս, այնպես էլ դատավարության դեպքում, մելիքների ժառանգները տեղի հասարակության շրջանում ունեցած բարձր դիրքի շնորհիվ շարունակում էին իրականացնել իրենց նախնիների որոշ գործառույթները:

Երբեմն մելիքական ընտանիքների որոշ անդամներ ևս դարձել են հոգևորականներ: «Մելիքները եթե շատ որդի էին ունենում, երբեմն կրտսերներից մինին ուղարկում էին Էջմիածին կամ Գանձասար՝ կարդալու,-տեղեկացնում է Ե. Լալայանը,-որ հոգևորական դառնա»[190]: Առավել ուշագրավ է Խաչենի Մելիք-Գրիգոր Հասան-Ջալալյանի օրինակը, որը կյանքի մայրամուտին, հրաժարվելով աշխարհիկ իշխանությունից, վարդապետ է ձեռնադրվել և մտել Գանձասարի վանքը: Առհասարակ, Խաչեն գավառում և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանությունը կենտրոնացած էր Հասան-Ջալալյան տոհմի ձեռքում:

Արցախի մելիքները, ինչպես ցույց տվեցինք Դիզակի մելիքների օրինակով, ծավալել են նաև եկեղեցիների վերանորոգ-

[189] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 185, վավ. 23, բնագիր:
[190] Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 250:

ման և կառուցման եռանդուն գործունեություն: Այսպես, Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի ջանքերով 1781 թ. վերանորոգվել է Գանձասարը, ինչպես վկայում է վանքի գավթի հյուսիսային պատին նրա թողած արձանագրությունը. «Ի ՌՄԼ (1781) թուիս կամաւն Աստուծոյ, ձեռամբ տեառն Յովհաննիսի կաթողիկոսին, ես Ապաւ ուզբաշի՝ որդի Մէլիք Յօվսէփա Թալիշու եւ իմ կենակից Հէրիքնազ եւ որդիք Մէլիք Պէկլար եւ Մէլիք Աբաւ մեր հալալ արդեանց շինեցաք սրբոյ աթոռոյս Աղուանից Գանձասարու երկուց եկեղեցեաց տանիսն եւ խախտեալ որմունս բազմաւ աշխատութեամբ. յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց»[191]:

Պատմական ճշմարտությունը պահանջում է նշել, որ եկեղեցաշեն գործունեություն են ծավալել նաև Շուշիի խանների դաշնակից մելիքները: Օրինակ՝ Խնձրիստանի Մելիք-Միրզախան Մելիք-Միրզախանյանը, որը Փանահ խանի դրածո մելիքն էր Խաչեն գավառում, իր գյուղում 1754 թ. կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին: Այդ մասին փաստում է եկեղեցու դռան ճակատակալ քարին փորագրված արձանագրությունը. «ՌՄԳ (1754). յիշատակ է Սուրբ Աստուածածին եկեղեցիս խօնծրստանցի Մէլիք Մէզախանին և ծնողացն Այտինին և Մարիանին և կողակցուն պարուն Նանային և Հերիքին և որդուն Ալայվերտին»[192]: Այդ մասին արձանագրված էր նաև եկեղեցու կողքին գտնվող նրա շիրմաքարին. «Կամաւն Աստուծոյ ամենազօրին, այս է տապան Մելիք Միրզախանին, որ է որդի Այտինին, հայր էր Մելիք Ալավերտին, իշխանութիւն անէր Խաչենու երկրին, որ մականուն նստաւ Խնծրստանայ գեղին, շինեց յիշատակ Աստուածածնայ սուրբ եկեղեցին, ամի վախճանեցաւ ՌՄԻԶ (1777) թուականին»[193]:

[191] Ուլուբաբյան Բ., Գանձասար, էջ 120-121, Դիվան, V, Արցախ, էջ 57:
[192] Դիվան, V, Արցախ, էջ 142:
[193] Նույն տեղում, էջ 142-143: Ըստ այդմ, ուղղելի է որպես Մելիք-Միրզաբեկի մահվան տարեթիվ Րաֆֆու նշած 1775 թվականը (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 468):

Իսկ Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարը, որի թողտվությամբ էր վաչկատուն սարջալուների ցեղապետ Փանահ խանը 1752 թ. հաստատվել Արցախում, կյանքի մայրամուտին զղջում է իր գործած չարիքների համար և վճռում վերանորոգել Ամարասը: «Ծռաքաղ» հանդեսում հանգամանորեն ներկայացված են Ամարասի վերանորոգման աշխատանքները. «Մէլիք Շահնազար Հայկազն՝ իշխան գաւառակին Վարանդու՝ կամելով ի հիմանց նորոգ շինել զայս ուխտատեղի, և հաստատել միաբանս ի նմա, կանգնեաց յապահովութիւն ի վերջ 18 դարու նախ առաջին ամրոց քառակուսի զեկեղեցեաւն՝ չորեք աշտարակօք քարուկիրս և ամրակուռս, և ի ներքս պարսպին շուրջանակի սեղանատունս, խոհանոցս, սենեակս և այլ շինութիւնս ի պէտս և ի բնակութիւն միաբանից, որք և ցարդ ամբողջութեամբ մնան: Այլ յաւարտել շինութեան բերդին՝ աւարտ եհաս և արևու նորին՝ չեղեալ ձեռնհաս ի շինութիւն եկեղեցւոյն»[194]: Այդ քայլով Մելիք-Շահնազարը հույս ուներ երկնային կյանքում թողություն ստանալ իր երկրային մեղքերի համար:

Եվ, վերջապես, ոչ պակաս ուշագրավ նմանատիպ մեկ այլ փաստ էլ կապված է Շուշիի Իբրահիմ խանի մեկ այլ դաշնակցի՝ Գյուլյաթաղի Մելիք-Ռուստամ Մելիք-Ալլահվերդյանի հետ, որը խանի կողմից 1787 թ. Ջրաբերդի մելիք էր կարգվել այդ գավառի օրինական տիրակալ Մելիք-Մեջլումի Գանձակ հեռանալուց հետո: Պարզվում է, որ Արարատյան երկրից Արցախ տեղափոխված գրիչ Հովհաննես Երևանցին նրան է նվիրել իր ընդօրինակած «Վիճակացույցը»: Նա այդ մասին գրում է ձեռագրի վերջում թողած «Յիշատակ պատճառի թղթոյ» վերտառությամբ չափածո հիշատակարանում, որից քաղվածաբար բերում ենք մի հատված.

«Եթէ ոք՝ գիտել մարթաս ցի.
վասն յոյր իցէ ծրեալն խս մի:

[194] «Ծռաքաղ», Մոսքուա, 1859, տետր Ժ, էջ 339:

Վասն միոյ՝ խոհեմ իշխա   նի.
մէլիք՝ Ըռուստամ վերաձայ   նի:
Որ էր ինքն քաջ՝ և յոյժ ար   ի.
ժառանգեալ զանուն մարմնակա   նի:
Նոյնպէս և ըստ հոգեկան   ի.
սևեռեալ իղձն միշտ վերինն խոր   հի:
Այսինքն՝ ի մէջ խւրոյ սըր   տի.
զանուն սահղծողին իւրոյ փրկ   չի…»:

«Ծանիք՝ սիրելի ընթերցողք,-շարունակում է Հովհաննես Երևանցին,-զի դիպեցաւ գալ աստ՝ յորում բնակեալ էր Իշխանն մեր. այսինքն մէլիք Ըռուստամն: Տանուտէր Միրզաբէկն Խաչէնու նահանգէն եկն աստ. որոյ՝ տեսեալ զօրինակն հաճեցաւ գրել առնուլ և ի յինքն պահել: Վասն որոյ՝ գրեալ արձանացուցաք սակս Իշխանին մերոյ, որոյ Տէր տացէ բարով վայելել՝ և անտրտում կենօք մնալ՝ մի՛նչ ի խորին ծերութիւնն. Ամէն»[195]:

Վերոբերյալ փաստերը վկայում են, որ Շուշիի խաների դաշնակիցները լինելով հանդերձ, այս մելիքներին ևս հոգեհարազատ էր ազգայինը, նրանք շարունակում էին ապրել իբրև հայ մարդիկ:

* * *

Արցախում մելիքների ձեռքում էին գտնվում իրենց գավառների ներքին կառավարման բոլոր լծակները, ուստի պատահական չէ, որ բարձրաստիճան հոգևորականները հենց մելիքներին են դիմել նրանց գավառներն ուղարկված նվիրակներին աջակցելու համար: Հայտնի է, որ սուրբ մյուռոնի բաշխման հետ մեկտեղ նվիրակների գործառույթների մեջ է մտել նաև Ս. Էջմիածնի օգտին նվիրատվությունների կազմակերպումը[196], իսկ այդ դեպքերում մելիքի կամքը կարող էր վճռորոշ

[195] Մատենադարան, ձեռ. 9153, էջ 16ա-բ:
[196] Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., 2003, էջ 89:

լինել նվիրակության արդյունքների համար: Այսպես, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1794 թ. օգոստոսի 7-ին Վարանդայի տիրակալ Մելիք-Ջումշուդին ուղղված նամակում գրում է. «Այժմ հոգևոր որդին մեր նուիրակն Նախչուանու և Ղափանու Յովհաննէս խոհեմամիտ վարդապետն, որ ըստ հրամանի մերում եկեալ էր յաստուածախնամ դղեակդ Շուշի վասն գանձանակացն Սրբոյ Գահիս, գրեալ էր մեզ զախորժալուր համբաւ քոյ», և ապա ավելացնում. «ի մէնջ յայդր հանդիպելոց վարդապետաց ընդունելութիւն և մարդասիրութիւն ցուցցես ի պատիւ Սուրբ Մեծի Աթոռոյս և մեր»[197]: Իսկ Ներսես Աշտարակեցին 1816 թ. նոյեմբերի 10-ին Գյուլիստանի Բաղր-բեկ Մելիք-Բեգլարյանին ուղղված նամակով վերջինիս խնդրել է աջակցել նրանց կողմերն ուղարկված նվիրակ Մարտիրոս արքեպիսկոպոսին: «Եհաս ժամանակ Սրբոյ Էջմիածնի Մարտիրոս արքեպիսկոպոս նուիրակ սիրելի եղբօրն իմոյ դիմել յայդ կողմանսդ վասն գործոյ նուիրակութեան իւրոյ,-գրում է նա,-վասն որոյ աւհա լաւ համարեալ վասն իմ և վասն ձեր բացայայտելով ձեզ զիմ ջերմեռանդութիւնն զնա ևս յանձն առնեմ ձեր պայծառութեանն և յուսով եմ թէ ամենայն կերպիւ նորա գործոցն օգնական լինելոց էք և բարի քաղաքավարութեամբ և վայելուչ բարեսրտութեամբ կատարելով զգործն պաշտօնի նորա ճանապարհորդելոց էք օրհնութեամբ և շնորհակալութեամբ գձէնջ և զսիրելի ժողովրդենէ Սրբոյ Լուսաւորչին»[198]:

Պետք է նշել, որ նվիրակներին աջակցելու բազմաթիվ փաստերի կողքին հայտնի են նաև նրանց գործունեությանը խոչընդոտելու հատուկենտ դեպքեր: Այսպես, 1822 թ. Վարանդա գավառում եղած Երուսաղեմի նվիրակներից մեկը իր հաշվետոմարում թողել է հետևյալ ուշագրավ գրառումը. «Այս տասն և երեք գիւղօրայքս զենարալ Մադադովին, բայց նորին վերատեսուչ պարոն Պետրոսն (Մադաթովի քեռին-Ա. Մ.) ո՛չ

[197] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 1, թ. 91բ, 92բ:
[198] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 266:

եթող զմեզ ժողովելոյ. ինքն ժողովեաց ըստ կամաց իւրոց, այն արդեանց մասն մի՛ եւ զմեզ 50 թուման, մնացեալն իւր ագահութեանն ապըշտակեաց և եկեր, որ էր յոյժ չքաւոր ընդ հոգեւորին. Սուրբ տեղեաց միջնորդութեամբն Տէր տացէ վարձս ըստ գործոց իւրոց. ըստ հոգոյ և ըստ մարմնոյ»[199]:

Եվ, վերջապես, երբ խանական կառավարության բռնություններն էջմիածնի նկատմամբ ուժեղացել են[200], 1822 թ. Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը անցել է Արցախ: Այնտեղ կաթողիկոսական թափորը եղել է նաև Ջրաբերդ գավառում և Կուսապատ գյուղում իջևանել տեղի համբավավոր Մելիք-Վանի Աթաբեկյանի տանը: Այդ մասին կաթողիկոսի թափորի կազմում գտնվող Հովսեփ վրդ. Տեր-Մարուքյանը 1822 թ. հուլիսի 21-ին Կուսապատից Աղաբեկ և Ավագ Քալանթարյաններին ուղղած նամակում գրում է. «Հանդերձ գլխով մերով (Եփրեմի-Ա. Մ.) կամք ողջութեամբ ամենեքեանքս ի տան օրհնեալ ազնիւ մէլիք Իվանու ամենայն կերպիւ պատուով»[201]: Մեզ է հասել նաև Եփրեմ կաթողիկոսի՝ 1824 թ. դեկտեմբերի 14-ին Հաղպատից Մելիք-Վանուն ուղարկած օրհնության գիրը, որտեղ կարդում ենք. «Մեք պարտաւորեալ ի գերապատիւ սիրոյ և բարեպաշտութեանց ձերոց՝ զորոց առաք զչափ բաւականապէս ի լինել մեր ընդ օրհնեալ յարկաւ ձերով հանդերձ ընդ մեզ եղելովք...»[202]:

[199] Երուսաղեմի Ս. Յակոբյանց վանքի Մատենադարան, ձեռ. 3216, էջ 23, նաև՝ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Թ, կազմեց՝ Ն. արք. Պողարեան, Երուսաղէմ, 1979, էջ 517-518: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանին և նրա քարտուղար Հ. Իսահակ Մինասյանին, մեր դիմումին ընդառաջելով, սույն ձեռագրի լուսապատճենը մեզ տրամադրելու համար:

[200] Երևանի Հուսեյնկուլի խանի և նրա ստորադասների կողմից էջմիածնի միաբանության նկատմամբ գործադրված ոտնձգությունների մասին տե՛ս Փափազյան Հ., Ներսես Աշտարակեցու 1823 թ. բողոքագիրը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 13, Ե., 1980, էջ 259-270:

[201] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 44, վավ. 341, բնագիր:

[202] Նույն տեղում, թղթ. 49, վավ. 286, բնագիր:

Կուսապատից կաթողիկոսական կարավանը շարժվել է Գյուլիստան և հյուրընկալվել տեղի տիրակալ Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանի կողմից: Մատենադարանում մենք հայտնաբերել ենք Ներսես Աշտարակեցու՝ 1822 թ. հուլիսի 23-ին Կուսապատից Մելիք-Հովսեփին գրած նամակի սևագրությունը, որով խնդրել է տեղ և հարմարություն պատրաստել կաթողիկոսական թափորի մի քանի օրվա բնակության համար[203]: Կաթողիկոսի ուղեկիցների թվում եղած Մ. Թաղիադյանը նրա օջախի մասին գրում է. «Տուն Մէլիք Յովսէփայ անկանէր ի միջավայր քառառաջ ճանապարհին, ընդ որ երթեւեկս առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, եւ ի Հայոց յԱղուանս: Անմարթ էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եղինք ու չորս կամ հինգ ոչխարք զենուլին անդ՝ ի կերակուր անցաւորաց, բաց ի ձկանց եւ յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս»[204]:

Այսպիսով, հիմնվելով ներկայացված նյութի վրա, կարող ենք նշել, որ մելիքները ակտիվորեն մասնակցել են իրենց գավառների հոգևոր գործերին:

Այժմ, այստեղ փակելով Արցախի մելիքությունների պատմության այս էջը, տեսնենք, թե որ մելիքական տներն էին, որ այնտեղ ավելի քան երկու դար շարունակ իրենց ասպարի վրա էին ընդունում շրջապատի թշնամիների բոլոր հարվածները:

[203] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 513:

[204] Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 165:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԵՐԸ

Հայոց պատմությունը հարուստ է իշխանական բազմաթիվ տոհմերով, որոնցից՝ մելիքական տների ներկայացուցիչները մի քանի հարյուրամյակ շարունակ (XVII դարի սկզբից մինչև XIX դարի առաջին քառորդը) հանդիսացել են ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրներ: Հատկապես անվանի են եղել Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Գեղարքունիքի և Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Դիզակի Մելիք-Եգանյանների (Մելիք-Ավանյաններ) ու Երևանի Մելիք-Աղամալյանների[205] *և Գեղամյանների տոհմերը:*

Սույն գլխում, որը նվիրված է Արցախի մելիքական տների տոհմաբանությանը, հիմնական շեշտը դրված է առավել անվանի մելիքների ներկայացման վրա, իսկ մյուսներին և նրանց ընտանիքների կրտսեր անդամներին, որոնք կոչվել են բեկեր, պարզապես թվարկել ենք: Հարկ ենք համարում նշել նաև, որ շատ դեպքերում ժամանակը ջնջել է ամեն հիշատակ և հիշողություն, իսկ ժողովրդական ավանդազրույցներում հաճախ մեկի կատարած գործը վերագրվում է մյուսին, որպես կանոն, առավել հեղինակավորին, և ուսումնասիրողների համար դժվարանում է ճշմարտության բացահայտումը: Մենք, ըստ հնարավորության, աշխատել ենք չմեղանչել ճշմարտության դեմ:

[205] Այս տոհմի մասին տե՛ս **Շահազիզ Ե.**, Հին Երևանը, էջ 85-89, **Hewsen R.**, The House of Aghamaleanc Meliks of Erevan, «Բազմավէպ», 1984, թիւ 3-4, էջ 319-334, նաև՝ Երևան քաղաքի պատմության թանգարան (ԵՔՊԹ), փաստաթուղթ թիվ 12411, Մոզաֆֆար էդ-Դին շահի 1900 թ. մայիսի ֆարմանը՝ Երևանի քաղաքագլուխ Ի. Մելիք-Աղամալյանին «Առյուծի և Արևի» II աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին:

Ա) ԳՅՈՒԼԻՍՏԱՆ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Գյուլիստանի մելիքությունը կազմավորվել է XVII դարի սկզբին: Այս տիրակալությունը, որը կոչվում էր նաև Իգիրմիդորդ (թուրքերեն՝ «քսանչորս» բառից), նույնքան գյուղերից բաղկացած լինելու պատճառով, սկսվում էր Կուրակ (Քյուրակ) գետից, Գանձակի սահմաններով և տարածվում մինչև Թարթառ գետը:

Գյուլիստան գավառի տիրակալները Մելիք-Բեգլարյաններն էին, որոնց նստավայրերն էին Գյուլիստանի բերդը, որն այժմ էլ գրեթե անխաթար է, և Թալիշ գյուղի մոտ, Հոռեկա վանքի դիմաց գտնվող ապարանքը: Հոռեկա վանքի մոտ է գտնվում նաև Մելիք-Բեգլարյանների տոհմային գերեզմանատունը: «Հնավայրի ողջ տարածքն այժմ պատված է ծառախիտ անտառով, պահպանված շինություններն ու տապանաքարերը մասամբ հողածածկ են»[206]*:*

«Մելիք-Բեգլարյանները,-գրում է Րաֆֆին,-բնիկ ուտեացիներ են, Նիժ գյուղից: Թե ինչ հանգամանքներ ստիպեցին նրանց թողնել հայրենիքը և գաղթելով Ղարաբաղի կողմերը, Գյուլիստան գավառում նոր բնակություն հաստատել,-այդ մասին լռում է պատմությունը»[207]*: Գյուլիստան գավառում բնակություն հաստատած այս տան առաջին ներկայացուցիչը «հայերի մեջ հայտնի էր անունով սև Աբով, որը հասարակ մարդ չէր. նա իր հայրենիքում ժողովրդի կառավարիչ էր, հարուստ էր»*[208]*: Թուրքերը նրան կոչում էին «Ղարա-յուզբաշի» (Սև հարյուրապետ):*

[206] **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, էջ 50:
[207] **Րաֆֆի**, նշվ. աշխ., էջ 420:
[208] Նույն տեղում:

Սև Աբովի գերդաստանը Արցախ է եկել XVI դարի վերջերին[209] և բնակություն հաստատել այժմյան Թալիշ գյուղի մերձակայքում: Շատ շուտով, շնորհիվ իր մի քաջագործության, Սև Աբովը Բարդայի խանից նվեր է ստանում հին Թալիշ գյուղը: Սև հարյուրապետի մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա վախճանվել է 1632 թ. և թաղվել Հոռեկա վանքի մոտ, ուր ներկայումս գտնվում է Մելիք-Բեգլարյանների տոհմական գերեզմանատունը: Սև Աբովի կնոջ անունն անհայտ է:

Նրան հաջորդում է որդին՝ Մելիք-Յավրին (անունը 1650թ. հիշատակված է Թալիշ գյուղի Ավետարանում)[210], ապա մյուս որդին՝ Մելիք-Բեգլար Ա-ը, իսկ Սև Աբովի մնացած որդիների ճակատագիրը անհայտ է մնում: Մելիք-Բեգլարը հիմնում է Գյուլիստանի մելիքությունը և ընդարձակում իր տիրապետության սահմանները: Նա շուտով զավթում է տեղի իշխան Աբրահամ յուզբաշու տիրապետության ներքո գտնվող մի շարք ավաններ, այդ թվում և Գյուլիստանը, Վերիշենը, Ներքիշենը, Էրքեջն ու մի շարք գյուղեր: Մելիք-Բեգլար Ա-ը տիրում է նաև Գյուլիստան բերդին և իշխանանիստի վերածում այդ անառիկ ամրոցը: Նա ուներ երեք որդի, ավագը կոչվում էր Աբով, միջնեկը՝ Թամրազ (Թեյմուրազ, մահ. 1750), իսկ կրտսերը՝ Իսայ-խան աղա (մահ. 1751): Վերջինիս կնոջ անունը Մարիամ էր[211]:

Մելիք-Բեգլար Ա-ին հաջորդում է ավագ որդին՝ Մելիք-Աբով Բ-ը, որը հայտնի էր նաև կաղ Աբով մականունով, քանի

209 Րաֆֆին իր «Խամսայի մելիքություններ» աշխատության մեջ գրում է, որ Սև Աբովը Արցախ է գաղթել «Տասնվեցերորդ դարու սկզբներում» (տես Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 420), սակայն, մեր կարծիքով, այստեղ ժամանակագրական սխալ կա, և առավել ճշգրիտը ազգագրագետ Ե. Լալայանի տեսակետն է, ըստ որի Սև Աբովը Գյուլիստանում հաստատվել է «տասնվեցերորդ դարի վերջում» (տես Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 209):

210 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 210:

211 Ղահրամանյան Կ., Նյութեր Գյուլիստանի մելիքության պատմության վերաբերյալ, «ԼՀԳ», 1979, թիվ 12, էջ 112:

որ մի ոտքը վնասվել էր հրացանի գնդակից: Նա փախցնում է Գանձակի մեծահարուստ կալվածատեր Միրզա-Մահմադ Մուստաֆայի միակ դուստր Ղամար-սուլթանին և ամուսնանում վերջինիս հետ:

Աբովի կնիքը դրված է Արցախի մելիքների կողմից 1725թ. ռուսական արքունիքին հղված երկու խնդրագրերի տակ, իսկ կնիքի վրա հստակորեն ընթերցվում է «Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] Աբով» գրությունը[212]: Մեզ է հասել նաև ռուսաց հրամանատարության մոտ ուղարկված պղնախների ներկայահրամանատարության մոտ ուղարկված սղնախների ներկայացուցիչ Քրիստափորի՝ 1726 թ. նոյեմբերի 25-ին Արցախի մելիքներին, յուզբաշիներին և ողջ բնակչությանն ուղղված նամակը, որի մեջ ևս հիշատակվում է Աբովի անունը[213]: Կաղ Աբովը վախճանվել է 1728 թ., իսկ Ղամար-սուլթանը՝ 1753-ին:

Նրան հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Թամրազը, քանի որ Աբով Բ-ի միակ որդին՝ Մելիք-Հովսեփը, դեռևս անչափահաս էր: Թամրազը բնակություն է հաստատել Հոռեկա վանքի դիմաց գտնվող գղյակում: Նա ցանկանում էր իր պատանի եղբորորդուն զրկել և՛ հոր անբավ ժառանգությունից, և՛ իշխանությունից, որը մելիքների սովորության համաձայն, պետք է անցներ Հովսեփին, երբ վերջինս չափահաս դառնար: Սակայն, շուտով, հորեղբոր ու եղբորորդու հակասությունը սրվում է, և Հովսեփի ջոկատը, գրավելով Թամրազի ամրոցը, նրան կախում է մի չինարի ծառից: Ըստ Մատենադարանի թիվ 7816 ձեռագրի վերջում տեղ գտած ժամանակագրության՝ Մելիք-Թամրազը սպանվել է 1750 թ. «մայիս ամսումն»[214]: Թամրազն ուներ երկու որդի՝ Դանիելը, «որ թեև կրում էր մելիքի տիտղոսը, բայց մելիքություն չէր անում»[215], և Սարուխան բեկը, որը 1723-ին հայոց դնդերի չորս հրամանատարներից մեկն էր:

212 Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 235, 251.

213 Там же, с. 287.

214 Մատենադարան, ձեռ. 7816, էջ 20բ:

215 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 214:

Մելիք-Հովսեփը երկար է կառավարում Գյուլիստանը: «Նոր տետրակում» նրա մասին կարդում ենք. «Ինքնագլուխ (անկախ-Ա. Մ.) իշխան է. իր իշխանության մեջ. ինչ էլ ցանկանա, կարող է կատարել՝ առանց ուրիշի հետ հաշվի նստելու: Ջափագանց քաջ ու արի մի մարդ է սա, քանզի իր անկախությունը ձեռք է բերել սեփական խիզախության շնորհիվ»[216]: Մելիք-Հովսեփի կնոջ անունը Հերիքնազ էր: Ըստ Րաֆֆու՝ նա վախճանվել է 1775 թ., տարեց հասակում, թողնելով երկու որդի՝ Բեգլար և Աբով անուններով[217]: Մեծ գրողը չի պարզաբանում, թե ինչ փաստերի հիման վրա է նշում այդ թվականը, իսկ որոշ նորահայտ վավերագրեր գալիս են ապացուցելու, որ Մելիք-Հովսեփը 1778 թ. փետրվարին դեռևս ողջ էր:

Այդ փաստաթղթերից առաջինը, որի բնագիրը պահվում է Մատենադարանում, Մելիք-Հովսեփի կողմից 1778 թ. փետրվարի 19-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված նամակն է, որով նրանից հմուտ վարպետներ է խնդրել Գանձասարի վանքի տանիքը վերանորոգելու նպատակով, որովհետև «էս երկրումս էնպէս լաւ ուստա չկայ, որ էս աթոռիս գլուխն շինի իւրան լայեղին, չուն իւրեան շէնքն շատ նաշուք է ու զարմանալի»: Ընդ որում, նամակի վերջում Մելիք-Հովսեփը որոշակիացնում է, թե հատկապես որ վարպետին է հարմար տեսնում իր մտադրությունն իրականացնելու համար. «Մին ուստա, որ հրամանոցդ համար բան է անում, էս տարի սուրբ Օհանէս Մկրտչին աթոռին բախշէս, ողարկէս կայ, էն ուստան, որ սուրբ Աթոռիդ սիւներն շինել այ, հրամանոցդ ծառայ Պէկլարն տեսէլ այ էդեղ. էլ ինչ երկարեմ, շատ ու քիչ ծառայիդ խաթրն կուզէս, ինչ թարզ որ լինի ողարկէս, որ մեր ուխտին տակին չի մնանք»: Սույն ուշագրավ նամակը եզրափակվում է այսպես. «Ծառայ մէլիք Օսէփէ ընկալլար, կրվեցաւ ՌՄԻԷ (1778) թվին

---

[216] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 103:

[217] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 469-470:



Գյուլիստանի Մելիք-Հովսեփի 1778 թ. նամակը Սիմեոն Երևանցի կաթողիկոսին (այս և հետագա բոլոր վավերագրերի լուսանկարները հրապարակվում են առաջին անգամ)



Մելիք-Աբովի 1802 թ. ծանուցագիրը իր իշխանության տակ հայտնված խաչենցիների նկատմամբ ավատական իրավունքները Սարգիս Հասան-Ջալալյանին հանձնելու մասին



Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու 1846 թ. նամակը Թալիշ, Թեյմուրազ և Բեգլար Մելիք-Բեգլարյաններին



Ջրաբերդի Ալլահղուլի սուլթանի 1749 թ. հրամանագիրը՝ կիրակոսին Առաջաձորի տանուտեր (քյոխվա) կարգելու մասին



Ջրաբերդի Մելիք-Ադամի (Յաքամ) գրությունը տանուտեր Կիրակոսին



184

Преосвященнѣйшiй Армянскiй Архiепископъ Iоаннесъ.

1805

Милостивый Государь Мой!

Карабагскiе Армяне Хачинскiе поданнымъ комнѣ прошенiемъ жалуются, что переселясь онѣ въ Грузiю жительствовали начально въ разныхъ мѣстахъ, а напослѣдокъ когда собрались около восьмидесяти семействъ вмѣстѣ, то Архiерей Саркисъ призвавъ ихъ къ себѣ совѣтывалъ по обычаямъ ихъ избрать себѣ въ Мелики брата его Алавердiя съ обѣщанiемъ дать имъ за то лошадей воловъ и дать тысячи рублей денегъ, что они и здѣлали но онъ не только невыполнилъ обѣщанное, но присвоеваетъ еще вокрестьянство, Меликиж пообычаямъ ихъ не есть полные владѣльцы, а зависятъ отъ выбора.— Сообщая о семъ Вашему Преосвященству, какъ главному пастырю народа сего и вѣдающему лучше обычаи ихъ покорнѣйше прошу васъ посовѣтовать о томъ мнѣ объявить ибудде есть на то не одинъ обычай а законъ то не оставте

Իշխան Պ. Ցիցիանովի 1805 թ. մարտի 2-ի նամակը վիրահայոց թեմի առաջնորդ Հովհաննես Գեղարդակրին



28b

1824

Ամենայն Հայոց եփրեմ կաթողիկոսի 1824 թ. օրհնության գիրը Կուսապատի Մելիք-Վանի Աբաբեկյանին



**Մելիք-Վանի Աքաբեկյանի 1826 թ. նամակը
Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսին**

փետրվարի ամսին ԺԹ (19). Շօշուայ ղալումն եղև»[218], իսկ մե-
լիքի կնիքի վրա հստակորեն ընթերցվում է նրա անունը:
Հաջորդ վավերագիրը, որը վկայում է 1778-ին Մելիք-
Հովսեփի ողջ լինելու մասին, Գանձասարի Հովհաննես կա-
թողիկոսի նույն թվականի փետրվարի 27-ի խնդրագիրն է՝
ուղղված Սիմեոն Երևանցի կաթողիկոսին: Գանձասարի տանի-
քի վերանորոգման համար նրանից հմուտ վարպետներ խնդրե-
լուց հետո Հովհաննես կաթողիկոսը Սիմեոն Երևանցուն հպան-
ցիկ ծանոթացնում է տեղի իրավիճակին՝ հիշատակելով նաև
Մելիք-Հովսեփի անունը: «Հրամանոցդ աղօթիւքն լաւ են, խա-
ղաղ թէ Շիրուան և թէ Խամսէ,-գրում է նա,-բայց կէնջու Ջա-
ւատ խանն եկեալ է աստ մինչև հիմայ մէլիք Օսէփին տանն է
լեալ, այժմս մէլիք Ադամի տանն է, չէ գնալոյ կէնջէ, թէպէտ
բազումք եկին ոչ գնաց, այսպէս մնացեալ կայ»: Խնդրագրի
վերջում Հովհաննես կաթողիկոսը չափազանց կարևոր մի վկա-
յութիւն է թողել նաև նախորդ նամակի գրության հանգա-
մանքի վերաբերյալ. «Մէլիք Յովսէփն ևս հրամանոցդ ոտաց
հողին թուղթ մի գրեալ բերդեցն և գմռսեալ առ մեզ եհաս,
զորս յղեցաք սպաս տեառնդ»[219]: Այս տվյալներից հետո ան-
հնարին է պնդել, թե Մելիք-Հովսեփը վախճանվել է 1775-ին:
Հատակ է միաժամանակ, որ 1780 թ. վերջերին Մելիք-Հով-
սեփն արդեն վախճանված էր, քանի որ մեզ են հասել Ղուկաս
Կարնեցի կաթողիկոսի՝ ն. թ. դեկտեմբերի 23-ով թվագրված և
հանգուցյալի ավագ որդի Մելիք-Բեգլարին ու Ջրաբերդի Մե-
լիք-Ադամին ուղարկված մխիթարական թղթերի համառոտա-
գրությունները: Առաջին նամակի համառոտագրությունից
տեղեկանում ենք, որ Ղուկաս կաթողիկոսը Մելիք-Բեգլարին
«վասն մահուան հօրն ևս գմխիթարութիւնս գրեաց և պա-
տուէր՝ արի լինիլ յամենայն գործս բարութեան՝ լինելով նա-

[218] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 28, պատճենը
տե՛ս Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 230:
[219] Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 231, պատճեն:

խանձախնդիր հայրենի օրինաց և աւանդութեանց սրբոց, և ժառանգել զանուն բարեպաշտութեան»[220]։ Ղուկաս Կարնեցին ցավակցական նամակ էր ուղարկել նաև հանգուցյալի երկարամյա դաշնակից Մելիք-Ադամին. «որում ես և վասն վախճանման մէլիք Յովսէփին զմխիթարութիւն գրեաց, ըստ որում սիրով էին ընդ միմեանս ի կենդանութեան նորա։ Ծանոյց սմա և զգրեալն առ Բէկլարն զթուղթ օրհնութեան և մխիթարութեան։ Եւ գրեաց, թէ զնոյն սէրն աստուածահաճոյ և միաբանութիւնն, զոր ունէիր ընդ լուսահոգի մէլիք Յովսէփին, զնոյնս և ընդ նորին որդի պարոն մէլիք Բէկլարին ունիցիս և ճշմարիտ բարեկամութեամբ և համակամութեամբ կեցջիք ընդ միմեանս»[221]։ Ի դեպ, ինչպես կտեսնենք ստորև, 1783-ին, երբ իր մահկանացուն կնքեց Ջրաբերդի տիրակալ Մելիք-Ադամը, Ղուկաս Կարնեցին ցավակցական նամակ ուղարկեց նաև Գյուլիստանում եղբորը հաջորդած Մելիք-Աբովին։ Այդ նամակները վկայում են, որ Մայր Աթոռում քաջատեղյակ էին Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների սերնդեսերունդ փոխանցվող դաշնակցության մասին։

* * *

Մելիք-Հովսեփին հաջորդում է Մելիք-Բեգլար Բ-ը, ո̀րի մասին 1781 թ. Տաթևում կազմված «Պատմագիրք Սիւնեաց» ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ինքն կարի քաջ և արի ի մարտս պատերազմաց»[222]։ Նա կարդալ գիտեր, որ այն ժամանակ մելիքների մեջ հազվադեպ երևույթ էր։ Քերականությունը նրան ուղարկել էր Սիմեոն կաթողիկոսը[223]։ Մելիք-Բեգլարը լեզգիների դեմ մղած մարտում, Գանձակի մոտ

[220] Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք I, Ղուկաս Կարնեցի, հ.Ա, աշխ.՝ Վ. Գրիգորյանի, Ե., 1984, էջ 174։
[221] Նույն տեղում, էջ 174-175։
[222] Մատենադարան, ձեռ. 1488, էջ 218ա։
[223] Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 535։

գտնվող Գորանի գյուղի մատույցներում 1781 թ. զոհվել է[224]։ Հստակ կարող ենք ասել, որ նրա սպանությունը տեղի է ունեցել 1781 թ. վերջերին, որովհետև պահպանվել են նույն թվականի սեպտեմբերի 2-ին գրված Մելիք-Բեգլարի և Ջրաբերդի Մելիք-Ադամի նամակները՝ ուղղված Եկատերինա II կայսրուհուն ու զորավար Ա. Սուվորովին[225]։ Մելիք-Բեգլարի կինը Վարանդայի Մելիք-Շահնազարի դուստր Ամարնանն (Մարիամ) էր։ Նրանք ունեցել են չորս որդի՝ Մելիք-Ֆրեյդուն, Սամ, Բաղիր և Ազարբեկ[226]։

Մելիք-Բեգլարի սպանությունից երկու տարի անց, երբ մահացավ Ջրաբերդի համբավավոր Մելիք-Ադամը, Ղուկաս կաթողիկոսը մխիթարական թուղթ ուղարկեց նաև հանգուցյալի երկարամյա դաշնակից Մելիք-Հովսեփի որդուն՝ Գյուլիստանում իշխանության անցած Մելիք-Աբովին, որտեղ ուշացումով ցավակցում էր նաև նրա եղբոր՝ Մելիք-Բեգլարի անժամանակ մահվան կապակցությամբ։ Այդ փաստաթղթում կարդում ենք. «Զի մինչ յառաջագոյն լուեալ էաք զառ Տէր փոխելն կսկծալի մահուամբ հարազատի եղբօր քո և յատուկ սիրելւոյն մերոյ լուսահոգի մէլիք պարոն Բէկլարին, թէպէտ մորմոքէաք սրտիւ, և կամէաք զթուղթ մխիթարութեան գրել ի սփոփանս սիրելի որդեկիդ և համայն ձերայնոցն, սակայն պէսպէս ձախորդութիւնքն պատեցին զմեօք, և ոչ ետուն թոյլ բանալ զաչս մեր, առ ի մխիթարել և սրտադիւր առնել զսիրելիդ մեր, վասն որոյ երկար միջոցաւ մնաց և չկարացաք ձեռնհաս լինել, և մեք մինչ յայսպիսի հոգս կայաք սիրալի և ուրախածանոյց թուղթն սիրելւոյդ ի յանցելումն էհաս առ մեզ, զոր

[224] **Иоаннисян А.,** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Е., 1990, с. 59.
[225] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 179-184.
[226] АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1874, док. 1320, с. 863. Ի դեպ, սույն թեմայով 2004 թ. «Բազմավէպ» հանդեսում հրապարակված մեր առաջին հոդվածում նշել էինք Մելիք-Բեգլարի միայն երեք որդիների՝ Ֆրեյդունի, Սամի և Բաղիրի անունները (էջ 97)։ Այդ բացը լրացրել ենք մեր հաջորդ՝ «Наши милосердные мелики» հոդվածում, «Анив», Минск-Москва, 2007, N 2, с. 51.

ինչ գրեալ էիր իմացայք»: Այնուհետև Ղուկաս կաթողիկոսը հաջողություն է մաղթել Աբովին իր մելիքությունը կառավարելու գործում. «Բերկրութիւն մեծ եղև սրտից մերոց, որ փոխանակ յատկեղ սիրելեացն մերոց, և լուսահոգի հօր քո և եղբօրդ, դու և հարազատդ նոցին Աստուծով յաջորդեցիր ի տեղի նոցա, զոր Տէր զօրացուսցէ և պահպանեսցէ, նախախնամեսցէ և օրհնեսցէ, և որ ըստ օրէ աճեցուսցէ և ի փառաց ի փառս բարձրացուսցէ»[227]:

Եղբորը հաջորդած Մելիք-Աբով Գ-ը խելացի կառավարիչ էր և լուսավոր հետք է թողել Խամսայի մելիքությունների պատմության մեջ:

Մի պարտվելով Շուշիի Իբրահիմ խանը 1784 թ. նոյեմբերի 5-ին իր մոտ խորհրդակցության է հրավիրում Մելիք-Աբովին, Ջրաբերդի Մելիք-Մեջլումին, Դիզակի Մելիք-Բախտամին ու Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանին և ուխտադրժորեն կալանավորում նրանց: Խորամանկ խանը մելիքներին և Հովհաննես կաթողիկոսին նետում է Շուշիի բերդը (վերջինս 1786թ. սպանվում է բանտում): Սակայն կալանավորները երկար չեն մնում բանտում. Մելիք-Մեջլումի զորապետ Թյուլի (ավազակ) Արզումանը, Դալի Մահրասան (Ավագ վարդապետ) և շուշեցի վարդար Մելքումը խորտակում են զնդանի դռներն ու ազատում մելիքներին (1787 թ.):

Վերջիններս թողնում են իրենց տիրույթները և մեկնում Գանձակ, ապա՝ Թիֆլիս: «Մելիք-Մեջլումն ու Մելիք-Աբովը, զրկվելով իրենց ամբողջ կարողությունից, ապրում էին Թիֆլիսում, աղքատության մեջ, վշտահար: Հերակլն ուշադրություն էր դարձնում նրանց վրա, օգնում էր նրանց քաջությունից»[228]: Նրանք երկար չեն մնում Վրաստանում և «նորից են գնում Գանձակ, ուր արդեն հավաքվել էին նրանց հպատակներից շուրջ 500 տուն՝ իրենց մելիքների հետ ապրելու համար»[229]: Հովսեփ Արղությանը 1789 թ. սեպտեմբերի 24-ին հեռավոր Կրեմենչուգից գրված նամակով Ստեփան քհն. Տեր-Հարությունյանին տեղեկացնում է. «Մեր ողորմելի մէլիքքն՝ փախուցեալք ի Շուշու խանէն, մէլիք Աբովն՝ քանի մի տամբ ի Գեանջայ նստի»[230]: Գանձակի Շահվերդի խանի որդի Ջավադ խանը մելիքների հպատակներին տեղավորում է Շամքորում: Սակայն շուտով, մի չնչին առիթով Մելիք-Աբովը վիճում է Մելիք-Մեջլումի հետ, որից հետո թողնում է Գանձակի գավառը և իր հպատակների հետ գնում ու հաստատվում Բոլնիսում: Մելիք-Աբովը երկրորդ անգամ Վրաստան է մեկնել Թիֆլիսից Մելիք-Մեջլումի հետ Գանձակ վերադառնալուց (1789 թ.) մի քանի տարի հետո, այսինքն՝ 1790-ական թթ. սկզբներին: Բոլնիսում Մելիք-Աբովը չի կարողանում համակերպվել տեղի վրաց իշխանների հետ, ուստի հաշտվում է Իբրահիմ խանի հետ և 1795-ին վերադառնում Արցախ: Մելիք-Աբովը 1796-ի վերջին մեկնում է Գանձակ՝ Ջավադ խանի մոտ, իսկ այնուհետև վերստին անցնում Վրաստան:

Արցախում 1797-1798 թթ. սկսված սովի և ժանտախտի հետևանքով «հայաբնակ Ղարաբաղն գրեթէ դատարկացաւ ի ժողովրդոց, որք թողեալ զհայրենիս գաղթեցին ի Պարսկաստուն, ի Ռուսաստուն և ի Վրացտուն, գտանել զօրական կոր հացի»[231]: Քաղցից փրկվելու նպատակով Մելիք-Աբովի հպատակները ևս գաղթում են Վրաստան[232], իսկ Մելիք-Մեջլումի հպատակները մնում են Գանձակի գավառում:

Վրաստանում հայ ազգաբնակչությանը չափազանց վատ են ընդունում: Հայ մելիքները տեսնելով, որ վրաց իշխաններն

227 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 1, թ. 95բ-96:
228 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 365:

229 Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Ե., 1999, էջ 64:
230 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257 գ, վավ. 183:
231 Երզնկեանց Ռ., Ազգաբանութիւն նախապատիւ տոհմին Երուանդեանց ի Սանահին, Թիֆլիս, 1896, էջ 8:
232 Սովի տարիներին Գյուլիստանում մնացողների մեջ էր Միրուք Մեղրին՝ հայ-դուկապետ Շահեն Մեղրյանի նախապապը (տես Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Աշխարհներ, Ե., 2002, էջ 128):

իրենց վրա ուշադրություն չեն դարձնում, և այդպես անօժևան ժողովուրդը մատնվում է սովահարության, մտածում են նորից դիմել ռուսաց կայսրությանը՝ օգնություն խնդրելու համար: Այդ նպատակով Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանը և Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը գնում են Սանկտ Պետերբուրգ՝ անձամբ աղերսամատույց լինելու կայսրի մոտ իրենց պահանջների մասին: Պավել I-ի՝ 1799 թ. հունիսի 2-ի հրովարտակով Մելիք-Աբովին է տրվում Բոլնիսի գավառը, Մելիք-Ֆրեյդունին՝ Աղջակալան և Բորչալուի մի մասը, իսկ Բորչալուի մնացած մասը և Լոռին վրաց Գեորգի XII թագավորի (1798-1800) հրամանով տրվում է Մելիք-Ջումշուդին: Հետագայում մելիքները ձեռք են բերում նաև այլ տարածքներ, այն չափով, ինչ չափով որ ավելանում էր նրանց հպատակների թիվը: Ահա այս շրջանում է, որ «Սոմխեթը դառնում է մի փոքրիկ Ղարաբաղ, մելիքական երկիր»[233]: Ռուս պատմաբան Վ. Իվանենկոն նշում է, որ արդեն XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Վրաստանի բնակչության զգալի մասը կազմում էին հայերը, ու այնտեղ էին բնակություն հաստատել հայոց հին թագավորության բեկորները[234]: Գեորգի XII-ի հրամանագրով Մելիք-Աբովին է հանձնվում նաև քարվան-բաշիության (քարավանների անվտանգ երթևեկությունն ապահովողի) պաշտոնը[235]: Սակայն հետզհետե նրա հարաբերությունները վրաց ազնվականների հետ սրվում են, և վերջիններս 1808 թ. Թիֆլիսում մի խնջույքի ժամանակ թունավորում և սպանում են մելիքին ու նրա քարտուղար Միրզա Իսաբաշխին: Մելիք-Աբովի մարմինը փոխադրվում է Հոռեկ և թաղվում Մելիք-Բեգլարյանների տոհմական գերեզմանատանը:

Մելիք-Աբովն ուներ երեք որդի՝ Ռոստոմ բեկ, Սայի բեկ (Եսայի, որին Մեհտի Ղուլի խանի բժիշկը դիտմամբ կուրացրել

233 Լեո, Երկերի ժողովածու, h. 4, Ե., 1984, էջ 30:
234 **Иваненко В.,** Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 29.
235 Присоединение Восточной Армении к России, сб. док., т. I, Е., 1972, с. 80.

էր) և Մանաս բեկ: Նրանցից առավել նշանավորը Ռոստոմ բեկն էր: Վերջինս պարսից զորապետ Փիր-Ղուլի խանի 8000 զինվորներից բաղկացած խմբի դեմ մարտում, Փամբակի Ղուրսալի գյուղի մոտակայքում ծանր վիրավորվել է, գերվել ու տարվել Թավրիզ, ուր էլ 1805 թ. գլխատվել է Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանով[236]: Ահա թե ինչ է գրում Ռոստոմ բեկի սխրանքի մասին Ներսես Աշտարակեցին՝ 1814 թ. հոկտեմբերի 23-ին Հովակիմ Լազարյանին ուղղած նամակում. «Լուիցես առ ի մէնջ և ի բնաւից աստէն եղելոց և վասն հանգուցեալ մէլիք Ռոստոմ որդւոյ մէլիք Ապավովին, որ ի լինիլ Ցիցիանովին ի յԵրևան տարակուսեալ մինչ խպառ յաղագս նուազութեան վառօթի և ռմբոց, քաջ էր յայնժամ Ռոստոմն այն, որ ըստ բանի Գրաֆ Պուշկինեն հաստատեալ յԵրևան ի միջոյ աւելի քան 60 հազար զօրաց պարսից շրջափակողաց զանցս ամենայն սահմանացն այնոցիկ զվառօթս և զգնդակս բեռանց հարիւրոց առ կնիազ Ցիցիանովն ի վերադառնալն անտի նորին իսկ առաքմամբ ընդ մայիօր Մունտրիզօրին, գերի անկեալ մեռանէր ի կալանս անդ ի Թավրիզ»[237]:

Մելիք-Աբովին հաջորդել է նրա եղբայր Մելիք-Բեգլարի ավագ որդին՝ Մելիք-Ֆրեյդունը (1768-1808), որի մելիքությունը, սակայն, կարճ է տևել: Մելիք-Ֆրեյդունի եղբայր Սամի վեճի ժամանակ՝ 1808 թ. փետրվարի 6-ին, դանակահարել և սպանել է նրան: Մելիք-Ֆրեյդունի տապանագիրը պատմում է.

«Այս է տապան մելիք Փրիդոնին
Ժառանգ մելիք Բեկլարեանին,
Անպատմելի է մարդոց պատճառ զմահին,
Քանզի զայսպիսիս սակաւ պատահին:
Ոչ Աստուծոյ հրամանի եւ ոչ ըստ կամաց

236 Երիցեան Ա., Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ, «Փորձ», 1877/78, թիւ 2, էջ 395:
237 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 110:

Թողլի աշխարհքս քառասուն ամաց

ի 6 փետրուարի 1808 ամի Փրկչին»[238]։

«Այդ ցավալի անցքից հետո եղբայրասպանը առելի գար- ձավ իր տոհմի մեջ և չհասավ այն փառքին, որին ձգտում էր»[239]։ Այդ մասին Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովը 1824 թ. սեպտեմբերի 7-ին Մելիք-Բեգլարյանների տոհմի ան- դամների միջև ծագած հողաբաժանման վեճի մասին Ալեք- սանդր I-ին ուղղած զեկուցագրում գրում է, որ եղբորը սպա- նելուց հետո Սամը «փախավ Պարսկաստան, որտեղ և վախ- ճանվեց, չհասնելով իր նպատակին (այսինքն՝ մելիքությանը- Ա. Մ.)»։ Նույն փաստաթղթից տեղեկանում ենք, որ Սամ-բեկը ունեցել է մեկ դուստր՝ Սոլթի և մեկ որդի՝ Նոյ անուններով[240]։ Սամի կնոջ անունը Շուշան էր[241]։

Այդ զեկուցագրի միջոցով ճշգրտվում է նաև, որ Մելիք- Ֆրեյդունի մյուս եղբայր Բաղիրը թողել է հինգ զավակ՝ Աբով, Ալեքսանդր, Քեթևան, Ամարնան (Մարիամ) և Սոֆիա[242]։

Իսկ Մելիք-Ֆրեյդունին հաջորդել է հանգուցյալ Մելիք- Աբովի կրտսեր որդի Մանաս բեկը։ Մելիք-Ֆրեյդունը թողել է վեց որդի՝ Մելիք-Հովսեփ, Շամիրխան (1790-1850), Դավիթ (1795-1884), որը տեղափոխվել է Հնդկաստան, Թալիշ, Թեյմու- րազ (1803-1878) և Բեգլար։ Այստեղ հարկ ենք համարում հա- կիրճ ներկայացնել Մելիք-Ֆրեյդունի որդիների մասին մեզ հայտնի տեղեկությունները։

Շամիրխան Մելիք-Բեգլարյանը պատանդ է եղել Իբրահիմ խանի մոտ և սովորել պարսկերեն։ Հետագայում որպես թարգ- մանիչ ծառայել է Կովկասյան գլխավոր հրամանատարության դիվանագիտական գրասենյակում։ 1817 թ. մասնակցել է

[238] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 254։
[239] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 548։
[240] АКАК, т. VI, ч. I, док. 1320, с. 863-864.
[241] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկե-
ղեցու Արցախի թեմը 1813-1933 թթ., Ե., 2001, էջ 157։
[242] АКАК, т. VI, ч. I, док. 1320, с. 864.

Ա. Երմոլովի առաքելությանը Թեհրան[243], իսկ 1819-ից ռուսաց դեսպան Ս. Մազարևիչի թարգմանն էր Թեհրանում։ Այդ մա- սին գրում է նաև Ներսես Աշտարակեցին՝ 1819 թ. հունվարի 25-ին Թիֆլիսից Եփրեմ կաթողիկոսին ուղղած նամակում. «Ահաւասիկ բարձր բարեծնունդ Սիմոն Իւանիչ Մազարևիչ դեսպանն ռուսաց ի դուռն պարսից տէրութեան՝ ճանապար- հորդեալ հանդերձ երկու եղբարբքն իւրովք և ընդ Շամիրբէ- կին մէլիք Փրիդոնեան, որ կարգեցեալն է թարգման նմա, եկին դնալ ի տեղի իւրեանց և նստիլ անդէն ի կառավարութիւն գործոց իւրեանց»[244]։ Մատենադարանում պահվող մի շարք վավերագրեր վկայում են, որ Ներսես Աշտարակեցին ակտիվ նամակագրական կապ է պահպանել Շամիրխան Մելիք-Բեգ- լարյանի հետ[245]։ Պահպանվել է նաև գեներալ Ա. Երմոլովի՝ 1827 թ. հունվարի 15-ի խնդրագիրը Գլխավոր շտաբի պետ գե- ներալ Ի. Դիբիչին՝ նրան կապիտանի զինվորական աստիճան շնորհելու վերաբերյալ[246]։ Հետագայում նրան տրվել է նաև գնդապետի աստիճան, ինչպես տեղեկանում ենք Հոռեկա վան- քի մոտ գտնվող նրա տապանաքարի արձանագրությունից.

«Գնդապետ Շամիրխան Ֆրիդոնեան Մելիք-Բեգլարեան ի ցեղէն տիրապետող մելիքաց Գուլիստանի, հանգեաւ ի տէր 30-ն օգոստոսի 1850 ամի ի ծն. 60-ամեայ հասակի»[247]։

[243] Ա. Երմոլովի դեսպանության մասին տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, Ե., 1934, էջ 499-612 (այստեղ տպագրված Մորից ֆոն Կոցեբուի ուղեգրու- յունը), կամ՝ **Kotzebue, Moritz von,** Narative of a Journey into Persia, in the suite of the Imperial Russian Embassy, in the Year 1817, London, 1819.
[244] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 1302։
[245] Նույն տեղում, թղթ. 165, վավ. 367, 525, 870, թղթ. 166, վավ. 44, նաև՝ Կաթողիկոս. դիվան, թղթ. 48, վավ. 200, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, վավ. 174։ Ուշագրավ է, որ վավ. 870-ում Ն. Աշտարակեցին Շամիրխանին գրում է Մելիք-Բեգլարյանների կալվածական իրավունքների հաստատման վե- րաբերյալ՝ կառավարության մոտ իր գործադրած ջանքերի և հետագայում էլ այդ ջանքերը շարունակելու պատրաստակամության մասին։
[246] РГВИА, ф. 395, оп. 132, д. 244, л. 1.
[247] Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. նշխարներ, էջ 65 (հաջորդ մի քանի վիմա- գրերը ևս վերցրել ենք այս աշխատությունից)։

Նշենք նաև, որ Մելիք-Բեգլարյաններից ոմանք էլ մնացին այդ թվականներին Վրաստանում հիմնադրված Դաղեթ-Խաչեն և Բոլնիս-Խաչեն գյուղերում: Արցախահայության գաղթի և վերոհիշյալ գյուղերի հիմնադրման վերաբերյալ վրացի հեղինակ Վառլամ Գոնգաձեն գրում է. «Հայերի արքեպիսկոպոս Արղությանի խնդրանքով և միջնորդությամբ Իրակլի II թագավորը Ղարաբաղի Գյուլիստանի և Խաչենի մելիքությունների բնակիչներին թույլ տվեց վերաբնակվել Վրաստանում: Սրանից հետո 1797 թ. Գյուլիստանից 400 հայ ընտանիք տեղափոխվում է նախկին Բորչալուի գավառի Շադիդ գյուղը, երկու տարի անց Խաչենի գավառից ևս գալիս են 68 ընտանիք և բնակություն հաստատում այժմյան Բոլնիսի շրջանի Ջաբարլու գյուղում: Յոթ տարի հետո այդ 68 ընտանիքից 43-ը տեղափոխվում են ներկայիս Դաղեթ-Խաչեն, իսկ մնացած 25 ընտանիքը գնում և հիմնում է Բոլնիս-Խաչենը»[252]: Այսօր էլ այդ գյուղերում կարելի է հանդիպել Մելիք-Բեգլարյանների շառավիղներին:

Իսկ Վրաստանից հայրենիք վերադարձած Մելիք-Բեգլարյանները կրկին ձեռք բերեցին իրենց գյուղերը, և Գյուլիստան գավառը «բաժանվեց Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրիդոնի ժառանգների միջև, որոնք ռուսական սովորությանը հետևելով, սկսեցին կոչվել իրենց պապերի անունով. առաջինները՝ Մելիք-Հովսեփի թոռները՝ Մելիք-Հովսեփյաններ, և երկրորդները՝ Մելիք-Բեգլարի թոռները՝ Մելիք-Բեգլարյաններ: Առաջինների ավագը համարվեց Մանաս բեկը, իսկ երկրորդներինը՝ Մելիք-Ֆրիդոնի որդի Մելիք-Հովսեփը»[253]: Մինչև XIX դարի երկրորդ կեսը Մելիք-Բեգլարյանների իշխանության ներքո էին գտնվում Գյուլիստան գավառի 18 գյուղեր, որոնցից 15-ը պատկանում էր Մելիք-Բեգլարյաններին, իսկ 3-ը՝ Մելիք-Հովսեփյաններին: Վերջիններիս ավագ Մանաս բեկը զոհվեց Ջեյ-

[252] Գոնգաձե Վ., Թեթրի-Ծղարո, Թբիլիսի, 1959, էջ 39 (վրաց.):
[253] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 240:

վա գյուղի թուրքերի հարձակումներից մեկի ժամանակ: Հավանաբար այս դեպքը տեղի է ունեցել 1817 թ. վերջին կամ 1818 թ. սկզբին, որովհետև Սարգիս արքեպս. Հասան-Ջալալյանի՝ 1818 թ. փետրվարի 23-ին գրված և Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակում կարդում ենք. «Յունիսի 1-ին գրեալ թուղթ սրբազնութեանդ էհաս առ մեզ ի փետրվարի 5-ին, ձեռամբ Զրաբերթցի առն միոյ աներևելոյ, որ յաղագս հանգուցեալ Մէլիք Ապովեան Մանասբէկին…»: Նույն նամակը օգնում է նաև մոտավորապես ճշգրտելու Մանաս բեկի ծննդյան թվականը. «Իսկ զոր սակս ի կողմանէ պսակելոյն նորին հարցջիք. այսպես եմք խմացեալ. զի 1238 (1789) թուին Հայոց մեք աստէն գնացաք ի Գանձակ, և անդ լուաք երևելի կարգաւորաց և անուանի իշխանաց, նաև՝ յինքեան մելիք Ապովէն, որ մինչև զգնալն մեր անդ ի Գանձակ պսակեալ է, ձեռամբ քահանայի ի Թիֆլիսաքէնդ. և զկնի պսակելոյն ծնեալ է Մանասբէկն»[254]: Մանաս բեկը, մեզ հայտնի տեղեկությունների համաձայն, ունեցել է երկու որդի՝ Աբով և Սողոմոն անուններով: Աբովի անունը հիշատակվում է 1852 թ. ապրիլի 24-ով թվագրված մի անստորագիր միջնորդագրում, որի հեղինակը ումն Իոսիֆ Իվանովիչից խնդրում է նրան պետական ծառայողի պաշտոնով աշխատանքի տեղավորել Նուխիում[255]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, եզրափակվեց մելիքների իշխանության երկարատև ժամանակաշրջանը, իսկ մելիքական տների ներկայացուցիչները, որպես տոհմիկ ազնվականներ, մտան ռուսական ծառայության մեջ:

Այդուհանդերձ մելիքները, այդ թվում նաև Մելիք-Ֆրեյդունի ավագ որդին՝ Մելիք-Հովսեփ Բ-ը, շարունակեցին կառավարել իրենց գավառներում որպես կալվածատերեր (մահալնաիբ): Մելիք-Հովսեփը վախճանվել է 1843 թ. հունվարի 20-ին

[254] Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164ա, վավ. 432:
[255] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 486:

և թաղվել Մելիք-Բեգլարյանների տոհմական գերեզմանատանը: Նրա շիրմաքարը կրում է հետևյալ արձանագրությունը.

«Այս է տապան մելիք Յովսէփին,
Որ է որդի մելիք Փրիդոնին,
Տիրապետողն աշխարհային,
Ղարաբաղու մեծ իշխանին:
Մեծ իշխան էր և յոյժ փառաւոր
Ժողովուրդս բաղում էր շատ ծառաւոր,
Բաղումս գործող և աշխատաւոր
Ունայն էր զամէն աշխարհս անցաւոր
Թուին 1843 յունուարի 20 ՌՄՂԲ»[256]:

Նրան հաջորդեց ավագ որդին՝ մեծ պարոն Ֆրիդոնը (Բեուկ աղա): «Սա կնամոլ լինելով՝ սպանվեց ամն Հարություն Գրիգորյանից, որն այդ արավ յուր կնոջը նրա ճիրաններից ազատելու համար»[257]: Մելիք-Հովսեփն ունեցել է նաև Սողոմոն բեկ անունով որդի, ինչպես տեղեկանում ենք Թալիշում պահպանված նրա շիրմաքարի արձանագրությունից. «Այստեղ հանգչում է Սօլոմօն բէգ Մելիք-Բեգլարեանը որդի մելիք Հովսեփի թոռն մելիք Ֆրիդոնին»[258]:

Մեծ պարոն Ֆրիդոնին հաջորդել է որդին՝ Հովսեփ բեկը, որը բնակվում էր Կարաչինար գյուղում:

Մելիք-Բեգլարյաններից անվանի էր նաև Թալիշցի Դավիթ բեկը, որի հեծելախումբը մասնակցել է Գանձակի 1905 թ. հայ-թաթարական ընդհարումներին[259]:

Մելիք-Բեգլարյանների ժառանգներն ու շառավիղները այսօր էլ շարունակում են անձնվիրաբար ծառայել իրենց հայրենիքին:

[256] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 254:
[257] Նույն տեղում, էջ 241:
[258] Ղահրամանյան Կ., նշվ. աշխ., էջ 84:
[259] Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե , 1992, էջ 348:

Բ) ՋՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Ջրաբերդ (Ջարապերթ, Ջարաբերդ) գավառի մելիքության տարածքը սկսվում էր Թարթառ գետից և տարածվում մինչև Խաչեն գետը: Գավառն իր անվանումը ստացել է մելիքանիստ ամրոց Ջրաբերդի անունից, որը «գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանում, Թարթառ գետի և նրա Թրղի վտակի ձախ ափին, զառիթափ լանջերով հսկայածավալ ժայռազանգվածի վրա»[260]: Գավառի տիրակալներն էին Մելիք-Իսրայելյանները, որոնց նստավայրերն էին նաև Հին Մոխրաթաղի ապարանքը և Մայրաքաղաք (Քաղաքատեղ) բերդավանը:

Միրզա Յուսուֆ Ներսեսովը, Ս. Ջալալյանցը, Րաֆֆին, Լեոն և մի շարք այլ հեղինակներ հակված են այն կարծիքին, որ Մելիք-Իսրայելյանները XVII դարի վերջերին Արցախ են տեղափոխվել Սյունյաց աշխարհի Մաղավուզ և Խնածախ գյուղերից[261]: Այս տան նահապետ Մելիք-Իսրայելն ապրել է XVII դարի վերջերին: Նրա անունով էլ տոհմի անդամները սկսել են կոչվել Մելիք-Իսրայելյաններ: Հայտնի է, որ Մելիք-Իսրայելն ունեցել է չորս որդի՝ Մելիք-Եսայի, Ալլահղուլի, Մելիք-Ադամ (Հաթամ), Հովսեփ բեկ և մեկ դուստր, որի անունը տակավին անհայտ է մնում:

Րաֆֆին, թեև չի հղում, սակայն հիմնվելով Ս. Ջալալյանցի «Պատմութիւն աշխարհին Աղուանից» անտիպ գրքույկի վրա, որպես Մելիք-Իսրայելյանների Ջրաբերդում հաստատվե-

[260] Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 82: Ի դեպ, 1956 թ. Բաքվում հրատարակված Ադրբեջանի պատմական հուշարձաններին նվիրված գրքի հեղինակները, ներկայացնելով Ջրաբերդը, լռությամբ շրջանցել են այդ բերդի՝ հայերի կողմից կառուցված լինելու և անընդմեջ հայ իշխաններին պատկանելու իրողությունը (տես Памятники истории Азербайджана, под. ред. М. Казиева, Баку, 1956, с. 41):
[261] Մ. Յ. Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 43, Ջալալեանց Ս., Պատմութիւն աշխարհին Աղուանից, Մատենադարան, մանրաժապավեն 367, էջ 3, Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 425-426, Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 257:

լու տարեթիվ է նշում 1687 թվականը[262]: Ըստ այդ աշխատության՝ «Մէլիք Եսայի որդի Մէլիք Իսրայէլի, յազգէ Սիսականաց Հայոց, վասն սպանելոյ զգլխաւոր խանն Սիւնեաց աշխարհին՝ զաւփացողն քեռն իւրոյ սիրելոյ, հատուած անկանի յաշխար[հ]ն Արցախայ, ունելով ընդ իւր գերդս բազումս ի թուին հայոց ՌՃԼԶ-ին (1687)»[263]: Նա հաստատվում է Մռավ լեռան անտառապատ լանջերին և հետզհետե ընդարձակում իր տիրապետության սահմանները: Մելիք-Եսային վախճանվել է 1728 թվականին:

Նրան հաջորդում է եղբայրը՝ Ալլահղուլին, որը «զորավար Աբդալլահ Քյոփրուլուօղլի փաշայի դեմ Նադիր շահի մղած կռվում՝ վերջինիս ծառայելով մեծ արիություն է ցուցաբերում, Նադիր շահը հրամայում է, որ նրան այսուհետև մելիք չկոչեն, այլ Ալլահղուլի սուլթան հորջորջեն»[264]: Հիշատակարաններից մեկում ժամանակակիցը հետևյալ տեղեկություններն է հաղորդում նրա մասին. «Թուականն մեր Հայոց ՌՃՂԸ (1749) էր… Մարաստ (Ամարաստ) առաջնորդն էր Գասպար վարթապետն, իշխանն էր Ալլահղուլի Սոլթանն, որ է Ջարայպերթու, այսինքն ազգաւ հայ եւ քաջամարդ, յաղթող ընդ թշնամին իւր, Աստուած ինքն երկար կենօք պահեսցէ ամենայն պատայհարաց, ամէն»[265]: Նույն թվականն է կրում նաև Ալլահղուլի սուլթանի մի գրությունը՝ Կիրակոսին Առաջաձորի տանուտեր կարգելու մասին[266]:

Թերևս, նրա միակ սխալն այն էր, որ իր ծոցում օձ ջեր-

262 Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 425, հմմտ. Չալայանց Ս., նշվ. աշխ., Մատենադարան, մանրաժապավեն 367, էջ 3:

263 Մատենադարան, մանրաժապավեն 367, էջ 3:

264 Մ. Յ. Ներսեսով, նշվ. աշխ., էջ 43:

265 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 223:

266 ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 90: Ի դեպ, մելիքի կնիքի վրա հստակորեն ընթերցվում է «Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[այ] Ալահղուլի» գրությունը: Մատենադարանում պահվում է նաև Ալլահղուլի սուլթանի՝ Կիրակոս քյոխվային ուղղած մի անթվակիր գրության պատճենը, որտեղ խնդրում է չափել ու տալ 12 թաղար չալթուկը (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 240, վավ. 123):

մայրեց, ապաստան ու մի աննշան պաշտոն տալով Պարսկաստանում Նադիր շահի կողմից գլխատման դատապարտված Ջիվանշիրյի «ջառչի» (մունետիկ) Փանահ-Ալիին, որը հետագայում իր զավակների հետ պատուհաս դարձավ և՛ Ալլահղուլի սուլթանի, և՛ Խամսայի մելիքությունների համար:

Տարիներ անց հզորացած և թուրքական Ջիվանշիր ցեղի մի ճյուղի՝ սարջալլուների ցեղապետը դարձած Փանահ խանը ուխտադրժորեն ձերբակալեց իր մոտ բանակցությունների եկած Ալլահղուլի սուլթանին և, Նախիջևանի կառավարիչ Հեյդար Ղուլի խանի դրդմամբ, հրամայեց գլխատել նրան: Փանահն այդպես էր վարձահատույց լինում իր կյանքը Նադիր շահի դահիճների ձեռքից փրկած Ջրաբերդի մելիքին: Ըստ Մատենադարանում պահվող ձեռագիր ժամանակագրություններից մեկի՝ «ՌՃՂԸ (1749) թվին Փանահն էսպան մէլիք Ալլաղուլին՝ սեպտեմպեր ամսումն»[267]: Արցախի հայերը դեռևս XIX դարում պահպանել էին հետևյալ տխուր երգը, որը ժողովրդական ավանդության համաձայն մահապատժից առաջ, Փանահ խանի զնդանում, հորինել էր Ալլահղուլի սուլթանը.

«Վարդապետին Բաջի սաեք դայ առ իս,
Կամ զինքն սպանցէ կամ փրկեսցէ զիս,
Եղբայրդ իմ Ադամ զվրէժն իմ հան,
Ափսո՛ս, զի վրէժ իմ մնաց յաւիտեան»[268]:

Այդ դեպքից հետո սկսվեց Ջրաբերդի, Գյուլիստանի և Դիզակի մելիքների ու սարջալլուցի խաների արյունահեղ ընդհարումների ժամանակաշրջանը, որը փոխնիփոխ ուղեկցվող հաշտություններով տևեց երկար տարիներ:

Ալլահղուլի սուլթանին հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Ադամը (Հաթամ)[269], որը «մանկության հասակից պատանդ էր

267 Մատենադարան, ձեռ. 7816, էջ 20բ:

268 Մատենադարան, ժապ. 367, էջ 4:

269 «Արարատ» ամսագրի 1871 թ. թիվ Ը-ում տպագրված «Արցախ նահանգի Ջրաբերդ գաւառը» հոդվածի հեղինակ Մ. Պլուզյանը Ալլահղուլի սուլթանին նույնացնում է նրա եղբոր՝ Մելիք-Ադամի հետ: Այսպես, փորձելով ներկայացնել

եղել Դաղստանի Խասրով սուլթանի մոտ և լավ վարժվել էր լեռնականների պատերազմական կարգերին: Նրան սպանել էր Նադիր շահը»[270]: Հնդկահայ ժամանակակիցները Մելիք-Ադամին ներկայացնում են այսպես. «Սա խորամիտ և քաղաքավարի մի մարդ է, պատերազմի մեջ՝ խիզախ»[271], իսկ 1781 թ. կազմված «Պատմագիրք Սիւնեաց» ձեռագրի հիշատակարանում նա բնութագրվում է որպես «այր քաջասիրտ. և կարի ճարտարաբան. նաև՝ առատաձեռն եւ ըստ հոգեւոր բղձից իւրոց՝ առ կարօտեալս և չքաւորեալս»[272]: Մելիք-Ադամը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփը քսան տարի անընդմեջ պատերազմեցին Փանահի և նրա որդու՝ Իբրահիմ խանի դեմ:

Թե ինչպիսի մեծ հարգանք էր վայելում Մելիք-Ադամը, ակնհայտ է դառնում 1771-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու՝ նրան ուղղված թղթից, որտեղ գրված էր. «Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց, հանդերձ ամենառատ ողորմութեամբն և գթութեամբն աստուածային և շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս ի վերայ սիրելւոյդ մերոյ և սոյդ և օգտաւէր բարեկամիդ և հարազատ զաւակիդ սրբոյ աթոռոյս՝ Քրիստոսասէր և ի սոյն միշտ զօրացեալ, պերճապատիւ և շքեղափառ, օրհնեալ և բարեպաշտօն պարոն Մէլիք Ադամիդ, աստուածապահ տանդ և բնակութեանդ, ի Քրիստոս զօրացեալ որդւոցդ և դստերացդ, սիրելեացդ և բարեկամացդ...»[273]: Ջրաբերդ գավառի հզոր տի-

Մելիք-Ադամին, նա գրում է. «Այս հռչակաւոր մելիքն Մուխանը, այժմ Մաղուզ գաւառէն Ջրաբերդ եկած, նախ Ջերմուկ կոչուած բերդին մէջ իւր բնակութիւն հաստատեց. եւ Նատիր շահի՝ օսմանեան Քիւֆիւրլիօղլու մեծ զօրապետին հետ տուած պատերազմաց մէջ մեծամեծ քաջութիւններ ցոյց տալէն յետոյ, շահէն ո՛չ միայն թանկագին պարգեւներ, այլ եւ Սուլթանութեան աստիճան ստանալով, հրամայեցաւ եւ իրեն կրել Ալլահղուլի մականուն» (էջ 442): Առհասարակ, այդ շրջանում Արցախի մելիքությունների վերաբերյալ հրապարակված հոդվածներում շատ են նման փաստական սխալները:

270 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 216:
271 Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 102:
272 Մատենադարան, ձեռ. 1488, էջ 218ա:
273 Լեո, Խոջայական կապիտալ, Ե., 1934, էջ 160:

րակալ Մելիք-Ադամը վախճանվել է 1783 թ. հուլիսի սկզբին: Մահից առաջ, դիմելով ռուսաց արքունիքի նվիրակին, նա պատգամել է. «Մի՛ թողեք, որ այս վայրերի տեր հայ ժողովուրդը հույսը կորցնի... Թաղումը, որին հավաքվել են շրջակաների շատ բնակիչներ և նույնիսկ Իբրահիմ խանի տղան՝ երկու հարյուր հարազատների հետ միասին, տևել է մեկ շաբաթի չափ»[274]: Անշուշտ, նրանք ժամանել էին ոչ թե հանդուցյալի հանդեպ հարգանքից դրդված, այլ եկել էին հետախուզելու հայոց ճամբարում տիրող իրավիճակը: Մելիք-Ադամի մարմինն ամփոփվել է Եղիշե առաքյալի վանքում, Վաչագան թագավորի կողքին: Ցավոք, նրա տապանաքարը կրող մարմարյա տախտակը չի պահպանվել, սակայն պահպանվել են Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի մխիթարական թղթերը՝ գրված 1783 թ. հուլիսի 17-ին և ուղղված նրա որդի Մելիք-Մեջլումին ու կրտսեր եղբայր Հովսեփ բեկին: Վերջինիս ուղղված թղթում կարդում ենք. «Զի լուաք այժմ զաղետալի համբաւ մահուան գերագնիւ սիրելւոյն մերոյ և եղբօրն քո ի Քրիստոս հանգուցեալ պարոն Մէլիք Ադամին, որ յիրաւի նոր իմն ցաւ եղև մեզ մեծագոյն և չարիկ ի տրտմութիւնս սատիկս և ի սուգս դառնագոյնս, քանզի ոչ էր նա իբրև զայլս ի պիտանաւորաց և յօգտարարաց այլ առաւել քան զբազումս և ընտիր՝ զարդարեալ խոհեմութեամբ և հանճարեղութեամբ պիտանի բազմաց և օգտակար հասարակութեան»[275]: Իսկ հանգուցյալի երկարամյա դաշնակից Գյուլիստանի Մելիք-Հովսեփի որդուն՝ Մելիք-Աբովին ուղարկած մեզ նախածանոթ ցավակցական իր նամակում Ղուկաս կաթողիկոսը գրում էր. «Ի ներկայումս լուաք ես զառ Քրիստոս փոխեալն ազնիւ սիրելւոյն մերոյ օգտաջան և հարազատ զաւակին Սրբոյ Աթոռոյս ծերունավայլ լուսահոգի մէլիք պարոն Ադամին: Իրաւի մեծ ցաւ, կսկիծ և տրտմութիւն

274 **Иоаннисян А.**, ук. соч., с. 87, նաև՝ Ուլուբաբյան Բ., Ոսկե շղթա, էջ 303, 304:
275 Լեո, Խոջայական կապիտալ, էջ 160:

եղև սրտից մերոց: Վասն զի՝ այր խոհեմ, հանճարեղ և ծերունի էր, և որպէս գհայր մխիթարիչ էր ձեզ: Ահա ծերն ի տանէն պակասեցաւ, և մեծ սուգ եթող մեզ և ձեզ»[276]: Մելիք-Ադամի կինը Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի քույր Ղամար-սուլթանն էր, որին չպետք է շփոթել Գյուլիստանի Մելիք-Աբով Բ-ի (կամ Աբով, մահ. 1728) կնոջ՝ Գանձակի խանի դուստր Ղամար-սուլթանի հետ:

Մելիք-Ադամին հաջորդել է որդին՝ Մելիք-Մեջլումը: Նրա մյուս որդին՝ Իսրայելը, մահացել էր տակավին 1776 թ., երբ Մելիք-Ադամը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփը միասժամանակ մնում էին Գանձակում: Նրա մարմինն ամփոփվել է Գանձակի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարավային խորանում, իսկ շիրմաքարը կրել է հետևյալ տապանագիրը.

«Այս է հանգիստ Իսրայէլին,
Որ է ազնիւ և գովելին,
Նման արդարոյն Աբէլին,
Եւ որդի Մելիք Հաթամին.
Ութուտասան կեանք սկալի
Առնու անանց պարգեւ լի
Եւ մեզ եթող տրտմութեամբ լի
ՌՄԻԵ թուի (1776)
Եւ ԺԵ (15) Մայիսի»[277]:

Մելիք-Մեջլումը կյանքն անցկացրել է Ջրաբերդի մելիքության սահմաններից դուրս՝ դաշնակիցներ փնտրելով և պայքար մղելով Իբրահիմ խանի դեմ: Նրա մասին Արցախի մելիքների՝ գեն. Պավել Պոտյոմկինին 1783 թ. հուլիսի 5-ին ուղղված նամակում կարդում ենք. «Եվ որ ի կողմանէ իշխան մէլիք Ադամին, իշխան Իսրայել խանին նահանգին Ջարաբերթու փախճան էառ և առ արարիչն իւր գնաց և զանգի նորայ

կացուցաւ հարազատ որդի նորին պարոն Մէժլում պէկն իշխան և մէլիք հայրենի գաւառին իւրոյ, այր արի և քաջ ի բան և ի գործս իւր և կատարեալ խոհեմ, իմաստուն և հանճարեղ որպէս հայր իւր, լուսահոգի մէլիք Ադամն»[278]: Գանձակի Ջաւադ խանը (1756-1804), որը թշնամություն ուներ Իբրահիմ խանի հետ, Ջրաբերդի մելիքների բարեկամն էր, ու Մելիք-Մեջլումը ապաստանել էր նրա մոտ՝ Գանձակում: Հետևելով Մելիք-Մեջլումի հպատակներից շատ հարենց տիրակալին՝ Մելիք-Մեջլումի հպատակներից մոտ հաբինց տիրակալին՝ Մելիք-Մեջլումի հպատակներից մոտ հազար ընտանիք 1788-ին ևս թողնում են Ջրաբերդը ու գաղթում Գանձակի գավառ: Ջավադ խանը նրանց տեղավորում է Շամշադինում: «Երբ Աղա Մուհամմադ խանը արշավում է Ղարաբաղ, Մելիք Աթամի որդի Մելիք Մեջնունը (պետք է լինի Մեջլում-Ա. Մ.) նրա մոտ ծառայության է անցնում և ջանք չի խնայում Իբրահիմ խանի դեմ Աղա Մուհամմադ խանի մղած կռիվներում»[279]: Մելիք-Մեջլումը և Ջավադ խանը, միանալով Իրանի Աղա Մուհամմադ խանի բանակին, 1795 թ. սեպտեմբերին մասնակցել են Թիֆլիսի ավերմանը: Անդրադառնալով այդ արշավանքում Մելիք-Մեջլումի ունեցած դերակատարությանը՝ հրապարակախոս Ավետիք Արասխանյանը գրում է. «Աղա-Մահմադ-խանի արշաւանքի մէջ նորա 'կատարած դերը Թիֆլիսի ավերմանը Մելիք-Մեջլումի շատ չօչափելի էր»[280]: Թիֆլիսի ավերմանը՝ Թիֆլիսում եղած ժամանակցության պատճառը մելիքների՝ նրանց իրենց ոխերիմ թշնամի Իբրահիմ խանին հանձնելու մտադրությունն էր, որը Ջրաբերդի հպարտ տիրակալը չէր մոռացել: Վրաստանի պատմության դասագրքերից մեկում գրված է, որ Թիֆլիսի գրավման մարտում Մելիք-Մեջլումը սպանվեց[281], ինչն, իհարկե, սխալ է: Այդ ար-

[278] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 248.
[279] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 52:
[280] Արասխանեան Ա., Կովկասը հարիւր տարի առաջ: Շահ Աղա-Մահմադ-խանը Թիֆլիսում, «Մուրճ», 1895, թիվ 9-10, էջ 1272:
[281] **Асатиани Н.**, История Грузии, учебник для учащихся русской школы, Тбилиси, 2002, с. 124.

Գ) ՋՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌԻ ՎԵՐՋԻՆ ՏԻՐԱԿԱԼ ԱԹԱԲԵԿՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Աթաբեկյանների գերդաստանը սկիզբ է առել Աթաբեկ յուզբաշուց (հարյուրապետ), որը բնակվում էր Ջրաբերդ գավառի Կուսապատ գյուղում: Նրա անունով էլ տոհմի անդամները սկսել են կոչվել Աթաբեկյաններ: Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Աթաբեկյանները սերել են Ջրաբերդ գավառի նախկին տիրակալ Մելիք-Իսրայելյաններից[283]: Այս վարկածի հիմքում ընկած է Մակար եպիսկոպոսի՝ նրանց որպես այդ գավառի իշխանության իրավահաջորդը ներկայացնելու ձգտումը:

Մինչդեռ, տեղական ավանդությունները Աթաբեկյանների ծագումը դուրս են բերում Խաչենի նշանավոր Հասան-Ջալալյան տոհմից[284]: Այս վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ «աթաբեկ» տերմինը առաջին անգամ Հասան-Ջալալյանների տանն է վերածվել անձնանվան և այդ տոհմում առավել տարածված անուններից մեկն է եղել[285]: Հատկանշական է, որ Աթաբեկյանների տոհմի ծագման մասին Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը 1809 թ. դեկտեմբերի 20-ին նրանց տված վկայականում ևս գրում է. «Որդւոց յորդիս տիրեցին հետևաբար մինչև ց1678, ի ժամանակս մեծի երկրորդ Աթաբէկի իւզբաշի կոչեցելոյ՝ ի սերնդոց և յորդւոց վերոյիշեալ Ջալալայ իշխանի»[286]: Այստեղ խոսքը Խաչենի իշխան Հասան-Ջալալ

283 Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 56, Ավագյան Ս., Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Ե., 1991, էջ 187:

284 **Израелов Г.,** Село Касапет, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 13, Тифлис, 1892, с. 43.

285 Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 217:

286 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 108, պատճեն: Սույն փաստաթղթի ռուս. պատճենը տե՛ս Центральный исторический архив Москвы (ЦИАМ), ф. 54, оп. 9, д. 297, նաև՝ ф. 4, оп. 15, д. 18 (այդ պատճենները ստացել ենք Ռ. Աբրահամյանից): Ի դեպ, ռուս պատմաբան Վ. Պոտտոն ծանոթ է եղել այս վկայականին, սակայն նա չի մասնավորեցրել, թե հատկապես որ տոհմի մասին է խոսքը, այլապես Աթաբեկյանների ծագման հարցը տեղիք չէր տա տարակարծությունների (տե՛ս Պոտտո Վ., նշվ. աշխ., էջ 8):

Դոլայի մասին է, հետևաբար՝ Եփրեմ կաթողիկոսը սույն վկայագրով հաստատում է Աթաբեկյանների ծագումը Հասան-Ջալալյանների տոհմից: Հիմնվելով Եփրեմ կաթողիկոսի վկայագրի վրա Ս. Էջմիածնի բարձրագույն խորհրդարանի անդամները 1821 թ. հոկտեմբերին Ասլան Աթաբեկյանին տված վկայականով հաստատել են նրա ծագումը Հասան-Ջալալյան տոհմից[287]: Եվ, վերջապես, Աթաբեկյանները ևս իրենց համարում են Հասան-Ջալալյանների շառավիղներ:

Աթաբեկ յուզբաշու մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա «իրենից հետո թողել է երկու զավակներ՝ Վանի և Գուլի (Ղուլի-Ա. Մ.), հետագայում Վանու ժառանգները փոխադրվել են Ռուսաստան, ուր ապրում են մինչև օրս: Գուլիի ժառանգները մնացին Ղարաբաղում»[288]: Եփրեմ կաթողիկոսի կողմից 1809-ին Աթաբեկյանների տոհմի ներկայացուցիչներից մեկին տրված մեզ նախածանոթ վկայագրից տեղեկանում ենք, որ «ի Ղուլիէ ծնանի Սարգիս և ի Սարգսէ Յարութիւն»:

Ինչ վերաբերում է Վանու ժառանգներին, ապա նույն վավերագիրը նրանց մասին հաղորդում է ավելի ընդարձակ տեղեկություններ: «Վանի՝ յորդւոյն Աթաբէկի, ծնանի երրորդ Աթաբէկ իւզբաշի,-գրում է Եփրեմ կաթողիկոսը,-և յԱթաբէկէ ծնանի Յարութիւն՝ հայր սոյնոյ պարոն Ասլանի, որ ի թուին հայոց ՌՄԵ և յամի տեառն 1756 վասն խիք պատճառի թողեալ զիշխանութիւն և զկալուածս իւր ազգականաց իւրոց, և ինքն շրջեալ ի զանազան տեղիս վերջապէս գայ բնակի ի Թիֆլիզ, ի ժամանակի Թամրազ արքայի վրաց, և մտանէ ի պաշտօն նորա դրօշակակիր զօրաւարութեան, և ապա ի ժամանակի Հերակլ արքայի կարգի ի հսկողութիւն ի շրջապատս սահմանի Թիֆլիզ քաղաքի ընդ Խախամխազ (ռուս. պատճենում՝ Խատախադով-Ա. Մ.) վրացի իշխանի՝ ընկերակցի իւրոյ,

287 Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 39, վավ. 252, սևագրություն:

288 Պոտտո Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 9:

ընդդէմ հինից ապստամբողաց լեռնացի լեզկիններաց: Եւ անդ ի Տփխիզ քաղաքի ամուսնացեալ ծնանի զՄովսէսն, զՕհաննէսն և զԱսլանն»[289]: Վերջինս XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին ծավալել է նշանակալից քաղաքական գործունեություն:

* * *

Ղուլիի թոռ Հարությունը (Թունի) ապրել է XVIII դարի վերջերին: Հարությունի երկու տղաները՝ Վանին (Հովհաննես, 1766-1854) և Հակոբը (մահ. 1844), աչքի են ընկել պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորած բանակի դեմ արցախահայության մղած պայքարում: Վանին, որը յուզբաշի էր և ծառայում էր Ջրաբերդ գավառի իշխանությանը Շուշվա Իբրահիմ խանի օգնությամբ տիրացած Մելիք-Ալլահվերդյանների վերջին ժառանգ Մելիք-Րովշանի հեծելազորում, մասնակցել է 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին և իր մատուցած բազմաթիվ ծառայությունների համար ռուսական կառավարությունից ստացել պրապորշչիկի աստիճան, ոսկե մեդալ ու տարեկան 200 ռուբլի թոշակ: Վանի յուզբաշուն 1814 թ. շնորհվեց նաև մելիքի տիտղոս, ու նա ստացավ Ջրաբերդի մելիքության կառավարչի պաշտոնը: «1814 թ. նրանց տրված խանական թալաղից ի միջի այլոց հայտնի է դառնում, որ Վանին իր ջանքերով Ջրաբերդի մահալում բնակեցնում է 7 հայկական գյուղեր, որտեղ պարսկական արշավանքների ժամանակ բոլորովին ոչնչացվել էին երկրամասում երբեմնի եղած քաղաքակրթության բոլոր հետքերը»[290]: Այդ գյուղերն էին Կուսապատը, Հոռաթաղը, Մարտակերտը, Մեծ Շենը, Մոխրաթաղը, Կարմիրավանը և Ծաղկաշենը, որոնցից մինչև 1823 թ. մալջահաթը գանձել է իր օգտին[291]:

[289] Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 108:
[290] Պոտտո Վ., նշվ. աշխ., էջ 38:
[291] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 171, վավ. 300, թ. 2ա:

1822 թ. Մելիք-Վանու տանը հյուրընկալված նշանավոր դրող Մ. Թաղիադյանը նրա մասին գրում է. «Հասաք ի Ծիրանաքար (Կուսապատ-Ա. Մ.), զոր հասարակօրէն Մէլիք Վանւոյ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորուն իսկ Մէլիք Վանւոյ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծոյ, բայց և հզօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայ ազգս, մինչև անգամ և զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ և մեղերբ. երիվարք նորա ընտիրք. և բնակիչք ամենայն Հայք հզօրք և տիրասէրք յոյժ»[292]:

1826 թ. հուլիսին պարսկական մեծաքանակ զորքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ներխուժում են Արցախ և պաշարում Շուշի բերդաքաղաքը: Շուշիի ռուսական կայազորը, գնդապետ Ի. Ռեուտի հրամանատարությամբ, և տեղի հայ բնակիչները հերոսական դիմադրություն են ցույց տալիս ահեղ թշնամուն: Ականատես պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովն այդ մասին գրում է. «Քաղաքի հայ բնակիչները ամեն հարցում ռուսների հետ միաբանաբար գործելով՝ ճիգ ու ջանք չէին խնայում նրանց նվիրված կերպով ծառայելիս... Այն աստիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրա բարկացած Աբբաս-Միրզան հրամայում է, որ ով որ հայի գլուխ բերի, 10 աշրաֆի կտանա: Այդ պատճառով հայերից շատերն են սպանվում»[293]: Իսկ տեղացի պատմագիր Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Արցախի» երկում այդ մասին կարդում ենք. «Զօրագլուխն արարեալ Թունաբէկ խորհուրդ ընդ խորհրդակցոց իւրոց՝ հանել զհրաման երկրակործան և համայնաջինջ. թէ ո՛ ո՛ք բերիցէ զգլուխ հաւատացելոց՝ հատեալ, բաց ի վարձուցն ունի ստանալ զմեծամեծ պարգևս ի մէնջ և յարքունուստ»[294]: Մեկ այլ ականատես՝ շուշեցի Ջոհրաբ Թառումյանը, 1826 թ. նոյեմբերի 3-ին Ներսես Աշտարակեցուն ուղղած

[292] Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 163:
[293] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 123-124:
[294] Մատենադարան, ձեռ. 7823, էջ 40ա:

նամակում այսպես է ներկայացնում Աբբաս-Միրզայի հրամանի իրագործումը. «Լաւ շատ հայերի գլխներ կտրեցին տարան շահզադային, և ամէն գլխոյ 10 սպապախանի ոսկի տայր. թէ անասնոց համար, և թէ խոտի համար, որ հայքն դուրս գային, ձեռք անկածի գլուխն կտրէին թուրքերն»[295]:

Արցախահայության համար օրհասական այդ օրերին Աբբաս-Միրզայի բարկությունը մեղմելու նպատակով նրան են ներկայանում երեք հայ երևելիներ՝ Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, Մելիք-Վանի Աթաբեկյանը և Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանը: Մելիք-Վանին Եփրեմ կաթողիկոսին ուղղած նամակում այսպես է ներկայացնում Աբբաս-Միրզայի մոտ գնալու շարժառիթները. «Եթէ ոչ գնացից եւ ես առ նոսա, ժողովուրդ իմ առ հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ: Զայս միայն զմտաւ ածեալ՝ թէ ես միայն մատնեցայց, որով ժողովուրդ ապրեցուցից ի գերութենէ անօրինաց: Զիս եւ եթ կորուսից գնալով առ նոսա, զի զհազարաւոր անձինս ժողովրդոց իմոց դուից եւ կեցուցից. աշխարհն ամենայն գնաց, ապա եւ ես ընդ նոսա: Վերջապէս գնալն իմ առ պարսիկսն, եղեւ առ օգտի հասարակ ժողովրդոց ինձ յանձնեալ հայոց»[296]:

Արցախի երևելիներին հաջողվում է մեղմել Աբբաս-Միրզայի բարկությունը: «Այն ժամանակ էլ հետևում է հրաման, որ ոչ ոք չդիպչի հայերին, և իսկապես կոտորածին վերջ տրվեց, քանի որ թագաժառանգը հայտարարել էր, թե այսուհետև հայերի գլխի համար ոչ թե թումանով կվճարի, այլ նրանց գլխով, ովքեր կբերեն հայերի գլուխներ»[297]:

Սակայն, երբ Շամխորի և Գանձակի ճակատամարտերում ջախջախված Աբբաս-Միրզայի բանակը շպրտվում է Արաքսից

295 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342, թ. 2, բնագիր:
296 Նույն տեղում, թղթ. 36, վավ. 248, պատճենը տե՛ս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 10, թ. 1բ:
297 Պոտտո Վ., նշվ. աշխ., էջ 53:

այն կողմ, պարսկական սուրը արցախահայության գլխից հեռացրած հայ երևելիների մեջքին իջնում է ռուսական խարազանը: Չեն օգնում անգամ Ներսես Աշտարակեցու հավաստիացումները Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովին. «Թէ գնալն նորա (խմա՝ նրանց-Ա. Մ.) եթէ իցէ ճշմարիտ ոչ կարէ լինիլ առանց յատուկ շահաւէտութեանց վասն պահպանելոյ զժողովուրդն հայոց կողմանցն այնոցիկ»[298]: Ա. Երմոլովի հրամանով հայ երևելիները Ռուսաց կայսրության նկատմամբ անհավատարմության մեղադրանքով ձերբակալվում են և ութ ամիս մնում կալանված. Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիսում, իսկ մելիքները՝ Բաքվում: Ի վերջո, Ռուսաստանի վաղեմի ախոյանի հետ ընդհանուր լեզու գտած հայ երևելիները անմեղ են ճանաչվում և, Սիբիր աքսորվելու փոխարեն, վերադառնում են հայրենիք[299]:

Մելիք-Վանին 40 տարի շարունակ կառավարել է Ջրաբերդ գավառը և վախճանվել 1854 թ. մարտի 7-ին[300]: Նրա կինը Կուսապատի քահանայի դուստր Վարդուհին (մահ. 1857) էր: Կուսապատի գերեզմանոցում պահպանվել են նրանց տապանաքարերը հետևյալ արձանագրություններով.

«Աստ թաղեցաւ մեծ իշխանն
Ջրաբերդու նախկին մելիք Իվանի
Աթաբէկեանց 88 ամաց
հասակի վախճանեցաւ»[301]:

Ահա նաև Վարդուհու տապանագիրը.

«Այս է կողակից մելիք Վանին
անուն սորա է Վարթի
1857 ամի»:

298 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 614, տե՛ս նաև՝ վավ. 617 և 618:
299 Այս դեպքի մասին մանրամասն տե՛ս Մաղալյան Ա., Փաստաթղթեր Արցախի գործիչների և Աբբաս-Միրզայի 1826 թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, «ԲՀԱ», 2006, թիվ 1, էջ 3-19:
300 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 166, վավ. 344, թ. 21:
301 RAA նյութեր, Ս. Կարապետյանի 1999 թ. գրառումներից:

Մելիք-Վանին թողել է չորս զավակ՝ Հովսեփ-բեկ, Սարգիս-բեկ, Աթաբեկ (Ադամ) և Միքայել-բեկ:

Հարությունի կրտսեր որդին՝ Հակոբ յուզբաշին (Մելիք-Վանու եղբայրը) ևս հայրենանվեր գործիչ էր ու աչքի է ընկել ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Նրա կինը սեղբիշենցի Ջավահիր Սարումյանն էր: Վերջինիս տապանաքարին գրված է.

«Այս է տապան Ջավրազին որ է
կողակից Յակոբին յուզբաշին մեծ
իշխան Աթաբէկեանց, 1883 թվին»:

Հակոբ յուզբաշին ունեցել է երեք որդի՝ Ասլան, Ջալալ և Հարություն: Կուսապատի գերեզմանոցում պահպանվել են նաև վերջին երկուսի տապանաքարերը սույն արձանագրություններով.

«Այս է դապան Ճալալ բէկին
որդի էր Յակոբ եօզբաշին
թոռն մեծ իշխան Աթաբէկին,
սայ էր ամաց քսանմեկին,
չուեալ գնաց յերկրէ յերկրին
ՌՄՂԶ (1847) ամի ԺԵ (15) նոյմբերին»:

Իսկ Հարություն Աթաբեկյանի շիրմաքարին կարդում ենք.

«Յայսմ տապանի ամփոփեալ
դնի բարէսեր մարմին
Յարութիւն բէկի, սա էր
եղբօր որդի մելիք
Իւանի Աթաբէկեանց
մեծ իշխանի, 1876»:

Ջալալը և Հարությունը մահացել են անժառանգ: Թերևս, այդ պատճառով է Րաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» երկում գրել. «Հակոբ-յուզբաշին ուներ մի որդի միայն՝ Ասլան-բեկը, դրանից ծնվեցան՝ Ներսես-բեկ, Մովսես-բեկ և Նիկոլա-

բեկ»[302]: Ասլան Աթաբեկյանը աշակերտել է հայտնի մանկավարժ Հովսեփ Արցախեցուն: Այդ մասին նա գրում է 1824 թ. դեկտեմբերի 27-ին Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակում. «Գնացեալ մեր առ չնորհազարդ Յովսէփ գիտնական վարդապետն, հետեւեցաք ուղնթեր նորա քերականութեանն և ճարտասանութեանն, և գնոսա յաւարտ հասուցաք»[303]:

Մ. Բարխուտարյանցը Կապաղակ գավառի (այժմ՝ Ադրբեջանի Հանրապետության Գաբալայի շրջան) Սուլթան-Նուխի գյուղի գերեզմանոցում տեսել, ընդօրինակել և իր «Աղուանից երկիր եւ դրացիք» գրքում զետեղել է վերոհիշյալ Ասլան-բեկի հանգստատապանագիրը. «Հին եկեղեցու հարաւային կողմում, հանգստատապանի մէջ աչքի է ընկնում մի ուշադրաւ մահարձան, որի ներքեւ ամփոփուած է Կուսապատցի բարեհամբաւ Մելիք-Վանու թոռն Ասլան-բէկի մարմինն: Մահարձանն կրում է սոյն արձանագրութիւնը. «Այս է տապան բարեպաշտօն Ասլան բէկի, որդւոյ Ղարաբաղայ Ջրաբերդցի Աթաբէկեանց Յակովբէկի, որ յաստիճանի կօլլեժսկիյ սեկրետարի վախճանեցաւ ի 40 ամաց հասակի 1847 դեկ. 30-ին»: Հանգուցեալս վարած է այս կողմերում դատաւորի պաշտօն»[304]: Այստեղ Մ. Բարխուտարյանցը սխալմամբ Ասլան-բեկին համարել է Մելիք-Վանու թոռը, մինչդեռ նա ոչ թե Մելիք-Վանու թոռն էր, այլ վերջինիս եղբայր Հակոբ յուզբաշու որդին:

Աթաբեկյանները թողել են բազմաթիվ ժառանգներ, որոնց մի մասի շառավիղները այսօր էլ բնակվում են Արցախում, իսկ ոմանք էլ բարձրագույն կրթություն ստանալու և այլ նպատակներով անցել են Բաքու, Թիֆլիս, Երևան ու Էջմիածին, ինչպես նաև Ռուսաստան, Պարսկաստան, Եվրոպա,

---

[302] Րաֆֆի, Ճշվ. աշխ., էջ 565-ի տողատակի ծանոթագրությունը:
[303] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 49, վավ. 370, բնագիր:
[304] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 125, հմմտ. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Ե., 1997, էջ 46: Տապանագրում «կօլլեժսկիյ սեկրետարի» բառերը վերականգնել ենք ըստ Ս. Կարապետյանի ընդօրինակման:

ԱՄՆ և նույնիսկ հեռավոր Արգենտինա: Այս տոհմի 95 շառավիղների կեսից ավելին ունի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն[305]:

Մելիք-Վանու որդիները՝ Հովսեփ-բեկը և Սարգիս-բեկը, ապրում էին Կուսապատում: Պահպանվել է Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի՝ 1852 թ. ապրիլի 1-ի խնդրագիրը ուղղված Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին՝ Սարգիս-բեկ Աթաբեկյանին կոնսիստորիայի առենադպիր նշանակելու վերաբերյալ, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Այժմ վերստին վստահանամ խնդրել ամենախոնարհաբար յԱստուածահաստատ Տէրութենէ Ձերմէ բարեհաճել նշանակել հաստատապէս առենադպիր կոնսիստորին գնախայլիշատակեալ կուբերնսկիյ սեկրետար Սարգիս-բէկն, որդի Իվանէ-բէկին Աթաբէկեանց, որ ամօք բազմօք ծառայելով ի կոնսիստորին Ղարապաղու և այժմ գտանելով առ ոտս Սրբութեան Ձերոյ, կարէ արժանապէս կատարումն տալ ամենայն պատուիրանաց և կարգադրութեանց և խրատուց, զորս ունիք բարեհաճել ցուցանել նմա»[306]:

Մելիք-Վանու մյուս որդի Աթաբեկը գնդապետ էր ու մասնակցել է 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմին: Վերջինիս որդի Անդրեյը ևս եղել է բարձրաստիճան զինվորական: Նա 1870 թ. ավարտել է Ալեքսանդրյան երրորդ զինվորական ուսումնարանը, այնուհետև՝ Միխայլովյան հրետանային ակադեմիան: Մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Անդրեյ Աթաբեկյանը 1900 թ. ապրիլի 9-ին ստացել է գեներալ-մայորի, իսկ 1906 թ. դեկտեմբերի 6-ին՝ գե-

[305] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 194: Ի դեպ, 1983 թ. հոկտեմբերի 8-ին Իջևանի շրջանի Ծաղկավան (մինչ 1946 թ. Մելիքգյուղ) գյուղում, որի բնակիչների մեջ ևս մեծ թիվ են կազմում այս տոհմի անդամները, տեղի է ունեցել Աթաբեկյան գերդաստանի առաջին տոհմահավաքը, որին մասնակցել են այս տոհմի մոտ 200 ներկայացուցիչներ Արցախից, Երևանից, Կիրովականից (Վանաձոր), Թբիլիսիից, Ստավրոպոլից և այլ բնակավայրերից (տես «Հայրենիքի ձայն», 1984, 1 հունվարի, էջ 3, «Ավանգարդ», 1985, 5 ապրիլի, էջ 2):

[306] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 215:

ներալ-լեյտենանտի աստիճան: Զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ, իսկ 1913-ից Մոսկվայի զինվորական օկրուգի հրետանու պետն էր[307]:

Մելիք-Վանու կրտսեր որդին՝ Միքայել-բեկը, մահացել է առանց ժառանգ թողնելու:

Կուսապատի գերեզմանոցում պահպանվել են նաև Հովսեփ-բեկի և Սարգիս-բեկի տապանաքարերը հետևյալ արձանագրություններով.

«Տապանս է այս Յովսէփ բէկին
անդրանիկ որդոյ մելիք Վանին,
յազգէն մեծի Աթաբէկեանցին,
ծնաւ 1815 ամի յ8-ըն փետրվարին,
վախճանեցաւ 1861 ամի 14-ին սեպտեմբերին»:

Իսկ Սարգիս-բեկի շիրմաքարը կրում է հետևյալ տապանագիրը.

«Այս է տապան կօլլեժսկի սովետնիկ
Սարգիս բէկի որ է որդի մելիք
Վանին Աթաբէկեանց
վախճանէցաւ 1896 ամի
մայիսի 27-ին»:

Հովսեփ-բեկի որդիները՝ Ռուստամը, Հարությունը, Իսաջանը, և Սարգիս-բեկի որդիները՝ Իվանը, Նիկոլայը, Ալեքսանդրը և Ջումշուդը, բնակվում էին Կուսապատում: Հովսեփ-բեկի որդի Ռուստամը և Սարգիս-բեկի որդի Իվանը, ինչպես երևում է Կուսապատի հանգստարանում գտնվող նրանց տապանաքարերի արձանագրություններից, վաղ են մահացել: Հավանաբար, այդ պատճառով ռուս ռազմական պատմաբան Վ. Պոտտոն (1836-1912) նրանց չի հիշատակում: Ահա Հովսեփ-բեկի որդի Ռուստամի տապանագիրը.

«Այս է տապան Ռուստամին,
որ է որդի Յովսէփ պէկին,

[307] **Аветисян Г.**, Генералы-армяне в Российской империи, Е., 2007, с. 233-234.

թուռըն մէլիք Յովհաննէսին,
որք են յազգէ Աթաբէկին,
թվին ՌՄՁԳ (1834)»:

Ահա նաև Սարգիս-բեկի որդի Իվանի տապանագիրը.

«Այս է տապան Իվանին,
որ է որդի Սարգիս բէկին և
թոռն է մելիք Վանին
1858 վախճանեցաւ»:

Հովսեփ-բեկի որդի Իսաջանի կինը՝ Եղիսաբեթը, Խաչենի Հասան-Ջալալյանների իշխանական տնից էր, ինչպես տեղեկանում ենք նրա տապանագրից.

«Այս է տապան
Եղիսաբեթ Դանիելի
Աթաբեկյանի, դուստրն
Դանիել բեկ Հասան-Ջալալյանի
ծնված 1854 թվին
վախճ. 1937 թվի
հոկտեմբերի 7-ին
Կուսապատ գյուղում»:

Իսաջանը ունեցել է չորս որդի՝ Նիկոլայը, Միքայելը, Հովհաննեսը (Իվան) և Գարեգինը: Վերջինս ապրում էր Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղում, որի բնակիչների մի մասը Աթաբեկյանների ազգականներն են: Մելիք-Վանու ծոռ Գարեգինը վախճանվել է 108 տարեկան հասակում, թողնելով չորս որդի՝ Երվանդ, Վանիկ, Լևոն և Սամվել անուններով:

* * *

Հակոբ յուզբաշու ժառանգներից շատերը ևս անվանի մարդիկ են դարձել: Այսպես, Ներսես Ասլանի Աթաբեկյանը (Հարյուրապետի թոռը, 1837-1904) հաշտարար դատավոր էր Ղազախում և «ցարական իշխանության հետ երկար ժամանակ

դատ վարելուց հետո, որպես հատուցում ցարական կառավարության կողմից Ղարաբաղում բռնագրավված իր հողամասի, ստանում է Փարաքարի և Վարմազյարի (այժմ՝ Արևաշատ) մեջ ընկած անջրդի և անմշակ քարքարոտ «ղուբը» կոչված պետական հողամասը... 1904 թ. մայիսին Ներսես Աթաբեկյանը, որը բազմաթիվ մկայությունների համաձայն մեծ հեղինակություն էր վայելում շրջակա գյուղացիության մեջ և արժանացել էր նրանց համակրանքին, ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին, թողնելով իր մահից հետո 40 հազար ռուբլի պարտք»[308]: Մենք ընդօրինակել ենք Էջմիածնի Ս. Գայանե վանքի բակում գտնվող նրա շիրմաքարի արձանագրությունը.

«Երջանկայիշատակ»

«Երդուեալ հաւատարմատար
Ներսէս Ասլանեան
Աթաբէկեանց
ծնեալ յ7 ապրիլի 1837 ա.
վախճան. ի 18 Մայիսի 1904 ա.»:

Նա թողել է վեց զավակ՝ Մարիամ, Հովսեփ, Տիգրան, Միքայել, Դավիթ և Ասլան:

Ներսես-բեկի եղբայրները՝ Մովսես-բեկը և Նիկոլայ-բեկը պետական խորհրդականներ էին: «Նիկոլայը մեռավ պետական խորհրդատուի աստիճանով, զբաղեցնելով Ելիզավետպոլի (Գանձակ-Ա. Մ.) նահանգային դատարանի հատուկ գործերի քննիչի պաշտոնը, նրանից հետո մնացին երկու որդիները՝ Լևոնն ու Միքայելը»[309], իսկ Մովսեսն ապրել և գործել է Շուշիում: Մովսես-բեկը թողել է հինգ զավակ՝ Ասլան, Ալեքսանդր, Նիկոլայ, Աբրահամ և Աննա, իսկ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ, բանաստեղծ-երգիծաբան Լևոն Աթաբեկյանը (1875-1918) Նիկոլայ-բեկի որդին էր (Հակոբ յուզբաշու ծոռը): Նա 1917 թ. դեկտեմբերին եղել է Հայոց ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի փոխնախագահ, այ-

308 Եղիազարյան Ա., Հովսեփ Աթաբեկյան, «ՊԲՀ», 1959, թիվ 2-3, էջ 207, 208:
309 Պոտտո Վ., նշվ. աշխ., էջ 58:

նուհետև՝ անդամ և զոհվել է 1918 թ. մարտի 20-ին այդ քաղաքում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների ժամանակ՝ հաշտարար բանախոսի առաքելություն կատարելիս: Լևոն Աթաբեկյանի դուստրը՝ Մարգարիտը (1913-1995), բանասիրական գիտությունների թեկնածու էր: Ի դեպ, Հայկական սովետական հանրագիտարանում Աթաբեկյանների գերդաստանից ներկայացված են վերոհիշյալ Լ. Ն. Աթաբեկյանը, Հովսեփ Ներսեսի Աթաբեկյանը (հրապարակախոս, թարգմանիչ, գյուղատնտես, 1870-1916) և վերջինիս որդին՝ Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆ. Գրիգոր Աթաբեկյանը (1908-1966)[310], որի քույրը՝ Անահիտը, 1953-ից Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի բուսաբանության ամբիոնի պրոֆեսոր էր: Հովսեփ Աթաբեկյանի կինը Գերմանիայում երաժշտական կրթություն ստացած Հեղինե Ավակիմյանն էր: Ներսես-բեկի մյուս որդիները (Ասլան-բեկի թոռները)՝ Տիգրանը և Միքայելը իրավաբաններ էին, Դավիթը (1876-1964) մանկաբույժ էր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, իսկ Ասլանը ճարտարագետ էր:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր էր նաև Մովսես-բեկի որդին՝ նշանավոր էնդոկրինոլոգ Ալեքսանդր Աթաբեկյանը: Նրա կինը Եկատերինա Նիկոլաևնա Սոկոլովան էր: Ա. Մ. Աթաբեկյանը թողել է երեք զավակ՝ Ալեքսանդրը, Արսենը և Արիանան: Ականավոր էնդոկրինոլոգի ավագ որդին՝ Ալեքսանդրը (1896-1952), եղել է Ստալինգրադի (Վոլգոգրադ) մեխանիկական ինստիտուտի դոցենտ: Ա. Մ. Աթաբեկյանի մյուս որդին՝ Արսենը (1902-1960) ևս բժշկական գիտությունների դոկտոր էր: Վերջինիս դուստրը՝ Մոսկվայի էնդոկրինոլոգիական բուժարանի վարիչ Եկատերինա Աթաբեկյանը, շարունակում է հոր և պապի գործը: Նրանք բոլորն էլ մեծ ծառայություններ են մատուցել հայրենական գիտությանը:

[310] ՀՍՀ, հ. 1, Ե., 1974, էջ 125-126:

Այսպիսով, սույն ենթագլխում ներկայացված է Կուսապատի Աթաբեկյանների տոհմագրությունը՝ սկսած XVIII դարի կեսերից մինչև XX դարի կեսերը: Ցույց են տրված նաև տոհմի անդամների տեղաշարժերը և հետագա տարածումը՝ սկսած Ջրաբերդ գավառի Կուսապատ գյուղից մինչև Բաքու, Թիֆլիս, Երևան և Էջմիածին, ինչպես նաև Ռուսաստան, Պարսկաստան, Եվրոպա ու Ամերիկա:

Դ) ԽԱՉԵՆ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԸ XVII-XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Խաչեն գավառի մելիքության տարածքը սկսվում էր Խաչենագետից և տարածվում մինչև Կարկառ գետը: Խաչեն գավառի տիրակալները Առանշահիկ հնագույն իշխանական տոհմից սերված Հասան-Ջալալյաններն էին: Այս տոհմի հիմնադիրը Առանշահիկների իշխանության Ներքին Խաչենի ճյուղի ժառանգորդ Հասան-Ջալալ Դոլան (?-1261) էր, իր իսկ խոսքերով ասած՝ «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի»[311]: «Հասան-Ջալալ իշխանի անունից էլ Հասան-Ջալալյանք կոչված իշխանական տունը, որ տերն էր Ներքին Խաչենի, դարձավ միջնադարյան Հայաստանի վարչական ամենանշանավոր միավորներից մեկը: Այն դիմացավ թաթար-մոնղոլների ու նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի հարվածներին, ապա հայրենի Խաչենում կազմավորված մելիքական տների վերափոխվելով, գոյատևեց մինչև XIX դ. սկիզբը»[312]: Հասան-Ջալալյանների իշխանանիստ ամրոցներն էին Թարխանաբերդը (Խոխանաբերդ) և Կաչաղակաբերդը[313]: Այս տոհմի ներկայացուցիչները XIV դ. վերջից ժառանգաբար տիրել են նաև Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսական գահին, իսկ կաթողիկոսանիստ Գանձասարը վե-

[311] Շահխաթունեանց Յ., Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջ 371, Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, էջ 183, Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք Արցախ, էջ 250, Ուլուբաբյան Բ., Գանձասար, էջ 87, Դիվան, V, Արցախ, էջ 38:

[312] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 86:

[313] Այս բերդի մասին տե՛ս Սարգսյան Ս., Կաչաղակաբերդ, «ԼՀԳ», 1990, թիվ 1, էջ 41-48, որտեղ կարդում ենք. «Ամրոցի Կաչաղակաբերդ անվանումը կապվում է այն ավանդության հետ, թե անցյալում պարտություն չտեսած և համառ դիմադրությամբ հռչակված ամրոցի պաշտպանները, երկար ժամանակ ջուր և սննդամթերք չունենալով, նահատակվում են, բայց չեն հանձնվում թշնամուն: Իսկ երբ կաչաղակներն ու մյուս գիշատիչ թռչունները սկսում են աղմուկաղաղակով պտույտներ գործել ամրոցի վրա, թշնամին կռահում է, որ պաշտպանները կենդանի չեն» (էջ 41):

րածվել է Արցախի մելիքությունների հոգևոր և քաղաքական կենտրոնի:

Հասան-Ջալալյանների տոհմաբանության ուսումնասիրությանը առաջինը ձեռնամուխ են եղել այս տան ներկայացուցիչները՝ Եսայի Հասան-Ջալալյանը[314], Բաղդասար Հասան-Ջալալյանը և Սարգիս Ջալալյանցը[315]: Այդ աշխատանքների շարքում լավագույնը պետք է համարել Բաղդասար Հասան-Ջալալյանի՝ 1849-ին կազմած «Ազգաբանութիւն և ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց» տոհմացանկը, որի տարբերակներից մեկը հրատարակել է Րաֆֆին[316]: Առհասարակ ըստ Խաչիկ վրդ. Դադյանի ձեռագրացուցակի, Բաղդասար մետրոպոլիտը կազմել է այս ցանկի երեք տարբերակներ, որոնք «ըստ էութեան նոյնն են. միայն մանրամասնութեանց մէջ են տարբերվում. մէկը աւելի համառօտ, միւսը ընդարձակ: Ցանկերի նպատակն է ցոյց տալ, որ մետրոպօլիտի՝ Ջալալեանց տոհմը սերում է հին Աղուանից արքայական տոհմից կամ Խորենացու լեզուով՝ Սիսակից»[317]:

Կարելի է հիշատակել նաև Մ. Բարխուտարյանցի[318], Ղ. Ալիշանի[319], իսկ ժամանակակից հետազոտողներից՝ Գ. Կիրակոսյանի[320], Ռ. Հյուսնի[321] և այլոց ուսումնասիրությունները, սակայն, կարծում ենք, Խաչենի իշխանական տան պատմության նվիրված աշխատությունների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Բ. Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը

[314] Մատենադարան, ձեռ. 7821, էջ 2ա-2բ, ձեռ. 9923, էջ 2ա:

[315] Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, էջ 352-353:

[316] Րաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Երկ. ժողովածու, հ. 12, Ե., 1990, էջ 118-126:

[317] Թօփճեան Յ., Ցուցակ ժողովածուաց Խ. վրդ. Դադեանի, հ. Բ, Վաղարշապատ, 1900, էջ 37: Այժմ այդ տոհմացանկերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), ֆ. 57, ց. 3, գ. 9, էջ 16-26:

[318] Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, Ա, էջ 141-173, Բ, էջ 33-36:

[319] Ալիշան Ղ., Արցախ, Ե., 1993, էջ 64-67:

[320] Կիրակոսյան Գ., Հասան-Ջալալյան իշխանական տունը XV դարում, «ԼՀԳ», 1969, թիվ 5, էջ 86-94:

[321] **Hewsen R.**, The Meliks of Eastern Armenia, «REArm.», 1972, IX, p. 317-318, 1973-1974, X, p. 288-289, ներդիրը:

X-XVI դարերում» մենագրությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հասան-Ջալալյանների անցած ուղին՝ այն հասցնելով մինչև XVI դ. վերջը: Ուստի, ավելորդ կրկնությունից խուսափելու նպատակով, ստորև համառոտ շարադրելու ենք Հասան-Ջալալյանների ազգաբանությունը՝ սկսած XVII դ. սկզբից մինչև XIX դ. սկիզբը:

XVI դ. վերջում և XVII-ի սկզբին Խաչենի գավառի տիրակալն էր Մեհրաբ-բեկի ավագ որդի Ջալալ Գ-ը: Ծանր ու դժվարին ժամանակներ էին: Հայոց հողը տուժում էր թուրք-պարսկական պատերազմներից, որոնց ալիքները հասել էին նաև Արցախ: Այդ անցքերի մասին պատմող նյութերից է նաև Հասան-Ջալալյանների տոհմական սեփականությունը հանդիսացող Ավետարանում Ջալալ Գ-ի թողած հիշատակարանը՝ գրված Ավետարանը գերությունից հետ վերադարձնելու առթիվ: Այս հիշատակարանը մեզ համար կարևոր է նաև իր հաղորդած անուններով. «Արդ, ըստացայ սուրբ Աւետարանս ի գերութենէ ես՝ Ճալալ, որդի մեծին Մեհրապ պէկին, և որդոց իմոց Պայինդորին, և դստերաց Կիչիխանին և Սալվարին և ամենայն յարեան մերձաւորաց իմոց և յիշատակ ծնաւղաց իմոց: Առայ սուրբ Աւետարանս ի հալալ ինչից իմոց ի դառն և ի նեղ ժամանակս, որ գերեցաւ աւամանլուն ի տեղիս, որ կոչի Խաչէն, թագաւորութեան մեծին Ճալալին և կաթուղէկոսութեան տեղիս տէր Սիմաւոնին, ի սուրբ ուխտիս Գանձասարայ... Ի թվիս Հայոց ՌԼԸ (1589) էր»[322]:

Այնուհետև, ըստ Առաքել Դավրիժեցու՝ 1603 թ. իրենց օսմանյան բռնապետությունից փրկելու խնդրանքով Իրանի Շահ-Աբբաս Ա-ի (1587-1629) մոտ գնացած հայ իշխանավորների մեջ էր նաև «Ջալալ բէկն իւր եղբօր որդւոքն ի Խաչենայ»[323]: Սակայն հույսերը չարդարացան. մի բռնակալին փո-

[322] Մատենադարան, ձեռ. 378, էջ 7ա, նաև՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Ե., 2004, էջ 310:

[323] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, էջ 16:

խարինեց մյուսը, իսկ 1604-ի աշնանը թվական գերակշռություն ստացած թուրքական զորքից պարսկական բանակի նահանջն ուղեկցվեց հայերի սոսկալի բռնագաղթով, որն ահասարսուռ գույներով են ներկայացնում ոչ միայն հայ, այլև օտարերկրացի ականատեսները[324]:

Այդ խորապատկերում է գրվել Ջալալ Գ-ի հաջորդ հիշատակարանը, որտեղ, սակայն, ոչ մի խոսք չկա ո՛չ Շահ-Աբբասի գալու հետ կապված ակնկալիքների և ո՛չ էլ նրա գալուն հետևած հիասթափությունների մասին: Ահավասիկ այդ հիշատակարանը. «Վերջին ստացող զսուրբ աւետարանիս պարոն Ճալալ բէկս որդի Մըհրապ բէկին, որ ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ ինչից իւրոց և արդար վաստակոց. ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց. հաւրն Մըհրապ բէկին. և մաւրն իւրոյ Շահում աղին. եւ հանգուցեալ եղբայրցն իմոց պարոն Պաղտասար բէկին, Յոհաննէս կաթողիկոսին, Գրիգոր կաթողիկոսին, Դաւիթ կաթողիկոսին, որ է որդի պարոն Պաղտասար բէկին. և հանգուցեալ որդոցն Պայայդուր բէկին, Մըհրապ բէկին: Եւ կենդանի որդին [Վէ]լիճան բէկն: Եւ կենակցին իմոյ պարոն Բէկում աղին: Եւ դստերացն իմոյ Սալվարին, Գիչիխանին, Մահփարին, Խանում աղին. ամէն: Արդ գրեցաւ ի թվաբերութիւնս հայոց ՌԾԵ (1606)»[325]: Դժվար չէ նկատել, որ այս հիշատակարանը ավելի լիարժեք տեղեկություններ է տալիս Ջալալ իշխանի ընտանիքի մասին, քան նախորդը:

Հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է ներկայացրել Հասան-Ջալալյանների տոհմաշղթայի այս օղակը Բաղդասար մետրոպոլիտը. «Ջալալ-բէկ Գ որդի Մեհրապ-բէկին՝ ծնանի

[324] **Antoine de Gouvea,** Relation des grandes guerres et victoires obtenues par le Roi de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils. Rouen, 1646, pp. 341-363, թարգմ. տե՛ս «Լումայ», Տփխիս, 1899, գիրք Ա, էջ 204-219:

[325] Մատենադարան, ձեռ. 5794, էջ 207ա, նաև՝ Մեսրոպ եպիսկոպոս, Զաքարիա Նկարչի ձեռագիրը եւ Դաւիթ բէկի մասին յիշատակարան, «Բանբեր Հայաստանի գիտ. ինստիտուտի», գիրք Ա-Բ, 1921-1922, էջ 132-133:

զՎէլիջան-բէկ Բ և զԱղաբէկ»[326]: Հիշատակարանների հետ համեմատելիս ակնհայտ է դառնում, որ Ջալալ Գ-ը Աղաբեկ անունով որդի չի ունեցել, և այս դեպքում սխալվում է Բաղդասար մետրոպոլիտը, ինչպես նաև այս հարցում նրան հետևող ուսումնասիրողները[327], իսկ ճշգրիտ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանն է, որն իր հրատարակած հիշատակարանի տվյալների հիման վրա գրում է. «Պարոն Ճալալն ունեցել է երեք որդի, որոնցից երկուսը մեռած (այսինքն՝ Պայանդուր բեկը և Մեհրաբ բեկը-Ս. Մ.), կենդանի է (Վէ)լիճան բէկը»[328]:

Վելիջան-բեկի մասին վկայություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ «Վէլիջան-բէկ Բ՝ որդի Ջալալ-բէկին Գ, ծնանի զԳրիգոր Բ կաթողիկոս և զԲաղդասար-բէկ Բ»[329]: Արցախի վիմագրական ժառանգությունը քաջածանոթ Մ. Բարխուտարյանցը գրում է. «Վէլիջան-բէկ Բ-ի և Բաղդասար-բէկի մասին ոչ ինչ արձանագրութիւն չկայ մէջ տեղ»[330]: Անհամեմատ շատ են Աղվանից Գրիգոր Բ կաթողիկոսի մասին եղած տեղեկությունները: Պահպանվել է ինչպես շահ Սեֆիի (1629-1642) 1634 թ. դեկտեմբերի 31-ի հրովարտակը՝ Գանձասարի կաթողիկոսությունը Գրիգոր Հասան-Ջալալյանին հանձնելու մասին[331], այնպես էլ Շահ Աբբաս Բ-ի (1642-1666) 1652 թ. հրովարտակը, որով վերահաստատվել են նրա կաթողիկոսական իրավունքները: «Գրիգոր կաթողիկոսը գալով երկնային դահի բարձրությանը հասնող արքայական պալատ,-կարդում ենք վերջին հրովարտակում,-խնդրեց Մեր արքայական Մեծության ստորագրությամբ վերահաստատել կաթողիկոսությունը [իր

[326] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124, ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:
[327] Տես, օրինակ, **Hewsen R.**, նշվ. աշխ., «REArm», X, ներդիրը:
[328] Մեսրոպ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 133:
[329] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124, ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:
[330] Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 34:
[331] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ II, էջ 110, ռուսերեն պատճենը տես Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 241, վավ. 200:

անունով]: Ավարեջեի ու Թովջիհի դաֆթարի հիման վրա հաստատեցին այդ իրողության անփոփոխ լինելը: Ուստի ազնվագույն քրիստոնյա Գրիգոր կաթողիկոսի հանդեպ ունեցած մեր շահական ողորմածությամբ, ըստ կարգի, այդ գիրքը նրան շնորհեցինք»[332]: Գրիգոր կաթողիկոսը վախճանվել է 1653 թ.:

Նրան հաջորդել է Հասան-Ջալալյանների տան որդեգիր Պետրոս Խանձքեցին[333], որը Գանձասարի կաթողիկոս է եղել 1653-1675 թթ.:

Իսկ «Բաղդասար-բէկ Բ որդի Վէլիջան-բէկին Բ-ի և թոռն Ջալալ-բէկին Գ-ի՝ ծնանի զԵրեմիայ կաթողիկոս, զԱրիստակէս եպիսկոպոս, զՎէլիջան-բէկ Գ և զՄուլքի-բէկ»[334]: Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկի մյուս տարբերակում կարդում ենք. «Երեմիայ կաթուղիկոսն փէրման է առացեալ 1086 ամին տաճկաց (1675/76) յերկրորդ շահ Սէֆի պարսից արքայէն վասն հնութեան և հաստատութեանն իւրեանց»[335]: Շահ-Սուլեյմանի 1086 հ. թ. սաֆար ամսի (1675 թ. ապրիլի 27-մայիսի 26) հրովարտակը, որով Երեմիա Հասան-Ջալալյանին հաստատել է Գանձասարի կաթողիկոսական գահին, կարևոր է նաև այն առումով, որ պարունակում է տեղեկություններ նրան նախորդած կաթողիկոսների մասին: Հրովարտակում մասնավորապես կարդում ենք. «Խաչենի հոգևոր առաջնորդ Երեմիան տե-

[332] Նույն տեղում, պրակ III, Ե., 2005, էջ 28, ռուսերեն պատճենը տես նույն տեղում, թղթ. 241, վավ. 200:
[333] Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք, «ԼՂԳ», 2000, թիվ 1, էջ 90:
[334] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 124, հմմտ. ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18, որտեղ բացակայում է Արիստակես եպիսկոպոսի անունը: Այն, որ նրանք իրոք ունեցել են Արիստակես անունով եղբայր, հաստատվում է վերջինիս տապանագրով. «Այս է տապան Արիստակէս եպիսկոպոսին, որ է եղբայր Երեմիա կաթողիկոսին ՌՃԼԳ (1684) թուին» (տես Դիվան, V, Արցախ, էջ 68):
[335] ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18: Այս շահ Սեֆին նույն ինքը շահ Սուլեյմանն (1666-1694) է. ժամանակակից Զաքարիա Ագուլեցին նրա անվանափոխության մասին գրում է, որ 1666 թ. «հոքտեմբերի մէկումն ըռաղամ եկաւ ամէն երկիր, թէ Շահաբաս մեռաւ, տէղն նստաւ իւր մեծ որդի Շահ-Սէֆի… Թագաւորին անունն փոխեցին, դրին Շահ-Սլէման» (Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, էջ 68, տես նաև Աբրահամյան Ա., Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», Ե., 1941, թիվ 1, էջ 96):

ղեկացրեց, որ Ղարաբաղի ու մյուս [շրջանների] հայերի կաթողիկոսի ու [հոգևոր] առաջնորդի դիրքը պարտադիր ռաղամների հիման վրա, հնուց ի վեր ժառանգաբար փոխանցվելով, նրա հորեղբայր Գրիգոր կաթողիկոսին էր անցել, բայց իր և մյուս ժառանգների մանկահասակ լինելու պատճառով հանձնվել էր նրա [Գրիգորի] աշակերտ Պետրոս կաթողիկոսին: Վերոհիշյալ Պետրոս կաթողիկոսը մահացել է, սակայն իր կենդանության օրոք վերը նշված Երեմիային է իր հաջորդ նշանակել ու գրություն թողել, որպեսզի իր մահից հետո նա ստանձնի [վերոհիշյալ շրջանների] հոգևոր առաջնորդի ու կաթողիկոսի դիրքը… Ուստի Նապաստակի տարվա սկզբից Գանձակ-Ղարաբաղի ու Շիրվան-Շամախու հայերի կաթողիկոսությունը հիշյալ Երեմիա կաթողիկոսին շնորհեցինք»[336]: Հետագայում՝ շահ Սուլեյմանի մահից հետո, Իրանի նոր շահ Սուլթան Հուսեյնը (1694-1722) իր 1111 հ. թ. ռաջաբ ամսի (1699 թ. դեկտ. 23-1700 թ. հունվարի 22) հրովարտակով վերահաստատել է նրա կաթողիկոսական իրավունքները, որովհետև «Երեմիա կաթողիկոսը տեղեկացրեց, որ այդ մահալների հայերի կաթողիկոսությունը, ինչպես որ իր նախնիների վերաբերությամբ էր այդ արվել, այնպես էլ դրախտաբնակ արքայի (շահ Սուլեյմանի-Ա. Մ.) հրամանագրով իրեն է շնորհվել, որը սակայն Մեր արքայական բարեբախտ Մեծության ստորագրությամբ չէր հաստատվել»[337]: Երեմիա կաթողիկոսը վախճանվել է 1700 թ., ինչպես վկայում է նրա տապանագիրը.

«Այս է տապան Երեմիա կաթուղիկոսին Աղուանից,
որ է յազգէն Ջալալ Դօլին ՌՃԽԹ (1700) թուին»[338]:

[336] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ III, էջ 103-104, ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 241, վավ. 201:
[337] Նույն տեղում, էջ 142:
[338] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 252, Դիվան, V, Արցախ, էջ 65:

Ըստ Բաղդասար մետրոպոլիտի՝ Երեմիա կաթողիկոսի եղբայր Վելիջան-բեկ Գ-ը թողել է երկու որդի՝ Եսայի և Հովհաննես[339]: Սակայն. Գանձասարի վանքի մոտ գտնվող գերեզմանատանը կա մի տապանաքար, որը թույլ է տալիս մի լրացում կատարելու Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկում.

«Այս է հանգիստ Վէլիջանի որդի Այտինին, որ է
եղբայր Եսայի կաթողիկոսին: Թւին ՌՃՀ (1721) էր»[340]:

Սրանից ելնելով՝ վստահ կարող ենք ասել, որ Այտինը Վելիջան-բեկի երրորդ որդին էր: Թեև մեծանուն Րաֆֆին գրում է, որ Վելիջան-բեկը վախճանվել է 1686 թ.[341], սակայն այս դեպքում նա սխալվում է: Իրականում Վելիջան-բեկը մահացել է 1688 թ., ինչպես ապացուցվում է նրա տապանագրով.

«Այս է տապան Բաղդասարի որդի Վէլի-
ջանին՝ եղբօր Երեմիա կաթողիկոսին:
ի ՌՃԼԷ (1688) թուին»[342]:

Նրա ավագ որդին՝ Գանձասարի կաթողիկոս, պատմիչ և ազգային-ազատագրական շարժման գործիչ Եսայի Հասան-Ջալալյանը «3 փէրման է առացեալ շահ Սօլթան Հուսէյին պարսից արքայէն. երկուսն ի 1111 ամին տաճկաց և մինն ի 1113 ամին տաճկաց, վասն հնութեան և հաստատութեանն ազգին իւրոյ և իւր խկ»[343]: Այդ հրովարտակներից մեկը շահ Սուլթան Հուսեյնի 1111 հ. թ. շավալ ամսի (1700 թ. մարտի 22-ապրիլի 20) հրամանագիրն է, որով հանձնարարում է Շիրվանի, Կախեթի ու Ղարաբաղի տեղական իշխանություններին օգնություն ցուցաբերել Աղվանից կաթողիկոսությանը ենթակա Շիրվանի հայերից եկեղեցական հարկերը հավաքելու գործում՝ տրված Երեմիա կաթողիկոսի եղբորորդի Եսայի վարդա-

[339] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 125, ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:
[340] Ուլուբաբյան Բ., Գանձասար, էջ 162:
[341] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 427: Հավանաբար, Րաֆֆու սխալը բխում է Վելիջան-բեկի տապանագրի սխալ ընթերցումից՝ «ՌՃԼԷ»-ի (1688) փոխարեն «ՌՃԼԵ» (1686):
[342] Ուլուբաբյան Բ., Գանձասար, էջ 163:
[343] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

պետի խնդրագրի հիման վրա[344]: Այս հրովարտակից կարելի է եզրակացնել.

ա) Երեմիա կաթողիկոսը հավանաբար արդեն վախճանված էր, այլապես որպես խնդրագրի հեղինակ Եսային հանդես չէր գա:

բ) Եսային, թեև իրականացնում էր կաթողիկոսական գործառույթներ, սակայն դեռևս շահի կողմից որպես կաթողիկոս չէր հաստատվել:

Իրոք, Եսայու կաթողիկոսական իրավունքները հաստատվել են շահ Սուլթան Հուսեյնի 1113 հ. թ. ջումադի առաջին ամսի (1701 թ. հոկտեմբերի 4-նոյեմբերի 3) հրովարտակով[345]: XVIII դ. սկզբին բռնկված ազգային-ազատագրական շարժման ժամանակ «Եսային ուղղում է իր հայացքը դեպի հյուսիս և այստեղից սպասում հայերի ազատությունը»[346]: Եսայի կաթողիկոսը վախճանվել է 1728 թվականին:

Երեմիա կաթողիկոսի կրտսեր եղբայր Մուլքի բեկը ունեցել է երկու որդի՝ Մելիք-Գրիգոր և Մելիք-Ալլահվերդի: Մուլքի բեկը վախճանվել է 1716 թ. «ի ժամանակս մահդարայժամի», ինչպես վկայում է Գանձասարի վանքին կից տարածված հանգստարանում գտնվող նրա շիրմաքարի արձանագրությունը.

> «Այս է հանգիստ Մուլքիպէկի, որ է որդի պարոն Պաղտասարին, որ է եղբար Երեմիեա կաթողիկոսին,
> որ է հայր Մէլիք Գրիգորին: ՌՃԿԵ (1716): ի վեցին
> ի ժամանակս մահդարայ-
> ժամին սայ փոխեաց ի Ռ Տէր կենդանին:
> Ազգին Ջալալ Դօլին»[347]:

344 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ III, էջ 146-147:
345 Նույն տեղում, էջ 149-152:
346 Հովհաննիսյան Ա., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, էջ 57, տե՛ս նաև Արզումանյան Զ., Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ, «ԼՀԳ», 1979, թիվ 5, էջ 56:
347 Ուլուբաբյան Բ., Գանձասար, էջ 161-162:

Նրա որդիները հաջորդաբար «հրովարտակօք և փէրմանօք յօմանցուց տէրութեանն և Նադիր շահ պարսից արքայէն ի 1126 (1714), ի 1131 (1718/19), ի 1141 (1728/29), ի 1148 (1735/36) ամին տաճկաց, տիրապետեցին իշխանութեամբ ի վերայ Խաչենոյ գաւառին բնակիչ ժողովրդոց»[348]: Փաստաթղթերը վկայում են, որ 1714-1728 թթ. Խաչենի մելիքը Գրիգորն էր: Նրա անվանը քանիցս հանդիպում ենք 1723-1728 թթ. Արցախի մելիքների և ռուսաց արքունիքի գրագրություններում[349], որոնցից մեկում կարդում ենք. «Գրիգորն ևս է իշխանաց ցեղէ»[350]: Այնուհետև, ըստ Բաղդասար մետրոպոլիտի, «Մէլիք-Գրիգորն զիւր մելիքական իշխանութիւնն ետ իւր եղբօր Մէլիք-Ալլահվերդւոյն ի վերայ Խաչենոյ գաւառին, և ինքն հրաժարեցաւ յիւր մարմնաւոր իշխանութիւնէն և օծաւ վարդապետ և եղև առաջնորդ Սրբոյ վանիցն Գանձասարու ի ժամանակս տիրապետութեանց օսմանցւոց և Նադիր շահ պարսից արքային»[351]:

Սակայն, Մատենադարանում պահվող մի վավերագիր վկայում է, որ Արցախում օսմանյան ռազմակալման ավարտից հետո Մելիք-Գրիգորը կրկին անցել է իր մելիքական պարտականությունների կատարմանը: Այդ փաստաթուղթը Նադիր շահի 1736 թ. հրովարտակն է, որով Մելիք-Գրիգորի խնդրագրի համաձայն Դովշանլու և Ղաբարթու գյուղերը հանելով Բարդայի կառավարչի ենթակայության տակից, հանձնում է Դիզակի Մելիք-Եգանի զաբթին: Նկատի ունենալով այդ հրովարտակի կարևորությունը մեզ հետաքրքրող մի շարք հարցերի առնչությամբ, այն բերում ենք գրեթե ամբողջությամբ.

348 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:
349 **Эзов Г.,** Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. 345, 356, 382, 442, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 27, 92, 188, 200, 287.
350 **Эзов Г.,** ук. соч., с. 345, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 27.
351 **Րաֆֆի,** Երկերի ժողովածու, հ. 12, էջ 125:

«Բարձրագույն հրաման եղավ, որպեսզի Բարդայի մահալի մալիյյաթի զաբիթը իմանա, որ քանզի օրևրս քրիստոնյաների մեջ լավագույն Խաչենի մահալի մելիք Մելիք-Գրիգորը բարձրագույն դուռը գալով՝ զեկուցեց, որ որովհետև այդ մահալի մուքաթալլչիհաթը կարգադրվել էր ամբողջովին հանձնել պետության բարձրաստիճան հենասյուն իմ եղբայր Ադերբայջանի սիփահսալար Մուհամմադ Իբրահիմի հանձնակատարներին, ուստի այդ մահալի գյուղերից ու մազրայեներից Դովշանլու և Ղաբարթու գյուղերը, որոնց մալիյյաթը փոխանցվում էր Բարդայի զաբիթներին, գերագույն հրավարտակի բովանդակությանը ծանոթանալուց հետո պետք է հանված համարեն իրենց ջամ'ից և որևէ կերպ չմիջամտեն՝ այն [համարելով] աբվաբ-ե ջամ'*** արված իմ բարձրաստիճան եղբորը: Խնդրարկու Մելիք-Գրիգորը, հանդիսանալով իմ եղբոր ենթական, այնպես, ինչպես իրական վկա, Բարդայի զաբիթ Ալի Ղուլի Բեկը խնդրագրին ստորև կցված հիշյալ գյուղերի նապաստակի տարվա հարկադանձումների մասին զեկուցագրում նշել է, թող դրանցի դաֆթարում և նրանով առաջնորդվելով ու ճշմարտությանը խստորեն հետևելով՝ մալիյյաթը գանձի:

Կարգադրվեց, որպեսզի Խաչենի մելիք Մելիք-Գրիգորը Խաչենի մահալի մալիյյաթը հատկացված համարի Մելիք-Եգանի զաբթին, որպեսզի այն ստանալով փոխանցի իմ եղբոր

---

* Մուքավաջջեհաթ - այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր
հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով (տե՛ս Մատենադարանի պարս-
կերեն վավերագրերը. հրովարտակներ, I, էջ 121):
** Մազրայե - հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին (տե՛ս
Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, III, էջ 194):
*** Աբվաբ-ե ջամ' - բառացի նշանակում է «հանրագումարային գործեր»:
Այսպես կամ միայն «ջամ'» էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ
հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր
պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին
հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրա-
մական արտահայտությամբ արձանագրում, թե տվյալ օբյեկտը ընդհանուր գու-
մարով որքա՞ն հարկ պետք է վճարի և դրանից որքանը ո՞ր հարկի հաշվից
(տե՛ս նույն տեղում, I, էջ 103):

նի զաբթին, որպեսզի այն ստանալով փոխանցի իմ եղբոր թահ-
վիլդարին, որպեսզի վերջինս Դովշանլու և Ղաբարթու գյու-
ղերի մալիյյաթը Խաչենի մահալի մյուս գյուղերի նման հաս-
կացված համարի Մելիք-Եգանի զաբթին: Ուստի թող որոշման
համաձայն նրանց մալիյյաթը Խաչենի այլ մահալների մա-
լիյյաթի հետ գանձելով փոխանցի Մելիք-Եգանի թահվիլ-
դարին: Թող այս իրենց պարտականությունը համարեն:
Գրվեց 1148 թ. սրբազան զի ղաադե ամսին (1736 թ. մար-
տի 14-ապրիլի 13)»[352]:
Հրովարտակից ոչ միայն երևում է, որ Մելիք-Գրիգորը
վերադարձել էր իր պարտականությունների կատարմանը,
այլև ակնհայտ է դառնում, որ Դիզակի Մելիք-Եգանի մոտ էին
հավաքվում Արցախի բոլոր մելիքությունների հարկերը և նրա
միջոցով հանձնվում շահական գանձարանին:
Դժվար է ասել, թե Մելիք-Գրիգորը մինչև երբ է վարել
Խաչենի մելիքի պաշտոնը: Հստակ է միաժամանակ, որ կյանքի
վերջին շրջանը նա կրկին անցկացրել է հոգևորականի սքեմի
տակ: Վարդապետ ձեռնադրված երբեմնի մելիքը վախճանվել է
1748 թ., ինչպես երևում է նրա տապանագրից.
«Այս է տապան Գրիգոր վարդապետին,
որ է ազգէն Ջալալ Դոլին թվ. ՌՃՂԷ (1748)»[353]:
Գրիգորի եղբայր Մելիք-Ալլահվերդու մելիքական իշխա-
նությունը 1729 թ. հունվարին հաստատվել է Արցախը նվա-
ճած օսմանյան Մուսթաֆա փաշայի հրամանով[354]: Մելիք-
Ալլահվերդին դավադրաբար սպանվել է 1755-ին, Վարանդայի
Մելիք-Շահնազարի թողտվությամբ Արցախ ներթափանցած
Փանահ խանի ձեռքով: Դրանով անդառնալի հարված էր
հասցվում Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանությանը:

---

352 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 188, պատճեն:
353 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 253, Դիվան,
V, Արցախ, էջ 68:
354 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 169, պատճեն:

Այնուհետև «ի հայտ է գալիս ոմն Մելիք Միրզախան Խնձիրստան (Խնզրստան) գյուղից, որը վերոհիշյալ խանին մատուցած ծառայությունների (Մելիք-Ալլահվերդուն դավելու- Ա. Մ.) ու նվիրվածության համար մելիք է դառնում»[355]: Խոսքը Փանահ խանի գրածը Մելիք-Միրզախանյան Մելիք-Միրզախանի (մահ. 1777) մասին է, որը քիչ վնասներ չպատճառեց Արցախի հայրենանվեր մելիքներին:

Իսկ Մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանը թողել է երկու որդի՝ Եսայի եպիսկոպոս և Մելիք-բեկ Ա: Մատենադարանում պահվում է Փանահ խանի 1754 թ. հրովարտակը, որով Մելիք-բեկը նշանակվել է Խաչենի վեքիլ[356], այսինքն՝ լիազոր կառավարիչ: Փանահի որդի Իբրահիմ խանի 1189 հ. թ. (1775/76) հրովարտակով[357] Մելիք-բեկը նշանակվել է նաև Խաչեն գավառի զաբիթ, իսկ նույն խանի մեկ այլ՝ 1778 թ. հրովարտակով Մելիք-բեկի ծերության պատճառով Խաչենի վեքիլությունը հանձնվել է նրա որդի Գաբրիել-բեկին[358]: Գանձասարից 1784 թ. մայիսի 10-ին գեն. Պ. Պոտյոմկինին հասցեագրված Արցախի երևելիների նամակում Մելիք-բեկը կրկին անվանվում է «վէքիլ երկրին Խաչէնու»[359]: Դրա միակ բացատրությունը կարող է լինել այն, որ Շուշիի խաների կողմից Խաչենի ազգաբնակչության վզին փաթաթված Խնձրիստանի Մելիք-Միրզախանյանների իշխանությունը չէր ճանաչվում ո՛չ Հասան-Ջալալյանների, ո՛չ էլ Արցախի մյուս հայրենանվեր մելիքների կողմից:*

355 Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 43:
356 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 205, պատճեն:
357 Նույն տեղում, թղթ. 2բ, վավ. 227, պատճեն:
* XVII-XVIII դդ. «զաբիթ» էին կոչվում պետական հարկերի վարձակալները, որոնք նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրավունք էին ստանում տվյալ օբյեկտի հարկերը գանձելու (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ III, էջ 191):
358 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 232, պատճեն:
359 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 306.

Մելիք-բեկը թողել է ութ որդի՝ Հովհաննես կաթողիկոս, Սարգիս կաթողիկոս, Գաբրիել-բեկ, Դանիել-բեկ, Միքայել-բեկ, Իսրայել-բեկ, Ջալալ-բեկ և Ալլահղուլի բեկ: Նրա որդիներից, թերևս, ամենանշանավորը Գանձասարի 1763-1786 թթ. կաթողիկոս և ազգային-ազատագրական շարժման գործիչ Հովհաննես Հասան-Ջալալյանն էր, որը Գանձասարի կաթողիկոս է օծվել Էջմիածնում 1765 թ. դեկտեմբերի 25-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու ձեռքով, Աղվանից կաթողիկոսական աթոռին տիրանալու համար հակաթոռ Իսրայել Ջրաբերդցու դեմ մղած եռամյա աթոռակալական պայքարից հետո[360]: Պահպանվել է միայն Հովհաննես Հասան-Ջալալյանին Գանձասարի կաթողիկոս ճանաչելու վերաբերյալ Արցախի մելիքների և հոգևորականների կողմից 1763 թ. փետրվարի 5-ին կազմված մի ուշագրավ համախոսական, որտեղ կարդում ենք. «Այսուհետև մեր հայրապետն Յօհաննէս կաթուղիկոսն է, որ է

360 Այդ գավազանակռվով կարելի է բացատրել և այն, որ Մատենադարանում 3971 թվահամարի տակ պահվող մի ձեռնադրության Մաշտոցի 1766 թ. հիշատակարանում գրիչ Աբրահամ Շաքեցին նշում է. «Զստացօղ սուրբ գրոյս երիցս երանեալ և երջանիկ դիտապետն մեր զտէր Հայրապետն Աղուանից, և զսուրբ Աթոռն իւր Գանձասար և ծընօղքն յիւր յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք: Ընդ սոցին և զիս զանպիտան Աբրահամ եպիսկոպոս Շաքեցի գծողս, և զիմ ծնօղքն իմքն իմ յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ յիւր յարքայութեանն ամէն» (թ. 32բ), այդպես էլ չտալով Գանձասարի կաթողիկոսի անունը: Բանն այն է, որ Այդ «մոռացությունն», անշուշտ, ունի իր բացատրությունը: Բանն այն է, որ սույն ձեռագիրն ընդօրինակող Աբրահամ Շաքեցին եպիսկոպոս էր ձեռնադրվել Աղվանից Ներսես կաթողիկոսի կողմից (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Խ. վրդ. Դադեանի, հ. Ա, Վաղարշապատ, 1898, էջ 112, հ. Բ, էջ 20), որի եղբորորդի Իսրայել Ջրաբերդցին Աղվանից կաթողիկոսական աթոռին տիրանալու համար մղված պայքարի պարտվող կողմն էր: Ըստ այդմ, այս «մոռացությունը» կարելի է բացատրել նրանով, որ Ներսես կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրված Աբրահամ Շաքեցին այդ գավազանակռվում պաշտպանել է նույն Ներսեսի կողմից իրեն հաջորդող կաթողիկոս օծված Իսրայելին, ուստի իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում չի նշել Գանձասարի նորընտիր կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի անունը:

Ի դեպ, Մատենադարանում 3592 թվահամարի տակ պահվում է Աբրահամ Շաքեցու և Հարություն վարդապետի կազմած «Օրինակք նամակագրութեանց կաթողիկոսաց և այլոց» ժողովածուն՝ գրված «ի ՌՄԽ (1791) թուին հայոց, հիւսիսային ամսոյ երկուսն, առ դրան Սրբոյ Աթոռոյ Աստուածածնի, և թուխ մանկան լիս սուրբ նշանի ի ներս գիւղին ճալէթու» (թ. 64բ), որի մեջ կան Ներսես կաթողիկոսի և այլոց կոնդակների, բանադրագրերի և խնդրագրերի պատճենները:

եղբօր որդի յԵսայի կաթուղիկոսին, որ եղեւ մեր հայրապետ: Այն աղտ կողութեամբ օրհնեալ Իսրայէլին հետ բան չունիմք: Զկնի այսորիկ ով ոք զԻսրայէլն ուզի և կաթուղիկոսի տեղ դնէ, թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ և թէ աշխարհական սեւերես լինի, և պարտական առաջի Աստուծոյ և սուրբ Գանձասարայ Աթոռոյն և սուրբ Աջոյն Գրիգորիսի»[361]: Սիմեոն Երևանցին Հովհաննես Հասան-Ջալալյանի օծման մասին գրում է. «Սուրբ խաչը գցելով նրա պարանոցին, կախելով կոնդակը գոտուց՝ աջ կողմից, տվեցինք գավազանը (նրա) ձեռքը եւ ասացինք՝ «Պահպանի՛ր», վերստին տալով կաթողիկոսական իշխանություն եւ պատիվ՝ ի լուր ամենքի: Եվ դրանից հետո նա Սուրբ պատարագ մատուցեց՝ հայրապետական պատվով»[362]:

Հովհաննես կաթողիկոսը դարձավ Եսայի Հասան-Ջալալյանի գործի արժանավոր շարունակողը: Նրա նախաձեռնությամբ են 1780-ական թվականների սկզբին Գանձասարում գումարվել Արցախի մելիքների ու հոգևորականների ժողովներ և խնդրագրեր հղվել ռուսաց արքունիք: Սակայն, ինչպես վկայում է Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանը Վրաստանում ռուսաց կայսեր լիազոր ներկայացուցիչ Պ. Կովալենսկուն 1800 թ. ուղղած խնդրագրում, «ի թուին 1784-ին նոյեմբեր ամսոյ 5-ին Իբրէհիմ խորամանկ խանն տեղւոյն, գիտացեալ զայս խորհուրդ, սկսաւ հարցաքննութիւն առնել զՅովհաննէս կաթուղիկոս եղբօրէս, յիշեալ մելիքանց և ուզբաշիէն, և ապա զպարտաւորութիւն եդ ի վերայ կաթուղիկոսին, թէ այս բանս դու ես արարեալ վասն ազգին հայոց, որոյ յաղագս մշտապէս մախայր ընդ կաթուղիկոսին և սպառնայր մահացուցանել, մինչ զի մահադեղս տալով,

361 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 5, բնագիր:
362 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 125-126:

եբարձ զնա ի կենաց աստի»[363]: Շուշիի բանտում Հովհաննես կաթողիկոսը սպանվել է 1786 թ., ինչպես վկայում է Գանձասարի գավթում գտնվող նրա շիրմաքարի արձանագրությունը.

«Այս է տապան Յօհաննէս Աղուանից կաթողիկոսին,
որ է յազգէն Ջալալ Դոլին: Թվին ՌՄԼԵ (1786)-ին»[364]:

Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո Իբրահիմ խանն իր կնոջ՝ Բիքի խանումի միջնորդությամբ[365], 1787 թ. բանտից ազատ է արձակել Հովհաննեսի եղբայր Սարգսին: Հենց այդ ժամանակ է, որ Իբրահիմ խանը ցանկացել է Բայլականի մոտ թաղված Աղվանից Շուփհաղիշո հայրապետի գերեզմանի վրա մզկիթ կառուցել, ու թեև Սարգիս եպիսկոպոսը «ջանացեալ է խափանել զայն, բայց խանն այսու առթիւ ի կատար հասուցեալ է, ասելով՝ չէ փոյթ թէ կաթուղիկոս է հայոց, զի գործն իմ է Աստուածահաճոյ»[366]: Սարգիս Հասան-Ջալալյանին հաջողվել է 1791-ին, խուսափելով Իբրահիմ խանի նոր որոգայթից, փախչել Գանձասարից և ապաստանել Գանձակի Ջավադ խանի մոտ: Այստեղ էլ «ձեռնտուութեամբ Ջաւատ խանին և մելիք Մէջլումայ հայազգի իշխանին ձեռնադրեցաւ կաթուղիկոս ի Գանձակ՝ յԷլիսավէտապօլ ի թուին ՌՄԽԳ (1794). ի ԺԷ (17) դեկտեմբերի»[367]:

Սարգիս կաթողիկոսը Գանձակում մնում է մինչև 1798թ., իսկ այնուհետև՝ Արցախում սկսված սովի և ժանտախտի հետևանքով, տեղի ազգաբնակչության մի մասի հետ գաղթում է Վրաստան: «Վրաց վերջին թագաւոր Գէօրգին միջնորդեց Ղուկաս կաթողիկոսի մօտ, որ Սարգիսը դառնէ Հաղպատի առաջնորդ կարգուի: Ղուկաս զիջաւ այս խնդիրքին, ուղարկելով Սարգսին Հաղպատ, բայց լոկ արքեպիսկոպոսական տիտղոսով: Այնուհետև, երբ ռուսները նուաճեցին Գանձակը և

363 Յախումեան Ա., Նիւթեր ազգային պատմութեան, Արարատ, 1914, Դ, էջ 375:
364 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 252, Դիվան, V, Արցախ, էջ 65:
365 Присоединение Восточной Армении к России, т. II, с.124.
366 Ջալալեանց Ս., Կաթողիկոսք Աղուանից, Մատենադարան, ձեռ. 8066, էջ 62բ:
367 Շահխաթունեանց Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 348-349:

Ղարաբաղի խանութիւնները, Սարգիսը Հաղպատից գնաց Գանձասարի վանքը և նորից սկսեց գործածել կաթողիկոսական տիտղոսն ու կնիքը»[368]:

Սարգիս Հասան-Ջալալյանի Արցախ վերադառնալուց հետո, որպես Գանձասարի կաթողիկոս, նրա իրավունքները ճանաչվել են Շուշիի Մեհտի-Ղուլի խանի 1227 հ. թ. շավալ ամսի (1812 թ. 10 հոկտեմբեր-6 նոյեմբեր) հրովարտակով[369], որով խանը Արցախում էջմիածնի ազդեցությունը թուլացնելու նպատակ էր հետապնդում: Սակայն, «Ներսէս Աշտարակեցին, նշանակուելով Անդրկովկասի ռուսահպատակ հայոց առաջնորդ, իսկոյն ձեռնամուխ եղաւ վերջ տալու Աղուանից հինաւուրց կաթողիկոսութեանը: Եփրեմի և Ներսէսի այս մասին ունեցած բանակցութիւնները ռուսաց տէրութեան հետ կատարելապէս յաջողեցան և 1815 թ. Աղուանից Սարգիս կաթողիկոսը պաշտօնապէս հռչակուեցաւ որպէս միայն արքեպիսկոպոս կամ միտրօպօլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի»[370]:

Սարգիս Հասան-Ջալալյանին կյանքի մայրամուտին նոր փորձություններ էին սպասում: 1826 թ. հուլիսին պարսկական զորքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ներխուժում են Արցախ և պաշարում Շուշի բերդաքաղաքը: Շուշիի ռուսական կայազորը, գնդապետ Ի. Ռեուտի հրամանատարությամբ, և տեղի հայ բնակիչները հերոսական դիմադրություն են ցույց տալիս ահեղ թշնամուն: Ինչպես արդեն նշել ենք նախորդ ենթագլխում, հայերի վրա զայրացած Աբբաս-Միրզան պարգև է խոստանում իրեն բերված յուրաքանչյուր հայի գլխի համար: Աբբաս-Միրզայի բարկությունը մեղմելու նպատակով նրան են ներկայանում Սարգիս մետրոպոլիտը, Ջրաբերդի տիրակալ Մելիք-Վանի Աթաբեկյանը և Գյու-

368 Երիցեան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 251:
369 Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 194:
370 Երիցեան Ալ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 251-252:

լիստանի տիրակալ Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանը: Նրանց հաջողվում է մեղմել Աբբաս-Միրզայի բարկությունը: Սակայն, երբ Շամխորի և Գանձակի ճակատամարտերում ջախջախված Աբբաս-Միրզայի բանակը շպրտվում է Արաքսից այն կողմ, Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի հրամանով հայ երևելիները Ռուսաց կայսրության նկատմամբ անհավատարմության մեղադրանքով ձերբակալվում են: Մելիքներն ուղարկվում են Բաքու, իսկ Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիս, Ներսես Աշտարակեցու մոտ, որպեսզի վերջինս քննությամբ պարզի իրականությունը: Ա. Երմոլովի՝ 1826 թ. դեկտեմբերի 2-ին Ներսես Աշտարակեցուն հասցեագրած նամակում այդ մասին կարդում ենք. «Ես հրամայեցի ուղարկել նորան Թիֆլիզ իբրև մի մարդու, որ արժանի է խիստ պատժի: Այդ պատիժը կը սպասեմ ես ձերդ սրբազնութեան խստապահանջութիւնից, վասն զի դուք եք Հայոց ազգի հաւատարմական զգացմանց պահապանը»[371]: Մատենադարանի Լազարյանների արխիվում մենք հայտնաբերել ենք նաև Ա. Երմոլովի հրամանով Սարգիս մետրոպոլիտին Թիֆլիս ուղարկած գեներալ Վ. Մադաթովի՝ 1826 թ. դեկտեմբերի 12-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակի պատճենը, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Կատարելով այստեղի երկրամասի կառավարչապետ պ. Հետևազորի գեներալ և կավալեր Երմոլովի կամքը, պատիվ ունեմ Ձերդ Սրբազնության մոտ ուղարկելու Սարգիս արքեպիսկոպոսին: Նրա արարքների մասին, որոնց համար նա ուղարկվում է Ձեր մոտ, պ. կառավարչապետը իր վրա վերցրեց տեղեկացնել Ձերդ Սրբազնությանը: Իսկ ես իմ պարտքն եմ համարում հաղորդել, որ նրա վարմունքը այնքան անթույլատրելի էր, որ Նորին Գերա-

371 АКАК, т. VI, ч. I, с. 464. Այդ նամակի հայերեն թարգմանությունը տես Երիցեան Ալ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 253: Նշելի է, որ թեև այս վավերագրի կապակցությամբ Բ. Ուլուբաբյանը գրում է. «Երիցյանը չի նշում, թե որտեղ է պահվում նամակը» (տես Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 253, ծնթ. 1), սակայն մեզ հաջողվել է պարզել, որ այն այժմ պահվում է Մատենադարանի Լազարյանների արխիվում.-թղթ. 106, գ. 51, վավ. 112:

զանցությունը հրամայեց ինձ ուղարկման ժամանակ նրա նկատմամբ ունենալ խիստ հսկողություն, պահպանելով, սակայն, ողջ անհրաժեշտ հարգանքը նրա բարձր աստիճանի նկատմամբ, ինչը և իմ կողմից կատարվել է ճշգրտորեն»[372]: Այս նամակին կից բերված է նաև գնդապետ Ի.Ռեուտի 1826 թ. դեկտեմբերի 27-ի հրամանը՝ Սարգիս արքեպիսկոպոսին Թիֆլիս ուղարկելու կապակցությամբ ճանապարհին նրա վրա սահմանվելիք հսկողության կարգի մասին[373]:

Մեզ են հասել նաև կալանքի շրջանում Սարգիս մետրոպոլիտի հոգեկան ծանր ապրումների մասին վկայող մի շարք վավերագրեր: Այսպես, 1827թ. մայիսի 11-ի նամակով Հ. Ալամդարյանը հայտնում է Ներսես Աշտարակեցուն, թե «Սրբազան Սարգիս մետրապօլիտն մնացեալ կայ աստ ի վարանս, և բարւոք է աւուրբ միով յառաջ ուղևորել գնա աստէն»[374]: Իսկ մի քանի օր անց՝ մայիսի 20-ին, Աշտարակեցուն ուղարկած նամակում Սիմեոն արքեպս. Բզնունյանցը գրում է. «Սարգիս եպիսկոպոս մետրապօլիտն հիվանդ է, գիս թախանձանօք խնդրեաց, որ գրեմ սրբութեանդ. կամէ թէ յաջ քո լիս, և մի մոռանար գիս: Որքան ի մարմնի եմ սրբութեանդ երախտիքն չեմ մոռանալ, խնդրեմ օր մի յառաջ իմ վանքն ուղարկես գիս»[375]:

Ի վերջո, քննությունը լիովին ապացուցում է հայ երևելիների անմեղությունը, և նրանք, Սիբիր աքսորվելու փոխարեն, վերադառնում են հայրենիք[376]: Այդ առումով խիստ ուշագրավ է Մատենադարանում պահվող մեկ այլ փաստաթուղթ, որտեղ Խ. Լազարյանի հարցմանն[377] ի պատասխան Ներսես Աշտարակեցին հանգամանորեն նրան է ներկայացնում արցախցի

372 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 113:
373 Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 114:
374 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 193:
375 Նույն տեղում, թղթ. 57, վավ. 352:
376 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 111:
377 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 140, պատճենը տե՛ս Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 50:

երևելիների ձերբակալության հետ կապված երմոլովյան բանսարկությունները և բացահայտում մեղադրանքների անհիմն լինելը: Վավերագրում կարդում ենք. «Գրութիւնք վասն Սարգիս արքեպիսկոպոսին սուտ են բոլորովիմբ եւ անհիմն ըստ ամենայնի վասն խաչին եւ աւետարանին, եւ յորդորելոյ զժողովուրդն հայոց յանհաւատարմութիւն իւրոյ Կ. Մեծութեանն, եւ են այնոքիկ պատրանք ստաբանից, որով նորին բարձր գեբազանցութիւնն Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովն ըստ հասարակ սովորութեան իւրում պատրեալ այնպէս, նախ գրեալ էր առ իս, եւ հրամայեալ էր Կառավարութեան Ղարաբաղու յղել գնա առ իս վասն դատապարտութեան»[378]: Այն, որ Ա. Երմոլովը տեղում բարեհաճություն է ցույց տվել դեպի հայերը, բայց գաղտնի վաստաբանող նամակներ է գրել, ակնհայտ է դառնում Ա. Խուդաբաշյանի՝ 1827 թ. մարտի 30-ին Պետերբուրգից Ներսես Աշտարակեցուն ուղարկած նամակից, որտեղ կարդում ենք. «Հին կուսակալն թէպէտ առ ձեզ և առ ազգն մեր բարեհաճութիւն ցուցանէր, սակայն աստ զբաղում վաստաբանութիւնս գրէր»[379]:

Մենք պարզել ենք նաև Սարգիս մետրոպոլիտի Արցախ վերադառնալու կոնկրետ օրը: Այսպես, Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունյանցը 1827 թ. հուլիսի 4-ի նամակով Ներսես Աշտարակեցուն հայտնում է, թե «Սարգիս սրբազան արքեպիսկոպոսն ամսոյս 2-ին ճամբեցինք Ղարապաղ, գուբեռնաթն յանձնարարութիւն գրեց, սրբազան վեհն կօնդակ, հանդերձ չիչակլու փիլոն և չիչակլու կապայիվ զարդարեաց, մեծավ շնորհակալութեամբ գնաց»[380]: Մի փիլոն և մի կապա... Ահա անտեղի նվաստացման երկար ու ձիգ ամիսների փոխհատուցումը:

Բնականաբար, այս ամենը չէր կարող անհետևանք մնալ: «Ծերունի Սարգիս միտրոպօլիտի վրայ այդ բոլորը այն աստիճան բարոյապէս ազդեց, որ գնալով Գանձասար, նա անկողին

378 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 768:
379 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 54, թ. 1:
380 Նույն տեղում, թղթ. 57, վավ. 353, տե՛ս նաև թղթ. 55, վավ. 198:

մաս և յետագայ 1828 թուին վախճանուեց»[381]: Բաղդասար եպս. Հասան-Ջալալյանի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղած 1829թ. փետրվարի 15-ի նամակում գտնում ենք նաև Սարգիս Հասան-Ջալալյանի մահվան օրը. «Սրբազան Մետրապօլիտ Հայրն մեր՝ ի դեկտ. ամսեան ի 19-ին փոխեցաւ առ Աստուած, և եթող զմխիթարանութիւնս և զվանս մեր որբացեալ ի թշուառագոյն վիճակի սգոյ և տրտմութեան»[382]: Սարգիս Հասան-Ջալալյանի մահով փակվեց Գանձասարի կաթողիկոսության պատմության վերջին էջը:

* * *

Այժմ, օգտվելով Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկից, տեսնենք, թե ինչ եղան Հովհաննես և Սարգիս Հասան-Ջալալյանների մյուս եղբայրները և ինչ ժառանգներ թողեցին նրանք: Եթե այդ ազգաբանությունը, ինչպես տեսանք վերևում, Բաղդասար մետրոպոլիտի նախնիների մասով առանձին դեպքերում կարիք ուներ որոշ սրբագրումների, ապա նրա հորեղբայրների և հորեղբորորդիների մասով լիովին վստահելի է: Ներկայացնենք տոհմացանկի այդ հատվածը.

«Ա. Գաբրիէլ-բէկն ծնանի զԵրեմիա եպիսկոպոս և զԳրիգոր-բէկ: Գրիգոր-բէկն ծնանի զՋալալ-բէկ Ե և զդուստր Խորիշահ: Ջալալ-բէկ Ե ծնանի զՍարգիս-բէկ և զՄինա-խաթուն դուստրն:

Բ. Միխայէլ-բէկն ծնանի զԱպրես-բէկ և զԱսլան-բէկ: Ապրես-բէկն ծնանի զԱթաբէկ Գ, զԳրիգոր-բէկ և զՋաւատ-բէկ: Աթաբէկն ծնանի զՄովսես և զայլս: Գրիգոր-բէկն ծնանի զԻվանէ և զայլս:

[381] Երիցեան Ալ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 256:

[382] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 19, բնագիր, կամ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 56: Ի դեպ, Բաղդասար եպիսկոպոսը իր հորեղբոր հիշատակին կաթողիկոսին նաև հինգ ոսկի է ուղարկել (տես նույն տեղում, թղթ. 62, վավ. 26, բնագիր):

Դ. Ջալալ-բէկն ծնանի զԱթաբակ, զԱռստամ-բէկ և զԽորիշահ դուստր: Առստամ-բէկն ծնանի զՆապի և զայլս, որք գտանին ի Բոլնիս:

Ե. Ալլահղուլի-բէկն ծնանի զԱռուշան-բէկ և զՋհանգիր-բէկ: Առուշան-բէկն ծնանի զերիս որդիս, որք գտանին ի Բոլնիս»:

Եվ, վերջապես, «Դանիէլ-բէկն ծնանի զԲաղդասար միտրոպոլիտ և զՄէլիք Ալլահվերդին Բ Խաչենոյ գաւառին»[383]: Նրա կնոջ անունը Հռիփսիմե էր:

Ջալալ-բեկը և Բաղդասար մետրոպոլիտի հայր Դանիել-բեկը 1791 թ. սպանվել էին Իբրահիմ խանի կողմից: Ինչպես երևում է տոհմացանկից, Ջալալ-բեկի և նրանց մյուս եղբայր Ալլահղուլի-բեկի ժառանգների մի մասը 1797-1798 թթ. արցախահայության գաղթից հետո մշտական բնակություն էին հաստատել Բոլնիսում:

Բերված տոհմացանկում չկան տվյալներ միայն Իսրայել-բեկի ժառանգների մասին, որոնց համար էլ, ըստ երևույթին, նախատեսված է եղել ցուցակում բացակայող «Գ» թվահամարը: Սակայն, Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկի արխիվային տարբերակում Իսրայել-բեկի ժառանգների մասին կա մի փոքրիկ ծանոթություն. «Հանգուցեալ Իսրայէլն ունի կենդանի արու ժառանգս 2. մին աշխարհական է ի Մօզդօք»[384]: Կից բերված տոհմաշղթայում գտնում ենք նաև նրանց անունները՝ Հովսեփ վրդ. և Գևորգ-բեկ, ընդ որում վերջինս ունեցել է Իվանե անունով որդի[385]: Գանձասարի վանքի հյուսիսային պատի տակ գտնվող մի տապանաքարի արձանագրությունից տեղեկանում ենք, որ.

«Այս է տապան Յուսէփ վարդապետին,
որ է յազգէն Ջալալ Մեծ իշխանին,

[383] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 125-126:

[384] ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

[385] Նույն տեղում, թ. 22:

որդի Իսրայէլ-բէկին, թվ. ՌՅԺԲ (1863),
դան Արցախական աշխարին»[386]:

Մենք ճշտել ենք նաև Հովսեփ վարդապետի ծննդյան թվականը: Պահպանվել է Բաղդասար մետրոպոլիտի կողմից 1838 թ. նոյեմբերի 26-ին կազմված Ղարաբաղի վիճակի մենաստաններում և վանքերում բնակվող վանականների մի ցուցակ, ըստ որի այդ թվականին Հովսեփ վրդ. Հասան-Ջալալյանը եղել է 55 տարեկան[387], այսինքն՝ նա ծնվել է 1783 թ.:

Բնականաբար, Իսրայել-բեկի Մողոլում բնակվող աշխարհական որդին էլ Գեորգ-բեկն էր:

Ինչպես երևում է վերոբերյալ տոհմացանկից, Մելիք-բեկի որդիները թողել են բազմաթիվ ժառանգներ, սակայն նրա թոռներից առավել նշանավորները Դանիել-բեկ յուզբաշու որդիներն էին՝ Բաղդասար մետրոպոլիտը և Մելիք-Ալլահվերդի Բ-ը: Վերջինիս «յետին Գեորգի արքայն վրաց, ի 1800 ամին Քրիստոսի հրովարտակաւ իւրով չնորհեաց սեփհականութեամբ 69 գերդաստանս Խաչէնեցիք, գաղթեալսն ի նահանգին Վրացտանու և վերաբնակէլոցն ի Սոմխէթ գաւառին ի Պօլնիս գիւղն»[388]: Հետագայում այդ գերդաստանների թիվն ավելացել է Արցախից Վրաստան գաղթած և այդ թոհուբոհի մեջ Գյուլիստանի Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի իշխանության տակ հայտնված խաչենցիների հաշվին: Մատենադարանում պահվում է Մելիք-Աբովի՝ 1802 թ. սեպտեմբերի 26-ի ծանուցագիրը, որով նա իր իշխանության տակ հայտնված խաչենցիների նկատմամբ ավատական իրավունքները հանձնում է Սարգիս Հասան-Ջալալյանին: Ծանուցագրում կարդում ենք.

«Ինձ՝ Մէլիք Աբօվիս մօտն Ղարաբաղու բերած կամ Երէվանու բերած մին փարայ տուն կար, որ մինչի այսօր տէրութին էի անում: Բայց որբաղան Սարգիս վարդապետն դուս

[386] Դիվան, V, Արցախ, էջ 69:
[387] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 71:
[388] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

եկաւ, թէ Խաչանու ըռաեաթն իմն է և մենք էլ առաջնոց յատկապէս տեղեակ ենք, որ այս Սարգիս վարդապետիս հայրն կամ ազգն Խաչանու մհալին մէլիքութիւն արած են այս սապաբօփս (պատճառով-Ա. Մ.):

Ձի ահայ թարիղումս գերազանցագունեղ Պէտր Իվանիչ Կաւալցգուն մարիփաթօվն և մեր մեծ եղբայր իշխան Մէլիք Ջիմշիտին մարիփաթօվն վեր առինք, որչափ որ Խաչանեցի իմ մօտս տուն կար գվի Սարգիս վարդապետին իմ կամաւ և յօժարութեամբ, որ զայս վերոյ գրեալ տանէրիս տէրութիւն անէ, էլի այսուհետև իմ բան չի լինի»[389]: Հենց այս խաչենցիներն էլ Սարգիս արքեպիսկոպոսի հորդորներով որպես իրենց մելիք ընտրել են Ալլահվերդուն: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ կան գեներալ Պ. Ցիցիանովի՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Հովհաննես Գեղարդակրին գրած 1805թ. մարտի 2-ի նամակում, որտեղ կարդում ենք. «Ղարաբաղցիքն Խաչէնցիք գանգատ են անում, որ երբ նոքա հայքն տուին ինձ արզայ և գանգատ են անում, որ երբ նոքա Ղարաբաղէմէն եկան Վրացտանումն, յայնժամ ցան և ցիր էին Վրացտանումն այլ և այլ տեղերումն. յետոյ հաւաքվել են մինչև 80 տունն նոքա, յայնժամ Սարգիս արքեէբն կոչեաց զնոսա առ ինքն և ասաց նոցա, թէ որովհետև ի մէջ նոցա ոչ վորութիւն կայ մէլիքի ընտրելոյ, վասն այսորիկ չարժէր զնոսա ի կլիս, որ ընտրեսցեն յիշեալ հայքն զեղբայրն նորա զԱլավերդը և խոստացեալ է նոցա տալ վասն այնորիկ զձիս, եզինս և երկու հարիւր թուման փող»[390]: Թող մեզ չշփոթեցնի այն հանգամանքը, որ նամակում գեն. Ցիցիանովը Մելիք-Ալլահվերդուն ներկայացնում է որպես Սարգիս արքեպիս-

[389] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 42, պատճենը տես նույն տեղում, վավ. 148, նաև՝ Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 239: Մելիք-Ջումշուդը, որպես վկա, վավերագրի վրա թողել է իր կնիքն ու ստորագրությունը. «Մէլիք Ջիմշիդ Մէլիք Շահնազարեանն ա ես գիրել՝ գիրիս վըկայ եմ»:
[390] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 16, վավ. 41, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 350բ, նաև՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 2:

կոպոսի եղբայր: Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկով տեսանք արդեն, որ Սարգիս արքեպիսկոպոսը Ալլահվերդի անունով եղբայր չի ունեցել, և մելիք ընտրվողը նրա եղբայր Դանիել-բեկի որդին էր և հենց Բաղդասարի եղբայրը: Այս հարցում, բնականաբար, Բաղդասար մետրոպոլիտը երբեք չէր շփոթվի: Այս փաստաթղթերը գալիս են ապացուցելու, որ Արցախից Վրաստան գաղթած խաչենցիները, ի դեմս Մելիք-Ալլահվերդու, այնտեղ ունեցել են իրենց մելիքը:

Մելիք-Ալլահվերդին վախճանվել է 1827 թ., թողնելով չորս որդի՝ Երեմիա քահանա, Մովսես վարդապետ, Աբրահամ-բեկ և Հովսեփ-բեկ: Մելիք-Ալլահվերդու մահով Հասան-Ջալալյան տոհմի մելիքությունը ավարտվեց: Մովսես վարդապետը վախճանվել է 1849 թ., ինչպես վկայում է Գանձասարի վանքի հյուսիսային պատի տակ գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը.

«Այս է տապան Մոսէս խաչակիր վարդապետին,
որ է ազգէն Ջալալ Դոլին,
որ է որդի Մէլիք Ալավերտին,
եւ եղբայր էր խաչակիր Երեմիա քահանային.
1849 թվ.»[391]:

Ըստ Բաղդասար մետրոպոլիտի՝ 1838 թ. նոյեմբերի 26-ին կազմած Ղարաբաղի վիճակի վանքերում բնակվող վանականների մեջ ծանոթ ցուցակի, այդ թվին Մովսես վրդ. Հասան-Ջալալյանը եղել է 30 տարեկան[392], այսինքն՝ նա ծնվել է 1808 թ.:

Իսկ Մելիք-Ալլահվերդու որդի Երեմիա քահանան թողել է վեց զավակ՝ Վախթանգը, Ջալալը, Շամիրը, մյուսների անունները Բաղդասար մետրոպոլիտը չի նշում: Ջալալի կնոջ անունը եղել է Աքերնան, ինչպես վկայում է Հասան-Ջալալյանների տոհմական հանգստարանում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը.

[391] Դիվան, V, Արցախ, էջ 69:
[392] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 72:

«Այս է տապան Աքէրնանին,
Կողակից Ջալալ բէկ Հասան
Ջալալեանցին յիշատակ է ար-
ձանս կրտսեր որդի Մարտիրոս
բէկեն վախճանվեց 1899 թվին
68 ամաց»[393]:

Աբրահամ-բեկն ունեցել է երկու որդի՝ Մելիք-բեկը և Ալլահվերդի-բեկը: Մելիք-Ալլահվերդու կրտսեր որդի Հովսեփ-բեկը ևս թողել է երկու որդի՝ Վելիջան-բեկը և Դանիել-բեկը[394]:

* * *

Դանիել-բեկի մյուս որդին՝ Բաղդասար մետրոպոլիտը, ծնվել է 1775 թ. հունվարի 12-ին, Գանձասար գյուղում: Մկըրտությունն ու կրթությունը ստացել է Գանձասարի վանքում: 1796 թ. Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցում Գանձասարի Սարգիս կաթողիկոսից ստացել է սարկավագության աստիճան, իսկ 1798-ին նույն եկեղեցում ձեռնադրվել վարդապետ: Մեր նպատակների մեջ չի մտնում այս հայրենանվեր հոգևորականի գործունեությունը ներկայացնելը, մանավանդ որ ժամանակին նրա մասին ուշադրավ հոդված է հրապարակել Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյանց)[395]: Այստեղ միայն արխիվային նյութերի օգնությամբ կներկայացնենք նրա գործունեության որոշ դրվագներ:

Սարգիս մետրոպոլիտի մահից հետո 1828 թ. դեկտեմբերի 25-ին Շուշիում գրված համախոսականով Արցախի երևելիները խնդրել են Եփրեմ կաթողիկոսից հանգուցյալ Սարգիս արքեպիսկոպոսի փոխարեն մետրոպոլիտ կարգել Բաղդասար եպիսկոպոսին: «Վստահանամք ամենախոնարհաբար խնդրել ի

[393] Այդ մասին մեզ տեղյակ է պահել Ս. Հասան-Ջալալյանը:
[394] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 126:
[395] Տէր-Յովհաննիսեանց Գ., Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, «Փորձ», 1880, թիւ 5, էջ 131-164:

Վեհափառ Տէրութենէ ձերմէ,-կարդում ենք համախոսականնում,-այսու նորոգ մահսարագրութեամբ մերով. զխոհեմագարդ և յիրաւի արժանին պատուոյ Միտրապօլտութեան երկրիս մերոյ՝ զՊաղտասար յարգոյ եպիսկոպոսն՝ կարգել ի տեղի վերափոխեալ Սրբազան արքեպիսկոպոսին Սարգսի Հասան-Ջալալեանի իբրև զորդի փոխանակ հօր»[396]: 1830 թ. Եփրեմ կաթողիկոսը նրան նշանակել է Արցախի մետրոպոլիտ:

Բաղդասար մետրոպոլիտը իրեն հատուկ եռանդով խակույն ձեռնամուխ եղավ Գանձասարի վանքապատկան կալվածքները զանազան թուրք բեկերի և անկոչ քոչվորների ձեռքից հետ վերցնելուն, որոնք, օգտվելով Արցախի մելիքների և Սարգիս Հասան-Ջալալյանի տևական բացակայությունից, հետզհետե տիրացել էին այդ հողերին: Մատենադարանում պահվում են այդ վեճերի մասին վկայող մի շարք փաստաթղթեր, որոնցից այստեղ քաղվածաբար բերում ենք միայն երկուսը: Այսպես, Արցախի պարետ մայոր Նիկոլայ Ռեյտերը 1833 թ. մայիսի 24-ի գրությամբ արգելել է Գանձասարի վանքին պատկանող հողերի վրա ապօրինի ցանքս կատարելը՝ խստորեն պատվիրելով, որ «էլի այսուհետև անկարգ բան չի առնեն, ով որ վանքին մուլքումն կամենա վար անել սրբազան Պաղտասար արքեպիսկոպոսին հրամանաւն եւ գիտութեամբն լինիցի վարն նոցին՝ եւ ճշմարտութեամբ նորա բահրէն տան»[397]: Իսկ Արցախի նոր պարետ մայոր Բարաթովը 1834 թ. օգոստոսի 30-ի գրությամբ նայիբ Ռուստամ-բեկին կարգադրել է հեռացնել Գանձասարի վանքապատկան հողերի վրա բնակություն հաստատած քոչվորներին. «Սրբազան Բաղդասար մետրապօլիտն ինձ գիր գիրելով յայտնում է, թէ Քօլանի մհալէն Քօլանի Քարամլու թայֆիցն հինգ տուն վանքին թալիղ կուզլակ տափումն ձմեռն կենում էն եւ Տեառն մետրապօլիտն

[396] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 186, բնագիր:
[397] Նույն տեղում, թղթ. 79, վավ. 277, պատճենը տես Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 117:

էս բանիս բռապի չէ, վասն որոյ ձեզ հրամայեմ էս թալղաս հանեալ ռհալթին էն տնէրն մի ըստ միջէ քօչացնեք եւ իւրեանց էլիկլին (ազգին-Ա. Մ.) մեջն յղէք եւ զատ-զատ անէք, որ ոչ ոք չի կարողանան վանքի թալիղ տափերումն վէր կան»[398]: Կարծում ենք, պարզ է, թե ինչ կարող էր լինել, եթե ժամանակին անկոչ վրանաբնակները չհեռացվեին այդ հողատարածություններից: 20-րդ դարը մեզ օրինակների պակաս չի թողնում:

Բաղդասար մետրոպոլիտի մյուս հիշարժան ծառայությունն էր «Խօթավանից մեծամեծ և ընդարձակ կալուածներն ու յափշտակուած սեփհականութիւններն ազատելը Մեհտի- Գուլի խանի դստեր և ուրիշ պարսիկ բէգէրու ձեռքից»[399]: Կատարած գործի գիտակցությամբ նա 1852 թ. փետրվարի 1-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին գրում է. «Զվանօրայսն՝ զրկեալ ի կալուածոց, զորս անչափ աշխատութեամբ և մեծամեծ ընծայիւք ի ձեռս եմ բերեալ և բերեմ հետզհետէ»[400]: Ի վերջո, Բաղդասար մետրոպոլիտին հաջողվեց իր եռանդուն գործունեության շնորհիվ զանազան թուրք բեկերի ձեռքից հետ վերցնել Արցախի վանքապատկան կալվածքների մեծ մասը:

1836 թ., երբ հաստատվել են կոնսիստորիաները, Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին նրան նշանակել է Արցախի թեմի առաջնորդ, իսկ 1837 թ. որպես առաջնորդ հաստատվել է Շուշիում և շարունակել իր հայրենանվեր գործունեությունը: Անուրանալի են նրա ծառայությունները նաև դպրոցաշինության և գրատպության[401] ասպարեզներում:

[398] Նույն տեղում, թղթ. 83, վավ. 232, պատճենը տես Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 121:
[399] Տէր-Յովհաննիսեանց Գ., նշվ. աշխ., «Փորձ», 1880, թիւ 5, էջ 159:
[400] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 476, բնագիր:
[401] Բ. Հասան-Ջալալյանի հրատարակչական գործունեության մասին տես Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Ե., 1969, էջ 16-19, նույնի՝ Ղարաբաղի մամուլի պատմություն, Ե., 1989, էջ 29-35, նույնի՝ Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, էջ 102-106: Նրա հրատարակած գրքերից նշենք միայն Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից» մատենագրական երկը (Շուշի, 1839):

Բաղդասար Հասան-Ջալալյանի բեղմնավոր գործունեությունն ի նկատի ունենալով Լազարյան եղբայրները նրան ընտրել են Լազարյան ճեմարանի խորհրդի անդամ: Այդ մասին տեղեկանում ենք Լազարյան եղբայրների` 1843 թ. ապրիլի 6-ի նրան հասցեագրված նամակից. «Խորհրդակցեալ դր. ընդ առաջին անդամայ և կառավարչի կարգաց ճեմարանիս Պայծառափայլ Գրաֆ Պէնկենդորֆի, կարգեալ եմք ի յաւէտ լուսաւորութիւն նորին կարգաց գրաւոր անդամս յերևելի արժանանձնութեանց ազգի մերոյ, արդ` նորին խորհրդով կամեցեալ մեր պարաւանդեալ եմք նաև զոմանս ի նախամեծար սրբազնութեանց ազգի մերոյ, ընդ այնմ և Բարձր սրբազնութիւն ձեր, որովհետև մեծարելի եք ի շարս նոցունց և իսկ ազգային վիճակաւոր բազմաթիւ հայկազնէից այնոցիկ կողմանց և մետրապոլիտ»[402]:

Բաղդասար մետրոպոլիտը ծավալել է նաև նշանակալից շինարարական-վերանորոգչական գործունեություն: Պահպանվել է նրա` 1850 թ. մայիսի 27-ի դիմումն ուղղված արցախահայությանը, որով նյութական օժանդակություն է խնդրել Գանձասարի տանիքը և Ամարասի վանքը վերանորոգելու համար: «Հոգք իմ և մտածմունք, յաւուրս ծերութեան իմոյ և հիւանդութեանս, այն է առաւելապէս,-կարդում ենք նամակում,-զի տանիք սրբոյ տաճարի վանիցն Գանձասարայ և վանքն Ամարասայ վերանորոգեսցին` ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և անուան օրհնեալ ազգիդ Հայոց, հարազատ որդւոցդ սրբոց ազգային վանօրէից և եկեղեցւոյ»[403]: Նույն թվականի հունիսի 2-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին ուղղած նամակում` նրանից քաջալերական կոնդակ ստանալու անհրաժեշտության վերաբերյալ, Բաղդասար մետրոպոլիտը այսպես է ներկայացրել հայության սրբավայրերի անմխիթար վիճակը. «Ես ի վաղուց հետէ ի մտածման և ի մտատան-

[402] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 125, գ. 30, վավ. 68:
[403] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 590, թ. 2:

ջութիւնս վարանէի ի մասին կարկատանաց հռչակաւոր վանօրէիցն Աղուանից-Գանձասարայ և սրբոյն Գրիգորիսի, որ յԱմարաս, որոց երկաքանչիւրոց տանիքն գրեթէ իսպառ սալաթափ են եղեալ, յորմէ և անձրևաջուրք կաթին և անցանեն ի մէջ սրբոց տանցն, որ նշան է իսպառ կործանման նոցին ո՛չ յետ բազում ինչ ժամանակաց»: Այնուհետև Բաղդասար մետրոպոլիտը Ներսես Աշտարակեցուն տեղեկացնում է, որ ժողովրդական լայն խավերի աջակցությամբ արդեն ձեռնամուխ է եղել այդ վանքերի վերանորոգման աշխատանքներին: «Առաքեցի արդէն ի վանսն Գանձասարայ զՀմուտ ճարտարապետս,-գրում է նա,-որք և սկզբնաւորէն այժմէն պատրաստել զկարևոր նիւթս կարկատանաց տանեաց այնորիկ և սկիզբն առնել շինութեանն: Ի սկզբնաւորութիւն շինութեան կարկատանաց սրբոյ վանիցն Ամարասայ նոյնպէս ձեռն արկից յետ սակաւ միջոցի»[404]: Միայն Գանձասարի վանքի տանիքի վերանորոգման համար Բաղդասար մետրոպոլիտի անձնական միջոցներից և ժողովրդի նվիրատվություններից ծախսել է մոտ 5000 ռուբլի:

Հարկ է նշել, որ ծերունազարդ հոգևորականը իր պարտքն է համարել անձամբ հետևել Գանձասարի վերանորոգման աշխատանքներին: Այդ մասին նա գրում է 1851 թ. հուլիսի 26-ին Շուշիից Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին ուղղած նամակում. «Յամսեանն մայիսի եղեալ իմ ի բերդաքաղաքէն Շուշւոյ ժամանեցի ի վանսն Գանձասարայ, և կացեալ անդանօր իբրև ամիսս երկուս` այժմ վերադարձայ այսր: Պատճառն դիմելոյ իմ անդր ի սուրբ վանսն այն էր, զի թէպէտ ամենայն երթևեկ անձինք գային և վկայէին ինձ զվերանորոգութենէ նորին, ասելով, թէ` արժանաւոր մշակութեամբ, հաստատութեամբ և ամրապինդ ճարտարութեամբ շինեն զկաթուղիկէ դմբէթն, սակայն և ես առ ի փարատել զտարակուսութիւնս իմ ընդ այնպիսի ասութիւնս` ինքնին կամեցայ անձամբ

[404] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 151, վավ. 16ա, նաև` 16բ:

անձին գնալ և տեսանել զշինութիւնն զայն, զոր և ներկայացեալ անդր աչօք իմովք տեսի և նկատեցի. զի արդարև ամենայն ամրութեամբ և հաստատուն ճարտարութեամբ է սկզբնաւորեալ շինութիւնն և շարունակի»[405]: Հատկանշական է, որ Ներսես Աշտարակեցուն ուղղած իր մեկ այլ՝ 1848 թ. սեպտեմբերի 1-ի նամակում Բաղդասար մետրոպոլիտը այսպես է ներկայացնում իր հավատամքը. «Նուիրեալքն ի վանականութիւնս, որպէս վասն ժողովրդոց, նոյնպէս և վասն վանացն սրբոց, որում ընծայեցին զանձինս, պարտին յամենայն ժամ ջանալ և աշխատել առ ի պահպանել զնոսին ի չքեղ կացութեան»: Այդպիսի նվիրումով էր կապված Բաղդասար մետրոպոլիտը իր սիրելի Գանձասարի հետ: Նույն նամակը շարունակվում է այսպիսի տողերով. «Ջանացեալ եմ ցվերջին կարողութիւնս իմ առ այնս և այնու ճգամբ յաւելացուցեալ զքանի քանի կալուածս, և զագարակս, և զքարահանքս ի տաճկաց բռնութենէ, թէ՛ զօրութեամբ նոցին իսկ տաճիկ իշխանաւորաց և թէ՛ հրամանաւ օրհնաբանեալ Տէրութեանն Ռուսաց, ի վերայ որոց ծախելով զբազում գումարս անձնական դրամոց»[406]: Այս տողերը լավագույնս են բնութագրում Արցախի առաջին թեմակալ առաջնորդի ողջ գործունեությունը: Բաղդասար մետրոպոլիտի կյանքը իր հավատավոր հոտին անմնացորդ նվիրվածության մի հիանալի օրինակ է:

Բաղդասար Հասան-Ջալալյանը վախճանվել է 1854 թ. հունիսի 27-ին և թաղվել Գանձասարի վանքի գավթում, իր հորեղբայրների՝ Հովհաննես և Սարգիս կաթողիկոսների կողքին: Նրա շիրմաքարը կրում է հետևյալ արձանագրությունը.

«Այս է տապան մետրապօլտին,
Բաղտասարայ մեծի արհին,
Կայսերպսակ հով[վ]ապետին,
Տանս Աղուանից հայոց ազգին,
Յազգէն Ջալալ մեծ իշխանին.
Տեառն Արցախական աշխարհին:
Թվին ՌՅԳ: 1854. յուլիսի»[407]:

Հասան-Ջալալյան տոհմի բազմադարյան ընթացքի լավագույն վկայությունը կարող է լինել Բաղդասար մետրոպոլիտի տոհմացանկի արխիվային տարբերակի վերջաբանը, որով էլ ցանկանում ենք եզրափակել սույն ենթագլուխը. «Այլև թէ ի պարհին պարսից արքայից և թէ նոցին յաջորդաց արքայիցն պարսից բաց ի յերկոտասան շնորհեցեալ փէրմանաց, ազգին Հասան Ջալալեանց. Հասան Ջալալեանքն ևս ունեն ստացեալ Հերակլ արքայէն վրաց, և Անտօն պատհրովարտակք 2-[րդ] Հերակլ արքայէն վրաց, և Անտօն պատրիարքէն վրաց, և յետին (իմա՝ վերջին-Ա.Մ.) Գեօրգի արքայէն վրաց, և յայսկոյս Կովկասու տիրապետող բէգլարբէգի հին և նոր խանաց և խաներաց, մինչև քսան թալիղայս վասն հնութեան, հաստատութեան, պատւոյ և արժանաւորութեանն յազգականացն Հասան Ջալալեանց, թէ ի հոգևորականաց և թէ յաշխարհակա[նա]ց նոցին. սկսեալ ի 1438 ամէն Քրիստոսի, և ի 866 (1461/1462) թուականէն մահմեդականաց[408] մինչև ի 1261 (1845) թիւն մահմեդականաց»[409]:

Այս տողերը ինքնին մի պերճախոս վկայություն են Հայոց Արևելից կողմանց կյանքում Հասան-Ջալալյանների ունեցած մեծ դերակատարության:

[405] Նույն տեղում, թղթ. 113, վավ. 586, թ. 5:
[406] Նույն տեղում, թ. 3:
[407] Դիվան, V, Արցախ, էջ 65:
[408] Խոսքը Կարա-կոյունլու Սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում-խաթունի 866 հ. թ. զիկաադա ամսի 10-ի (1462 թ. օգոստոսի 6) հրովարտակի մասին է՝ տրված Գանձասարի Յովհաննես կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները (տես Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ I, էջ 45-47): Ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 197:
[409] ՅԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

Ե) ՎԱՐԱՆԴԱ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Վարանդա գավառի մելիքության տարածքը սկսվում էր Կարկառ գետից և տարածվում մինչև Քիրս-Դիզափայտ լեռնագոտին: XVII դարի սկզբից Վարանդա գավառի տիրակալներն էին Մելիք-Շահնազարյանները, որոնց իշխանանիստը Ավետարանոց (Չանախչի) բերդավանն էր: Այստեղ «ժամանակին երեք մելիքական ապարանքներից բաղկացած պալատական համալիր է եղել, որոնցից միայն մեկն է հատվածաբար մեզ հասել»[410]: Սույն ենթագլխում համառոտ ներկայացված են Մելիք-Շահնազարյանների ազգաբանությունը և տոհմածառը:

Միջնադարյան Հայաստանի և Վրաստանի կյանքում մեծ դերակատարություն ունեցած Զաքարիա սպասալարի ու Իվանե աթաբեկի քույր Դոփից առաջացած Դոփյան իշխանական տոհմից է XVI դարի սկզբում սերվել Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմը, որի ներկայացուցիչ Միրզաբեկը XVII դարի սկզբին բնակություն է հաստատել Վարանդայի Ավետարանոց գյուղում և այնտեղ սկիզբ դրել Մելիք-Շահնազարյանների տիրապետությանը:

Վարանդայի Ավետարանոց գյուղում Միրզաբեկի հաստատվելու մասին Ս. Ջալալյանցը գրում է. «Վերանորոգող մեծաշէն գիւղաքաղաքիս եղև մէլիք Միրզաբէգ որդի մելիք Մէլիքբէգի, թոռն Ապովայ տեառն Գեղամայ, եղբայր Շահնազարայ՝ տեառն Գեղարքունւոյ, քանզի ի զօրանալ Կովկասական ասպատակաց և յարձակիլ ի վերայ նահանգին Գեղամայ ի թուին Հայոց ՌԼԱ (1582), որպէս երևի ի տապանագիրս այնր գաւառի թէ «ի փոխիլ Ղուզիլբաշին Տաղստանայ Լեկզին՝ որ գաւառս աւերեցաւ թվին ՌԼԱ-ին»: Այնուհետև սկիզբն եղև աւերանաց բարեբեր աշխարհին Գեղամայ. վասն որոյ և բնակիչք նորա անձապարեալ անկան յամուրս Արցախու և Գարդմանայ, յայնժամ և Մէլիքբեգ ընտանեօք իւրովք էջ ի գիւղն Աւետարանոց»[411]: Հետագայում այս տեսակետը գրեթե նույնությամբ կրկնել է նաև Մ. Սմբատյանը[412]:

Այն, որ Մելիք-Շահնազարը ունեցել է Միրզաբեկ անունով կրտսեր եղբայր, ակնհայտ է դառնում Կ. Տեր-Մկրտչյանի հրատարակած հետևյալ հիշատակարաններից.

«Դարձեալ յիշեցէ՛ք զպարոն(այց պարոնն և զիշխանայ) յիշխանն զմելիք Շահնա(զարն) և զհայրն իւր զՄելիքբէկն և զմայրն իւր զպարոն Խաթունագէն և զկենակիցն իւր պարոն Ցախարի(ջահ)անն և զյիշխանատիպ որդիքն իւր՝ զՀախնազա(րբէ)կն, զէսայբէկն և զԴիլանջի բէկն և զԲամալբէկն և զԱվրիբէկն, և զդուստրն իւր զԽաթունաղէն, և զփոխեցեալսն առ Աստուած՝ զպարոն տէր Յոհանէսն և զպարոն տէր Տէրունն և զԹահիրն և զՇիրինպաջին, և զհամեստ հարսունքն իւր՝ զպարոն Վախախն և զԹաճումաղէն և զԱզայ-սուլթանն, և զնորաբողբոջ որդիքն, թոռն իւր զՆազզին, և զհարազատ եղբայրսն իւր՝ զպարոն Ատիբէկն, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, և զԴաւլաչայրէկն և որդին իւր զԼաւանդբէկն, և զՄիրզաբէկն, և որդի իւր զԲագրխանն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր...»:

«Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զպարոնաց պարոնն և զյիշխանաց յիշխանն՝ զՄէլիք Շահնազարն և զհայրն իւր զՄէլիքբէկն և զմայրն իւր զԽաթունաղէն և զկենակիցն իւր զպրն Ցախարիջահանն և զյիշխանազարտիպ որդիքն իւր՝ զՀախնազարբէկն և զէսայբէկն և զԴիլանջի բէկն և զԲամալ բէկն և զԱվրի բէկն, և զդուստրն իւր զԽաբէկն, և զփոխեցեալսն առ Աստուած՝ զպրն Տէր Յհէնէսն և զպրն Տէր Տէրունն և զԹահիրն և զՇիրինպաջին. և զհամեստ հարսունքն իւր՝ զպրն Վախախն և զԹաճումաղէն և զԱզայսուլթանն. և զնորաբողբոջ թոռն իւր զպրն Նազզին. և զհարազատ եղբայրսն իւր՝ զպրն Ատիբէկն, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Աստուած, և զԴաւլաչայ բէկն և զորդին իւր զԼաւանդ բէկն. և զորդին իւր զՄիրզաբէկն և որդին իւր զԲագրխանն. և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր...»[413]:

[410] Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, էջ 89:

[411] Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, էջ 247:
[412] Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 810:
[413] Տեր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 189-190, 194:

Սակայն Կ. Տեր-Մկրտչյանը մերժել է Ա. Ջալալյանցի առաջարկած 1582 թվականը՝ հիմնավորելով, որ թեև վերջինս «Միրզայ բէկի տեղափոխութիւնը Սոթքից Վարանդայ եղած համարում է 1582 թուին, երբ Լեկզիք արշաւել աւերել են Գեղարքունիքը, և այն ժամանակից սկսուել է այդ գաւառի աւերումը և բնակիչների ցիրուցան լինելը: Սակայն նորա յիշած արձանագրութիւնը, որի հիման վրայ նա այդ թուին աւերուած է համարում Գեղամայ երկիրը, մենք ոչ մի տեղ չենք գտնում և տեսանք ընդհակառակն, թէ դեռ 1606 թուին ինչպէս շէն էր այդ գաւառը, կամ Միրզայ բէկի հօր տունը: Այլ և Ծարեցու պատմելով սակալի սով էր այդ թուին Վարանդայում, և ուրեմն աւելի շուտ այնտեղից մարդիկ կփախչէին, քան թէ Միրզաբէկի պէս մի մեծատուն իշխան այնտեղ կերթար: Շատ աւելի հաւանական է, որ նորա տեղափոխութիւնը կատարուած լինի նոյն 1603 թուին, երբ Մէլիք Շահնազարն էլ ստիպուած էր Ծարում ապաստան գտնել»[414]:

Վերջին վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պատմիչ Հովհաննեսիկ Ծարեցին 1572-1600 թթ. անցքերն ընդգրկող իր ժամանակագրության մեջ, ցնցող գույներով նկարագրելով Վարանդա գավառում 1579-1580 թթ. տեղի ունեցած սովը[415], ոչինչ չի հաղորդում նման մի տեղափոխության մասին:

Իսկ ահա 1603 թ. տեղի ունեցած այդպիսի մի տեղաշարժի մասին վկայություն, իրոք, գտնում ենք Դավիթ եպիսկոպոսի հիշատակարանում. «Յորժամ եղև գարուն, այս բարեմիտ և իմաստուն իշխանս պարոն Մէլիք Շահնազարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մըտցուք յամուրս, զի մի՛ լիցուք կոխան այլազգաց» և ինքն գնաց

414 Նույն տեղում, էջ 133-134:

415 «Ճռաքաղ», Մոսքուա, 1859, տետր Գ, էջ 73-75, Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 608-611, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, Ե., 1956, էջ 242-244:

ի Ծար և ի Տպէլ: Եւ որք զհետ նորա գնացին, զերծան ի սրոյ և ի գերութենէ այլազգեաց»[416]: Տպէլի տեղադրության հարցը պարզած Ա. Հակոբյանը և Հ. Սիմոնյանը ենթադրում են, որ «Մելիք-Շահնազարը ամենայն հավանականությամբ հետապնդումներից խուսափելու համար նախ անցել է Ծար, ապա երբ վտանգը ավելի է սաստկացել՝ Տուտխունի հովիտը՝ Տպէլ»[417]: Հավանաբար այդ ժամանակ էլ Մելիք-Շահնազարի եղբայր Միրզաբեկը հաստատվել է Վարանդայի Ավետարանոց գյուղում: 1606 թ. Շահնազարը նոր էր մահացել, որ շահ Աբաս Ա-ը այցելեց մելիքանիստ Մեծ Մազրա, հյուրընկալվեց Շահնազարի որդիներ Օրխի (Յավրի) ու Քամալ-բեկի կողմից, հրամանագրով նորից նրանց հաստատեց գավառի տեր՝ նվիրելով նաև ուրիշ գյուղեր ու դաստակերտներ, իսկ մելիք Շահնազարի կրտսեր եղբայր Միրզաբեկին էլ մելիք կարգեց Վարանդայում[418]:

Մինչև Վարանդայի մելիքի պաշտոնում Միրզաբեկի հաստատվելը, այնտեղ իշխել է մեկ այլ հայկական մելիքական տուն, որի ներկայացուցիչների այսպիսի մի հերթականություն է վիմագրերի հիման վրա նշում Մ. Բարխուտարյանցը. «Մելիք-Պապի որդի Հախիջանայ, Մելիք-Աւան որդի Մելիք-Պապու, Մելիք-Ազամ եղբայր Մելիք-Աւանայ, Մելիք-Փաշայ կամ Փաշիկ որդի Մելիք-Աւանայ, Մելիք-Դանիէլ, Մելիք-Մուզաֆֆար, որ է տոհմիս վերջին մելիքն»[419]: Վարանդա գավառում տեղի ունեցած իշխանափոխության մասին Լեոն գրում է. «Այս տոհմը ետ մղվեց Մելիք-Շահնազարյաններից, որոնք և իրենց ձեռքն առան ամբողջ Վարանդան»[420]: Այդ պատմության վրա

416 Տէր-Աւետիսեան Ս., Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 68, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, Ե., 1974, էջ 218:

417 Հակոբյան Ա., Սիմոնյան Հ., Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպէլի տեղադրության հարցը, «ՊԲՀ», 1998, թիվ 1-2, էջ 230:

418 Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 132:

419 Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 40-41:

420 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 257:

որոշակի լույս է սփռում Միրզաբեկի որդի Մելիք-Բաղի Ա-ին (Բաղրխան, Բաղրխան) Իրանի շահ Սեֆու (1629-1642) կողմից 1633 թ. տրված հետևյալ հրովարտակը, որի պատճենը հրատարակել է Մ. Բարխուտարյանցը.

«Բարձրագոյն հրաման եղաւ... Նշանաւոր քրիստոնեայ Մէլիք-Բաղին յայտնում է, թէ Վարանդայ գաւառի բնակիչները, նոյն գաւառի տանուտէրների կազմած հասարակական վճռով ընտրել և ճանաչել են զինքը իրանց մէլիք, բայց յիշեալ գաւառի շրջաններից մի քանիսն՝ Մէլիք Դանիէլը... Թագաւորին մերձաւոր բարձր աստիճանաւորներն-Սաֆի-ղուլի բէկ և Ալի-Մարդան բէկ իւզբաշին, Մամէդ-Բաղր-բէկ և ուրիշներն հաստատել են հպատակների հասարակական վճիռը: Այդ բանը վաւերացնելու համար ներկայացնելով վերև յիշուած հասարակական... (Մէլիք-Բաղին) խնդրում է նշանակել զինքը մէլիք յիշեալ գաւառին:

Արքունի օրագրից երևում է, որ այդ գաւառի պարտականութիւնը (մելիքութիւնն) յանձնուած էր Մէլիք-Մուզաֆֆարին... Մէլիք-Մուզաֆֆարն հասարակական այդ վճռի վերայ մակագրել է, որ ինքն հրաժարուում է յիշեալ գաւառի մէլիքութեան պաշտօնը կատարելուց և որ նորա եղբօր մահից յետոյ ոչ ոքի յանձնուած չէ այդ պաշտօնի կատարելն:

Ուստի յարգելով նորա (Մէլիք-Բաղու) խնդիրը, մենք հրամայեցինք, համաձայն հասարակական վճռին, որը կազմել են Մէլիք-Մուզաֆֆարն և ուրիշներն, մեր թագաւորական միւս շնորհների նման «Լույ-իլ» (կոկորդիլոսի տարին) ամսի ութին... Մէլիք-Բաղին մէլիք Վարանդայի գաւառին, որն առաջ յանձնուած էր Մէլիք-Մուզաֆֆարին և Ղարա-Կիւնին... Տաճկաց 1042 (1633) թւին»[421]:

[421] Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 41-42: Այստեղ Մ. Բարխուտարյանցը 1633 թ. տրված հրովարտակի հեղինակ է համարում 1587-1629 թթ. գահակալած Շահ-Աբբաս Ա-ին, մինչդեռ այդ ժամանակ Իրանի շահը Սեֆին էր:

Սույն հրովարտակից երևում է, որ Մելիք-Մուզաֆֆարը, հավանաբար, չկարողանալով դիմակայել առավել հզոր այս տոհմին, հրաժարվել է «յիշեալ գաւառի մէլիքութեան պաշտօնը կատարելուց» հօգուտ Մելիք-Բաղու, որին էլ Վարանդայում հաջորդել է որդին՝ Մելիք-Շահնազար Ա-ը: Այդ մասին ստույգ տեղեկություններ ենք գտնում Շահ-Աբբաս Բ-ի (1642-1666) կողմից 1646 թ. նրան տրված հրովարտակում, որի սկիզբը իրենից ներկայացնում է նախորդ հրովարտակի հակիրճ վերաշարադրությունը.

«Համաձայն բարձրագույն հրամանի, որ տրված է Հիջրեթի 1042 թ. Ռեջեբ ամսում (1633 թ. հունվարի 12-ից փետրվարի 11-ը), Արանի Վարանդա կալվածի տիրապետությունը հանձնված էր Մելիք-Բաղի քրիստոնյային հպատակների գրավոր համաձայնությամբ, որ վավերացրել և ստորագրել էր Խափանի ամենահռչակավոր և ամենափառավոր կողմնակից Սեֆի-Կուլի-բեկը, շինությունների վերակացուն, ամենաբարձրապատիվ Ալիմերտան բեկի կառավարության ժամանակ:

Այժմ գերազանցագույնը քրիստոնյաների մեջ, Մելիք-Շահնազարը, որդի վերոհիշյալ Բաղիի, եկավ Դիվանը և հայտարարեց, որ իր հայրը ճանաչված էր տիրապետող և որ վերոհիշյալ կալվածի տանուտերերը և հպատակները իրանց ստորագրությունները և կնիքները դրել են այն խնդրագրի վրա, որով ճանաչում են և Մելիք-Շահնազարին իրանց վրա տիրապետող, իսկ ամենաբարձրապատիվ Սեֆի-Կուլի-բեկը նորից վավերացրեց և ստորագրեց այն խնդրագիրը ի հաստատություն թե նրանք ճիշտ որ ճանաչում են նրան իրանց տեր: Ուստի բարձրագույն արքայական ողորմածությամբ հրամայում ենք, որ ձայն տալու իրավունք ունեցող անձինք համաձայն լինեն տալ չորրորդ մասը նրա տիրապետության, իսկ նա՝ Շահնազարը, պիտի ամեն տեսակ ջանք և եռանդ գործադրե պահպանելու հպատակների և ստորադրյալների մեջ կատարյալ արդարություն և ուղղամտություն, գործելու այնպես, որ չլինի և ոչ

ամենափոքր ճնշում և կողմնապահություն, իսկ վերոհիշյալ կալվածի հպատակները և ստորագրյալները պարտավոր են համարել նրան լիազոր տեր, չշեղվել նրա հրամաններից և կարգադրություններից, որոնք վերաբերում են կալվածը մեծացնելուն և բարեշինելուն, առանց նրա գիտության ամենափոքր իրավունքներ և արտոնություններ անգամ չյուրացնել, համարել տիրողի բոլոր իրավունքները նրան շնորհված, չտալ նրան օգնական կամ ընկեր, ընդունել որ այս կարողությունը պատկանում է նրան ըստ սովորության և նախկին տիրողների օրինակով, իսկ վերոհիշյալ մելիքը պարտավոր է վարվել այնպես, որ ամենքը գոհ լինեն նրանով և վերջապես կատարել այս հրամանը, որ հաստատված է թագավորական կնիքով: Տրված է Ջուլհիջա ամսին 1055 թ. (1646 թ. հունվարի 18-ից փետրվարի 17-ը)»[422]:

Հետագայում հավանաբար հենց Մելիք-Շահնազարն էլ իր ծնողների հիշատակին Ավետարանոցի եկեղեցուն մի խաչ է նվիրել, որի արձանագրությունը ընդօրինակել է Ս. Ջալալյանցը. «Սուրբ խաչս յիշատակ է մէլիք Բաղուն և իւր կողակից Մարիամին ի դուռն Ամարասայ. թվին Հայոց ՌՃԺ (1661)»[423]:

Մելիք-Շահնազար Ա-ը, որպես Վարանդայի տիրակալ, հիշվում է նաև 1673-ին, համաձայն Հերհեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցու արևմտյան դռան ճակատակալ քարին փորագրված սույն արձանագրության. «Ջաւրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ, եկեր զերկիրս Աղուանից եւ աւերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին եւ

422 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 17, ռուսերեն պատճենը տես Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 180, թ. 50-52:
423 Ջալալյանց Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 248, Դիվան, V, Արցախ, էջ 152:

օժանդակութեան Ովանիսին եւ քահանայից եւ տանուտերց,
մեծամեծաց եւ փոքունց ամէն. թվին ՌՃԻԲ (1673)»[424]:
Մելիք-Շահնազար Ա-ին հաջորդել է որդին՝ Մելիք-Բաղիր
կամ Բաղի Բ-ը, որի գործունեության վերաբերյալ պահպանվել
են մի շարք վկայություններ: Գանձասարի կաթողիկոս Եսայի
Հասան-Ջալալյանն իր երկում վկայում է, որ լեզգիները 1722թ.
ապրիլին «անցին յերկիրն Վարանդու, գնոյն (ավերն ու ավա-
րը-Ա. Մ.) և անդ գործեցին. բայց Մէլիքն նոցա Պաղիր անուն
փութով ընդ առաջ յղեաց նոցա արս ոմանս յերմէ անտի ըն-
ծայիւք, և գկէսն թափեաց զգերւոյն և զերկիր իւր»[425]:
Մելիք-Բաղու գործունեության մասին որոշ տեղեկութ-
յուններ էլ գտնում ենք 1723-1728 թթ. հայ-ռուսական հարա-
բերությունները արտացոլող մի քանի փաստաթղթերում: Այս-
պես, Մարտիրոս վարդապետի՝ 1724 թ. փետրվարի 24-ին Դեր-
բենդի ռուսաց պարետին ուղղված նամակում, ուր խոսվում է
նաև Արցախի մելիքների և յուզբաշիների քաղաքական կողմն-
որոշումների մասին, կարդում ենք. «Մէլիք Պաղի թոռնը մէլիք
Պաղըր կանա Կարմիր աչքի (պարսիկների-Ա. Մ.) կողմն է»[426]:
Իսկ Մատենադարանում պահվող Մելիք-Շահնազարյանների
տոհմական փաստաթղթերում մենք հայտնաբերել ենք շահ
Թահմասպ II-ի (1722-1732) կողմից Մելիք-Բաղիին տրված մի
հրովարտակի ռուսերեն թարգմանությունը, ըստ որի շահը
թուրքերի դեմ մղված պայքարում վերջինիս անձնվեր ծառա-
յությունների դիմաց թանկարժեք խալաթ է ուղարկել նրան:
Նկատի ունենալով այդ վավերագրի կարևորությունը, այն
թարգմանաբար բերում ենք ամբողջությամբ. «Թող հայտնի
լինի շահական ողորմածությանը արժանացած ընկերների և

424 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 214,
Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 37:
425 Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 37,
տես նաև Մատենադարան, ձեռ. 8206, էջ 28բ-29ա:
426 Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 40, Армяно-русские отношения в первой
трети XVIII века, т. II, ч. II, с. 72.

կարգակիցների մեջ ընտրյալ Մելիք-Բաղիին, որ թուրքերի հարձակման և դուրս մղման ժամանակ նրա մատուցած գերազանց ծառայությունները հասան Բարձրագույն դռան ատենավորների գիտությանը: Այս ծառայությունների համար որպես պարգևատրություն Մեր շահական ողորմածությամբ ընծայում ենք նրան՝ ընկերների և կարգակիցների մեջ ընտրյալին, թանկարժեք խալաթ, փայլուն, ինչպես արևի ճառագայթները: Թող նա բոլոր դեպքերում վստահ լինի մեր բարյացակամության վրա և գործադրի բոլոր ճիգերն ու ջանքերը հավատի և Պետության թշնամուն վանելու և հեռացնելու համար: Այդպիսով նրա բարի ծառայությունները ավելի և ավելի կարժանանան մեր ողորմածությանն ու բարեհաճությանը:

Գրվեց 1137 թ. ռեջեբ ամսին (1725 թ. մարտի 16-ապրիլի 15)»[427]:

Այն, որ Թահմասպ II-ը հայ զորահրամանատարներին սիրաշահելու նպատակով խալաթներ է ընծայել նրանց, ակնհայտ է դառնում նաև Արցախ ժամանած Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետի՝ 1725 թ. մայիսի 11-ի զեկուցագրից. «Այժմ այստեղի ժողովուրդը խաղաղություն կնքեց պարսիկների հետ, իսկ շահը մեկական բաճկոն ուղարկեց յուրաքանչյուր յուզբաշու»[428]*: Բնավ էլ պատահական չէ, որ մոտավորապես նույն ժամանակաշրջանում, ինչպես կտեսնենք հաջորդ ենթագլխում, շահ Թահմասպը Եգանին նշանակել է Դիզակ գավառի մելիք, իսկ 1727-ին շահական հրովարտակով հաստատել Սյունիքի հայոց ազատագրական պայքարի առաջնորդ Դավիթ Բեկի իշխանական իրավունքները և նրան ուղարկել «զմի խաչվառ եւ զմի պատուական նժոյգ ձի, նաեւ զիշխանութիւն կարող լինելոյ դրամ հատանել»*[429]:

427 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 180, թ. 54-55:

428 Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 230, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 243.

429 Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխ. Հ. Սամուէլ Արամեան, Վենետիկ, 1978, էջ 173-174:

Այդ քայլերով Սեֆյան գահակալը նպատակ էր հետապնդում հայ մելիքների ուժերն օգտագործելով միասնական ճակատով հանդես գալ օսմանյան ռազմակալման դեմ: Ինչ վերաբերվում է հայ մելիքներին, ապա նրանք թուրք-իրանական պատերազմում պարսիկների կողմը հակվելով հույս ունեին նվազագույն կորուստներով դուրս գալ ստեղծված ծանր իրավիճակից:

Սակայն, նշենք, որ շուտով՝ 1726 թ. մայիսին, Մելիք-Բաղին Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետին է տվել հավատարմության հետևյալ երդմնագիրը.

«Գիրեցաւ էլչի Իվան Կարապետի հրամանօվն:

Պատջառ գրոյս այս է. ես Վարանդեցի մելիք Պաղիս, տէր Օվանս, և այլ ջամհաթս, ամէն թօսուն թալեղս, այս գիրս դվինք վերայգրեալ էլչի պէկին հրամանոցն, խոսքէն, թէ և մեր մալահաթէն դուս գանք, թագայորէն խայլին լինինք և մեր ապրանք սոնկ լնի:

Մեր կամով գիրեցինք գիրն ՌՃՀԵ (1726) թվին»[430]:

Մելիք-Բաղրի ընտանիքի անդամների մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Ե՛վ այս, և՛ այլ դեպքերում մելիքական ընտանիքների մասին մեր պատկերացումները ընդլայնում են վիմագրերը: Մելիք-Բաղրի կնոջ անունն անհայտ է, իսկ ահա Ավետարանոցի մոտ՝ Կուսանաց անապատում[431] *գտնվող Մելիք-Շահնազարյանների տոհմական հանգստարանի մի տապանագրից տեղեկանում ենք, որ.*

«Այս է դապան մէլիք Պաղրի որդի մէլիք Միրզայբէկին,

430 Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 291.

431 1825 թ. կազմված Արցախի վանքերի ցուցակում Կուսանաց անապատը ներկայացված է այսպես. «Անշէն անապատ Կուսանաց, կառուցեալ մերձ գեղջն Աւետարանոց Վարանդայ գաւառակի. եկեղեցին ամբողջ. տանիք գաւթին խախտեալ, յորում ամփոփեալ կան մարմինք ոմանց Մելիքաց ցեղին Մելիք-Շահնազարեանց, և այլոց հոգևորականաց, սենեակքն բոլորովին կործանեալք (տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 47): Կուսանաց անապատի մասին տե՛ս նաև **Мелик-Шахназаров Е.,** Из древностей селения Ченахчи. Кусанац анапат, СМОМПК, вып. 19, Тифлис, 1894, с. 78-83.

թվին ՌՃՂԳ (1744), նոյեմբերի Ժ (10) առ…
Աստուած փոխեցաւ, ով որ գարդա ողորմի ասի. ամէն»[432]:

Իսկ Մելիք-Բաղու դուստրերի անունները հայտնի են դառնում Ավետարանոցում Մ. Բարխուտարյանցի ընդօրինակած սույն հիշատակարանի շնորհիվ. «Սուրբ աւետարան սրբագիր եւ ոսկեզօծ վախմ եւ յիշատակ է Աբրահամ պարոնտէրին, որ տվան Մելիք Պաղուն կուսակրօն դստերացն Հուրսիմին եւ Դաւլաթին եւ Շահնազուխտին ձեռքն ի վայելումն… գրեցաւ մատամբ տէր Եղիազարին մայիսի ԻԵ (25). օրն թվ. ՌՃՁԶ (1737). էր»[433]:

Մելիք-Բաղիր Բ-ը հավանաբար 1730-ին արդեն վախճանված էր, որովհետև այդ թվականին Իրանի շահ Թահմասպ Բ-ի հրովարտակով Վարանդայի մելիքի պաշտոնում նշանակված ենք տեսնում Բաղրի եղբայր Մելիք-Հուսեինին: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ հրովարտակի XIX դարում կազմված և մեզ հասած պատճենի թարգմանությունը.

«Աշխարհասասատ հրամանագիր հրապարակվեց հետևյալ կապակցությամբ.

Խոզի տարվա չորրորդ ամսվա սկզբից Վարանդա մահալի մելիքությունը շնորհեցինք բարձրաստիճան Մելիք Մուհամմադ Հուսեինին, որպեսզի ինչպես հարկն է այդ գործը ստանձնելով նրա պարտականությունները առանց թերացման կատարի, ռայաթների հետ, որոնք ամենազոր Արարչի որոնումների արժեքավոր ձեռքբերումն են, լավ վերաբերվի՝ այնպես անելով, որպեսզի բոլորը նրա բարի արարքներից գոհ ու շնորհակալ լինեն և բարի օրհնանք հղեն սրբազան էությանը: Վերոհիշյալ մահալի քեդխուդաներն ու ռայաթները հիշյալ բարձրաստիճան պաշտոնյային պետք է այնտեղի մելիք ճանաչեն, նրա օրինավոր խոսքին ու կամքին, որ ուղղված կլինի մահալի շենացմանը և դիվան ունեցվածքի հարստացմանը, չհակառակվեն: Թող մեծ մուսթովֆիները այս ռաղամ-շնորհագիրը հարատևող մատյաններում գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1142 թ. սրբազան զի հեջջե ամսին (1730 թ. հունիսի 17-ից հուլիսի 17-ը)»[434]:

Մելիք-Հուսեինը հայտնի է օսմանյան թուրքերի դեմ տարած մի քանի հաղթանակներով: Այդ մասին է վկայում Կուսանաց անապատի գավիթ-դամբարանում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը. «Այս է տապան Մելիք Շահնազարի որդի Մելիք Յուսէինին, թվին ՌՃՁԵ (1736), ոդեմ զբանս գովեստի, ի վերայ Մելիք Յուսէինի, զոր գրեցի այս տապանի: Սա էր տէր երկրին Վարանդի, ԼԵ (35) մասն գեղի, սա էր հացով, սեղանով լի, ողորմէր ամէն ազգի, կերպարանօքն էր գովելի, սա ոչ ետ հարկ թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի, թագ, պարծանք հայոց ազգի, պատերազմեաց հետ օսմանցի, յոյժ կոտորեաց ազգէն տաճկի»[435]:

Մելիք-Հուսեինի կինը Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանի քույր Աննա խաթունն էր: Ավանդությունը Մելիք-Հուսեինի կին Աննա խաթունի և դուստր Գայանեի անունների հետ է կապում մի գիշերում Արցախ թափանցած օսմանյան զորամասի ոչնչացումը, որից հետո Գայանեն մտնում է կուսանոց, նվիրվում գրչարվեստին: «Գայանէ կոյսն, որ սպանեց Իսմայիլ փաշին և գրեց սուրբ Ավետարանն, որ շենում է եկեղեց-

---

432 Դիվան, V, Արցախ, էջ 149:
433 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 209:

434 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 173: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. «копия от грамоты Тахмасп Шаха»: Այս հրովարտակի թարգմանության համար շնորհակալ ենք Ք. Կոստիկյանին: Նա նաև ենթադրում է, որ փաստաթղթում Մելիք-Հուսեինի «Մուհամմադ» անունը կամ ավելացվել է բնագրի պատճեն կազմելու ընթացքում տեքստի սխալ ընթերցման արդյունքում կամ մահմեդական միջավայրում նա այդ անունը ևս կրել է» (տե՛ս Կոստիկյան Ք., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Ե., 2004, էջ 358):
435 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441, Դիվան, V, Արցախ, էջ 149:

ցումն Զանաղչու»[436],-կարդում ենք Մատենադարանի ձեռագրերից մեկում: «Իմ 1881 թվի ճանապարհորդության ժամանակ,-գրում է Րաֆֆին,-Ավետարանոց գյուղում ինձ հաջողվեցավ տեսնել մի հրաշալի գրչագիր ավետարան, որ գրված էր նույն Գայանեի ձեռքով»[437]:

Աննա խաթունը վախճանվել է 1747 թ., ինչպես վկայում է Կուսանաց անապատի գավթում գտնվող նրա տապանաքարի սույն արձանագրությունը.

«Այս է դապան մէլիք Յիսէին
դուղակից Եանիա [խա]թունին,
թվին ՌՃՂԶ (1747)»[438]:

Մելիք-Հուսեինին հաջորդել է նրա եղբայր Մելիք-Բաղու որդի Մելիք-Միրզաբեկ Բ-ը, որի մասին չափազանց քիչ բան է հայտնի, այն էլ կապված Նադիր շահի կողմից մահապատժի ենթարկվելու հետ: Այսպես, XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը այդ մասին գրում է. «Նադիր շահը նրանից (Մելիք-Շահնազարյաններից-Ա.Մ.) ոմն Միրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում»[439]: Իսկ XIX դ. կեսերի մեկ այլ հեղինակ` Միքայել-բեկ Մելիք-Շահնազարյանը, այդ մահապատիժը կապում է Մելիք-Միրզաբեկի կողմից հարկային պարտավորությունները չկատարելու հետ[440]: Այս դեպքը, ինչպես վկայում է Մելիք-Միրզաբեկի տապանաքարի վերոբերյալ արձանագրությունը, տեղի է ունեցել 1744 թ. նոյեմբերի 10-ին:

436. Միքայէլ-բեկ Մելիք-Շահնազարեան, Վասն ծագման Մելիք-Շահնազարեան
տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, էջ 8բ:
437 Րաֆֆի, Նշվ. աշխ., էջ 441:
438 RAA նյութեր, Ս. Կարապետյանի «Արցախի վիմագրերը» անտիպ աշխա-
տությունից: Այն տապանագրերը, որոնց համար աղբյուր չի նշված, վերցված են
վերոհիշյալ դիվանից:
439 Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 42:
440 Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա: Այդ մասին մանրամասն տես
Մաղալյան Ա., Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի պատճառը,
«Հայոց պատմության հարցեր», 2006, թիվ 7, էջ 30-37:

* * *

Թեև Մելիք-Միրզաբեկի շառավիղները մեծ դերակատա-
րություն չեն ունեցել Վարանդայի մելիքության հետագա
պատմության մեջ, սակայն Մելիք-Շահնազարյանների տոհմա-
բանության ամբողջացման նպատակով հարկ ենք համարում
ներկայացնել նաև նրանց մասին մեզ հայտնի փաստերը:
Հայտնի է, որ Մելիք-Միրզաբեկը թողել է Բաղր-բեկ
անունով որդի: Այդ մասին տեղեկանում ենք Հովհաննես Հա-
սան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս ճանաչելու վերաբեր-
յալ Արցախի երևելիների` նախորդ ենթադրից մեզ արդեն
ծանոթ 1763 թ. փետրվարի 5-ի համախոսականից, որի տակ
գրված է նաև Բաղր-բեկի կնիքը հետևյալ մակագրությամբ.
«Ես մէլիք Միրզապէկի որդի Պաղր պէկս հաջել կնքեցի»[441]:
Ենթադրում ենք, որ Մելիք-Միրզաբեկի թոռը և Բաղր-
բեկի որդին է ոմն Սարգիս-բեկ Շահնազարյան: Նրա ազգակ-
ցական կապերի մասին ճշգրիտ տեղեկություններ հաղորդելու
խնդրանքով Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի` 1844 թ.
սեպտեմբերի 30-ին Բաղդասար մետրոպոլիտին ուղարկած
գրության մեջ կարդում ենք. «Ի կոնսիստորիիս յայտնի լուսան
զխնդիր Հայկազուն ի բէկազնէից Սարգիս-բէկի Բաղր-բէկեան
Շահնազարեանց ի 15 այսր սեպտեմբերի յանուն բարձրադոյն,
յորում գրի-ցանկայ նա յորդւոց իւրոց զԵսային և զԳրիգորն
այժմէն իսկ առաքեալ ի Սանկտպետերբուրգ ի կադեթսկիյ կոր-
պուսն. իսկ զԽաչատուրն նշանակեալ միայն ի նոյն իսկ կոր-
պուսն, և գիտելով չափ, թէ. հարկաւոր է նոցա ունիլ առ
ինքեան զմետրիքական վկայագիրս յաղագս ծննդեան նոցա
մկրտութեան, վասն որոյ զայս խնդիր իւր արկեալ ընդ սուրբ
Գարշապարդ Նորին Կայսերական Մեծութեան ի յայտ ածէ թէ`
ծնեալ են-ի նոցանէ Եսային ի 1834 ամի, Գրիգորն ի1836 ամի,

441 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 5, բնագիր:

իսկ Խաչատուրն ի 1842 ամի, և մկրտեալ են ի Շուշւոյ Ղազանչեցւոյ Ամենափրկչի եկեղեցւոջն: Հարկ համարի յայտ առնել, նախ՝ թէ, նա չունի առ ինքեան զարդիս պատրաստի զօրինաւոր վկայական վասն բէկազնէութիւն տոհմին իւրոյ, և երկրորդ, թէ չէ սերեալ նա ի Մէլիք-Շահնազարէն Ղարապաղու, որոյ կանանց անուանքն են-Թաճում, Սօնայ և Մալակ, այլ է թոռն Մէլիք-Միրզաբէկին (ընդգծումը մերն է-Ա. Մ.)»[442]:

Սարգիս-բեկի ավագ որդի Եսայի Մելիք-Շահնազարյանի՝ 1877 թ. կազմված և ներկայումս Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվում պահվող ծառայությունների ցուցակից[443] տեղեկանում ենք, որ նա ծնվել է 1834 թ. փետրվարի 18-ին: 1854 թ. անցել է զինվորական ծառայության, իսկ արդեն 1858-ին մասնակցել է կովկասյան լեռնականների դեմ մղված մարտերին: Հետագայում հրազենային ռազմամթերքի բաժնի պետի պաշտոնով աշխատանքի է անցել Թիֆլիսի շրջանային զինապահեստում: 1876 թ. ստացել է փոխգնդապետի աստիճան: 1877 թ. վատառողջության պատճառով, սեփական դիմումի համաձայն, ազատվել է զինվորական ծառայությունից: Պաշտոնաթողությունից հետո ապրել է Թիֆլիսում:

Եսայի Մելիք-Շահնազարյանի կինը թիֆլիսեցի Նատալյա Ֆոմինան էր: Նրանք ունեցել են հինգ զավակ՝ Օլգա (ծն. 1863), Միքայել (ծն. 1866), Նինա (ծն. 1867), Եկատերինա (ծն. 1870) և Սարգիս (ծն. 1872):

* * *

Վերադառնալով բուն նյութին՝ նշենք, որ Նադիր շահը իր հրամանով մահապատժի ենթարկված Մելիք-Միրզաբեկի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք-Հուսեինի ավագ որդի Մելիք-Հովսեփին, որին ևս պարսիկները Հուսեին

442 Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 132:
443 РГВИА, ф. 400, оп. 18, д. 4088.

էին անվանում: Նրա ստորագրությունն ու կնիքը պահպանվել են 1745 թ. հուլիսի 27-ին կազմված մի պարսկերեն կալվածագրում «Վարանդայի Մելիք Հուսեյն» ձևով[444]: Վերջինիս մելիքությունը, սակայն, կարճ է տևել: Մելիք-Հովսեփի կրտսեր եղբայր Մելիք-Շահնազար Բ-ը, օգտվելով Նադիր շահի սպանությանը (1747) հաջորդած քաոսից, սպանել է եղբորը, կոտորել նրա ընտանիքը և իրեն հռչակել Վարանդայի մելիք: Ուշագրավ է այս եղբայրասպանության Րաֆֆու մեկնաբանությունը. «Մելիք-Հովսեփը և Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին,-բացահայտում է նա,-Հովսեփը ծնված էր Մելիք-Հուսեինի Աննա-խաթուն անունով կնոջից, որը Տիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Զոհրա-խանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Հուսեինը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»[445]: Ըստ Մելիք-Շահնազարյանների տոհմական ավանդությունների՝ Մելիք-Հուսեինը Զոհրա-խանումին փախցրել է Արցախի սղնախների զորքի՝ դեպի Սյունիք 1724-ին կատարած օգնական ռազմերթի ընթացքում, երբ վերջինս ընդամենը 15 տարեկան էր[446], հետևաբար՝ Զոհրա-խանումը ծնվել է 1709 թ.: Այստեղից կարող ենք ենթադրել, որ Մելիք-Շահնազարը, ամենայն հավանականությամբ, ծնված պետք է լինի այդ դեպքից մեկ-երկու տարի անց՝ 1725 կամ 1726 թվականին:

Շահնազարի կողմից սպանված Մելիք-Հովսեփը Խաչենի տիրակալ Հասան-Ջալալյանների տան փեսան էր և վերոհիշյալ արյունահեղությունից մազապուրծ եղած նրա փոքրահասակ որդին՝ Սայի-բեկը, ապաստանել էր այնտեղ, իր քեռի Մելիք-Ալլահվերդու մոտ: Սակայն շուտով սարջալլուների ցեղապետ

444 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 198, բնագիր:
445 Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 452:
446 Մատենադարան, ձեռ. 7429, էջ 31բ:

Փանահ Ալիի հետ դաշնակցած Մելիք-Շահնազարի եղբայրասպան ձեռքը հասավ նաև նրան...

Ենթադրում ենք, որ Մելիք-Հուսեինի որդին և Մելիք-Շահնազար Բ-ի եղբայրն էր նաև ոմն Ղահրաման բեկ: Նման ենթադրության համար հիմք է ծառայել Ավետարանոցի Մելիք-Շահնազարյանների տոհմական հանգստարանում գտնվող մի տապանաքարի արձանագրությունը.

«Այս է տապան մէլիք Սէյինի որդի
Ղահրման բէկին, թվ(ին) ՌՄԷ (1758)»:

Միաժամանակ նշենք, որ Ղահրաման բեկի անվան հետ կապված որևէ հիշարժան դեպք մեզ հայտնի չէ:

Շահնազարի մելիքական իշխանությունը 1748 թ. հաստատվել է Իրանի Ալի Իբրահիմ շահի հրովարտակով: Մեզ է հասել այդ շահական հրովարտակի XIX դարում կազմված պատճենը, որի թարգմանությունը ներկայացնում ենք ստորև.

«Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյաներից լավագույն Վարանդայի մելիք Շահնազարի հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ, վիշապի տարվա երրորդ ամսվա սկզբից նրան նշանակում ենք տարեկան 50 Թավրիզի թուման ռոճիկ և նրան հանձնում Վարանդա մահալի մելիքությունը, որպեսզի նա ամեն տարի իր ռոճիկը ստանա այնտեղ դիվանի մալիյյաթի գումարից և ծախսի իր կարիքների համար՝ ճշտորեն ու շիտակ կերպով ծառայելով և անհրաժեշտ ջանքեր գործադրելով այդ վիլայեթը շենացնելու, ռայաթներին հավաքելու, դիվանի հարկերն ու այլ պարտավորությունները կատարելու գործում, այնպես որ նրա բարյացակամությունն ու հավատարմությունը աշխարհակալ տիրոջը [շահին] հայտնի դարձնի: Վարանդա մահալի ռայաթները պետք է վերոհիշյալին այդ մահալի մելիք ճանաչեն ու այդ գործի պարտականությունները նրան վերապահեն: Բարձրագույն դիվանի մեծ մուսթովֆիները այս արքայական ռաղամհրամանագիրը թող գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն: Գրվեց 1161 թ. զի հեջջե ամսին (1748 թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 22-ը)»[447]:

Մելիք-Շահնազարի ամարդի արարքը նրա դեմ է հանում Արցախի մյուս մելիքներին: «Մելիք Շահնազարը զգալով իր ակարությունը մելիքների հանդեպ՝ անհանգստացած սկսում է ճարահատելք որոնել,-գրում է Միրզա Յուսուֆ Ներսեսովը,-ճարահատյալ դիմում է Փանահ խանի օգնությանը, նրան հպատակվում և հավատարմության երդում է տալիս և նրա աջակցությամբ ազատվում մելիքների պատժից... Մելիք Շահնազարը լինելով շատ հարուստ՝ Ղարաբաղի խաներին ծառայություններ է մատուցում, որի շնորհիվ մեծ պատվի է արժանանում: Փանահ խանի իշխանության սկզբնական շրջանում, երբ նա փողի կարիք էր զգում, Մելիք Շահնազարը անհրաժեշտության դեպքում օգնության էր հասնում և նրա կարիքները բավարարում: Վերջում Մելիք Շահնազարը իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրզադ խանումին, կնության է տալիս Իբրահիմ խանին (Փանահի որդուն-Ա. Մ.), և այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում»[448]:

1775 թ. հուլիսի 6-ին ամենայն հայանականությամբ Գանձասարից Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված մի անստորագիր նամակում կարդում ենք. «Եւ եթէ ի կողմանցս յայսցանէ հարցանիցես. հնգեքին մէլիքքն են ընդ մեզ բաց ի մէլիք Շահնազարէն, որ դեռևս խարդախութեամբ ընդ մեզ գնայ, և ո՛չ գնախանձն իւր հատանէ ի մէնջ»[449]: Այդ շրջանում Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնում է նաև Հովսեփ արքեպս. Արղությանը, որը 1780-ին հերթականությամբ ներկայացնելով Խամսայի մելիքներին,

[447] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 203, պատճեն: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. «копия грамоты Ибрахим Шаха персидского»:
[448] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 42, 50:
[449] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 25, բնագիր:

Մելիք-Շահնազարի մասին գրում է. «Զօրացուցիչն է տաճկաց և միաբան ընդ խանին. ունի կարօղութիւն և սա հազար արանց պատերազմողաց. Վարանդ»[450]: Իսկ ահա գեներալ Պավել Պոտյոմկինին Հ. Արղությանի՝ 1783 թ. հունվարի 28-ին գրած նամակում կարդում ենք. «Մելիք Ադամի, մելիք Յովսէփի և մելիք Եսայու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խոտորցէր մելիք Շահնազարն, որ է այր խորամանկ, թերահաւատ և ամենայն գործս բարեաց անպիտան, նենգաւոր և դաւաճանօղ եղբարց: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրէ նողայիքն խորանաշրջիկ, որք կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորի անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մելիք Շահնազարն գնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ նմա և զբերթն իւր ետ նմա»[451]: Հնդկահայ ականջալուր-ժամանակակիցները Մելիք-Շահնազարին բնութագրել են այսպես. «Հնարամիտ անձնավորություն է, հմուտ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին: Սա ևս պարսից իշխանության է ենթարկվում. առանց պարսիկ իշխանի (Փանահի-Ա.Մ.), որը սրան իրեն է հպատակեցրել, որևէ բան, ինչ էլ որ կամենա, չի կարող անկախաբար կատարել»[452]: Իսկ ահա այդ իրողության արձագանքները XIX դարի կեսերի հայկական մամուլում. «Շահնազար՝ Վարանդայի մէլիքը, Ջարաբերդի Մէլիք Ադամին և Գիւլիստանի Մէլիք Յովսէփին մէջ եղած դաշնակցութենից վախենալով, ինքն էլ Փանահ խանին հետ մի բարեկամութիւն արաւ, նրան իր բնակատեղին Շուշուայ բերդը և իր աղջիկն էլ (Փանահի որդուն-Ա. Մ.) կնութեան տուաւ»[453]: Փաստորեն, այդ եղբայրասպան պատերազմում հայ մելիքներից հաղթող-

[450] Յովսէփ կաթուղիկոսի յիշատակարանը, «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Է, էջ 512, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Յովսէփ Արղութեան, էջ 25, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с.153.

[451] Գևորգյան Պ., Հովսեփ արք. Արղությանի երկու նամակ-զեկուցագրերը որպես հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներ, «Էջմիածին», 1962, թիվ Է, էջ 37, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.

[452] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 103:

[453] «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, թիւ Ը, էջ 622:



Գանձասարից 1775 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված նամակ՝ Մելիք-Շահնազարի մասին տեղեկություններով



Ամարասի Իսրայել կաթողիկոսի 1792 թ. վկայագրի պատճենը՝ Մելիք-Շահնազարի վերջին օրերի և կտակի մասին



Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու ցավակցական նամակը Մելիք-Ջումշուդին՝ նրա հայր Մելիք-Շահնազարի մահվան կապակցությամբ


№ 142 Л. 158 1816

Копія съ Письма Главнокомандующаго въ Грузіи Г. Генерала отъ Инфантеріи Ртищева къ Мехти Кули Хану Карабагскому отъ 20 Генваря 1816го года.

Карабагскій Меликъ Худадатъ Шахназаровъ принесъ мнѣ жалобу въ томъ, что Ваше Превосходительство опредѣлили къ нему своего Пристава по имени Адиль бека, который власть свою до того распространилъ, что лишилъ его всѣхъ правъ въ разсужденіи управленія принадлежащими ему подвластными. Я будучи обязанъ пещись о благосостояніи всѣхъ народовъ населяющихъ здѣшній край, долгомъ моимъ поставляю предложить Вашему Превосходительству, дабы вы по полученіи сего немедленно взяли обратно къ себѣ означеннаго Адиль бека, предоставивъ Мелику Худададу свободно и безпрепятственно управлять своими подвластными, такъ какъ онъ обязанъ Вамъ одними только повинностями слѣдующими по тамошнему обыкновенію; а въ управленіе его собственности, никто посторонній вмѣшиваться не можетъ и не долженъ по существующему въ Россійскомъ правленіи порядку. А потому поставляя сіе Вамъ на видъ, я остаюсь увѣреннымъ, что Ваше Превосходительство какъ подданный Россійскій послѣдуете сему полезному правилу, коего также и изволите поручать и никому изъ находящихся при васъ беговъ тунеядцевъ ибо въ противномъ

Կովկասի կառավարչապետ Ն. Ռտիշչևի 1816 թ. նամակը Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանին՝ Մելիք-Խուդադադի բողոքի կապակցությամբ


№ 140 Л. 158

Копія съ предписанія Главнокомандующаго въ Грузіи Г. Генерала отъ Инфантеріи и Кавалера Ртищева, Генералъ Маіору [illegible] отъ 20 Генваря 1816 Года № 82.

При отправленіи обратно въ Карабагъ Мелика Худадата Шахназарова, какое писано отъ меня письмо къ Мехти Кули Хану Карабагскому на счетъ [illegible] Мелика Пристава, [illegible] ему притѣсненіе въ управленіи принадлежащими ему подвластными, съ онаго препровождаю при семъ копію, поручая Вашему Превосходительству имѣть съ своей стороны о непремѣнномъ исполненіи Ханомъ моего требованія заключающагося въ помянутомъ письмѣ; а также и объ оказаніи Мелику Худадату въ случаѣ какихъ либо притѣсненій со стороны Хана; по исполненіи же рекомендую мнѣ донести.

Ն. Ռտիշչևի 1816 թ. գրությունը գեն. Տիխանովսկուն՝ Մելիք-Խուդադադի իրավունքների վերականգնման վերաբերյալ իր առաջարկության կատարմանը հետևելու մասին



Մեհտի Ղուլի խանի կողմից Խոսրով-բեկին տրված վկայագրի պատճենը՝ վերջինիս Մելիք-Ջանբախշի որդին լինելու վերաբերյալ



Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի 1821 թ. օրհնության գիրը Մելիք-Շահնազարի դուստր Յումայի խաթունին՝ նրա նվիրած մեկ մածար ոսկու առթիվ



Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի 1845 թ. գրությունը մետրոպոլիտ Բաղդասարին՝ Խոսրով Մելիք-Շահնազարյանի եղբորորդիներին և հորեղբորորդիներին ծննդյան վկայականներ տալու վերաբերյալ

ներ և պարտվողներ չեղան, այլ օգուտ քաղեց երրորդ, օտար
կողմը՝ վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը,
որը Մելիք-Շահնազարի թողտվությամբ 1752-ին հաստատվեց
Արցախի սրտում:

Հարկ չէր լինի այսքան հանգամանորեն կանգ առնել Մե-
լիք-Շահնազարի ազգադավ ընթացքը ներկայացնող վերոնշյալ
տեղեկությունների վրա[454], եթե չլինեին վերջին շրջանում
լույս տեսած առանձին սիրողական հրապարակումներում
նրան անմեղության լուսապսակով ներկայացնելու փորձերը:
Այդ հրապարակումներից մենք առաջին հերթին ի նկատի
ունենք Արսեն Մելիք-Շահնազարյանի «Վարանդա՝ Արցախի
սիրտը» հոդվածը[455], որովհետև մյուս հրապարակումների հե-
ղինակները հիմնականում կրկնում են նրա սխալ դրույթները:
Մելիք-Շահնազարյանների տոհմի շառավիղների կողմից
իրենց տխրահռչակ նախնուն արդարացնելու փորձերը նո-
րություն չեն ինքնին: Տակավին XIX դարի կեսերին այս տոհ-
մի մեկ այլ ներկայացուցիչ՝ Միքայել-բեկ Լալաբեկի Մելիք-
Շահնազարյանը (Մելիք-Ջհանբախշի թոռը) այդ նպատակով է
գրել մեզ նախածանոթ «Վասն ծագման Մելիք-Շահնազարեան
տոհմին» աշխատությունը, սակայն նրա միտումն այնքան
ակնհայտ էր, իսկ գրելաոճը՝ այնքան պարզունակ, որ նրա
երկն այդպես էլ չի արժանացել լուրջ ուշադրության:
Այդ առումով, Ա. Մելիք-Շահնազարյանը մեկ քայլ առաջ
է անցել իր գաղափարական նախնուց: Ըստ նրա՝ Մելիք-Շահ-
նազարին դավաճանության մեջ մեղադրող հեղինակները հիմ-
նականում վկայակոչում են զորավար Ա. Սուվորովի հետևյալ
հայտնի տողերը. «Сей предатель своего отечества призвал Па-

[454] Թվարկված փաստերի լույսի ներքո անլուրջ են թվում որոշ ուսումնասիրող-
ների՝ հետին թվով Շահնազարին «դիվանագիտական» ինչ-ինչ հորինովի ծրա-
գրեր վերագրելու փորձերը (հմմտ. Դ. Բաբայանի նշված աշխատությունը): Բեր-
ված փաստերը իսպառ բացառում են նման որևէ հնարավորություն:
[455] **Мелик-Шахназаров А.**, Варанда-сердце Арцаха, «Анив», 2006, N 6, с. 27-37.

нaxa, отдал ему в руки свой крепкий замок Шушикала и учинился ему с его схнахом покорным»[456]: *Մինչդեռ, մենք արդեն առիթ ունեցանք համոզվելու, որ Շահնազարի դավաճանության մասին ժամանակակիցները բազմաթիվ վկայություններ են թողել և՛ Ա. Սուվորովից առաջ, և՛ նրանից հետո, ընդ որում՝ միանգամայն անտեղյակ ռուս մեծ զորավարի վերոհիշյալ խոսքերին: Իրականում, Ա. Սուվորովի վկայությունն ընդամենը մի օղակ է Մելիք-Շահնազարի դավաճանությունն ապացուցող փաստերի երկար շղթայում:*

Կարծում ենք, տեղին չէ նաև Մելիք-Շահնազարի բացասական կերպարի ստեղծման համար Ա. Մելիք-Շահնազարյանի՝ Րաֆֆու հասցեին հնչեցրած մեղադրանքը: Մելիք-Շահնազարը որպես ազգադավ գործիչ է ներկայացված դեռևս Րաֆֆու երկի հրապարակումից մի քանի տասնամյակ առաջ ստեղծված Միրզա Յուսուֆ Ներսեսովի, Հակոբ Զաքարյան Շուշեցու, Սարգիս Ջալալյանցի և այլոց պատմագրական աշխատություններում: Ընդ որում, եթե Ներսեսովի սկզբնաղբյուրը Միրզա Ադիգյոզալ-բեկի հանրահայտ աշխատությունն էր, որից օգտվել է նաև Րաֆֆին, ապա նրան միանգամայն անծանոթ է եղել Հ. Զաքարյանի աշխատությունը: Իսկ վերջինս չափազանց պատկերավոր է ներկայացրել Փանահ խանի՝ անառիկ մի վայրում բերդ ունենալու ցանկությանը Մելիք-Շահնազարի տված արձագանքը. «Կոչեաց խանն զմեծամեծս եւ զիշխանս յերկուց ազգաց, ասէ ցնոսա՝ կամիմ զի բերդ մի տալ շինել, բայց չգիտեմ տեղի մի ամուր եւ յարմար. յառաջեաց Շահնազարն եւ ասէ՝ ցուցից մեծութեանդ լեառն մի, որ արօրադիր է գեղջին Շուշոյ. բաց ի տեղոյն ոչ գտանէք յայլ ուրէք ամրագոյն քան զայն՝ եւ ըստ կամաց ձերոց յարմար շինութեան բերդաքաղաքի»[457]: Մեզ արդեն հայտնի է, թե ինչու

456 Там же, с. 31.

457 Տե՛ս մեր «Յ. Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը» հրապարակումը, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիւ 1-12, էջ 330:

էր Վարանդայի տիրակալը իր մելիքության տարածքում գտնվող այդ պաշտպանական ամրությունը ափսեի վրա մատուցում քոչվոր ջիվանշիրցուն. այստեղ կարևորն այն է, որ Հ. Զաքարյանն այս տողերը գրում էր Րաֆֆու երկի լույս տեսնելուց մոտ երեք տասնամյակ առաջ, ընդ որում՝ Երուսաղեմում, միանգամայն անծանոթ Անդրկովկասում այդ շրջանում գրված Միրզա Ադիգյոզալ-բեկի և Միրզա Յուսուֆ Ներսեսովի աշխատություններին: Իրականում, XIX դարի կեսերին Արցախի պատմությանն անդրադարձած բոլոր հեղինակներն էլ Մելիք-Շահնազարին ներկայացրել են որպես հայրենիքի շահերը ոտնահարած գործչի: Եվ եթե Րաֆֆուն կարելի է մի բանում «մեղադրել», ապա միայն Մելիք-Շահնազարի բացասական կերպարը մասսայականացնելու մեջ:

Ինչ վերաբերվում է Մելիք-Շահնազարի իրագործած եղբայրասպանությանը, ապա այս դեպքում ևս առաջնության դափնին Րաֆֆունը չէ: Սակայն, մի կողմ թողնենք այն պարզ ճշմարտությունը, որ առանց հիմնավոր պատճառների ժողովուրդը երբեք իր տիրակալի մասին չէր ստեղծի նման մի ավանդություն և նրան չէր մեղադրի հանցագործություններից ամենահրեշավորի՝ եղբայրասպանության մեջ, և դիմենք կոնկրետ փաստերի: Տակավին 1845 թ. գրված Միրզա Ադիգյոզալ-բեկի աշխատության մեջ այդ մասին կարդում ենք. «Վարանդայի Մելիք-Շահնազարը, որը խելակորույս սիրահարված էր իշխանություն կոչված գեղեցկուհու սրտամաշ աչքերին..., թունավորելով սպանեց իր հորեղբայր Մելիք-Հուսեինին»[458]: Թեև այստեղ Ադիգյոզալ-բեկը շփոթել է նրանց արյունակցական կապը, սակայն այս դեպքում մեզ համար էականը սպանության փաստի արձանագրումն է, այլ ոչ թե նրանց ազգաբանությունը: Նույն տեղեկությունը, Ադիգյոզալ-բեկից վերցնելով, հաղորդում է նաև Միրզա Յուսուֆ Ներսեսովը[459]:

458 **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с. 55.

459 Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 49:

Մելիք-Հովսեփի սպանության մասին գրում է նաև XIX դ. կեսերի մեկ այլ հեղինակ՝ Ս. Ջալալյանցը: Նրա «Պատմութիւն աշխարհին Աղուանից» աշխատության մեջ, որի բնագիրը պահվում է Գերմանիայի Տյուբինգեն քաղաքի գրադարանում, կարդում ենք. «Մէլիք-Շահնազար եղեալ ի սրտի գեղխուն չարութեան սպանանէ զեղբայր զՄէլիք-Յօսէփ, և բառնայ զյիշատակ այնր առն երանելւոյ, և ինքն տիրապետէ հայրենի ժառանգութեան»[460]: Վերոնշյալ տոհմագրական սխալը սույն երկում բացակայում է, ինչը մեզ թույլ է տալիս պնդելու, որ Ս. Ջալալյանցը այս տողերը գրելիս օգտվել է այլ, ամենայն հավանականությամբ՝ բանավոր աղբյուրներից:

Եթե այս երկերը ուղղակի կամ միջնորդավորված կերպով ծանոթ էին Րաֆֆուն, ապա գոյություն ունի Մելիք-Հովսեփի սպանությունը ներկայացնող ևս մեկ աշխատություն, որը միանգամայն անծանոթ է եղել հայ մեծ վիպասանին: Ի հեճուկս Ա. Մելիք-Շահնազարյանի՝ դա Միքայել-բեկ Մելիք-Շահնազարյանի վերոնշյալ աշխատությունն է: Իսկ ո՞վ կարող էր Մելիք-Շահնազարի ծոռից լավ իմանալ Մելիք-Հովսեփի սպանված լինել-չլինելու մասին: Արժե ծանոթանալ Մ. Մելիք-Շահնազարյանի երկի այդ հատվածին: «Կաղլիկ Հասանին, որ այժմ կոչ[վ]ում է մելիք Օսէփ,-գրում է նա,-Նադիրն կարգում է մելիք Հասանին... Բերում են փարմանն հանձնում են մելիք Հասանին: Սկսում է իր մելիքութիւնն անել, այնպէս որ ժողովուրդին դուր չի կալիս: Սա լինում է շատ ակահ կամ ժլատ, շատ հացի քօռ և տալիս են մի օր սպանում համաձայն ժողովուրդին»[461]: Փաստորեն, Մելիք-Հովսեփի սպանության հասարակական արձագանքները այնքան լսելի են եղել XIX դարում, որ Մելիք-Շահնազարին արդարացնելու միտումով գրած իր երկում անգամ նրա թոռնորդին չի շրջանցել այդ եղբայրասպանության փաստի արձանագրումը: Իսկ սպանվողի հանդեպ

460 Մատենադարան, ժապ. 367, էջ 6ա-բ:
461 Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա:

հեղինակի արհամարհական ոճը և նեղ, կենցաղային պարզունակ չարժառիթից ելնելով՝ Մելիք-Հովսեփի սպանությունը ժողովրդի վրա բարդելու անհաջող փորձը ընթերցողի աչքից չեն կարող թաքցնել այդ հանցագործության իրական կազմակերպչին՝ Մելիք-Շահնազարին:

Ա. Մելիք-Շահնազարյանը անցողակի նկատում է նաև, որ Արցախի մելիքությունների գոյության ամբողջ ժամանակահատվածում Վարանդան իր ազգաբնակչության քանակով ու բնակավայրերի թվով ամենամեծն էր և ամենաքիչն է տուժել թշնամիների հարձակումներից: Սակայն, եթե մի պահ վերանանք հոդվածագրին պաշարած գավառամտությունից և հարցին նայենք համահայկական դիտանկյունից, ապա դժվար չէ նկատել, որ հենց Մելիք-Շահնազարի կողմից Արցախ բերված Փանահի ժամանակներից սկսվեց այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն այդ երկրամաս: «Փանահ խանը, դավաճանությամբ սողոսկելով զուտ հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար,-գրում է Լեոն,-և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դըրսից՝ հարևան խանություններից, խոստանալով նրանց զանազան արտոնություններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կարաչարլի, ջինլի, դեմիրչի-հասանլու, ղըզըլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենդերլու և այլ շատ թափառական ցեղեր: Հոր օրինակին հետևելով, Իբրահիմ խանն էլ ամեն ջանք գործ էր դնում՝ դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»[462]: Կատարվածի ծանր հետևանքները գիտակցելու համար պարտադիր չէ, որ այդ ցեղերը բնակեցվեին Մելիք-Շահնազարի տիրույթներում, ամեն դեպքում քոչվորների ձիերի սմբակների տակ կոխ-

462 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 303, տե՛ս նաև Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999, էջ 15:

կըրավողը մեր հայրենի հողն էր, քանի որ բերված ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահի համար հուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն չենթարկվող մելիքությունների դեմ պայքարի ժամանակ:

Այս խորապատկերում կարծում ենք սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Րաֆֆին է կամ մեկ այլ ուսումնասիրող, այլ հենց ինքը՝ Մելիք-Շահնազարը, իր ազգադավ գործերով:

Անաչառ լինելու համար պետք է նշել, որ կյանքի մայրամուտին Մելիք-Շահնազարը զղջում է իր գործած չարիքների համար և, որպես մեղքերի թողություն, վճռում վերանորոգել Ամարասը: Վարանդայի տիրակալը չափազանց հարուստ անձնավորություն էր և «Ամարասի վանքը շինելու, իր կալվածներում ջրանցքներ տանելու և այլ տնտեսական շինությունների վրա Մելիք-Շահնազարը ծախսել է առնվազն 80 հազար ռուբլի արժաթ... Միայն տուգանքների արդյունքը տալիս էր Շահնազարին 20 հազար ռուբլի, իսկ «միջի» (ձրի աշխատանքով կատարված) վարուցանքը և հունձը, որ անում էին մելիքի համար,-30 հազար ռուբլի: Խմիչքների հարկերի կապալը (Շուշի բերդում) տալիս էր Մելիք-Ջումշուդին (Մելիք-Շահնազարի որդուն) 7000 ռուբլի»[463]:

Բոլոր դեպքերում, այստեղ մեզ համար էականը ոչ թե Մելիք-Շահնազարի ուշացած մեղանչումներն են, այլ նրա ազգադավ գործունեության հետևանքները, որոնք չափազանց ծանր ազդեցություն ունեցան Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Եվ միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբա-

[463] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 23: Ի դեպ, Մելիք-Շահնազարի ժառանգները ևս զբաղվել են բարեգործությամբ: Այսպես, Մատենադարանում պահվում է Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի 1821թ. մարտի 26-ի օրհնության գիրը Մելիք-Շահնազարի դուստր Յումայի խաթունին, նրա նվիրած մեկ մաճար ոսկու առթիվ (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 244, վավ. 329):

գրել Մելիք-Շահնազարի թույլ տված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը:

Մելիք-Շահնազարը վախճանվել է 1792 թվականին, տարեց հասակում: Պահպանվել է Ամարասի Իսրայել կաթողիկոսի ձեռքով գրված հույժ հետաքրքրական մի վկայություն, որտեղ բարբառային լեզվով ներկայացված են Մելիք-Շահնազար Բ-ի վերջին օրերը և ժառանգական վեճերը նրա որդիների միջև[464]:

Նրա մարմինն ամփոփվել է Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանատանը, իսկ շիրմաքարը կրել է հետևյալ չափածո արձանագրությունը.

«Այս է տապան Մէլիք Շահնազարին,
Որ է որդի Մէլիք Յիւսէինին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.
Սա էր հայր Մէլիք Ջիւմշիտին,
Ըստ ռուսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի եւ քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային
ՌՄԽ. թվին (1792)»[465]:

Մելիք-Շահնազարն ամուսնացել էր երեք անգամ: Նրա առաջին, օրինավոր կինը՝ Թաջումը (Թագուհի), որը Խաչենի Հասան-Ջալալյանների տնից էր, վախճանվել է 1751 թ., ինչպես վկայում է նրա տապանաքարի արձանագրությունը.

«Այս է տապան մէլիքին
Շահնազարին կողակից
Թաճումին, թվին ՌՄ (1751)»:

[464] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 376-377, տե՛ս նաև Թօփճեան Յ., Ցուցակ ժողովածուաց Խ. վրդ. Դադեանի, հ. Բ, էջ 42, ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 173:
[465] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ, էջ 210, Դիվան, V, Արցախ, էջ 150:

Այս Թաջումը Մելիք-Ջումշուդի և Ամարնանի (Գյուլիստանի Մելիք-Բեգլար Բ-ի կինը) մայրն էր, և նրա մահվան թվականը մոտավոր պատկերացում է տալիս նաև Մելիք-Ջումշուդի ծննդյան թվականի մասին: Րաֆֆին Մելիք-Շահնազարի ընտանիքը ներկայացնում է այսպես. «Մելիք-Շահնազարը ուներ մի քանի կնիկներ, Թագուհի-խանումից ծնվեց Մելիք-Ջումշուդը, Սոնա-խանումից (Դիզակի Մելիք-Եսայու դուստրը-Ա. Մ.) ծնվեց Մելիք-Հուսեին III և մի աղջիկ՝ Հուրի-զատ անունով, որին հայրը կնության տվեց Իբրահիմ-խանին, իսկ Մալայիկ-խանումից ծնվեց Ջհանբախշը, Ջհանգիրը և մի աղջիկ Հումայի անունով»[466]: Րաֆֆու տողերի խկությունը հաստատվում է Բաղդասար մետրոպոլիտի 1849 թ. հոկտեմբերի 8-ի մի գրությամբ՝ Արցախի մելիքների կանանց և որդիների մասին հավաստի տեղեկություններով, որտեղ Մելիք-Շահնազարի ընտանիքի մասին ասվում է հետևյալը. «Վարանդու Մէլիք Շահնազարն ունէր ինքեան զառաջին օրինաւոր կին Թաջում անուն, յորմէ և ծնեալ է օրինաւոր որդի նորա Մէլիք-Ջիմշիդն: Զկնի մահուան յիշեալ Թաջումին, Մէլիք-Շահնազարն էառ առ ինքն ի կենդանի առնէ զկինն Սօնայ և ընդդէմ օրինաց պսակեցաւ ընդ նմա, յորմէ և ծնեալ է որդի նորա Մէլիք-Հիւսէինն, որոյ և ժառանգքն գտանին այժմ յԱւետարանոց գեղջ: Ի կենդանութեան նոյն Սօնայ ապօրինաւոր կնոջն Մէլիք-Շահնազարն կրիւք բղջախոհութեան ամուսնացաւ ընդ օրիորդին Մալակայ, դստեր հարազատ եղբօր հանդուցեալ կնոջն իւրոյ Թաջումի, և յայսմ ապօրէն ամուսնութենէ ծնեալ են Ջահանբախշն և Ջահանկիրն, որոց ժառանգք ևս գտանին յԱւետարանոց: Այլ չունի նա զհարճորդի ժառանգս»[467]:

[466] Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 499:
[467] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 150, վավ. 839, թ. 3-4, կամ՝ Վաւերագրեր Յայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 180, տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. 7429, էջ 8բ, որտեղ կարդում ենք. «Մելիք Շահնազարն ունեցաւ 3 կին. առաջին բսակւած կնկանից ծնաւ Մելիք Ջիմշուդն. Երկրորդ խանմից Յուսէյինն, երրորդ բսակօվէց ծնաւ Մելիք Ջհանբախշն, Ջհանգիր աղան»:

Որպես ասվածի շարունակություն նշենք, որ պահպանվել է Ռուսաց կայսեր հրամանագիրը՝ Մելիք-Շահնազարի ապօրինի կապերից ծնված որդիներին օրինավոր ժառանգ չճանաչելու վերաբերյալ, որտեղ գրված է. «Յիշեալ Մէլիք-Շահնազարն ըստ ամենայնի ապօրինապէս է պսակեալ ընդ Սօնայ և Մալակ ըստ անուանեալ կանանց, ուստի ծնեալքն յայսոցիկ կանանց ըստ զօրութեան եկեղեցական և քաղաքական օրինաց ո՛չ կարին համարել օրինաւոր ժառանգք յիշեալ Մէլիք-Շահնազարի»[468]: Իհարկե, Մելիք-Շահնազարի երկրորդ և երրորդ ամուսնությունների, կամ ինչպես ժողովրդի գիտակցության մեջ է արմատացած՝ ապօրինի կապերից ծնված լինելու հանգամանքը ամենևին էլ չի խանգարել, որ նրա այդ զավակները ևս բաժին ստանան իրենց հոր ունեցվածքից և անգամ ունենան Վարանդայի մելիք դառնալու հավակնություններ: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է 1207 հ. թ. ռամազան ամսին (1793 թ. ապրիլի 12-մայիսի 12) կազմված մի արձանագրության պատճենը, ըստ որի՝ Մելիք-Շահնազարի որդիներ Ջհանբախշն ու Ջհանգիրը իրար մեջ բաժանում են իրենց հայրական ունեցվածքը, որոնցից առաջինին բաժին է ընկնում Ամարաս (Աղ Օղլան) գյուղում գտնվող այգին տան հետ, նաև Ջանախչի գյուղում գտնվող այգին և հնձանը, իսկ Ջհանգիրին՝ Բեքիջանում գտնվող այգին ու 30 Թավրիզի թուման գումարը[469]: Իսկ Հուսեինը, որի քույր Հուրիզատ խանումը Շուշիի Իբրահիմ խանի կինն էր, վերջինիս աջակցությամբ ցանկացել է դառնալ Վարանդայի մելիք: Այնուամենայնիվ, Մելիք-Շահնազարի ավագ որդի Մելիք-Ջումշուդին հաջողվել է տիրանալ գավառի իշխանությանը: Պահպանվել է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ 1794 թ. օգոստոսի 8-ին նրան ուղղված

[468] Վաւերագրեր Յայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 123, տե՛ս նաև Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 175, վավ. 282:
[469] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 240: Վավերագրի հակառակ կողմում մակագրված է. «Ջհանպախշին Ջհանգիրին տուս եկած թարկ տավան է»:

ցավակցական նամակը, որպես «մխիթարութիւն վասն մահուան հօրն, և շնորհաւորութիւն յաջորդելոյն իւրոյ պիշխանութիւն նորին»[470]: Մելիք-Ջումշուդն իշխանության է եկել իր հոր աջակցությամբ կայացած Ղարաբաղի խանության դեմ անհաշտ պայքար մղելու վճռականությամբ:

Իսկ Մելիք-Հուսեինը մահացել է 1801 թ.: Նրա տապանաքարին, որը գտնվել է Մելիք-Շահնազարյանների տոհմական հանգստարանում, փորագրված է եղել.

«Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յիւսէյինին. Թվին ՌՄԾ (1801) էր»:

Մելիք-Հուսեինը թողել է երեք որդի՝ Մանասան բեկ, Ավագջան և Փարամազ բեկ անուններով: Մանասան բեկը և Ավագջանը վաղ են մահացել, ինչպես վկայում են նրանց շիրմաքարերի արձանագրությունները.

«Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի Մանասան բէկին. Թվին ՌՄԾԶ (1807)»:

«Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի... Աւաքճանին, Թվին ՌՄՀԲ (1823)»[471]:

Փարամազ բեկի մասին տեղեկանում ենք Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի՝ 1854 թ. հունվարի 22-ին Էջմիածնի Սինոդին ուղղված գրությունից, ուր խոսվում է նրա որդի Միրզաբեկի (ծն. 1834) և Աննա Շահնազարյանի ազգակցական կապի մասին, առաջինի՝ վերջինի հետ ամուսնանալու ցանկության կապակցությամբ: «Ի մելիք Հիւսէինէն ծնեալ է յիշեալ Փարամազ բէկն»[472],-կարդում ենք այդ վավերագրում: Նրա ժառանգները ևս բնակվում էին Ավետարանոց գյուղում:

[470] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 1, թ. 90, տե՛ս նաև Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս, Թիֆլիս, 1899, էջ 640:

[471] Դիվան, V, Արցախ, էջ 151:

[472] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 175, վավ. 278, թ. 1:

* * *

Վարանդայում Մելիք-Ջումշուդի իշխանության գալը համընկավ Իրանի արյունարբու տիրակալ Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների ժամանակաշրջանի հետ: Վերջինս 1797-ին երկրորդ անգամ է արշավում Անդրկովկաս: Իբրահիմ խանը, երկյուղելով ներքինի շահի դաժանությունից, ընտանիքով փախչում է Դաղստան՝ իր աներ Օմար խանի մոտ: «Իբրև լուաւ Աղա Մամատ շահն, թէ փախեաւ ապստամբեալ խանն Իբրահիմ ի քաղաքէ Շուշոյ՝ եկ եւ եկն տիրեաց նմա առանց բանի պատերազմի. եւ եա ածել զառաջեաւ զամենայն իշխանսն հայոց՝ եւ չարչարեալ զնոսա բազմատեսակ տանջանօք, զի զստոյգն ասացեն զորքանութենէ յընչից իւրեանց»[473]: Իսկ «ձերբակալվածների մեջ էին Վարանդայի Մելիք Շահնազարի որդի Մելիք Ջումշուդը, Մոլլա Փանահ Վաղիֆը և շատ ուրիշ ազնվականներ ու իշխանավորներ»[474]: Մելիք-Ջումշուդը, Աղա Մահմադ խանին 70.000 ռ. տուգանք տալով, հազիվ է ազատում իր գլուխը[475] և, օգտվելով վերջինիս անակնկալ սպանությունից, նախքան Իբրահիմ խանի վերադարձը, իր քրոջ որդու՝ Գյուլիստանի Մելիք-Ֆրեյդունի հետ փախչում է Վրաստան: Այս դեպքերի մասին հիշատակություններ են թողել նաև իրենք՝ փախստական մելիքները: Այսպես, Մելիք-Ջումշուդի՝ 1798 թ. դեկտեմբերի 23-ին գրված և Պավել I ցարին ուղղված խնդրագրում կարդում ենք. «Աղայ Մահմատ խանին մտեալ յամրոցն Շուշի՝ զմնացեալ ինչս իմ զկնի զթագուցեալս զգուշութեամբ, յափշտակեալ էառ յինէն, և ինքն ի նոյնում ամրոցի սպանեալ եղև, իսկ ես ըստ վէրոյ դրելոյն երկուցեալ ի դառնալոյ Իբրէհիմ Խալիլ խանին, թողեալ զտունս, տեսանելով գյարմար դիպուած ի փրկել զիս,

[473] Տե՛ս մեր «Յ. Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը» հրապարակումը, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիւ 1-12, էջ 351:

[474] Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 74:

[475] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 461.

զգաւառս և զամենայն զհպատակս իմ, բռնադատեալ եղէ ան-
տի որդով իմով Պօղոսիւ և քեռորդւովն մէլիք Փիրիդոնիւ և
իւզբաշի Պետրոս բէգիւն աստ ընդ իս եղելօվքն հանդերձ նմա-
նապէս և կնաւս և այլօվք զավաքօքս գրեθէ մերկ փախչիլ առ
յաղθազգեաց զօրքն ռուսաց, որ ի Վիրս»[476]: Ահա նաև Մելիք-
Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանի վկայությունը. «Ի յարձակելն ի
վերայ Ղարաբաղու Աղայ Մահմատ խանին, յորմէ և տանջողն՝
Իբրահիմ Խալիլ խան, եղև բռնադատեալ փախչիլ առ լեզկին և
ի մերկանալն ի նմանէ ըստ մնացեալ գոյից բարերարին իմոյ և
գերապատուելի մօրեղբայր մէլիք Ջիմշիտին և ի սպանանելն
Աղայ Մահմատ խանին ի Ղարաբաղ ի յիւրոցն, ես յիշեալ մօր-
եղբայրըն իմով փախեայ անտի ի Վիրս»[477]: Մելիք-Ջումշուդի
Արցախից հեռանալու մասին գրում է նաև Ամենայն Հայոց
կաθողիկոս Ղուկաս Կարնեցին հնդկահայ նշանավոր գործիչ
Շ. Շահամիրյանին հասցեագրված նամակում. «Այլ յետ ներ-
քինւոյ կործանմանն մելիք Ջումշուտն կասկածեալ յԻբրահիմ
խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս
ետ ի Տփխիս»[478]: Պետք է նշել, որ մելիքների հեռանալը հայրե-
նիքից խարխլեց Խամսայի մելիքությունների հիմքերը և, ընդ-
հակառակն, ամրապնդեց Իբրահիմ խանի դիրքերն Արցախում:

1797-1798 թթ. Արցախում սով է սկսվում, որին հաջոր-
դում է ժանտախտը: Քաղցից և համաճարակից փրկվելու նպա-
տակով մելիքների հպատակները, հիմնականում՝ Գյուլիստան
և Վարանդա գավառների ազգաբնակչությունը, ևս գաղթում
են Վրաստան:

Այնտեղ սովատանջ հայ ազգաբնակչությանը վատ են
ընդունում: Վրաց ազնվականությունից հուսախաբ՝ 1799 թ.
Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը և Մելիք-Ֆրեյդուն

[476] Там же, с. 494.
[477] Там же, с. 491.
[478] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշա-
վանքների մասին (1795-1797 թթ.), աշխ.՝ Ռ. Տիտանյանի, Ե., 1981, էջ 97:

Մելիք-Բեգլարյանը գնում են Ս. Պետերբուրգ՝ անձամբ աղեր-
սամատույց լինելու կայսրի մոտ իրենց պահանջների մասին:
Պավել I-ի 1799 թ. հունիսի 2-ի հրովարտակի համաձայն՝
Գյուլիստանի Մելիք-Աբովին է տրվում Բոլնիսի գավառը, Մե-
լիք-Ֆրեյդունին՝ Աղջակալան և Բորչալուի մի մասը, իսկ Բոր-
չալուի մնացած մասը և Լոռին վրաց Գեորգի XII թագավորի
1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակով տրվում է Մելիք-Ջում-
շուդին[479]: Բացի այդ, կայսրը դեսպանորդ մելիքներին պարգե-
վատրում է գերազանցության շքանշաններով և մշտական թո-
շակ նշանակում. Մելիք-Ջումշուդին՝ տարեկան 1400 ռ., Մե-
լիք-Ֆրեյդունին՝ 1000 ռ., իսկ Մելիք-Ջումշուդի որդի Մելիք-
Պողոսին՝ 600 ռ.[480]:

1799 թ. հունիսի վերջին մելիքները բռնում են տուն-
դարձի ճանապարհը: Մատենադարանում պահվող Մելիք-Շահ-
նազարյանների տոհմական փաստաθղθերում մենք հայտնա-
բերել ենք Պավել I-ի կողմից 1799 թ. հունիսի 18-ին մելիքնե-
րին տրված անցաθղθի մի պատճենը[481], որը կարևոր տեղե-
կություններ է պարունակում նաև մելիքների պատվիրակութ-
յան կազմի վերաբերյալ: Այդ փաստաթղթից տեղեկանում ենք,
որ մելիքներից բացի պատվիրակության կազմում են եղել
Մելիք-Ջումշուդի որդի Պողոսը, Մելիք-Ֆրեյդունի աներորդի
Գեորգի Կալոևը, յուզբաշի Պետրոս Մադաթովն իր ազգական
Ռոստոմի՝ ապագա գեներալ Վ. Մադաթովի հետ, ինչպես նաև
վեց սպասավորներ՝ Գասպար Սերգեևը, Ադամ Եգորովը, Եգան
Լազարևը, Մովսես Անտոնովը, Եսայի Կիրիլովը և Իվան (Հով-
հաննես) Դանիելովը: Մելիքներին ուղեկցում էր նաև Ղզլարի
բնակիչ Դանիել Աթաջանովը: Պատվիրակությունը Թիֆլիս էր
վերադառնալու Մոսկվայի և Աստրախանի վրայով: Հայտնի է,

[479] АКАК, т. I, Тифлис, 1866, с. 637.
[480] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 166գ, АКАК, т. II,
Тифлис, 1868, с. 1149, "Кавказская старина", 1872, N 2, с. 35.
[481] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 166դ, թ. 4բ-5ա:

որ նրանք 1799 թ. օգոստոսին արդեն գտնվում էին Աստրախանում: Այստեղից մելիքներն ու Պ. Կովալենսկին 1799 թ. սեպտեմբերին ճանապարհվել են Ղզլար, «որտեղից Թիֆլիս են հասել միայն նոյեմբերի 26-ին»[482]:

Սակայն Արցախի մելիքների դերը Վրաստանում, հատկապես վրաց Գեորգի XII թագավորի մահից (1800 թ. դեկտեմբերի 28-ին) և Ռուսաստանի հետ Վրաստանի միավորումից հետո, բավականին ընկնում է: Այդ իսկ պատճառով մելիքները և նրանց հպատակները սկսում են վերադառնալ Արցախ: Մելիքներից առաջինը օրինակ է ծառայել Մելիք-Ջումշուդը, որը «1805 թ. ծախել է Լոռին Վրաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսին-Պուշկինին 6000 ռուբլով եւ յուր հարազատների հետ վերադարձել Ղարաբաղ»[483]:

Ուշագրավ է այն փաստը, որ Մելիք-Ջումշուդն աջակցել է մայոր Դ. Լիսանևիչին՝ պարսից բանակին միանալ փորձող Իբրահիմ խանի ոչնչացման գործողությունն իրականացնելիս, որը տեղի է ունեցել 1806 թ. մայիսի 8-ի գիշերը: Թերևս, այդ ծառայությունն ի նկատի ունենալով էլ գեներալ-ֆելդմարշալ Գուդովիչը 1809 թ. ապրիլին Մելիք-Ջումշուդին տված վկայականում գրում է. «Նա առավել եռանդունություն հանդես բերեց Ղարաբաղի խանությունը Ռուսական տերությանը հպատակեցնելու ժամանակ»[484]: Բարձր գնահատելով Մելիք-Ջումշուդի մարտական գործունեությունը՝ «գեներալ Գուդովիչը ռուսական բանակի գլխավոր շտաբին զեկուցագիր է ներկայացնում նրան փոխգնդապետի աստիճան շնորհելու մասին»[485]:

Եվ այդպես, ի նկատի ունենալով ռուսական գահին մատուցած Մելիք-Ջումշուդի բազմաթիվ ծառայությունները՝

---

[482] Չոբանեան Պ., Հայ-վրաց-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնից, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Ե., 1996, էջ 178:
[483] Լալայան Ե., Երկեր, հ. 3, Ե., 2004, էջ 113:
[484] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 167, պատճեն:
[485] Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978, էջ 155:

Ալեքսանդր I կայսրը 1807 թ. հունվարի 21-ին նրան շնորհել է փոխգնդապետի աստիճան[486]: Գեներալ-մայոր Խոտենցովը 1811 թ. հոկտեմբերի 21-ին նրան տված վկայագրում նշում է. «Ղարաբաղի խանությունը թշնամու հարձակումներից պաշտպանելու նպատակով այս երկրամաս իմ ժամանումից և ինձ վստահված զորաջոկատի՝ Ասկերանի մոտ գալուց սկսած, այսինքն՝ հուլիս ամսից մինչև սեպտեմբերի 21-ը տևած ճամբարային ընկերակցության ժամանակ, նա՝ պ. մելիքը, իր հեծելազորով աջակցելով խմբից անբաժան գտնվում էր իմ մոտ, դրանով աջակցելով Նորին Կայսերական Մեծության բանակի բոլոր զորաշարժերին և գործողություններին»[487]: Վերջին վկայագիրը արժեքավոր է նաև այն առումով, որ Մելիք-Ջումշուդին է տրվել փաստաթղթում նկարագրվող մարտական գործողություններին անմիջականորեն մասնակցած ռուս բարձրաստիճան զինվորականի կողմից:

Մելիք-Ջումշուդը վախճանվել է 1812 թ. ապրիլի 25-ին և թաղվել Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանատանը: Մատենադարանում պահվող Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի թղթոնում մենք հայտնաբերել ենք նրա կողմից Մելիք-Ջումշուդի մահվան կապակցությամբ վերջինիս հարազատներին ուղարկված մխիթարական նամակի սևագրությունը, որտեղ ասված է. «Պայծառափայլ, ազգասէր և հայրենասէր իշխան Մէլիք Ջիւմշուտ Մէլիք Շահնազարեան յատուկ սիրելին մեր արդարև իբրև զարեգակն ծաւալելով զգանազան շնորհս բարերարութեան ի վերայ այդր եղեալ հասարակութեանն մերազնէից, փայլէր գեղեցիկ քաղաքավարութեամբ և իշխանական փառաւորութեամբ, որոյ վասն մինչ օր քան զօր ուրախ եղեալ փառաւորէաք զտուօղն ազգի մերում այնպիսի

---

[486] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 166^{t}:
[487] Նույն տեղում, թղթ. 240, վավ. 171: Այդ փաստաթղթերի հրատարակությունը տե՛ս Մաղալյան Ա., Վավերագրեր Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի ռազմական գործունեության մասին, «ԲՀԱ», 2006, թիվ 2, էջ 3-9:

ազգասէր և հայրենասէր իշխանի, յանկարծակի եկն եհաս ի լսելիս մեր լուր ցաւալի մահու նորա...»[488]:

Մելիք-Ջումշուդը թողել է երեք զավակ՝ Մելիք-Պողոս, որն ուղեկցում էր հորը Ռուսաստանյան առաքելության ընթացքում, Բեհրամ-բեկ և Մարգարիտ: Վերջինիս անունը մի արծաթե խաչի վրա կարդացել է Մ. Բարխուտարյանցը. «ընծայեցաւ սուրբ խաչս Ղեւոնդեայ հայրապետին Մարքարիտ Մելիք Ջիմշիտեանց 1876 ամի»[489]: Բեհրամ-բեկի անունը քանիցս հիշատակվում է և՛ արձանագրություններում, և՛ վավերագրերում: Այսպես, Աղվանից Ս. Գրիգորիս կաթողիկոսի աջի վրա Մ.Բարխուտարյանցը կարդացել է. «Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրամ բէկ Մելիք Ջիմշիտեան Մելիք Շահնազարովն. ՌՄԿԱ (1812) էր»[490], իսկ Ներքին Թաղավարդի Ս. Աստվածածին եկեղեցու դռան ճակատակալ քարին՝ «Շինեցաւ եկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածածնին արդեամբ եւ ծախիւք ազնիւ Բէրամ աղայի որդւոյ պօլկովնիկ Մելիք Ջիւմշիտեան Շահնազարեանց ի յիշատակ կենդանեաց եւ համայն ննջեցելոց իւրեանց ի Քրիստոս 1840 թվ.»[491]: 1822 թ. Շուշի այցելած Երուսաղեմի միաբաններից մեկի նվիրակության հաշվետոմարի նվիրատուների ցուցակում ևս հիշատակված է «պարոն ազնիւ Բահրամն Մէլիք Ջումշուտեան»[492]: Իսկ 1836 թ. դեկտեմբերի 17-ին գրված մի փաստաթղթում, որը Կովկասյան հետևազորի գեներալի միջնորդագիրն է՝ ուղղված ռազմական նախարարին նրան ռոճիկ նշանակելու խնդրանքով, կարդում ենք.

«Մուսուլմանական գավառների պ. կառավարիչը վկայում է ինձ Ղարաբաղի գավառի երկու մահալների կառավարիչ, այնտեղի բնակիչ պրապորշչիկ Բահրամ բեկ Շահնազարովի ջերմեռանդ և նախանձախնդիր ծառայության մասին, որը լինելով չունևոր և մահալ-նաիբի պաշտոնի դիմաց չստանալով գանձարանից ոչ մի ռոճիկ, իր անշահախնդրությամբ և անբասիր վարքով մշտապես արժանացել է տեղի ղեկավարների բարեհաճությանը, ինձ կպատվեք ծաուշադրությանը և այդ միջոցով ձեռք բերել իր կողմից կառավարվող բնակիչների առանձնահատուկ հարգանքը, ինչպես բեկերի դասի, այնպես էլ մյուսների շրջանում:

Ի նկատի ունենալով այդպիսի հավաստումները պրապորշչիկ Բահրամ բեկ Շահնազարովի գերազանց և օգտակար ծառայության մասին, ես որպես նրան խրախուսում հետագա ծառայության մասին, ես որպես նրան խրախուսում հետագայում ևս նմանապես ծառայելու համար, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրել Ձերդ պայծառափայլությանը՝ միջնորդելու Նորին Կայսերական Մեծություն Տեր Արքայից կարգադրություն ստանալու՝ նրան իր աստիճանի համեմատ ռոճիկ նշանակելու մասին, ըստ Վրաստանի բանակային հետևազորի դրույքի, և ինչ կհետևի սույն բարեհաճությանը, ինձ կպատվեք ծանուցումով: Ընդ որում պատիվ ունեմ ավելացնելու, որ Բահրամ բեկ Շահնազարովը պրապորշչիկի աստիճան ստացել է 1818 թվականին լեզգիների դեմ իրագործված արշավանքի համար»[493]: Ինչպես երևում է հետագա վավերագրերից[494], հարցը լուծվել է դրականորեն: Պահպանվել է նաև Բեհրամ Շահնազարյանի՝ 1843 թ. հուլիսի 16-ի շնորհակալագիրը կաթողիկոսին՝ իր որդի Միքայել-բեկի և Սոֆիա Մադաթյանի նշանադրության գործը հօգուտ նրանց որոշելու համար[495]:

* * *

Մելիք-Ջումշուդին հաջորդած Մելիք-Խուդադադը (1793-1833) Վարանդա գավառի վերջին տիրակալն էր: Փաստա-

[488] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 239, սևագիր:
[489] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 208:
[490] Նույն տեղում, էջ 233:
[491] Նույն տեղում, էջ 206:
[492] Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարան, ձեռ. 3216, էջ 20:

[493] РГВИА, ф. 395, оп. 92, д. 154, л. 1, կամ՝ Մաղալյան Ա., Փաստաթղթեր Վարանդայի Մելիք-Շահնազարյանների տոհմի վերաբերյալ, «ԲՀԱ», 2005, թիվ 2, էջ 7:
[494] Там же, л. 2-4, նաև՝ Մաղալյան Ա., նշվ. աշխ., «ԲՀԱ», 2005, թիվ 2, էջ 7-9:
[495] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 104, վավ. 29, կամ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 121-122:

թղթերը վկայում են, որ Մելիք-Խուդադադի իշխանության սկզբնական շրջանում Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը՝ Իբրահիմ խանի որդին, փորձել է տեղի-անտեղի միջամտել նրա գործերին: Այսպես, պահպանվել է Մեհտի Ղուլի խանի 1228 հ. թ. (1813) հրամանագիրը՝ տրված Մելիք-Խուդադադին, որտեղ նշվում է, որ Մելիք-Ջհանբախշին, որպես մերձավոր պաշտոնյայի, պետք է հատկացնել 25 ընտանիք, որոնք նրա համար հողագործությամբ կզբաղվեն, որպեսզի նա իր կարիքները հոգա[496]: Իսկ ահա գեն. Ռտիշչևի՝ Մեհտի Ղուլի խանին 1816 թ. հունվարի 20-ին ուղղված նամակում այդ մասին կարդում ենք.

«Ղարաբաղի Մելիք-Խուդադադ Շահնազարովն ինձ բողոք ներկայացրեց այն մասին, որ Ձերդ Գերազանցությունը նշանակել եք նրա մոտ Հաջի բեկ անունով Ձեր պրիստավին, որն իր իշխանությունը այն աստիճանի է տարածել, որ զրկել է նրան իր հպատակների նկատմամբ իշխանության իրավունքից: Եվ պարտական լինելով տքնել այս երկրամասը բնակեցնող բոլոր ազգերի բարեկեցության համար, իմ պարտքն եմ համարում առաջարկել Ձերդ Գերազանցությանը, որպեսզի դուք այս ստանալուց հետո անհապաղ հետ կանչեք Ձեր մոտ նշանակված Հաջի բեկին, Մելիք-Խուդադադին հնարավորություն ընձեռելով ազատ և անկաշկանդ կառավարել իր հպատակներին, քանի որ նա պարտական է Ձեզ միայն պարտավորություններով, տեղական սովորույթի համաձայն, իսկ իր սեփականության կառավարման գործում ոչ մի կողմնակի անձ խառնվել չի կարող և պարտավոր չէ, ռուսական կառավարման մեջ գոյություն ունեցող կարգի համաձայն: Այդ իսկ պատճառով հաղորդելով վերոգրյալը Ձեզ ի գիտություն, ես մնում եմ համոզված, որ Ձերդ Գերազանցությունը որպես ռուսահպատակ կհետևեք սույն օգտակար կանոնին, ինչը և թույլ չեք

[496] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 252: Վավերագրի հակառակ կողմում մակագրված է. «25 տան թալղան ի Խուտայտայտէն»:

տա խախտել Ձեր մոտ գտնվող ձրիակեր բեկերից և ոչ մեկին, այլապես հակառակ դեպքում այս կարգի պահպանման համար ձեռք կառնվեն այլ միջոցներ»[497]: 1816 թ. հունվարի 20-ի մեկ ձեռք կառնվեն այլ միջոցներ... Տիխանովսկուն հանձնարարված դրությամբ գեն. Ռտիշչևը գեն. Տիխանովսկուն հանձնայլ գրությամբ գեն. Ռտիշչևը գեն. Տիխանովսկուն հանձնարարում է հետևել սույն առաջարկության կատարմանը, ինչպես նաև խանի կողմից հալածանքների ենթարկվելու դեպքում իր հովանավորության ներքո վերցնել Մելիք-Խուդադադին[498]:

Մելիք-Խուդադադը կառավարել է Վարանդայում մինչև իր մահը՝ 1833 թվականը: Նրա տապանաքարին, որը գտնվել է մելիքական հանգստարանում, փորագրված է եղել.

«Մէլիք Խուդամթ իշխող Վարանդայ,
Թոռն ըստ մարմնոյ Մէլիք Ջիւմշիւտայ,
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ եւ յարակայ,
Ամաց քառասնից ել սա յաշխարհէ,
Ամաց քառասնից ել սա յաշխարհէ,
Ջերծ արդ գտանի յամէնայն չարէ.
Ջայս վէմ ետ շինել առն իւրում ի ձօն,
Ի պատիւ սորա կին սորին զգօն.
Թվ. ՌՄՁԲ (1833) էր»[499]:

Լեոն և Բ. Ուլուբաբյանը սխալմամբ Մելիք-Խուդադադին համարել են Մելիք-Շահնազարի որդին[500], այնինչ, ինչպես երևում է նրա տապանագրից, նա Մելիք-Ջումշուդի թոռն է և ծնվել է Մելիք-Շահնազարի մահից մեկ տարի անց՝ 1793 թվականին: Մելիք-Խուդադադի կինը իշխան Հովսեփ Բեհբությանի դուստր Մարիամն (1807-1837) էր[501]:

[497] Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 158, վավ. 140ա, պատճեն:
[498] Նույն տեղում, թղթ. 158, վավ. 140բ, պատճեն:
[499] Դիվան, V, Արցախ, էջ 150:
[500] Լեո, Խոջայական կապիտալ, էջ 163, Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, էջ 183:
[501] **Hewsen R.**, The Meliks of Eastern Armenia III, "REArm.", 1975-1976, XI, p. 243.

Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Ջհանբախշը, որի մասին խոսք եղավ վերևում, մահացել էր 1822 թ., ինչպես վկայում է նրա սույն տապանագիրը.

«Այս է տապան Մէլիք Ջհանբախշին,
Իշխող Վարանդայ գաւառին
Ազնիւ որդոյ Մէլիք Շահնազարին.
Վախճանեցաւ 1822»[502]:

Մեզ հայտնի տեղեկությունների համաձայն՝ Մելիք-Ջհանբախշը երկու կին ուներ: Առաջին կնոջից նա ունեցել է երեք որդի՝ Խոսրովը, Ադամը, Լալան[503], և մեկ դուստր՝ Նանագյուլը, որի անունը կարդում ենք մի ավետարանի հիշատակարանում. «Գրեցաւ ի 1845 ամի փետ. 18-ին. այս յիշատակ հայերէն աւետարանս տուեալ եղեւ ի գիւղն Խունիշինակ Սուրբ Աստվածածնայ եկեղեցւոյն, որ է ընծայողն Ջանաղչու (Աւետարանոց) գիւղին բնակիչ Մելիք Ջահանբաղշի որդի դուստր Նանակուլ Մելիք Շահնազարեանց եւ այլ մին սուրջաւ (չուրջաւ) իր արծաթի չափուասովն»[504]: Նրա մյուս կնոջից ծնվել է Գրիգոր բեկը, որի մասին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի՝ 1854 թ. հունվարի 22-ին Էջմիածնի Սինոդին ուղղված մեզ արդեն ծանոթ տեղեկագրում կարդում ենք. «Ծնունդ նոյն իսկ Գրիգոր բէկի լեալ է ոչ եթէ յօրինաւոր կնոջէ Ջահանբախշին, այլ ի հարճէ Ջահանբախշին Թումար անուանելոյն»[505]:

Մելիք-Ջհանբախշի որդի կապիտան Խոսրով Մելիք-Շահնազարյանի՝ 1826 թ. ապրիլի 29-ին կազմված ծառայությունների ցուցակից երևում է, որ այդ ժամանակ նա եղել է 32 տարեկան[506], այսինքն՝ ծնվել է 1794 թվականին: Մելիք-Ջհանբախշի որդի Ադամն իր հերթին ունեցել է երեք որդի՝ Կարա-

---

502 Դիվան, V, Արցախ, էջ 150:
503 ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2, թ. 3, 4, 19-20, 24-25, կամ՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 174, 175 և 176:
504 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 222:
505 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 175, վավ. 278, թ. 1:
506 Նույն տեղում, թղթ. 240, վավ. 177, պատճեն:

պետ, Ալեքսան և Թուման անուններով[507]: Վերջիններիս և Խ. Մելիք-Շահնազարյանի մյուս եղբորորդիներին ծննդյան վկայականներ տալու հետ կապված քաշքշուկը մեծ արձագանքներ էր ստացել 1840-ական թվականների սկզբներին: Այդ հարցի լուծման համար միջնորդել են անգամ Հովհաննես և Խաչատուր Լազարյանները[508]: Ի վերջո, Բաղդասար մետրոպոլիտը 1845 թ. փետրվարի 22-ի գրությամբ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին հայտնում է, որ ստացել է նրա կոնդակը, որի համաձայն և ծննդյան վկայականներ է տվել Խ. Մելիք-Շահնազարյանի եղբորորդիներին ու հորեղբորորդիներին[509]:

Իսկ Մելիք-Շահնազարի որդի Ջհանգիրը ունեցել է Շիրխան անունով որդի: Մատենադարանում պահվում է Մեհտի Ղուլի խանի 1818 թ. մարտի 11-ի համաձայնագիրը՝ Շիրխանին 9-րդ եգերյան գնդում զինվորական ծառայության ընդունելու համար[510]:

Վերջում հետաքրքիր է տեսնել, թե ինչպես են արտահայտվել Մելիք-Շահնազարյանների տան շառավիղները Վարանդայում իրենց նախնիների տիրապետության մասին: Մասնավորապես, «Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին» ձեռագրում այդ մասին կարդում ենք. «Ղարաբաղու նահանգում Վարանդոյ գավառումն մեր յին ժամանակներում ամենևին մահմետական չի եղէլ, բացի միայն հայք են եղէլ տիրապետողներն»[511]: Իսկ Մելիք-Ջհանբախշի որդի Խոսրովը իր եղբայր Լալային 1836 թ. նոյեմբերի 24-ին ուղարկած նամակում գրում է. «Վարանդու մօզալն որ կայ, Խամսայի հինգ մելիքին, մին մելիքին հայրդնիցն այ, ինչպէս որ մեծի շայհ

---

507 Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 122-123:
508 Լազարյանների նամակը Բաղդասար մետրոպոլիտին տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 129-130, իսկ վերջինիս պատասխանը տե՛ս նույն տեղում, էջ 130-131, կամ՝ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 107, գ. 44, վավ. 213:
509 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 56, բնագիր:
510 Նույն տեղում, թղթ. 240, վավ. 178, պատճեն:
511 Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9:

Ապասի ժամանակիցն մինչի Փանայ խանի, և Փանայ խանի ժամանակիցն մինչ Երմօլովն Կուրճիստան կալուն. Վարանդու մէլիքութիւնն մէլիք Պաղուն ժառանկներին ձեռիցն ո՛չ դուրս էյ եկած, ո՛չ էլ ատամ էյ դուրս կալուն, ո՛չ էլ կարելի այ դուրս բերելին, պատճառ որ. այսպէսի ատրիճանն պարսից թաքայորնէրի փարմաննէրի զօրութիւնօվն տված էյ որթոց զորթի իմ նախնիացն... որպէս որ այհայ (ահա) Բճ (200) տարի ավէլ էյ, որ Վարանդույ ժօղօվուրթն ծառայում էն մէլիք Պաղուն ժառանկացն»[512]:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Մելիք-Շահնազարյանների տան ներկայացուցիչները, որպես տոհմիկ ազնվականներ, մտան ռուսական ծառայության մեջ[513]:

512 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վավ. 167: Հրատարակությունը տե՛ս Մաղալյան Ա., նշվ. աշխ., «ԲՀԱ», 2005, թիվ 2, էջ 9-10:

513 Ցարական բանակում որպես սպա ծառայած Մելիք-Շահնազարյանների անվանացուցակը տե՛ս РГВИА, ф. 409, оп. 1, л. 1. Նշենք նաև, որ Խոսրով Մելիք-Շահնազարյանը 1849 թ. հուլիսի 2-ին Ս. Պետերբուրգից Ներսես կաթողիկոսին ուղղած նամակում իրենց տոհմի՝ զինվորական ծառայության մեջ մտած պատանիների մասին գրում է. «Ահա տասնաւոր մանկտիք գտանին աստ յԱրքունի կորբուսս, յուսմունս զինուորականութեան առ ի յապայն բարեդիպութեան ինքեանց» (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոս. դիվան, թղթ. 148, վավ. 604):

Զ) ԴԻԶԱԿ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ԵԳԱՆՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Դիզակ (Տիզակ, Դուզախ) գավառի մելիքության տարածքը սկսվում էր Դիզափայտի լեռնային գոտուց և Իշխանագետից ու տարածվում մինչև Արաքս գետը՝ Խուդափերինի կամրջի մոտ: XVIII դարի սկզբից Դիզակ գավառի իշխողներն էին Մելիք-Եգանյանները (Մելիք-Ավանյաններ), որոնց ամրոցը գտնվում էր Տող ավանում, Գտիչ վանքի դիմաց: «Ապարանքի նախնական հորինվածքի մեջ մտնող շինություններից պահպանվել են գլխավոր մուտքի դարպասը, երկու թաղածածկ սենյակ և երկհարկանի ընդունարանը, ինչպես նաև դրանց կից այլ սենյակների ու պարսպապատերի որոշ հատվածներ»[514]:

Սույն ենթագլխում համառոտ ներկայացված են Մելիք-Եգանյանների ազգաբանությունը և տոհմածառը[515]:

Դիզակի Մելիք-Եգանյանների ծագման մասին եղած տեղեկությունները խիստ իրարամերժ են: Այսպես, XIX դարի պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը գտնում է, որ «այնտեղի մելիքները հնում Թուրքիայից (Ռում) են եկել»[516]: Իսկ ըստ Գտչավանքի վանահայր Առ. Կոստանյանցի[517], Միրզա Ադիգյոզալ-բեկի[518], Ս. Ջալալյանցի և Րաֆֆու՝ Մելիք-Եգանյանները Ղարաբաղ են եկել Լոռուց: Ս. Ջալալյանցը և Րաֆֆին վերջիններիս սերված են համարում Լոռի-Մելիքյաններից, իսկ որպես նրանց նախնական բնակավայր մատնանշում

514 Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 30, տե՛ս նաև Սարգսյան Մ., Մելիքական բնակելի համակառույց Տող ավանում, «ՊԲՀ», 1987, էջ 132-140:

515 Սփյուռքահայ հեղինակ Ք. Դեդեյանն իր «Դեդեյանները» գրքում բերում է Մելիք-Եգանյանների տոհմաբանական մի տախտակ (տե՛ս **Dedeyan C.,** Les Dedeyan, Venise, 1982, ներդիրը), սակայն նրա կազմած տոհմածառը կառուցված է բացառապես Րաֆֆու հաղորդած տեղեկությունների հիման վրա, իսկ մելիքների իշխանության տարեթվերը նշելիս թույլ է տվել մի շարք անճշտություններ:

516 **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, էջ 40:

517 Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, էջ 12-13:

518 **Мирза Адигезаль-бек,** Карабаг-наме, с. 57.

են Լոռի գավառի Արդու գյուղը[519]: Լեոն այդ կապակցությամբ գրում է. «Մինչդեռ ավանդությունների մի ճյուղը Դիզակի մելիքներին համարում է Պարսկաստանի Ուրմիա քաղաքից գաղթած, մյուսը պնդում է, թե նրանք եկել են Լոռուց, իսկ մի երրորդ ճյուղ ուղղում է այս երկրորդ պատմվածքը՝ ասելով, թե նրանք բնիկ լոռեցի չէին, այլ գաղթել էին Լոռի նույն Դիզակի երկրից»[520]:

Ըստ ավանդությունների՝ XVIII դարի սկզբին «Մէլիք-Եգան, որդի Ղուկաս վարդապետի, ի նահանգէն Լոռւոյ ի գեղջէն Արդուոյ[521], յազգէ Լօրիս Մելիքեանց, մարտ եդեալ ընդ իւրում ազգականի Էլիզբարայ, որ ի նմին ժամանակի տիրէր երկուց նահանգաց՝ Լոռւայ և Տաշիրայ, ի բաց առեալ զՄժաւէթն և զԲաբաժանաձորն, իսկ յո՛չ ստանալն նմա վերաբնակի ընդ հօր իւրում աղխիւն հանդերձ աշխարհն Արցախու ի նահանգն Տիզակայ և ի գիւղ Տող»[522]: Այն, որ վերոհիշյալ Էլիզբարը, իրո՛ք, պատմական անձնավորություն է եղել, ակնհայտ է դառնում Ս. Ջալալյանցի հրապարակած հետևյալ հիշատակագրից. «Ի թուին Հայոց ՌՃԼԳ (1684)-ին յիշատակ է աջս Պօղոս եպիսկոպոսին ի վայելչութիւն Յովհաննու Օձնեցւոյն. Աստուած ողորմի հանգուցեալ Սարգիս եպիսկոպոսին. Յակոբ եպիսկոպոսին, և տէր Գրիգորին և տէր Առաքելին, որ էր սպասաւոր քալանթարութեան Բէգդաշբէգին և Էլիզբար բէգին»[523]: Սակայն, առայժմ բացակայում են Մելիք-Եգանյանների տեղափոխման մասին վկայող ստույգ փաստեր, և վերջին խոսքը կրկին պատկանում է ավանդություններին:

---

519 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 259, Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 428:

520 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 257:

521 Արդու (Արդվի) – հինավուրց նշանավոր գյուղ է: Հնում մտնում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Տաշիրք գավառի մեջ: Ըստ տեղացիների՝ հնում կոչվել է նաև Մելիքգյուղ, քանի որ եղել է Լոռու մելիքների (Լոռիս-Մելիքյաններ) և քալանթարների (Քալանթարյաններ) կալվածքը (տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 415-416):

522 Մատենադարան, ժապ. 367, էջ 4:

523 Ջալալեանց Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 50 (ընդգծումն իմն է-Ա. Մ.):



Տող գյուղի տանուտեր Եգանի վկայությամբ 1717 թ. հաստատված կալվածագիր



Մելիք-Եգանի վկայությամբ
1727 թ. հաստատված կալվածագիր



Մելիք-Եգանի որդի Արամի վկայությամբ
1738 թ. հաստատված կալվածագիր



Մելիք-Եսայու և Մելիք-Բախտամի վկայություններով
1773 թ. հաստատված կալվածագիր



Մելիք-Աբասի համաձայնությամբ
1796 թ. կազմված կալվածագիր



Մելիք-Աբասի համաձայնությամբ
1797 թ. կազմված կալվածագիր



Մելիք-Աբասի կամքով
1797 թ. կազմված կալվածագիր



Մելիք-Բախտամի որդի Բեգլարի կողմից Վանեսին և Գրիգորին վաճառված հողամասի 1811 թ. կալվածագիրը

Մելիք-Եգանի ընտանիքի մասին չափազանց կարևոր տեղեկություններ է պարունակում Տողի Ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային դռան վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Որ ողորմի Քրիստոս Աստուած. յիշատակ է խաչկալս պարոն Մելիք Եկանիս եւ ծնողաց իմոց Մօսէս, Ղուկաս վարդապետին, մօրն իւր Շհօին եւ ծնողին իմ Մարիամին եւ եղբարն իմ Արամին եւ քոյրն իմ Խանում, կողակիցն Խանումաղին, որդի Արամին. Ըսայուն (Եսայուն), Պաղտամին, Օսեփին, Պաղրին, Առաքելին, Սափարին, Պաղումին, Վերտին, կողակիցն Գողալին, դուստր Թավարին, Խանպաճին, Խաթուն Խաթյուն, եւ այլն եղելոց ողորմի ասէք. ամէն»[524]:

Ղուկաս վարդապետը, որը նորոգել Գոշավանքը, ինչպես վկայում է նրա տապանագիրը[525], վախճանվել է 1715 թ.:

Թուրք-պարսկական պատերազմում Ղուկաս վարդապետի որդի Մելիք-Եգանը օսմանյան թուրքերի դեմ պայքարում ցուցաբերած եռանդի համար Նադիր շահից ստացել է Խամսայի մելիքությունների գերագահությունը: Նրա անունով տոհմի անդամները սկսել են կոչվել Մելիք-Եգանյաններ (Մելիք-Ավանյաններ): Պարսիկ պատմագիր Մուհամմադ-Քյազիմը Մելիք-Եգանին հիշատակում է որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործչի, որը Նադիրի կողմից մեծ սերը և վստահության էր արժանացել[526]: Նա 1736 թ. փետրվարին Մուղանի դաշ-

---

524 Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 198, հմմտ.՝ Դիվան, V, Արցախ, էջ 178, N 633, որտեղ բաց է թողնված մեկ տող: Արձանագրության՝ Մ. Բարխուտարյանցի ընդօրինակած ՌՃԷ (1658) տարեթվի վերաբերյալ վիմագրագետ Ս. Բարխուդարյանը իրավացիորեն նշել է. «Անշուշտ թվականի մեջ սխալ կա, բաց է թողնված տասնավորը»: Կարծում ենք, այնպես, ինչպես Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության մեջ է, այս դեպքում ևս թվականի տասնավորը «Ձ» է, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Տողի Ս. Հովհաննես եկեղեցու վերանորոգումը Մելիք-Եգանն իրականացրել է ՌՃՁԵ (1736) թվականին, իսկ սույն արձանագրությունը, բնականաբար, կարող էր թողնել միայն դրանից հետո: Ըստ այդմ, սույն արձանագրության թվականը պետք է լինի ՌՃՁԷ (1738):

525 Դիվան, V, Արցախ, էջ 178:

526 Փափազյան Հ., նշվ. աշխ., «ԲԵՀ», 1972, թիվ 2, էջ 76:

տավայրում մասնակցել է Նադիր շահի թագադրությանը[527], *իսկ 1737-ին վերջինիս կողմից նշանակվել Խամսայի մելիքությունների խան և բեկլարբեկ (իշխանաց իշխան): «Դիզակի տերն այս ժամանակ արդեն ալեզարդ և իմաստուն մի իշխանավոր էր, իր անունը պսակած հակաթուրքական անվեհեր սխրանքներով»*[528]*: Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության մեջ ժամանակագրական կարգով հակիրճ նկարագրված են նրա իշխանության օրոք տեղի ունեցած որոշ հիշարժան իրադարձություններ: Ահավասիկ այդ արձանագրությունը պատմաբան Հ. Փափազյանի վերծանության թարգմանությամբ.*

«ՌճՁԶ (1737) թ.: Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես Ղուկաս վարդապետի որդիս, որ իմ անունն է Մելիք-Եգան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քյոխվա [տանուտեր] կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասպ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա] ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին եկավ և [երկիրը] նրա ձեռքից վերցրեց: Սրան էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից [Կենտրոնական Իրան] շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Ջարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպիսությունը այսպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»[529]*:*

[527] Աբրահամ Կրետացի, Պատմություն, էջ 80:
[528] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 149:
[529] Փափազյան Հ., Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼՀԳ», 1985, թիվ 5, էջ 77:

Մեր տրամադրության տակ կան մի քանի նորահայտ վավերագրեր, որոնց օգնությամբ կարող ենք հետադարձ հայացք նետել վիմագրում արձանագրված առանձին իրադարձությունների վրա: Այսպես, Հայաստանի ազգային արխիվում պահվում է ՌճԿԶ (1717) թվականը կրող մի առուծախի պայմանագիր, ըստ որի Ջիլավանց Տիհու տղա Զալին իր ջրաղացը վաճառում է իր հորեղբայր «Սարքիսայ տղա Իսուն»[530]*: Փաստաթուղթը կարևոր է ոչ այնքան իր բովանդակությամբ, որքան այն հանգամանքով, որ այդ պայմանագրի վրա դրված է Եգանի կնիքը՝ «Եկան քօխան վկ.» մակագրությամբ: Այսպիսով, այս փաստաթղթի շնորհիվ պարզ է դառնում, որ 1717 թ. Եգանը տակավին Տող գյուղի տանուտերն էր:*

Անցնելով առաջ, նշենք, որ նույն թղթապանակում պահվում են 1727-1728 թթ. երկու այլ վավերագրեր, որոնցում Եգանն արդեն հիշատակվում է մելիքի տիտղոսով: Այդ փաստաթղթերից առաջինում Եգանը հանդես է գալիս որպես առուծախի մի գործարքի վկա՝ «մելիք Եկաեանըն վկա» մակագրությամբ[531]*, իսկ երկրորդ վավերագիրն արդեն տրված է նրա կողմից: Նկատի ունենալով վերջին փաստաթղթի կարևորությունը, այն բերում ենք ամբողջությամբ. «Ես մէլմէլիք Եկանըս իմ Արչայձոր վերգալի դվէ խծեցի խօջայ Ղասումին գամ տէր Մօսէսին, ապլուն իմ կամօվըս դվի Լ (30) թմանու էս մին թարափ քարէ կապըն, մին թարափ խաչըն, մին թարափըն ախպուրըն, մին թարափ Հկադվայ կեդըն, օրիշ մարթու պան չընի, թվն. ՌճՀէն (1728) յունվրի ամէս էր»*[532]*: Սույն փաստաթղթե-*

[530] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 4:
[531] Նույն տեղում, թ. 3:
[532] Նույն տեղում, թ. 2: Ի դեպ, այս փաստաթուղթը հրապարակել է Ա. Հակոբյանը, սակայն նա վավերագիրը թվագրել է ՌճԼէ (1688) թվականով (հետևանք՝ Լ-Հ գրչական սխալի հետևանքով առաջ եկած շփոթի), դրանով Մելիք-Եգանին մոտ կես դարով կտրելով իր ժամանակաշրջանից (տե՛ս Յակոբեան Ա., Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, «Հանդէս ամսօրեայ», 1999, թիւ 1-12, էջ 283, ծնթ. 66): Ակնհայտ է, որ Եգանը մելիքի տիտղոսով չէր կարող հանդես գալ գոնե մինչև 1717 թ., երբ

րը խոսում են Հ. Փափազյանի այն տեսակետի իրավացիության օգտին, ըստ որի Եգանի մելիքական իրավունքները շահ Թահմասպ II-ի (1722-1732) կողմից հաստատվել են 1724-1725 թթ., երբ վերջինս աֆղաններից հալածված անցել էր Ատրպատական[533], իսկ ինչպես տեղեկանում ենք Մատենադարանի թիվ 1915 ձեռագրի վերջում Մեսրոպ վարդապետի թողած հիշատակարանից, նաև նախքան այդ «ՌՃՀԲ (1723) թուին հոկտե[մ]բերի Ի և Թ (29)-ին թագաւորն Շահ Թահմազ եմուտ ի քաղաքն Նախչաւան»[534]: Սեֆյան շահը փորձում էր միավորել ուժերը՝ դիմագրավելու օսմանյան բանակի ներխուժմանը Անդրկովկաս և Ատրպատական: Ակներևաբար, այդ ժամանակ էլ հաստատվել են Եգանի մելիքական իրավունքները:

Հայ-ռուսական հարաբերությունները արտացոլող փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում առավել կոնկրետացնել Եգանի՝ մելիք նշանակվելու տարեթիվը: Այդ վավերագրերում Եգանն առաջին անգամ մելիքի տիտղոսով հիշատակվում է 1724 թ. մարտի 20-ով թվագրված մի փաստաթղթում[535], ուստի, ամենայն հավանականությամբ, նրա մելիքական իրավունքները շահ Թահմասպ Բ-ի կողմից հաստատվել են 1723-ին կամ 1724 թ. սկզբին:

Հետագայում արդեն, ինչպես հաղորդում է վիմագիրը, Մելիք-Եգանը Նադիր շահի կողմից նշանակվել է Արցախի հայկական մելիքությունների ընդհանուր կառավարիչ: Նա Արցախի մելիքությունների երկդարյա պատմաշրջանի ամենահզոր տիրակալն էր: Պատահական չէ, որ Նադիր շահը հայ մելիքին «բաբալըղ» (հայրացու) էր անվանում, իսկ Նադիրի պես բռնակալի համակրանքին արժանանալը ամենևին էլ հեշտ չէր:

ինքն իրեն հիշատակում է որպես տանուտեր: Պատահական չէ, որ սույն փաստաթղթում հիշատակված Ղասումի անունը հանդիպում է նաև նույն գործում ընդամենը մեկ թերթ այն կողմ կարված ՌՃՀԸ (1729) թ. մեկ այլ վավերագրում:

533 Փափազյան Հ., նշվ. աշխ., «ԼՀԳ», 1985, թիվ 5, էջ 77:

534 Մատենադարան, ձեռ. 1915, էջ 280բ:

535 Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 92.

Մելիք-Եգանը և նրա որդի Մելիք-Արամը հռչակված էին նաև իրենց հարստությամբ: Դիզակի մելիքության մեծանուն տիրակալ Մելիք-Եգանը վախճանվել է 1744 թ. և թաղվել Տող գյուղի եկեղեցու գավթում, ուր գտնվում էր Մելիք-Եգանյանների տոհմական գերեզմանատունը: Նրա շիրմաքարը կրել է հետևյալ չափածո տապանագիրը.

«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մէլիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգէն,
Քան զիշխանս Հայոց երկրին: ՌՃՂԳ (1744)»[536]:

Րաֆֆին և մի շարք այլ ուսումնասիրողներ սխալմամբ որոշ դեպքերում Մելիք-Եգանին (Ավան) նույնացնում են Ավան յուզբաշու (մոտ 1670-1735) հետ, իսկ վերջինիցս ծագած Սմբատյանների, Մելիքյանների և Հայրապետյանների տոհմերը սերված համարում Մելիք-Եգանից ու նրա եղբորից[537]:

536 Դիվան, V, Արցախ, էջ 178:

537 Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 446, 530: Այս սխալը գալիս է Հ. Արղությանի՝ 1790 թ. մի գրությունից, որտեղ Մելիք-Եգանը (Ավան) և Ավան յուզբաշին նույնացված են (տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, М., 1838, с. 57): Այս սխալը նկատել և ուղղել է Լեոն (տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 176, նույնի՝ Խոջայական կապիտալ, էջ 362): Այդ մասին տե՛ս նաև ՀՍՀ, հ. 1, էջ 604, սակայն ՀՍՀ-ի հոդվածի հեղինակ պրոֆ. Ա. Աբրահամյանը, գրելով այս շփոթի մասին, ինքը ևս կրկնում է տարածված սխալը՝ նշելով, որ «Ավան յուզբաշին 1717-ին հարազատների հետ Լոռուց տեղափոխվել է Վարանդա, հաստատվել Շոշ գյուղում» (էջ 603):
Այս թյուրիմացության պարզաբանմանը կարող է նպաստել նաև Մատենադարանում 9300 թվահամարի տակ պահվող 1756 թ. գրված «Գիրք գանձարանի» հիշատակարանը, որի գրիչ Աստվածատուրը որդին է «Ազարիէ Ավանեան Շամախեցւոյ» (էջ 1), և կարծում ենք՝ Ռուսաստանում հաստատված Ավան յուզբաշու շառավիղներից մեկն է:

Մելիք-Եգանի քույր Աննա խաթունը Վարանդայի տիրակալ Մելիք-Հուսեինի (մահ. 1736) կինն էր: Մելիք-Եգանի կինը Գոհար խանումն էր:

Մելիք-Եգանին հաջորդում է ավագ որդին՝ Մելիք-Արամը (մահ. 1745), ապա կրտսեր որդին՝ Մելիք-Եսային (Սայի, ծն. 1720 - մահ. 1781): Պահպանվել է Նադիր շահի կողմից 1746-ին Եսայուն տրված հրովարտակը, որտեղ կարդում ենք. «Նշանակում եմ նրան Դիզակ գավառի մելիք կամ կառավարիչ, դնելով նրա վրա պարտականություն՝ ընդունել միշտ գործուն միջոցներ կատարելու մեր բոլոր պահանջները և հետևել պետական շահերին՝ ցույց տալով իր ջերմեռանդությունը դեպի կառավարությունը»[538]: Ժամանակակիցները նրան բնութագրել են այսպես. «Գրասեր և ուսման հետամուտ մարդ է»[539]: Մելիք-Եսային յոթ տարի անընդմեջ պատերազմել է Փանահ խանի, իսկ հետագայում էլ նրա որդի Իբրահիմ խանի դեմ: Վերջինիս կարգադրությամբ էլ դավադրաբար «ի 1230 (1781) թուին Դողու Մալիք Սային սպանեցին»[540]: Նրա կյանքը համառոտ կերպով պատմում է իր տապանագիրը. «Այս է տապան մեծին Մէլիք Եկանի որդի Մէլիք Եսայուն, և էր սա իշխան կարգեալ Նատիր շահէն.: ԼԳ (33) ամ տիրեաց երկիրս Դիզակու և արար բազում քաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն. և էր ինքն պարթև և յոժ զօրաւոր քան զառաջինսն իւր. և թիւ կենաց նորա ԿԱ (61) ամաց, վախճանեցաւ թվին ՌՄԼ (1781), հոկտեմբերի Բ (2)-ին երեքշաբթի. որ ընթեռնուք, մեկ Հայր մեղայ ասացէք. ամէն»[541]: Մելիք-Եսային, մինչև այժմ եղած տեղեկությունների համաձայն, ունեցել է մեկ որդի՝ Բաղդադ բեկ և մեկ դուստր՝ Սոնա անունով, որը Վարանդայի տիրակալ Մե-

[538] Պողոսյան Ֆ., նշվ. աշխ., էջ 204:
[539] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, էջ 103:
[540] Մատենադարան, ձեռ. 3881, էջ 86բ:
[541] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ, էջ 260, Դիվան, V, Արցախ, էջ 179, **Мкртчян Ш.,** Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1989, с. 83.

լիք-Շահնազար Բ-ի կանանցից մեկն էր ու Մելիք-Հուսեին Գ-ի և Հուրիզատ խանումի մայրը: Հայրը Հուրիզատ խանումին համատափոխ արեց և ամուսնացրեց Իբրահիմ խանի հետ:

Մելիք-Եսայուն հաջորդեց նրա եղբայր Մելիք-Արամի որդին՝ Մելիք-Բախտամը, որը մեզ նախածանոթ «Պատմագիրք Սիւնեաց» ձեռագրի հիշատակարանում բնութագրվում է որպես «այր հուչակաւոր, և կարի հարուստ»[542]: Նրան Իբրահիմ խանը ուխտադրժորեն ձերբակալեց և թունավորելով սպանեց (1787 թ.)[543]: Այս իրողությունը հաստատվում է նաև մելիքի տապանագրով. «Յայսմ տապանի հանգչի մարմին՝ քաջ և արի Մելիք-Բախտամին. սա էր որդի Մելիք-Արամին. մահ և վախճան պատմեն սորին՝ մահադեղով Իբրահիմ խանին. և որք հանդիպիք ի տապան սորին, միով բանիւ ողորմի ասէք. ամէն»[544]: Իսկ Մելիք-Արամի կրտսեր որդի Բաղր բեկը վախճանվել էր 1789 թվականին:

Մելիք-Բախտամին հաջորդել է որդին՝ Մելիք-Աբասը, որը Դիզակի մելիքությունը կառավարել է XVIII դ. 90-ական թվականներին: Հայաստանի ազգային արխիվում մենք հայտնաբերել ենք «մէլիք Ապազին մարխաթօվն» կազմված երեք կալվածագրեր, որոնցից մեկը կրում է 1796 թվականը, իսկ մյուս երկուսը գրվել են 1797 թ.[545]: Որպես Դիզակի տիրապետող նրա անունը հիշատակվում է նաև Վարանդայի Մելիք-Ջումշուդի կողմից 1798 թ. դեկտեմբերի 23-ին Պավել I ցարին ուղղված խնդրագրում[546]: Սակայն այս մելիքի իշխանությունը կարճատև եղավ: Նա շուտով Ցոր գյուղում դավադրաբար սպանվեց ծախված հայերի և Իբրահիմ խանի մարդկանց ձեռքով: Այդ սպանությանը նախորդել էին Մելիք-Աբասին կրոնափոխ անելու Իբրահիմ խանի երկար և անհաջող փորձերը:

[542] Մատենադարան, ձեռ. 1488, էջ 218ա:
[543] **Иоаннисян А.,** Россия и армянское освободительное движение..., с. 186.
[544] Դիվան, V, Արցախ, էջ 178:
[545] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 9, 10 և 49:
[546] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 493.

խաների կողմից մելիքական տների ներկայացուցիչներին բռնությամբ մահմեդականացնելու փորձերի կապակցությամբ նշանավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանը դիպուկ նկատել է. «Հիմնականում խաների կրոնական անհանդուրժամտությունը ուղղված էր մելիքական տների դեմ, սրվելով քաղաքական և հաճախ նաև դրա հետ կապված նրանց մուլքադարական իրավունքների դեմ»[547]: Մելիքական տների ներկայացուցիչներին դավանափոխելը խաների կողմից դիտվում էր որպես նրանցից ձերբազատվելու ամենակարճ և արդյունավետ ճանապարհը:

Երկու նորահայտ վավերագրեր վկայում են, որ Մելիք-Բախտամն ունեցել է նաև Բեգլար անունով որդի: Նրա մասին տեղեկանում ենք 1811 թ. երկու կալվածագրերից, որոնց մեջ հիշատակվում է «ողորմած ոգի մէլիք Պախտամի որթի Պակլարը»[548]:

Մելիք-Աբասին հաջորդում է որդին՝ Մելիք-Ղահրամանը (Բաղր-բեկ): Նրա իշխանության օրոք Արցախում սով է սկսվում, որին հաջորդում է ժանտախտը: Ահա Արցախում սկսված սովի և համաճարակի նկարագրությունը, որը հանել ենք այդ դեպքերի ժամանակակից Հովհան Ոսկերչյանի հիշատակարանից. «Ծանրացաւ սովն ի վերայ աշխարհին Արցախու, մինչև մարդկութիւնն եղև իբրև զանասուն խոտաճարակ, որք և ի յեղանակի գարնան իբրև զնախիր ելեալ յանդս՝ ուտէին զխոտս զի մի մեռցին, և այն լինէր նոցա կերակուր մահու. վասն զի աղիք նոցա ապականիւր և ուռուցեալ սևանային և անկեալք յանկարծակի մեռանէին»[549]: Քաղցից և ժանտախտից փրկվելու նպատակով Մելիք-Ղահրամանն իր հպատակների հետ գաղթում է Վրաստան, բայց «հայտնի չէ, թե ուր էր նա

[547] Յովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Ե., 1959, էջ 256:
[548] ՅԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 42-43:
[549] Յովհան Ոսկերչեան, Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, «Կռունկ Յայոց աշխարհին», 1862, թիւ Դ, էջ 287-288, Յայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 103:

բնակություն հաստատել»[550]: Մելիք-Եգանյանների կողմից նա էր ստորագրել 1806-ին Սանկտ-Պետերբուրգ, Մինաս Լազարյանին՝ Ղարաբաղի մելիքների ուղարկած նամակի տակ[551], որը «երեւի թե Արցախական աշխարհի մելիքների վերջին համախոսականն էր, որ արտացոլում էր նրանց միասնության պատկերը, արտահայտում նրանց կամքը, երկրամասի ազատության ու ինքնուրույնության վճիռը, նաեւ երազանքը»[552]:

Իսկ Դիզակում մնացած Մելիք-Եսայու որդի Բաղդադ-բեկին և նրա որդիներին՝ Ասլանին և Վահանին, Իբրահիմ խանը բռնի կրոնափոխ է անում, սակայն չբավարարվելով այդքանով, սպանում է նախ Բաղդադ-բեկին, այնուհետև՝ նրա որդի Մելիք-Ասլանին: Վահանի մասին տեղեկություններ չեն պահպանվել:

Մելիք-Ասլանից մնացել է մի որդի միայն՝ Ֆարհադ բեկը: Վերջինիս անունը հիշատակվում է Առ. Կոստանյանցի կողմից Գտչավանքի կալվածքների մասին 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրում[553]: Նրան 1881 թ. տեսել է Րաֆֆին[554]:

Ֆարհադ բեկը, սակայն, թուրքացել էր և չափազանց հեռացել իր հայրենի արմատներից: Մելիք-Ասլանի անունով այս տոհմի մահմեդականացված ժառանգները սկսել են կոչվել Մելիք-Ասլանովներ, ընդ որում տոհմի ամբողջ կարողությունն անցել է նրանց, իսկ քրիստոնյա մնացածներին ոչինչ չի հասել: Մելիք-Եգանյանների տոհմի մահմեդականությունն ընդունած ճյուղի շառավիղների մասին Առ. Կոստանյանցը 1884 թ. գրում է. «Դարձեալ ի դէնս Մահմետի. այնպէս պնդութեամբ պահեն զօրէնս նորա. կարծեմ թէ Մահմետն բնաւին չէ այնու

[550] Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 31:
[551] «Кавказская старина», Тифлис, 1872, N 2, с. 40-41.
[552] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 176:
[553] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449:
[554] Րաֆֆի, Ճշվ. աշխ., էջ 530, 609:

հոգւով պահպանել»[555]: Այս կապակցությամբ Լեոն ավելացնում է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են և կրում են Մելիք-Ասլանով և Մելիք-Եգանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի և ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար: 1904-1906 թվականների հայ թուրքական ընդհարումների ժամանակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի գազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երբեմնի հավատուրացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թվին Ադրբեջանի մուսավաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր»[556]: Վերջինիս ազգանվանը հանդիպում ենք նաև Ս. Վրացյանի բերած Անդրկովկասյան Սեյմի մուսավաթական ֆրակցիայի ազդեցիկ խորհրդարանականների ցանկում. «Պատգամավորների թվով երկրորդ տեղը գրավում էր «Մուսավաթ և անկուսակցականների խմբակ» ֆրակցիան՝ 30 անդամ, որի մեջ մտնում էին ադրբեջանցի ամենաաչքի ընկնող գործիչները՝ Թոփչիբաշև, Ջաֆարով, Ռասուլ-Զադե, Ուսուպբեգով, Աղաև, դր. Սուլթանով, Խան-Խոյսկի, Մելիք-Ասլանով»[557]: Մենք այս հղումները

[555] Կոստանեանց Առ., Պատմութիւն Գտչայ վանուց, Մատենադարան, ձեռ. 3966, էջ 6ա:
[556] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 364:
[557] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 74:

կատարեցինք ցույց տալու համար, թե դավանափոխությունն
ուր կարող է հասցնել հայ մելիքների շառավիղներին:
Այսպիսով, սույն ենթագլխում կազմված և ամբողջաց-
ված է Մելիք-Եգանյանների տոհմածառը, ներկայացված է
նաև տոհմի բաժանումը երկու մասի՝ քրիստոնյա Մելիք-
Եգանյանների և մահմեդական Մելիք-Ասլանովների, ինչպես
նաև այդ ճյուղերի տեղաշարժերը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում Արցախի մելիքությունները մնացել էին այն միակ ուժը, որոնց հենքի վրա հնարավորության դեպքում կարող էր վերստին հառնել հայոց պետությունը:

Արցախի մելիքները ունեցել են զինուժ, որը հանդիսացել է մելիքությունների հզորության և անվտանգության գրավականը: Մելիքների զինուժի թվաքանակը նրանց իշխանության երկարատև ժամանակահատվածում եղել է փոփոխական: Նրանք առավելագույն թվով բանակ ունեցել են 1720-ական թվականներին, երբ միասնաբար ի վիճակի էին դուրս բերել ավելի քան 20 հազար զինվոր: Սակայն, ցավով պետք է արձանագրել, որ Արցախի մելիքությունների գոյության ավելի քան 200 տարվա պատմության մեջ մելիքների զինուժը, բացառությամբ 1720-ական թթ., այդպես էլ չկարողացավ համախմբվել մեկ դրոշի ներքո, ինչը նաև մելիքությունների թուլացման հիմնական պատճառներից մեկն էր:

Միաժամանակ, փաստերը վկայում են, որ Արցախի մելիքներին հաջողվել է իրենց ռազմական կարողությունները պահպանել ընդհուպ մինչև մելիքությունների ժամանակաշրջանի ավարտը:

Մելիքները, առաջնորդվելով հիմնականում սովորութային իրավունքի նորմերով, իրականացրել են դատավարություն, որը բավարարել է նահապետական կացութաձևով ապրող մարդկանց պահանջները:

Արցախի մելիքները, ներքին կառավարման հարցերում ունենալով գործելու լիակատար ինքնուրույնություն, պատասխանատու էին պետական հարկերի գանձման և ժամանակին շահական գանձարանը մուծելու համար: Այնուհանդերձ, Արցախի մելիքությունների գոյության երկարատև ժամանակահատվածում եղել են այնպիսի տիրակալներ, որոնք խուսա-

փել են նվաճողների հանդեպ հարկային պարտավորություն-
ները կատարելուց: Մասնավորապես, այդպիսի իշխանավորներ
էին Վարանդայի Մելիք-Հուսեինը (1730-1736) և նրա եղբոր-
որդի Մելիք-Միրզաբեկը (1736-1744): Շահական գանձարանին
հարկ վճարելուց բացի, Արցախի մելիքությունների բնակիչ-
ները պարտավոր էին իրենց գավառների մելիքներին վճարել
մելիքյանա կոչվող հավաքական հարկատեսակը:
Մելիքները ակտիվորեն մասնակցել են նաև իրենց գա-
վառներում պաշտոնավարող հոգևորականների նշանակման,
ինչպես նաև եկեղեցիների շինության և վերանորոգման աշ-
խատանքներին:
Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Արցախի
մելիքություններին և դրանցում իշխող մելիքական տների
տոհմաբանությանը: Այստեղ հստակորեն ցույց է տրված հա-
յոց իշխանության շարունակականությունը Արցախում՝ ընդ-
հուպ մինչև այդ երկրամասի միավորումը Ռուսաստանին:
Կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել և
ամբողջացրել ենք Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրա-
բերդի Մելիք-Իսրայելյանների, Կուսապատի Աթաբեկյանների,
Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնա-
զարյանների և Դիզակի Մելիք-Եգանյանների տոհմածառերը:
Ներկայացված է նաև Մելիք-Հովսեփյանների տոհմի սերումը
Մելիք-Բեգլարյաններից, Աթաբեկյաններինը՝ Հասան-Ջալալ-
յաններից, Մելիք-Շահնազարյաններինը՝ Դոփյաններից, իսկ
Մելիք-Ասլանովներինը՝ Մելիք-Եգանյաններից:
Ցույց են տրված այս տոհմերի տեղաշարժերը և հետագա
տարածումը. Մելիք-Բեգլարյանների դեպքում՝ սկսած Ուտի-
քից մինչև Արցախի Գյուլիստան գավառ, այնտեղից մինչև
Վրաստան՝ Բորչալուի (այժմ՝ Մառնեուլի) և Բողնոփորի
(այժմ՝ Բոլնիսի) գավառներ, Լոռի և Տավուշ, Մելիք-Իսրայել-
յանների դեպքում՝ Սյունյաց աշխարհի Մաղավուզ և Խնածախ
գյուղերից մինչև Ջրաբերդ գավառ, այնտեղից մինչև Գանձա-

կի գավառ, Աթաբեկյանների դեպքում՝ Կուսապատից մինչև Ռուսաստան, Պարսկաստան, Եվրոպա, ինչպես նաև Բաքու, Թիֆլիս, Երևան և Էջմիածին, Մելիք-Շահնազարյանների դեպքում՝ Գեղարքունիքից մինչև Վարանդա, իսկ Մելիք-Եգանյանների դեպքում՝ Լոռուց մինչև Դիզակի Տող գյուղը, այնտեղից մինչև Բաքու (մահմեդականություն ընդունածների ժառանգները՝ Մելիք-Ասլանովները և Մելիք-Եգանովները):

Իգական սեռի ներկայացուցիչները մեր կազմած տոհմածառերում անբավարար են ներկայացված, ինչը պայմանավորված է սկզբնաղբյուրներում նրանց մասին եղած տեղեկությունների սակավությամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ մելիքություններից մեկի տիրակալի սրտում բույն չէր դրել դավաճանության ախտը, ըստ էության ազատ էին նրանք և ինքնիշխան, իսկ երբ Վարանդայի Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը, վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին հաջողվեց զգալիորեն թուլացնել Արցախի մելիքությունները: Եվ միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնազարի թույլ տված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը:

Այդ առումով Արցախի մելիքությունների պատմությունը նաև միաբան լինելու մի յուրօրինակ դաս է գալիք սերունդներին: Այդ դասը հաշվի չառնելու դեպքում մեր Հայրենիքի այլևայլ անկյուններում ևս կարող են հայտնվել նորօրյա փանահներ և իբրահիմներ:

Եվ, վերջապես, եթե այսօր ունենք ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ապա այդ պետության կայացման ենթախորքում, անտարակույս, իրենց անուրանալի դերն ունեն նաև Արցախի հերոսական մելիքությունները, որոնց տիրակալներին հաջողվեց միջնադարյան դժնդակ պայմաններում պահպանել այդ երկրամասի հայեցի նկարագիրը:

АРТАК МАГАЛЯН

АРЦАХСКИЕ МЕЛИКСТВА И МЕЛИКСКИЕ ДОМА В XVII-XIX ВВ.

РЕЗЮМЕ

История Арцахских меликств является важнейшим звеном в истории Армении. Несмотря на то, что в дореволюционный период и в советское время армянские авторы написали ряд монографий, посвященных истории Арцаха в позднем средневековье, история армянских меликств недостаточно изучена, и многие вопросы истории этих княжеств нуждаются в новом освещении. В частности, одним из таких вопросов является подробное исследование рамок деятельности, осуществляемой арцахскими меликами. До сих пор недостаточно изучена и генеалогия арцахских меликских домов. Именно исследованию этих вопросов и посвящена данная монография.

Временной промежуток, исследуемый в работе — с начала XVII в. до 1828 г., когда меликства Арцаха прекратили свое существование после присоединения Восточной Армении к Российской империи.

Данная книга изложена на основе большого количества рукописей, архивных документов, литографий, работ армянских историографов XVII-XVIII вв., монографий историков дореволюционного и советского периодов.

Во введении обоснованы научное значение и актуальность темы, определены цели и задачи исследования, представлены научная новизна работы и уровень ее изученности.

В первой главе — **"Меликства Арцаха как проявление армянской государственности"**, исследованы вопросы, связанные с правами и обязанностями меликов Арцаха, представлены судебный процесс и налоги, применяемые меликами. Отдельный подраздел посвящен назначению арцахскими меликами священнослужителей, а также их участию в строительстве церквей.

В условиях отсутствия армянской независимой государственности меликства Арцаха были единственной силой, на основе которой, при возможности, могло воскреснуть армянское государство.

Арцахские мелики имели военную силу, которая являлась залогом могущества и безопасности меликств. Численность военной силы меликств изменялась на протяжении длительного периода их властвования. В 1720-х годах они имели армию максимальной численности, когда совместно могли вывести 20 тысяч воинов. Но надо отметить, что на всем протяжении 200-летней истории Арцахских меликств, за исключением 1720-х гг., военная сила меликов так и не смогла объединиться под единым флагом, что явилось основной причиной их ослабления. Вместе с тем, факты свидетельствуют о том, что арцахские мелики сохранили свою военную силу вплоть до завершения меликского периода.

Судебная власть в каждом меликстве (княжестве) Арцаха находилась в руках мелика данной провинции. Тяжелые преступления расследовались меликом, а легкие и сельские тяжбы — назначенными им сельскими старостами. Для судебных разбирательств не было определенных зданий. Суд проходил во дворе дома мелика или в одном из комнат его дворца. Так же не было определенных дней для судебных разбирательств. Однако, предпочтительным днем было воскресенье, когда жители окрестных сел, подчиненных мелику, приходили жаловаться или обжаловать решения сельских старост. Приговор мелика был окончательным и обжалованию не подлежал.

Наказания были разными в зависимости от характера преступления и усмотрения мелика. Самыми распространенными наказаниями были избиение и штрафы, которые платили мелику. Определялись также другие наказания. За особо тяжкие преступления мелик имел право приговорить виновника к смерти.

Обладая абсолютной самостоятельностью, мелики Арцаха были ответственны за взыскание налогов и их своевременный взнос в шахскую казну. Причем, если мелик не выплачивал еже-

годный взнос в шахскую казну, это означало, что он взбунтовался. Несмотря на это, во время длительного периода существования арцахских меликств, были такие властители, которые уклонялись от выполнения налоговых обязательств по отношению к завоевателям. В частности, такими властителями были Мелик-Хусейн, владыка провинции Варанда в 1730-1736 гг., а также племянник последнего Мелик-Мирзабек, владыка той же самой провинции в 1736-1744 гг.

Кроме взноса в шахскую казну, жители арцахских меликств были обязаны платить властелинам своих провинций собирательный налог, названный *меликяной*. Этот тип налога включал все то, что собиралось населением в пользу мелика. Так, по данным Е. Лалаяна, каждая семья была обязана платить мелику 1/5 часть зерновых, подушный налог в три рубля, каждые 25 домов должны были предоставить одного слугу и каждые 30 домов одну горничную для службы в доме мелика. Кроме этих податей, подданные были обязаны раз в году работать для мелика, сеять и собирать урожай.

Мелики активно участвовали в выборах католикосов Гандзасара и в назначении на должности священников в своих провинциях, а также в строительстве и восстановлении церквей.

Вторая глава книги - **"Генеалогические древа меликских домов Арцаха"**, посвящена исследованию Арцахских меликств и генеалогии правящих там меликских домов. Глава построена так, что наряду с генеалогией каждого меликского дома (в основном на базе нововыявленных архивных материалов) представлена история данного меликства. **Здесь четко показана непрерывность армянского владычества в Арцахе вплоть до присоединения Восточной Армении к России.**

На основе проведенных исследований, мы составили и придали целостный вид генеалогическим древам Мелик-Бегларянов Гюлистана, Мелик-Исраелянов Джраберда, Атабекянов Кусапата, Хасан-Джалалянов Хачена, Мелик-Шахназарянов Варанды и Мелик-Еганянов Дизака. Представлено происхождение рода Мелик-

Овсепянов от Мелик-Бегларянов, Атабекянов от Хасан-Джалалянов, Мелик-Шахназарянов от Допянов, а Мелик-Аслановых от Мелик-Еганянов. Представлено также передвижение и дальнейшее распространение этих домов.

В данной главе мы уточнили некоторые хронологические задачи, связанные с датами рождения и смерти, а также правления некоторых меликов.

В заключении отметим, что в целом, меликства были свободны и суверенны до тех пор, пока в сердце правителя одного из них не поселилось чувство вероломства. Когда по попустительству правителя Варанды Мелик-Шахназара II-го, в 1752 г. в Арцахе утвердился Панах хан — глава племени кочевых сарджаллу, ему и его сыну Ибрагиму удалось значительно ослабить армянские меликства. И лишь благодаря героической Арцахской освободительной войне удалось исправить 240-летнюю роковую ошибку, совершенную Меликом-Шахназаром.

В связи с этим история Арцахских меликств это своеобразный урок сплоченности для следующих поколений. Если мы не усвоим этот урок, то в разных уголках нашей Родины могут возродиться новоявленные панахи и ибрагимы.

И, наконец, если сегодня мы имеем свободную и суверенную **Нагорно-Карабахскую Республику,** то в учреждении ее государственности, несомненно свою неумолимую роль сыграли Арцахские героические меликства, правителям которых удалось в тяжелых условиях средневековья сохранить армянский облик страны.

ARTAK MAGHALYAN

THE MELIQDOMS OF ARTSAKH (KARABAKH) AND MELIQ HOUSES IN THE 17-19TH CENTURIES

SUMMARY

The history of the meliqdoms (principalities) of Artsakh is one of the most important parts of the Armenian history. Despite of many works on the late medieval history of Artsakh written by Armenian authors in the pre-Soviet and Soviet periods, the history of the meliqdoms of Artsakh is not sufficiently studied and many aspects of this history still await to be revealed. One of such aspects relates to the detailed realm of activities of the meliqs of Artsakh. Also, the genealogy of the meliq houses of Artsakh has not been studied thoroughly until now. These inter alia are some of the questions examined by this work.

Its study covers the period starting from the 17th century through 1828, when the meliqdoms of Artsakh ceased to exist following the incorporation of Eastern Armenia into the Russian Empire. The book is based on a large number of manuscripts, archival documents, lithographies, works by Armenian historians in the 17-19th centuries, and monographs of pre-Soviet and Soviet historians. This introduction provides the scientific rationale and outline of the topic, identifies the goals and tasks of this study, as well as highlights its scientific novelty and the state of art.

Part One *"The Meliqdoms of Artsakh as Manifestations of the Armenian Statehood"* considers issues related to the rights and duties of the meliqdoms of Artsakh, as well as the judiciary and taxation enacted by the meliqs. A special chapter is dedicated to the appointment of priests by the meliqs of Artsakh and their participation in the construction of the churches.

թէև ունիլ զայն հրաման ի նկատման ի տալն զմետրիքական վկայագիրս վասն ծննդեան և մկրտութեան անձանցն սերելոց ի կանանց անտի Մէլիք-Շահնազարին, սակայն ունելով իմ յայսմ մասին տարակուսութիւն դիմեցայ ես յայտարարութեամբ իմով ի 22 սեպտեմբերի 1843 անցեալ ամի N 104, ի Սիւնհոդոսն և խնդրեցի ի նմանէ զհրաման, յայնմ, թէ՝ մարթէ՞ արդեօք տալ զօրինաւոր մետրիքական վկայագիրս յաղագս ծննդեան մանկանցն սերելոց ի Մայակ և ի Սօնայ կանանց Մէլիք-Շահնազարին, թէ՝ ո՛չ:

5) Նոյն Սիւնհոդոսն առ յիշատակեալ յայտարարութիւն իմ ետ ինձ գիտել հրամանաւ ի 20 նոյեմբերի նոյն ամի ընդ համարաւ 2128, թէ՝ որովհետև ամուսնութիւնք Մէլիք-Շահնազարին ընդ կանանցն Սօնայի և Մայակայ համարեալ են ապօրինաւոր, վասն որոյ և ծնեալքն յապօրինաւոր ամուսնութեանց անտի պարտին համարիլ անհարազատք. ուստի և պատուիրեալ էր ինձ ի տալն զմետրիքական վկայագիրս չափարերական ծանօթութեանց յիշատակել յայնոսիկ զապօրինաւորութիւն ծննդոց նոցա ըստ զօրութեան վճռոյ Սիւնհոդոսին:

6) Զայս հրաման Սիւնհոդոսին Էջմիածնի ի միասին ընդ առաջարկութեան իմում ի 20 դեկտեմբերի նոյն 1843 ամի ընդ N 132 առաքեալ եմ ես ի վիճակային Կանսիստորիայն Ղարապաղու վասն տեղեկութեան և հրահանգութեան:

Յայտ առնելով զերազանցութեանց Ձերոց, ողորմած իշխանապետք! զհանգամանացն յիշատակեալ գործոյն՝ պատիւ ունիմ խնդրել ի Ձէնջ խոնարհաբար, զի եթէ մինչ ցվերահասութիւնն Նորին սրբազնակատար Վեհափառութեանն յիշատակեալ գործոյն անհրաժեշտ հարկաւոր են մետրիքական վկայականք մանկանցն, որ համարին են Կնեազ Խոսրովայ Շահնազարեանց,-միջնորդեցէք առ Նորին սրբազնակատար եպիսկոպոսապետութիւնն կամ ի Սիւնհոդոսն Էջմիածնի վասն հրամանագրելոյ ինձ, կամ Կանսիստորէին Ղարապաղու ի շնորհել նոցա զօրինաւոր մետրիքական վկայականս:

Հարկաւոր համարիմ ծանուցանել Գերազանցութեանց Ձերոց, թէ՝ Կնեազ Խոսրովն չէ խնդրեալ երբէք յինէն գրով տալ յանուն նոցին մանկանց զվկայականս ծննդեան, զորմէ յիշատակէք Ձերդ Գերազանցութիւն ի գրութեան Ձերում:

Ջերմեռանդագին աղօթիւք հայցելով յԱմենաբարձրելոյն խնամոց զպաշտպանութիւն Աստուածեան իւր աջոյն Ձեզ և Ձերայնոց համօրէն ի պարծանս ազգիս բովանդակ, պատիւ ինձ համարիմ մնալ միշտ եռանդուն աղօթիւք և օրհնութեամբ

N 154

Ձերոց Բարձր Գերազանցութեանց
Վեհազնեայ իշխանապետք!
ամենախոնարհ ծառայ և աղօթարար
Մետրապօլիտ Բաղդասար Հասան-Ջալալեանց

Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 107, գ. 44, վավ. 213, թ. 1-5: Բնագիր: Ձեռագիր:

N 27

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԻՃԱԿԱՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ ԸՍՏ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԻ, ԽՈՍՐՈՎ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ՈՒ ՀՈՐԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8 փետրվարի 1845 թ.
Շուշի

Ի Լուսաւորչական Հայոց
վիճակային կանսիստորիայդ Ղարաբաղու

Զառաքելով ի միասին ընդ սմին զիսկն կոնդակի եպիսկոպոսապետի ծայրագոյն պատրիարգի և Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տեառն և Տեառն Ներսիսի, որ ի 10 դեկտեմբերի անցեալ 1844 ամի, ընդ համարաւ 241, գրեալն յանուն իմ, հանդերձ ի նոսին եղեալ զօրս պատճէնիւքն առաջադրեմ կանսիստորիիդ ըստ զօրութեան այնորիկ առնել զտնօրէնութիւն վասն տալոյ ըստ օրինաւոր խնդրագործունեութիւնից զօրինաւոր մետրիքական վկայագիրս եղբօրորդւոց և հօրեղբօրորդւոց ազնուական կապիտան Խոսրովայ Շահնազարեանց Աւետարանոցեցւոյ և պատուիրեմ զմին փութալ յոյժ զարա-

բեալ տնօրէնութենէ կանսիստորիիդ յայտ առնել ինձ, վերադարձուցանելով ինձ զպատճէնս յիշեալ կոնդակի և պատճէնից:

Վիճակաւոր առաջնորդ Ղարաբաղու

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2, թ. 18: Բնագիր: Ձեռագիր:

N 28

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԱԼԱ-ԲԵԿ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15 փետրվարի 1845 թ.
Շուշի

Ի Հայոց Վիճակային կանսիստորիայդ

Լալայ-բէկ Ջհան-բաշխ-բէկեանն Մէլիք-Շահնազարեանց Աւետարանոցի եկեալ առ իս յայտնեաց ինձ, թէ կամի նա ի մօտոյ խնդրամատոյց լինել ուր հա՛րկ է, վասն առաքելոյ յորդւոց իւրոց զոմանս ի կադեթսկիյ կորպուսն և զոմանս յայլ տեղիս, այլ որովհետև զմետրիքական վկայագիրս վասն ծննդեան և մկրտութեան որդւոց իւրոց չէ ստացեալ նա տակաւին ի կանսիստորիէդ, վասն որոյ դժուարանայ նա առանց այնորիկ կատարել զյիշեալ մտադրութիւն իւր, և խնդրեաց յինէն առ այն զտնօրէնութիւն. ուստի ես իբրև Ատենապետ կանսիստորիիդ առաջադրեմ զմին առնել զտնօրէնութիւն վասն յանձնելոյ զքննութեան առնելի ի մասին ծննդեան և մկրտութեան որդւոց յիշեալ Շահնազարեանին յանձնել անդամոյ դորին Աւետիք քահանային, որ ունի քշանել ըստ այլոց յանձնարարութեանց ի գաւառակն Վարանդու, առաքելով առ նա ընդ հրամանի և զպատճէն օրակրական եզրակացութեան կանսիստորիի կայացելոյն ի 16 յունվարի 1842 ամի ըստ գործոյն, որ յաղագս չնորհե-

լոյ որտուց նոցա մետրիքական վկայագիրս: Բաց յայսմանէ պատուիրիմ զմին յառաքել ի առ յիշեալ անուամն հրամանագրին յաւելու և զայս, զի նա մի՛ առասցէ զքննութեան վասն օրինաւորութեան և ապօրինաւորութեան սերնդոց յիշեալ Լալայ-բէկի և հօր նորա. այլ միայն վասն հանգամանաց ծննդեան և մկրտութեան երեխայից նորա:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2, թ. 19-20: Բնագիր: Ձեռագիր:

N 29
ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՐԱ ԿՈՆԴԱԿԻ ԽՈՍՐՈՎ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ՈՒ ՀՈՐԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22 փետրվարի 1845 թ.
Շուշի

Նորին Սրբազնակատար Վեհափառութեան
Տեառն և Տեառն Ներսիսի Գերընտիր Եպիսկոպոսապետի և
Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգի
Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Մայր
Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի

Ի թեմակալ առաջնորդէն Ղարապաղու վիճակի
ի Մետրապօլտէն Բաղդասարայ

Յայտարարութիւն

Զսուրբ կոնդակ սրբազնակատար եպիսկոպոսապետութեան Աստուածարեալ Հօրդ Հայաստանեայց, ուղղեալն ի 10-էն դեկտեմբերի անցեալ 1844 ամի ընդ N 241 ի վերայ իմ, առացայ հանդերձ եղելովքն ի նմին և ուրախ եղէ ընդ այն հոգւով չափ խնդութեամբ,

քանզի սպասէի ես այնպիսի կոնդակի հարազատ կարեկցութեամբ համարիւն Ագնուական կապիտան Խոսրովայ Մէլիք-Շահնազարեանց մանկանցն, որք բաց յայնմանէ, զի են որդիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ, համարին և ազգականք իմ իսկ ըստ մարմնոյ սերնդեան: Ուստի ի կատարումն հրամանի, միանգամայն և տիեզերահռչակ ազգասէր կամաց Աստուածապատիւ Հօրդ մեր հասարակաց, բացայայտեցից ի նմին կոնդակի, ես առաջադրեցի ինձ ստորագրեալ Վիճակային Հայոց Կանսիստորիին Ղարապաղու առնել զտնօրէնութիւն յաղագս շնորհելոյ առանց ինչ ակնարկելոյ յաջ կամ յահեակ զօրինաւոր մետրիքական վկայագիրս եղբօրորդւոց կամ հօրեղբօրորդւոց յիշեալ Ագնուական կապիտան Խոսրովայ Ջհանբաշխեան Մէլիք-Շահնազարեանց, որպէս և արժան է:

Աստուածարեալ Տէր, թէ վասն է՞ր մինչև ցայսօր անմարթ լինէր շնորհել զնոյնպիսի մետրիկս եղբօրորդւոց կամ հօրեղբօրորդւոց յիշեալ կապիտան Խոսրովայ Մէլիք-Շահնազարեանց, զայն ունիք Սրբազնակատար Տէրութիւն Ձեր նշմարել յառաջի արարեալ ին և ընդ սմին Աստուածապատիւ անձին Ձերում պատճենէ գրութեանն իմոյ ի վերայ Ազգասէր Վեհազնեայ իշխանապետաց ազայ Յօհաննիսի և ազայ Խաչատրոյ Լազարեանց, որ ի 20-էն սեպտեմբերի անցեալ 1844 ամի ընդ համարաւ 154:

Պարծանս անձին համարեմ մնալ ցմախճան կենացս ամենակատարեալ հպատակութեամբ և մտերմութեամբ:

N 31. Աստուածարեալ եպիսկոպոսապետութեան Ձերում
Ամենաողորմած Հայր մեր
ամենախոնարհ ծառայ Մետրապօլիտ Բաղդասար

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 56, թ. 1-3: Բնագիր: Ձեռագիր:

N 30

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԲԱՂԴԱՍԱՐԻՆ՝ ԽՈՍՐՈՎ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ՈՒ ՀՈՐԵՂԲՈՐՈՐԴԻՆԵՐԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13 մարտի 1845 թ.
Շուշի

Նորին Բարձր Սրբազնութիւն Վիճակաւոր Առաջնորդին
Ղարապաղու Արքեպիսկոպոս Միտրոպօլտին Բաղդասարայ
Վիճակային Հայոց Կանսիստորիիս Ղարապաղու
Յայտարարութիւն

Ի Կանսիստորիիս յայսմիկ լուան դառաջադրութիւն Ձերդ Բարձր Սրբազանութեան յ8 անցեալ փետրվարի N 21. ըստ որում առաքելով ի Կանսիստորիայս զիսկն կոնդակի Եպիսկոպոսապետի, Ծայրագոյն Պատրիարգի և Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տեառն և Տեառն Ներսիսի, որ ի 10 դեկտեմբերի անցեալ 1844 ամի, ընդ համարաւ 241, գրեալն յանունս Ձեր հանդերձ ի նմին եւեալ զորս պատճենիւքն,-առաջադրեք Կանսիստորիիս ըստ զօրութեան այնորիկ առնել զտնօրէնութիւն վասն տալոյ ըստ օրինաւոր խնդրագործունեութեանց զօրինաւոր մետրիքական վկայագիրս եղբօրորդւոց և հօրեղբօրորդւոց Ազնուական կապիտան Խոսրովայ Շահնազարեանց Աւետարանոցեցւոյ, և պատուիրէք ամին փութով յոյժ զարարեալ տնօրէնութենէ Կանսիստորիիս յայտ առնել Ձերդ Բարձր-Սրբազնութեան, վերադարձուցանելով Ձեզ զպատճէնսն յիշեալ կոնդակի և պատճէնից: Ի յիշեալ կոնդակէ երևի, թէ՝ Նորին Վեհափառութիւնն հրամայէ Ձեզ տալ զօրինաւոր մետրիքական վկայագիրս վասն ծննդեան և մկրտութեան եղբօրորդւոց և հօրեղբօրորդւոց կապիտան Խոսրովայ Ջհանբաշխեան Մէլիք-Շահնազարեանց: Ի տեղեկութեանց գործոյն, սկզբնաւորելոյ ի Կանսիստորիիս ի 5 փետրվարի 1841 ամի ըստ հրամանի Լուսաւորչական Հայոց Սիւնհոտոսին Էջմիածնի, որ յաղագս հաստցանելոյ ի նոյն զինչ ինչ տեղեկութիւնս վասն ամուսնութեան Մէլիք-Շահնազարին ընդ կոյս Մալակին հարազատ

դատեր եղբօր նախկին կնոջ նորա Թաճումին,-երևի նախ՝ թէ՝ Սիւնհո-
դատեր եղբօր նախկին կնոջ նորա Թաճումին,-երևի նախ՝ թէ՝ Սիւնհո-
տոսն Էջմիածնի հրամանաւ իւրով ի 28 նոյեմբերի 1841 ամի N 2269.
տուեալ էր Կանսիստորիիս զտեղեկութիւն, թէ՝ նոյնն ըստ վճռոյ
իւրում զամուսնութիւնսն Մէլիք-Շահնազարին Ղարապաղու ընդ
Մալակ և Սօնայ անուն կանանցն համարեալ է ապօրինաւոր:
Երկրորդ՝ Կանսիստորիայս ըստ զօրութեան օրագրական սահ-
մանադրութեան իւրոյ ի 24 յունվարի 1842 ամի, ի մէջի այլոց տն-
օրինեալ էր գյիշեալ հրաման Սիւնհոտոսին Էջմիածնի ունել միշտ ի
նկատման առաւելապէս ի շնորհելն ըստ խնդրանաց անձանց սերե-
լոց ի կանանց Սօնայի և Մալակայ եղելոց ապօրինապես յամուսնու-
թեան ընդ Մէլիք-Շահնազարին՝ զմետրիքական վկայագիրս:
Երրորդ՝ Ձերդ Բարձր-Սրբազնութիւն ի միասին ընդ առաջա-
դրութեան Ձերում ի 20 դեկտեմբերի 1843 ամի N 132. առաքեալ էիք
ի Կանսիստորիայս զիսկն հրամանի Սիւնոտոսին Էջմիածնի, որ ի 20
նոյեմբերի նոյն ամի N 2148, յորմէ պարզապէս երևի, զի Սիւնհո-
տոսն Էջմիածնի տուեալ էր: Գիտել Ձեզ ի հետևումն յայտարարու-
թեան Ձերոյ ի 22 սեպտեմբերի 1843 ամի N 104, թէ որովհետև
ամուսնութիւնք Մէլիք-Շահնազարին Ղարապաղու ընդ կանանցն
Սօնայի և Մալակայ համարեալ են ապօրինաւորք, վասն որոյ և
ծնեալքն յապօրինաւոր ամուսնութեանց անտի պարտին համարիլ
անհարազատք, ուստի և ի տալն զվկայագիրս չափահասական ծա-
նօթութեանց պարտ է յիշատակել յայնոսիկ և զապօրինաւորութիւն
ծննդոց նոցա: Առ որ Կանսիստորիայս ըստ զօրութեան օրագրական
սահմանադրութեան ի 20 նոյն դեկտեմբերի գյիշեալ հրաման Սիւն-
հոտոսին Էջմիածնի ընկալեալ էր ի տեղեկութիւն և հրահանգութիւն
սորին ի հարկաւորեալ դէպս, իսկ գործակալին Ղարապաղու՝ ընդ
որոյ տեսչութեամբ մեծաւ մասամբ գտանին գերդաստանքն սերեալք
ի Մէլիք-Շահնազարէն Ղարապաղու, տուեալ էր գիտել զայսմանէ
հրամանաւ վասն ունելոյ նորա ի նկատման յառնելն յաղագս ժա-
մանակս գքննութիւնս վասն ծննդեան և մկրտութեան, որոյ և իցէ ի
տոհմայնոց կամ ի սերնդոց հանդուցեալ Մէլիք-Շահնազարին Վա-
րանդայ գաւառակին Ղարապաղու: Տիրք առենակալք Կանսիս-
տորիիս յայտնեցին յԱտենի սորին, թէ՝ ի վերանշանագրեալ կապի-
տան Խոսրովն Ջհանբաշխեան Մէլիք-Շահնազարեանց է հարազատ
եղբայր Ադամ-բէկի և Լալայ-բէկի Շահնազարեանց և է հօրեղբօր-

որդի Ասրի Բարայ-բէկի Շահնազարեանց, որք արդէն խնդրագործ են լեալ Կանսիստորիիս վասն շնորհելոյ որդւոց նոցա զմետրիքական վկայագիրս յաղագս ծննդեան և մկրտութեան:

Սահմանեցին-որովհետև Նորին Սրբազնակատար Վեհափառութիւն Տէր Ներսէս գերընտիր Եպիսկոպոսապետն, Ծայրագոյն Պատրիարգ և Կաթողիկոսն Ամենայն Հայոց ցանկայ զրագտուորութիւն զաւակաց տանն Մէլիք-Շահնազարեանց, ուստի և հրամայէ շնորհել եղբօրորդւոց և հօրեղբօրորդւոց յիշեալ կապիտան Խոսրովայ Մէլիք-Շահնազարեանց զմետրիքական վկայագիրս վասն ծննդեան նոցա և մկրտութեան, վասն որոյ Կանսիստորիայս հիմնաւորելով ի վերայ կոնդակի նորին Վեհափառութեան և առաջադրութեան Ձերդ Բարձր-Սրբազնութեան որ և Առենապետի Կանսիստորիիս տնօրինէ շնորհել զաւակաց եղբօրորդւոց և հօրեղբօրորդւոց յիշեալ կապիտան Խոսրովայ Շահնազարեանց զօրինաւոր մետրիքական վկայագիրս վասն ծննդեան և մկրտութեան առանց ակնարկելոյ յաջ կամ յահեակ պահպանելով միշտ զկարգ ընթացից գործոց Կանսիստորիիս: Զորմէ և տայ տեղեկութիւն Ձերդ Բարձր-Սրբազնութեան առաքելով առ Ձեզ զպատճէնս յիշեալ կոնդակի և գրից պատճենից ընդ ստորագրութեամբ Առենակալաց և դրոշմամբ Արքունի կնքոյ:

Անդամք՝ Աւետիք քահանայ
Առաքեալ քահանայ

Կատարող պաշտոնի ատենադպրի՝ Աւագեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 2, թ. 24-25: Բնագիր: Ձեռագիր:

N 31

ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՍԻՆՈԴԻՆ՝ ՄԻՐԶԱԲԵԿ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ՝ ԱՆՆԱ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

22 հունվարի 1854 թ.
Շուշի

Ի Լուսաւորչական Հայոց Սինօդն Սրբոյ Էջմիածնի
ի Վիճակային Կոնսիստորիայէն Հայոց Ղարաբաղու
Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս յայտնիկ լուան զյայտարարութիւն Յակովբ քահանային Տէր Ղազարեանց ծառայողի Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Աւետարանոց գեղջ յ9 անցեալ դեկտեմբերի, յորում գրէ Աւետարանոցեցի Միրզաբէկ Փարամազ-բէկեան Շահնազարեանց ցանկայ մտանել յօրինաւոր ամուսնութիւն ընդ կոյս Աննային Գրիգոր-բէկեան Ջհանբախշեան Շահնազարեանց, յորոց փեսայացուն է 20 ամաց և հարսնացուն 14 ամաց: Ի մէջի յիշեալ անձանցն գոյ այս պարագայ՝ մելիք Շահնազարն Վարանդու ունեցեալ է զերկուս ապօրինաւոր կանայս, յորոց ի միոյն ծնեալ է մելիք Հիւսէինն և ի միւսոյն ծնեալ է յիշեալ Ջհանբախշն: Ի մելիք Հիւսէինէն ծնեալ է յիշեալ Փարամազ բէկն և ի Ջհանբախշէն ծնեալ է յիշեալ Գրիգոր բէկն, սակայն և ծնունդ նոյն իսկ Գրիգոր բէկի լեալ է ոչ եթէ յօրինաւոր կնոջէ Ջհանբախշին, այլ ի հարճէ Ջհանբախշին Թումար անուանելոյն:

Այժմ որպէս և ի վերոյ յիշատակեցաւ որդի Փարամազ բէկի Միրզաբէկն կամի առնուլ ինքեան ի կին զդուստր Գրիգոր բէկի զԱննայն: Զայս բացատրեալ ինքեամբ պարագայս ո՛չ համարէ նա տէր Յակովբն իբրև քահանայ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ, ըստ որում սերելոց ի արդեւք առ պսակադրութիւն յիշեալ անձանցն, ուստի և խնդրէ կողմանէ նախնեաց յապօրինաւոր զուգակցութեանց, յարակցելով գի եթէ յայտնի ի վեր երևեսցին այլատեսակ ինչ արգելք առ պսակն

այն, յայնժամ պարտաւորի նա լինել պատասխանատու առաջի աչաց:

Ի լսելն զայս տէր ատենապետն կոնսիստորիիս Բարձր Սրբազան միտրապոլիտ և Ասպետն Բաղդասար յայտնեալ է յԱտենի թէ՝ Սինոդն Սրբոյ Էջմիածնի զամուսնութիւն մելիք Շահնազարին Ղարաբաղու ընդ Սօնայ և ընդ Մայակ կանայս համարեալ ապօրինաւոր, վճռեալ է զծնունդս ի պսակաց անտի մելիք Շահնազարին համարել նոյնպէս ապօրինաւոր, և հրամանաւ ի 20ն նոյեմբերի 1843 ամի պատուիրեալ է Նորին Բարձր Սրբազնութեան ի տալն սերնդոց յիշեալ կանանցն զմետրիքական վկայագիրս յաղագս ծննդեան և մկրտութեան՝ յիշատակել յայտոսիկ և զապօրինաւորութիւն ծննդոց նոցա, ուստի Նորին Բարձր Սրբազնութիւնն յայտնեալ է նմին, թէ որովհետև մելիք Հիւսէյնն և մելիք Ջհանբախշն են որդիք մելիք Շահնազարին, ծնեալք առաջինն ի Սօնայ կնոջէն և երկրորդն ի Մայակայ, և Միրզաբէկ Փարամազ-բէկեան և Աննայ Գրիգոր-բէկեանն են թոռունք յիշեալ ապօրինաւորապէս ծնեալ եղբարցն մելիք Հիւսէյնի և մելիք Ջհանբախշի, իսկ թոռնեայք մելիք Շահնազարին, վասն որոյ Նորին Բարձր Սրբազնութիւնն ի միջի յիշեալ Միրզաբէկին և Աննային չհամարի զոլ ազգակցութիւն, և զարգելումն ըստ օրինաց Հայոց վասն ազգակցութեանց չէ պարտ տարածանել ի վերայ նոցա, իբրև ապօրինաւոր ծնելոց, մանաւանդ, զի և Գրիգոր-բէկն հայր Աննային է որդի մելիք Ջհանբախշին, ծնեալ ի հարճ Թումարայ և ո՛չ յօրինաւոր կնոջէ նորա:

Առ այս դատողութիւն Նորին Բարձր Սրբազնութեանն համաձայն գտան և Ատենակալք կոնսիստորիային, ուստի սահմանեցին- որովհետև Միրզաբէկն Փարամազ-բէկեան և ԱննայնԳրիգոր-բէկեան են սերունդք ապօրինաւոր կենակցացն մելիք Շահնազարին Ղարաբաղու Սօնային և Մայակայ, և ըստ այսմ ո՛չ համարի ի միջի նոցա արգելք ինչ օրինաց, վասն որոյ ըստ սահմանեալ եղանակին տալ Յակովբ քահանային Տէր Ղազարեանց զհրաման վասն պսակելոյ զյիշեալ խօսեցեալսն: Բայց այսուամենայնիւ խնդրել ի Սինոդէն Սրբոյ Էջմիածնի ամենայարգոյաբար շնորհել կոնսիստորիայիս զլուծումն թէ՝ ի դիպիլ պսակաց ի միջի ապօրէն սերնդոց միևնոյն անձին ընդ միմեանս, և կամ ապօրինաց ընդ օրինաւոր սերնդոց նոյն

անձին պա՞րտ իցէ տնտղել զաստիճան ինչ ծննդոց նոցա, և յորում աստիճանի, թէ ամենևին ոչ:

Զիսկն այսր յայտարարութեան ստորագրեալ են Ատենապետ կոնսիստորիի միտրապոլիտ Բաղդասար, անդամք Յովհաննէս քահանայ Ավշարեանց, Բարսեղ քահանայ Տէր Մովսիսեանց, Սիմէօն քահանայ Տէր Իսրայէլեան և վաւերացուցեալ է ատենադպիր Աթաբեկեանց:

Ընդ իսկականին ուղիղ է՝ օգնական ատենադպրի Ս. Թադիանոսեանց

Համար 38.

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 175, վավ. 278, թ. 1-3: Պատճեն: Ձեռագիր:

N 32
ՍԻՆՈԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՕՐԻՆԱՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՐԴ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

28 մայիսի 1854 թ.
Ս. Էջմիածին

Նորին Սրբազնակատար Վեհափառութեան
Ծայրագոյն Պատրիարգ Կաթուղիկոսի
Ամենայն Հայոց և Ասպետի Տեառն Ներսիսի

ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի

Յայտարարութիւն

Ի Սինոդիս Սրբոյ Էջմիածնի լուան զյայտարարութիւն վիճակային կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու ի 22 այսր ամի Համարաւ 38, յորում գծագրեալ զհանգամանս ազգակցական չաղկապոց ի միջի ազգատոհմին Աւետարանոց գիւղացի Միրզաբեկի Շահնազա-

բեանց, սկզբնաւորելոյ ապօրինի սերնդեամբք ի բազմակնութեանց հաւր նորա Մելիք-Շահնազարեանին փարանդեցւոյ և որդւոյ նորա, խնդրէ ի Սինոդէս զլուծումն վասն բացարձակ ձեռնարկութեան իւրոյ յապագային, թէ ի դիպիլ հարկի պատկակատարութեան ի մէջի անձանց, սերեալց ի բազմակնութենէ միևնոյն անձին, և կամ ապօրինի սերնդոց՝ պա՞րտ իցէ արդեօք վերահասու լինել աստիճանաց սերնդեան նոցա և յորո՞ւմ աստիճանի: Իսկ յարխիւական գործոց Սինոդիս երևի՝ նախ զի Սինոդս վերանկատեալ զգործն կազմեցեալ ի ամին ըստ խնդրագործութեան կոլլեժսկի սեկրետար Չերնիշովին յաղագս որոնելոյ զղարաբաղցի կապիտան Խոսրովու Շահնազարեանց և այլոց զիրաւունս ժառանգելոյ զկայս և զստացուածս հանգուցեալ Վարանդու բնակիչ Մելիք-Շահնազարեանին՝ էգիտ, զի յիշեալ մելիքն օրինաւոր պսակաւ ամուսնացեալ ընդ դստեր Ուլուբարովի Թաջումին ծնեալ էր զմելիք Ջումշուտն, և ապա զկնի վախճանի սոյն կնոջ, բռնաբար բերեալ առ ինքն զկին ումն Սօնայ անուն՝ պսակեալ էր ընդ սմա, յորմէ ծնեալ էր զմելիք Հիւսէյնն, և զկնի ժամանակաց ի կենդանութեան սոյն Սօնայ կնոջ ամուսնացեալ էր Շահնազարն ընդ Մայակ օրիորդին՝ հարազատ դստեր եղբօր առաջին կնոջ իւրոյ Թաջումի, յորմէ և ծնեալ էր զՋահանբախշն և զՋահանգիրն: Ուստի, Սինոդս հրամանագրութեամբ ի 28 նոյեմբերի 1841 ամի համարաւ 2269 ծանոյց կոնսիստորիային Ղարաբաղու, թէ ծնեալքն յայսոցիկ վերջին կանանց՝ ըստ զօրութեան եկեղեցական և քաղաքական օրինաց՝ ոչ կարեն համարիլ օրինաւոր ժառանգք յիշեալ մելիք Շահնազարին:

Երկրորդ՝ վիճակաւոր Առաջնորդն Ղարաբաղու ի 22 սեպտեմբերի 1843 ամի համարաւ 104 խնդրեաց ի Սինոդէս զլուծումն՝ թէ ի տալն սերնդոց մելիք Շահնազարին զվկայագիրս ծննդեան և մկրտութեան պա՞րտ իցէ արդեօք յիշատակել յայնս զապօրէն ամուսնութիւն նորա ընդ Սօնայ և Մայակ անուանեալ կանանց՝ թէ ո՛չ: Ի հետևումն որոյ Սինոդս ի 20 նոյեմբերի 1843 ամի համարաւ 2148 ետ գիտել յիշատակեալ վիճակաւորին՝ թէ որովհետև ամուսնութիւնք մելիք Շահնազարին ընդ Սօնայ և Մայակ կանանց համարեալք են ապօրինաւորք, վասն որոյ և ծնեալքն յապօրինաւոր ամուսնութեանց նորա պարտին համարիլ անհարազատ, ըստ այսմ և ի տալն սերնդոց վերջին ամուսնութեանց նորա զվկայագիրս չափարերական ծանօթութեանց՝ պարտ է յիշատակել յայնս և զապօրինաւորութիւն ծննդեան նոցա:

Սահմանեցին-որովհետև զծագրեալ յարդեան առաջարկութեան վիճակային կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու խնդիրն է պարզ հոգևոր գործ, վասն որոյ ի վերայ հիման 40 և 41 յօդուածոց բարձրագոյն կարգադրութեանն վասն կառավարութեան գործոց եկեղեցւոյ, մատուցմամբ օրինակի այնր առաջարկութեան և զծագրութեամբ վերադարձեալ տեղեկութեանց գործոց Սինոդիս, խնդրել խոնարհաբար զլուծումն առ այն ի Սրբազնակատար Վեհափառութենէ Ձերմէ:

Անդամք Սինոդի՝

Համար 425.

Ղուկաս արքեպիսկոպոս
Մակար եպիսկոպոս
ի տեղի ատենադպրի Ս. Թադիանոսեանց

Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 175, վավ. 282, թ. 1-3: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթագրություններ

1. Պավել Ցիցիանով (1754-1806) – ռուս ռազմական գործիչ, հետևազորի գեներալ: 1725-ին Վախթանգ VI-ի հետ Ռուսաստան տեղափոխված Ցիցիշվիլի իշխանական տոհմից: 1802 թ. սեպտեմբերից Վրաստանի կառավարչապետ: 1806 թ. փետրվարի 8-ին դավադրաբար սպանվել է Բաքվի խանի հետ բանակցությունների ժամանակ:

2. Խոսքը Մելիք-Աբովի որդու՝ Ռուստամ-բեկ Մելիք-Բեգլարյանի մասին է, որը պարսից զորապետ Փիր-Ղուլի խանի 8000 զինվորներից բաղկացած խմբի դեմ մարտում, Փամբակի Ղուրսալի գյուղի մոտակայքում ծանր վիրավորվել է, գերվել ու տարվել Թավրիզ, ուր էլ 1805 թ. գլխատվել է Իրանի թագաժառանգ Աբբաս-Միրզայի հրամանով (տե՛ս Երիցեան Ա., Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ, «Փորձ», 1877/78, թիւ 2, էջ 395):

3. Մուսթաֆա խան – Շիրվանի խան, 1805 թ. հպատակություն է հայտնել Ռուսաստանին: 1820 թ. օգոստոսի 19-ին փախել է Պարսկաստան (այդ մասին տե՛ս АКАК, т. 6, ч. 1, Тифлис, 1874, с. 810):

4. Մեհտի Ղուլի խան (մահ. 1845) – Ղարաբաղի խան, Իբրահիմ խանի որդին: 1806 թ., Իբրահիմ խանի սպանությունից հետո, Ռուսաստանի կառավարության հրամանով հոր փոխարեն խան է նշանակվել, սակայն հետագայում դավաճանել է ռուսներին: Մինչև 1828 թ. ապրել է Իրանում: Այնուհետև ռուսական կառավարությունը նրան թույլատրել է վերադառնալ Ղարաբաղ: Մինչև կյանքի վերջը ապրել է Շուշիում (տե՛ս Шушинский Ф., Шуша, Баку, 1968, с. 25):

5. Իվան Գուդովիչ (1741-1820) – ռուս ռազմական գործիչ, կոմս, գեներալ-ֆելդմարշալ, 1806 թ. նշանակվել է Կովկասի կառավարչապետ: 1809-1812 թթ. եղել է գլխավոր զորահրամանատար Մոսկվայում: 1812-ի փետրվարից՝ պաշտոնաթող (նրա մասին տե՛ս Энциклопедия военных и морских наук, под. ред. генерал-лейтенанта Леера, т. II, СПб, 1885, с. 605-606):

6. Պ. Ներոյսին – ռուսական բանակի գեներալ-մայոր, ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմի մասնակից, Ղարաբաղում տեղակայված ռուսական զորաջոկատի հրամանատար: 1808 թ. հոկտեմբերի 28-ին նրա զորաջոկատը Ղարաբաղում հաղթել է Աբբաս-Միրզայի բանակին (տե՛ս Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. 1, с. 480, 660):

7. Աբբաս-Միրզա (1783-1833) – Իրանի պետական և ռազմական գործիչ, Ատրպատականի նահանգապետ, Ֆաթալի շահի (Բաբա խան) որդին: Գլխավորել է Իրանի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Երկարատև պայքար է մղել Ռուսաստանի դեմ Անդրկովկասի համար:

8. Ալեքսանդր Տորմասով (1752-1818) – ռուս ռազմական գործիչ, կոմս, հեծելազորի գեներալ, 1809-1811 թթ. Կովկասի կառավարչապետ, 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից (նրա մասին տե՛ս Энциклопедия военных и морских наук, под. ред. генерал-лейтенанта Леера, т. VII, СПб, 1895, с. 511-512):

9. Խոսքը Ղարաբաղի Իբրահիմ խանի (1762-1806) մասին է:

10. Մելիք-Խուդադադ Մելիք-Շահնազարյան (1793-1833) - Մելիք-Ջումշուդի թոռը, եղել է Վարանդա գավառի վերջին տիրակալը (նրա մասին տե՛ս նաև АКАК, т. VII, Тифлис, 1878, с. 461-462, Մաղալյան Ա., Արցախի մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», 2005, թիւ 1-4, էջ 176-178):

11. Իվան Դիբիչ (1785-1831) - գեներալ-ֆելդմարշալ, կոմս: 1815-ից եղել է առաջին բանակի շտաբի պետ, 1823-ից՝ գլխավոր շտաբի պետ:

12. Շամիրխան Մելիք-Բեգլարյան (1790-1850) - Գյուլիստանի գավառի տիրակալ Մելիք-Ֆրեյդունի որդին: Պատանդ է եղել Շուշվա Իբրահիմ խանի մոտ, որտեղ և սովորել է պարսկերեն: Հետագայում ծառայել է Կովկասյան գլխավոր հրամանատարության դիվանագիտական գրասենյակում թարգմանի պաշտոնով: Մասնակցել է 1817 թ. Երմոլովի առաքելությանը Թեհրան, այնուհետև ռուսական

դեսպան Մալցովիչի թարգմանն էր Թեհրանում (տե՛ս Թադևոսյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր. Ե., 1975, էջ 164, 553-554, նաև՝ Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 1302, թ. 22):

13. Նարիման Մելիք-Շահնազարյան - Պարսկաստանում ռուսական դեսպանության թարգմանիչ: Սպանվել է 1829 թ. հունվարի 30-ին Թեհրանում, ռուսաց դեսպան Ա. Գրիբոյեդովի հետ (տե՛ս О причинах убийства Грибоедова. «Кавказская старина», 1872, N 1, с. 28):

14. Բահրամ-բեկ Մելիք-Շահնազարյան - Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Ջումշուդի որդին (տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 206, 233):

15. Փանահ խան (ծն. 1693-մահ. 1762) - վաչկատուն թուրքական ջիվանշիր ցեղի մի ճյուղի՝ սարջալլուների ցեղապետը, որն օգտվելով Արցախի մելիքների երկպառակություններից և համագործակցելով Վարանդայի Մելիք-Շահնազարի հետ՝ վերջինիս թողտվությամբ 1750-ականներին հաստատվել է Արցախի սրտում և այնտեղ հիմնել առաջին այլացեղ ու այլակրոն իշխանությունը՝ Ղարաբաղի խանությունը:

16. Ալեքսեյ Երմոլով (1777-1861) - ռուս զինվորական և պետական գործիչ, գեներալ: 1816-ին նշանակվել է Առանձին կովկասյան կորպուսի հրամանատար, Կովկասի գլխավոր զորահրամանատար և կառավարիչ: 1817-ին դիվանագիտական հանձնարարությամբ մեկնել է Իրան: Կովկասում իրականացրել է դաժան գաղութային քաղաքականություն, ղեկավարել Հյուսիսային Կովկասի նվաճումը: Դեկաբրիստների հետ կապի պատճառով 1827-ին ետ է կանչվել Կովկասից և պաշտոնաթող արվել:

17. Վալերիան Մադաթով (Ռոստոմ Մադաթյան, 1782-1829) - գեներալ-լեյտենանտ, ծնվել է Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում: 1816-ին նշանակվել է Արցախում տեղավորված ռուսական զորքերի հրամանատար, իսկ 1817-ից՝ Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի խանությունների զինվորական-նահանգային կառավարիչ: Նրա զորքերը 1826-ի աշնանը Արցախը մաքրեցին պարսիկ նվաճողներից

(նրա մասին տե՛ս Կեանք գեներալ-լէյտենանտ կնեազ Մատաթովին, Շուշի, 1870. Кавказцы или подвиги и жизнь замечательных лиц, действовавших на Кавказе. Жизнеописания ген.-л. В. Мадатова и ген.-м. Бурцова, СПб., 1859, с. 1-64, Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, СПб., 1874, Թերգիբոշյան Վ., Գեներալ-լեյտենանտ Վ. Գ. Մադաթով, Ե., 1942):

18. Մելիք-Բաղի Ա Մելիք-Շահնազարյան — Վարանդա գավառի տիրակալը, որի մելիքական իշխանությունը հաստատվել է Իրանի շահ Սեֆու (1629-1642) կողմից 1633 թ. նրան տրված հրովարտակով: Հրապարակվող նամակում ակնարկված դեպքի մասին գրել է նաև Կարապետ եպիսկոպոսը. «Նոցա (Մելիք-Շահնազարյանների - Ա. Մ.) բերած փաստաթղթերի մէջ ամենահինը Շահ-Աբաս Բ-ի հրովարտակն է 1646 թուից, որով սա Վարանդայի մէլիք է հաստատում Մէլիք Բաղու որդի Մէլիք Շահնազարին, հիմնուելով մի աւելի հին վաւերաթղթի վրայ, որով 1633 թուին մէլիք էր հաստատուել Բաղին: Դատ վարողները յայտնում են նաև, որ եթէ իրենց գիւղերը խլող յայտնի գեներալ Մադաթովը իւրացրած չը լինէր այդ վերջին փաստաթուղթը՝ նորանով կհաստատուէր, որ Մէլիք Բաղուց առաջ էլ իրենց նախնիք Վարանդայի մէլիք են եղել, և այսպէս՝ նոյն իշխանութիւնը որդւոց յորդի անցել է մինչև երկրի Ռուսաց իշխանութեան ներքոյ մտնելը» (տե՛ս Տէր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 135):

ՀԱՎԵԼՎԱԾ Բ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐՑԱԽԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԱԲԲԱՍ-ՄԻՐԶԱՅԻ 1826 Թ. ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1826 թ. հուլիսին պարսկական մեծաքանակ զորքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ներխուժում են Արցախ և պաշարում Շուշի բերդաքաղաքը: Շուշիի ռուսական կայազորը, գնդապետ Ի. Ռեուտի հրամանատարությամբ, և տեղի հայ բնակիչները հերոսական դիմադրություն են ցույց տալիս ահեղ թշնամուն: Ականատես պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովն այդ մասին գրում է. «Քաղաքի հայ բնակիչները ամեն հարցում ռուսների հետ միաբանաբար գործելով՝ ճիգ ու ջանք չէին խնայում նրանց նվիրված կերպով ծառայելիս... Այն աստիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրա բարկացած Աբբաս-Միրզան հրամայում է, որ ով որ հայի գլուխ բերի, 10 աշրաֆի կստանա: Այդ պատճառով հայերից շատերն են սպանվում»[559]:

Արցախահայության համար օրհասական այդ օրերին Աբբաս-Միրզայի բարկությունը մեղմելու նպատակով նրան են ներկայանում երեք հայ երևելիներ՝ Արցախի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, Ջրաբերդ գավառի տիրակալ Մելիք-Վանի Աթաբեկյանը և Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Հովսեփ Բ Մելիք-Բեգլարյանը: Նրանց հաջողվում է մեղմել Աբբաս-Միրզայի բարկությունը:

Սակայն, երբ Շամխորի և Գանձակի ճակատամարտերում ջախջախված Աբբաս-Միրզայի բանակը շպրտվում է Արաքսից այն կողմ, պարսկական սուրը արցախահայության գլխից հեռացրած հայ երևելիների մեջքին իջնում է ռուսական խարազանը: Կուսակալ Ա. Երմոլովի հրամանով այդ գործիչները Ռուսաց կայսրության նկատմամբ անհավատարմության մեղադրանքով ձերբակալվում են և ութ ամիս մնում կալանված. Սարգիս մետրոպոլիտը՝ Թիֆլիսում, իսկ մելիքները՝ Բաքվում: Ի վերջո, Ռուսաստանի վաղեմի ախոյանի հետ ընդհանուր լեզու գտած հայ երևելիները անմեղ են ճանաչվում և, Սիբիր աքսորվելու փոխարեն, վերադառնում են հայրենիք:

559 Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 123-124:

Այս դեպքին առնչվող երկու վավերագիր ժամանակին հրատարակել է Ալ. Երիցյանն իր «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» գրքում (Թիֆլիս, 1894, էջ 253-256): Սույն փաստաթղթերը հրապարակվում են առաջին անգամ և, որպես հավաստի սկզբնաղբյուրներ, ավելի ամբողջական պատկերացում են տալիս նշված դեպքի և դրան հաջորդած իրադարձությունների մասին: Նշենք միայն, որ թիվ 1 վավերագրից երկու փոքրիկ հատված օգտագործել է Վ. Դիլոյանն իր «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» գրքում (Ե., 1989, էջ 286-287):

Հրապարակվող վավերագրերից առավել ուշագրավ է Մելիք-Վանու նամակը Եփրեմ կաթողիկոսին, որն ամբողջ կյանքը ռուսական զենքի հաղթանակներին նվիրաբերած, սակայն այժմ անհարկի ամբաստանվող մարդու սրտի խոսքն է: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Խաչատուր Լազարյանի նամակը Ներսես Աշտարակեցուն և նրա պատասխանը, որտեղ վերջինս հանգամանորեն ներկայացնում է արցախցի երևելիների ձերբակալության հետ կապված երմոլովյան բռնարկությունները և բացահայտում մեղադրանքների անհիմն լինելը: Առհասարակ, այս փաստաթղթերը Արցախի մելիքությունների պատմության ուշագրավ էջերից են, արժանի դուրս հանելու ստվերից:

Սույն փաստաթղթերը պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

N 1

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

28 հուլիսի 1826 թ.
Թիֆլիս

Մեծարոյ Մէլիք Յովհաննէս Յարութիւնեան[1]
Սիրելեաց ի Քրիստոս

Գիտէք ամենեքեան զի ո՛չ յամենայն ժամանակի կարողանան ծառք բերել զծաղիկս եւ զպտուղս, այլ ժամանակ գարնան բողբոջէ զծաղիկս, եւ ժամանակ ամռան հասուցանէ զպտուղս:

Այնպէս եւս ժամանակին ներգործութիւն յաջողէ մարդկանց ցուցանել զծաղիկս եւ զպտուղս իւրեանց:

Գիտէս դու, զի կեանք քո մինչեւ ցայսօր վայելչացեալ քոյով առաջին հաւատարիմ ծառայութեամբք, եւ ահա նոյն է այժմ ժամանակս այս, որ ունի վայելչացուցանել ձեզ եւ ամենեցուն զժամանակս ապագայից կենաց իւրաքանչիւրոց:

Գրեմ ձեզ ուրեմն՝ զնոյն հոգի հայկական հաւատարմութեան ունել նոյնպիսի ջերմեռանդութեամբ վառեալ, եւ ջանալ նորոգել կամ առաւել եւս հանդիսացուցանել զյիշատակ հաւատարմութեանց հայրենի ազգի Հայոց արժանաւոր գործովք ամենայն հասարակութեան ազգի մերոյ եղելոյ ընդ ամենայն տեղիս ի ներքոյ փառաւոր դրօշակի իւրոյ Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաց:

Մի՛ տարակուսեցուցին զմիտս մերազանց՝ մերձեցուցանելն զօրաց ռուսաց ի սահմանաց իւրեանց հեռաւորաց, այլ հաւատարիմ լիցեն բանք իմ այսոքիկ ձեզ, զի շուտով անդրէն դառնան նոքա յիւրաքանչիւր տեղիս հզօր զօրութեամբ իւրեանց, եւ թշնամինք առ հասարակ զարհուրեալք յերեսաց սորոյն անպարտելի զինուորութեանց ռուսաց, թողցեն իսկոյն ո՛չ միայն զսահմանս տէրութեանց Ռուսաց, այլ եւ զամենայն զկալուածս բնակութեանց եւ իշխանութեանց իւրեանց եւս:

Ապաքէն որպէս եւ ընթեռնուցուք զգրեալսն իմ առ ամենայն ժողովուրդս Հայոց, այնպէս ջանասջիք հոգւով արիական ցուցանել

զձեզ յամենայն ժամանակի ծառայ հաւատարիմ եւ հպատակ ամենահարազատ Քրիստոսադոր Կայսերութեան Ռուսաց:

Ո՛ղջ լեր եւ զողջոյն իմ տուր ամենայն մեծի եւ փոքու ժողովրդեան մերում, եւ ես եմ եւ մնամ ձեզ ամենեցուն միշտ բարեացակամ:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 604, թ. 12: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՀՈՎՍԵՓ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ

9 օգոստոսի 1826 թ.
Թիֆլիս

Քաջազգի Մէլիք Յովսէփ Փիրխոնեան[2]
Ողորմած տէր իմ

Յէտ փակելոյս գրութիւն իմ առ քէզ, լուր էհաս առ կուսակալն որպէս թէ հաւատարիմն մեր մէլիք Վանին գնացեալ է առ Մէհտի Ղուլի խանն՝ այլ ես միամտեցուցի զնորին բարձր գերագանցութեանն թէ գնալն նորա եթէ իցէ ճշմարիտ ոչ կարէ լինել առանց յատուկ շահաւէտութեանց վասն պահպանելոյ զժողովուրդն Հայոց կողմանցն այնոցիկ: Այլ այնուամենայնիւ զգիր, զոր կամէի յղել առ մէլիք Վանին վասն ջանալոյ հասուցանել ի քաղաքն Շուշու առ բարձր բարեծնունդ Ռէուտն[3] եւ զպատասխանի այնորիկ ստանալոյ ի նմանէ եւ հասուցանելոյ առ մեզ այսր, անարժան համարեցայ ուղղակի յղէլ առ նա ինքն մէլիք Վանին՝ այլ լաւ համարեցայ առաքել առ ձեզ, զի դուք թէ արժան համարեսջիք յղելն առ նա, յղեսջիք հանդերձ գրութեամբ իմով առ նա, իսկ թէ ոչ կամ յղեսջիք առ սրբազան Սարգիս արքեպիսկոպոսն[4] ընդ գրոյն իմոյ, որ առ նա, եւ կամ դուք ձեր հաւատարիմ մարդով ջանասջիք հասուցանել առ

Ռեուտն և զպատասխանի նորա յանձնել գրաբերի միջում կամ ձեռով մարդով հասուցանել առ մեզ կանխաւ:

Գիտես դու թէ ցաւակից եմ ես ամենայն ազգին իմոյ, և առաւելապէս ձեզ և տան Հօր ձերոյ, այս ամենայն մրրիկ ունին անցանել մինչև ցերումն այսմիկ ամսոյ օգոստոսի, յետ որոյ ոչ ևս լինիցի այսպիսի հարկաւոր ժամանակ յայտնելոյ տէրութեանն Ռուսաց զհաւատարմութիւն և զարժանաւոր ծառայութիւն, ուրեմն մի ընաւ ունիցես դու խնայել զամենայն զկարելին ձեզ, այլ ջանասցես զհարազատութիւն քո յայտնել յայսմիկ հարկաւորեալ ժամանակի:

Եւ թէ հարկաւորեսցի քեզ ծախս վասն առաքելոյ զգիրն Ռեուտի առ ինքն՝ զայն զումար ծախուց հատուցից քեզ ես ինքն, և զհոհունակութիւն Կուսակալին ևս շահեցայց վասն քոյ և վասն եղբարց քոց ամենայն ազգատոհմի:

Դու թէ չիցես գնացեալ առ Մէհտի Ղուլի խանն մինչև ցայժմ, մի ևս յօժարեսցիս գնալ այժմ, և միամիտ լիցիս զի զկնի չորից և հնգից աւուրց գտանի մերձ առ ձեզ զօրօք բազմօք կնեազ Մադաթովն և Մէհտի Ղուլի խանն հալածեսցի անդրէն իբրև զծուխ առաջի հողմոյ սաստկագունի:

Ողջ լեր և ես եմ և մնամ ձեզ ի սրտէ բարեացակամ:

Համար 151 Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսես

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 614, թ. 16ր: Բնագիր: Ձեռագիր:

N 3
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻՆ

9 օգոստոսի 1826 թ.
Թիֆլիս

Բարձր սրբազան Մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս
շնորհազարդ հովիւ և ծերունազարդ հայր իմ

Ի սոյն կէտ լուր էհաս առ կուսակալն որպէս թէ մելիք Վանին գնացեալ է առ Մէհտի Ղուլի խանն:

Ես լուեալ զայս. զարհուրեցայ. թէ զի՞րդ կարելի եղև առն այնպիսւոյ ընկենուլ զիւր բազմաժամանակեայ արեամբ չափ հաւատարմութիւնն. և երդմամբ իմով կարող եղէ հաւանեցուցանել զկուսակալն, թէ ի ստոյգ լինիլն գնալոյն նորա, հարկաւ լինելոց է վասն օգտակարութեան իբրև ազգին հայոց՝ զի կարող լիցեն ապահովացուցանել զբազմութիւնն նոցա:

Զծանօթութիւնսն տպեալս, զորս առաքեալ եմ առ ձեզ. առաքեալ եմ և առ նա և սրբազան Մարտիրոս արքեպիսկոպոսն Տաթեւայ, զորս ի հասուցանելն առ ձեզ հարազատից մերոց թէ արդարև մելիք Վանին լինիցի կասկածելի ի հաւատարմութեան իւրում դուք ջանասջիք մահուամբ չափ հասուցանել զփոքր գիրն առ բարձր բարեծնունդ Ռէուտն ի բերդն և զպատասխանի այնորիկ ընկալնուլ ի նմանէ և հասուցանել առ մեզ օր և ժամ յառաջ, և հարկաւոր լիցի առ այն զծախս դրամոց ծախեա առանց խնայելոյ և ընկալցիս յինէն բազում շնորհակալութեամբ իմով:

Մի անհոգասցիս վասն գրելոցս, քանզի չէ պարտ կորուսանել զժամանակն թանկագին՝ որպիսի է այժմ, և յետ հնգետասան աւուրց բազումք ցանկասցին ծառայել տէրութեան ռուսաց, այլ ոչ կարողանան նոքա նազելի կացուցանել զծառայութիւն իւրեանց:

Սրբազնագոյն Կաթուղիկոսն ևս հարկեաց ինձ ի դիմաց իւր գրել առ սրբութիւն ձեր փութալ, ջանալ և զպատասխանի փոքրիկ գրոյն առնուլ և հասուցանել օր և ժամ յառաջ ի պարծանս ազգի մեր:

Բարձր սրբազնութեան ձեր
խոնարհ ծառայ

Համար 157

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 617, թ. 17 և շրջերես: Բնագիր: Ձեռագիր:

N 4

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

9 օգոստոսի 1826 թ.
Թիֆլիս

Բարեձնունդ մելիք Վանի Աթաբէկեան
Ողորմած տէր իմ

Մինչդեռ պատրաստեալ էի զգրութիւնս հասուցանելիս յամրոյն Շուշուայ առաքել առ ձեզ, ահա էհաս լուր առ Կուսակալն՝ թէ դուք գնացեալ էք առ Մէհտի Ղուլի խանն, եւ զարմանք կալան զամէնեսին առ հասարակ՝ յորժամ ես այսպէս ապահովացուցի զմիտս կուսակալին եւ ամենայն լսողաց, թէ հաւատարմութիւն ձեր Կայսերութեանն Ռուսաց է անբեկանելի մինչեւ ցմահ ձեր, եւ թէ գնայն ձեր իցէ հաւատի, լինելոց է այն յաղագս օգտի հասարակութեան ժողովրդոց:

Այլ զի այս գերագոյն տգէղութիւն ի մասին ձեր ի բաց ընկեսցի ի ձէնջ առաջի նորին բարձր գերազանցութեանն, եւ ես մի՛ ստեցայց ի վկայութեան իմում յաղագս ձեր անբեկանելի հաւատարմութեանն, գրեմ ձեզ, զի թէ մելիք Յովսէփն յղել ունիցի առ ձեզ զփոքրիկ փակէթն հասանելի առ բարձր բարեձնունդ Ռէուտոն յամրոյն Շուշուայ՝ դու ինքն մահու չափ հարազատութեամբ ջանասցես որպէս եւ իցէ հասուցանել առ նա, եւ զպատասխանի այնորիկ ընկալնուլ եւ հասուցանել առ մեզ օր եւ ժամ յառաջ:

Թանկագին է հաւատարմութիւնն յայսմիկ ժամանակի, որ զկնի հնգետասան աւուրց այլ ոչ եւս կարասցէ կորուսանօղն գտանել միւս անգամ:

Կաթուղիկոսն եւս բազում տրտմութեամբ իւրով ի մասին այսր լրոյ, յանձնեաց ինձ գրել ձեզ, յայտնել միւս անգամ զհաւատարմութիւն ձեր իբրեւ զառաջինն, եւ ոչ թողուլ զայս կեղտ անուն ի վերայ ձեր:

Եւ եթէ շնորհն Աստուծոյ յաջողել ունիցի, զի հասուցանել կարողասջիք ինձ զպատասխանի Ռէուտին, յուսամ Աստուծոյ թէ նա

ինքն վկայեսցէ սրտի Կուսակալին անարատ պահել առ ձեզ զկարծիս իւր վասն ձերոց վկայեալ հաւատարմութեանց:

Ողջ լեր եւ ես եմ եւ մնամ ձեզ ի սրտէ բարեացակամ:

Խոնարհ ծառայ
Համար 158 *Արքեպիսկոպոս հայոց Վրաստանու Ներսէս*

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 618, թ. 17ր: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԻՔԱՅԵԼ ՍԱԼԼԱՆԹՅԱՆԻՆ[5]

20 սեպտեմբերի 1826 թ.
Թիֆլիս

Բարձր պատուոյ արժանաւոր Միքայէլ շնորհառատ վարդապետ
սիրեցեալ ի Քրիստոս

Ի 23 յուլիսի եւ ի 13 օգոստոսի գրութիւնդ ստացեալ եւ ծանուցեալ զորս ի նոսին, ուրախ եմ ի վերայ սիրեցեալ առողջութեան ձեր...

Եւ դուք ներեցէք ինձ, զի կասկած կարծութեան աւուրց կենաց իմոց ոչ ներէ ինձ տարեւոր ժամանակաց զտեղի տալ յերկայնմտութեան յիրս հարաւորագոյնս:

Շնորհօք Աստուծոյ հանդիպեցեալ հզօրապէս բարձր փառաւոբաղդոյն զօրաց ռուսաց՝ յ3 ամսոյ ի սկզբնամարտութեան իւրեանց յաւուր ուրբաթու ի Շամքոր ասացեալ տեղւոջ ընդ կառավարութեանց կնեազ Մատաթեանց բեկեալ զառաջնագունդն պարսից ընդտառաջ ելեալս նոցին առաջնորդութեամբ Ամիր խան սարտար քեռւոյն Ապպաս Միրզա արքայորդւոյ, սատակեն ի նոցունց զինն հարիւրոն յուսեալ զօրաց սարպազ անուանելոց հանդերձ զօրապետաւ իւրեանց յիշեալ Ամիր խան սարտարիւն, եւ գերեն զ67 զինուորս, զմի թնդանօթ եւ զերեքտասան զամպարակս, որ է ռմբաձիգ եւ կամ փոքրաթօփ զետեղեալ ի վերայ ուղտուց:

Այլեւ ի 13 ամսոյս յաւուր երկուշաբաթի ի լինել զօրաց ռուսաց մերձ յելիսավէտապօլ, երբեւ 3 կամ 4 վերստ ճանապարհաւ, ի մէջ գիշերի եղբայր Շամիրխանի մելիք Յովսէփ Փիրիդոնեան Բէկլարեանց, եւ այլ ոմն յազգէ Հայոց թարգման Ապասս Միրզայի՝ ռուսաց լեզուի, փախուցեալ ի բանակէ նոցին, փութան ժամանեն ի բանակ ռուսաց, ուր զեներալ Պասքեւիչն[6] էր հրամանատար. եւ ազդեն նմա վասն ի նմին գիշերի յասնելոյն բանակի պարսից ի վերայ բանակի ռուսաց, ընդ առաջնորդութեամբ իւր ինքեան Ապասս Միրզայի. եւ երկուց կամ երից այլոց եղբարց իւրոց, եւ Ալլահեար խանի փեսայի շահին եւ ընդհանրական հրամանատարի դրան նորին, յորժամ զեներալ Պասքեւիչն կարգադրեալ զզօրս իւր եւ զաջ թեւն յանձնեալ կնեազ Մատաթովին, սպասին ամենապատրաստ, այլ ոչ յարուցեալ ի խաւարչտին գիշերի, յասնեն ընդ լուսանալ առաւօտուն փաղանգք ամբարշտացն երեսուն հազար հեծելազօրօք, եւ տասն եւ ութն հազար սարբազօք ըստ բանի բանսարկուաց, թէպէտ եւ կառավարութիւնն տեղւոյս սակաւ նուազութեամբ տպեալ հռչակեաց, եւ ամենակարող օգնականութեամբ Աստուծոյ բարձրելոյ հազիւ ուրեմն համար դնել պատերազմն իբրեւ կէս ժամ, ահա ախոյեան անպարտելի յառաջադէմ հանդիպեցեալ երեք բատալեօն աջոյ թեւին, շարժեն խուճապեն ի շամփուր հարեալ զյուսայի գունդն պարսից, անդէն իսկոյն զբազմութիւն տապաստ արկեալ, զզօրսն առհասարակ հանդերձ նշանակեալ զօրապետօք նոցին իբրեւ զփոշի առաջի հողմոյ ընդ օդս ցնդեցուցեալ հալածական կորուսանէին. երկուց բանակաց նոցին եւ ամենայն աւարաց տիրեալ պանծալի յաղթանակն, գերելով եւ զարխական գունդն անձնապահ Ապասս Միրզայի աւելի քան ինն հարիւր՝ հանդերձ այլովք զինուորականօք, որոց թիւ առ ժամն իսկոյն ժամանեալ ի 1100 այր, որպէս եւ նշանակեալ լինի ի տպեալն, յընթացս արեւու աւուրն մինչեւ ցմուտն նորին ժամանէ ի 1700, եւ որպէս հաւաստի համարի, թէ դոցի այժմ ժամանեալ մերձ երեք հազար: Քանզի բեկումն նոցա ահաբեկեալ զնոսա մինչ խայտառ, փախուստ նոցա ըստ իւրաքանչիւր երեսաց՝ զբազումս մատնէ հետզհետէ ի գերութիւն՝ մոլորեցուցեալ զնոսա ընդ անել շաւիղս, ի դաշտս կամ ի խորաձորս, յորս գտանին որսացեալք ի զինուորաց եւ ի սոսկականաց հպատակաց հաւատարմոց իւրոյ կ. Մեծութեանն:

Գերեալ լինին եւ երկու գնդապետք սարվազաց ուսեալ զօրաց՝ սարհանկ անուանեալք, երեք դրօշակք նոցա արծաթեայ ձեռք Ալուոյ՝ անձեռնկալու պաշտպանի նոցին, մի թնդանօթ ի քսան եւ երկուց եղելոց ընդ նոսա, եւ ամենայն վառօթ եւ գնդակք բոլոր թնդանօթիցն ութսուն արկեղք:

Լուր տակաւին ոչ եհաս յաղագս փախստէիցն պարսից անարեաց՝ թէ ուր արդեօք վստահացան նոքա զկայ առնուլ յետ ամօթապարտ հալածանաց իւրեանց, եւ ոչ իսկ յաղագս կատարելութեան հանգամանացն յաղթութեանց, կամ չափու աւարացն եւ թուոյ գերեաց կամ մահացելոց:

Երեւելի դիմադրաւ եղեւ արշաւանաց պարսից ի ժամանակի յաջողութեանց նոցին ամրոցն Շուշի քաղաքին, ուր զբաղեալ երկամսեայ միջոցաւ նշանակեալ բազմութիւն զօրաց նոցա երկայն յուսով տիրելով նմին, չարիք նոցա հպատակաց իւրոյ կ. Մեծութեան կամ մանաւանդ մերազանց անկելոց ի ներքոյ անօրէն բռնակալութեան իւրեանց՝ կամ ապրելոցն ի զանազան նահանգս, ամփոփեցան անդէն ի խորշն լերանց Արցախու, յորս կացին մնացին յորջացեալք խափանօք անխորհուրդ խորհրդածութեան իւրեանց՝ մինչեւ հատուցանել ինքեանց տեառն զօրութեանց զայսպիսի հատուցումն առ ի մէնջ յուսացեալ ինքեանց անակնկալ: Եւ զովեցեն յայսմհետէ հայք մերազնեայք, որք եղական հաւատարմութեամբ առանձնացեալք յամենայն բազմութեանց ապստամբելոց հեթանոսաց, հոգեխառն դաշնակցութեամբ զինուորեալք ընդ սակաւաթիւ զօրս ռուսաց վե-բարնակեալս անդ ի բուն բանակաց իւրեանց, մարտ եղեալ հանդերձ նորօք արիացան քաջարար՝ հայկազունք զինուորեալք իբրեւ երեք հազարք աւելի կամ պակաս, որոց յիշատակն եղիցի փառաւոր՝ ի փառս հաւատոց եւ հայրենեաց համազգեաց...*

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 642, թ. 27բ-28բ: Բնագիր: Ձեռագիր:

* Փաստաթղթում, երբ. խոսքը վերաբերել է թեմային չառնչվող հարցերին, կատարել ենք կրճատումներ, որոնք նշել ենք բազմակետերով-Ա. Մ.:

N 6

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻՆ

8 հոկտեմբերի 1826 թ.
Թիֆլիս

Բարձր սրբազան Մետրապոլիտ Աղուանից Սարգիս արքեպիսկոպոս
Գերապատիւ հայր եւ եղբայր իմ ի Քրիստոս

Գիր ձեր առ իս ի 25 անցելոյ ամսեանն սեպտեմբերի ի ձեռն հարազատի ձերոյ Յովսէփ շնորհունակ վարդապետի ստացայ յամսոյս 5 եւ ծանեայ վասն նախանցեալ որպիսութեանցն նշանակելոց ի նմին:

Գիտէ բարձր սրբազնութիւն ձեր զԱւետարանն Քրիստոսական, թէ չի՛ք ոք բարի, բայց միայն Աստուած, եւ հաւատացեալ եմք, թէ նա միայն է անյիշաչար, մարդասէր, ողորմած, գթած եւ աղբիւր ամենայն բարեաց: Սակայն ի վերայ այնր ամենայնի հաւատացեալ եմք դարձեալ եւ գիտեմք, զի զնշանախեց (գրախեց-Ա. Մ.) մի ի բրոց օրինաց ոչ արկանէ երբէք, եւ ձայն ահագին բարբառոյ նորա լսեմք բարձրացեալ յարարչական բերանոյ նորին, որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ, եւն:

Գեղեցիկ են առ նոյն օրինակ մեզ եւ մարդկայինքս, որոց միջէն ականատես լինիմք այժմ եւս ահաւասիկ, զի ամենայն բազմութիւնք զօրաց եւ երեւելի երեւելի զօրապետաց առ հասարակ ի մահ զանձինս նուիրեալք, կամակար յօժարութեամբ արիաբար չահատակեալ ի հանդէս կատարելագոյն հարազատութեանց՝ կառուցանեն զմարմին մահկանացու յանդիման սրոյ եւ հրոյ թշնամեաց թագաւորին իւրեանց եւ Կայսեր՝ հաստակազմն իմն աշտարակ՝ պաշտպան յաւերժական յիշատակ անբեկանելի հարազատութեանց իւրեանց:

Գիտեմք եւ զգրեալն առ հրեշտակ եկեղեցւոյն. «Միւռնացւոց լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ առցես զպսակն կենաց յայդ». 2.

10, իսկ եւ վճռոյ հաւատոց մեք իսկ գտանիմք քարոզ, որ իսպառ համբերեսցէ, նա՛ կեցցէ*:

Ապաքէն տարաբախտութիւն ազգային ի սմին պատահման համարեն մեզ տկարութիւնք հոգեւորականաց կամ մարմնաւորականաց մերազանց ի պարտաւորական հաւատարմութեան իւրեանց, եւ աթոռ բարեբախտութեանց նեղութիւնք նոցա եւ անձկութիւնք բազմօրինակք մահուամբ, գերութեամբ, եւ կորուսմամբ կայից գոյից եւ բնաւից բարեաց անձնականաց անխարդախ եւ անարատ հաւատարմութեամբ:

Գոհանամ զԱստուծոյ, զի ձեռնկալու եղեւ բազմաց մերազանց՝ եւ կարգեաց զհաւատարմութիւն նոցա ի պարծանք հասարակաց ազգի Հայոց՝ ընդ կողմանս կողմանս հանդիսացուցանելով զնոսա, արժանաւորօքն կարեւորօք եւ երեւելի յոյժ արիական հոգւով յառկացելոցն անձնանուէր առաքինասիրութեամբ ի Շուշի քաղաքի, ի Շամշադին, ի Ղազախ, ի Փամբակաձոր եւ ի Շիրակ գաւառ՝ եզերս սահմանաց ընդ նախադրունս մտից յանդուգն արշաւանաց ահեղահոչակ բազմամթի զօրաց թշնամեաց հոգւոյ եւ մարմնոյ իւրեանց:

Իսկ զի սրբութիւն ձեր յիշումն արհական դիտապետութեան գտանի ըստ գտեալ այժմ, քննեա՛ եւ տե՛ս, թէ գուցէ՞ն իրաւունք մեղադրելոց զվերակացուսն Կառավարութեանց Տէրութեանն հզօր եւ բարձր ինքնակալի ամենայն ռուսաց: Նամանաւանդ՝ յորժամ ժողովուրդք հօտի ձերոյ՝ ինքեանք իսկ գտանին ձեզ բազմօք բանակաւ:

Ցաւիմ ես՝ զի զայսպիսիս արդ զյանդիմանութիւնս իրաւանց պարտաւորիմ գրել ձերում ծերունազարդ մեծանձնութեան, այլ զի հրաման է բնական. եղիցի ձեր բանն այն այս, եւ ոչն ոչ, աղաչեմ լինիլ ներողամիտ ինձ առ սոյն: Եւ հաւատարմացուցանիմ զսրբութիւն ձեր, զի Կայսր ամենայն ռուսաց՝ ամէնողորմած կրէ զիւր մականուն, եւ ողորմութիւն նորա կամ նորին Կուսակալաց եւ գործակալաց յառաջացին եւ առ ձեզ հանդերձ Աստուծով. այլ զի գրեալ իսկ է. «Փախի՛ր եւ թաքի՛ր առ ժամանակ մի, մինչեւ անցցէ բարկութիւն Տեառն»: Ըստ այնմ ուրեմն երկայնամտեսջիք եւ դուք ի ձերում լռութեան, մինչեւ անցցեն բարկութիւնք եւ երագեսցեն ձեզ ներողութիւնք եւ ամէնայոյս մարդասիրութիւնք Իւրոյ Կայսերական Մե-

* Մատթէոս, ԻԴ, 13-Ա. Մ.:

ծութեանն եւ Նորին Բարձր Գերազանցութեան Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովի եւ այլոց ամենեցուն հետեւեցելոց նորին:

Եւ ես բոլորեալ կամօք իմովք յարգելով զպատիւ մեծութեան անձին ձեր եւ կոչման կամ եւ մնամ ձեզ մաքուր վշտակցութեամբ եւ խոկական մտերմութեամբ այժմ եւ միշտ:

Համար 186

Բարձր Սրբազնութեան ձեր
խոնարհ ծառայ
արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս

Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 647, թ. 32բ-33: Բնագիր: Ձեռագիր:

N 7

ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

29 հոկտեմբերի 1826 թ.
Կուսապատ

Երիցս երանեալ ամենաբարձր սրբազնասուրբ վեհափառ
Տեառն Եփրեմի Ամենայն Հայոց կաթողիկոսի

Զսուրբ եւ զմաքուր զարշապարսն
ջերմ սիրով համբուրեմ

Զորպիսութիւն ձերդ բարձրութեանն` յառ ձեզ առաքեալ Յօսէփ վարդապետէն լուեալ մեր, ոչ սակաւ ուրախութիւն եւ զուարճութիւն եղեւ մեզ, զի բիւրապատիկ տրտմութիւնն, որ ի թշնամեաց ի ներկայս դիպեցաւ մեզ, այնու անցուցաք բերկրեցեալ յուրախութիւն մեծ:

Քանզի յամենայն ուստեք սիրտ իմ բանիւք բերանոյ թշնամեաց տխրի յայժմու ժամանակի, եւ զոխս` զորս ընդ իս ի վաղնջուց եղեալ էին ի մտի կատարել, զարդիս իբր պահս գտեալ պարապորտ` զայնուիկ զրազնուն` զամենայն ճիգս հոգւոց իւրեանց ի նոյն թա-

փեալ, իսկ ես ի Տէր Յիսուս Քրիստոս եւ ի հաւատարմութիւնն իմ յառաջմէ առ նորին իսկ Կայսերական բարձրութիւնն, եւ մանաւանդ թէ առ ձեզապիսի խնամածու ընդ հոգւոյ հարս յուսացեալ` չունիմ բնաւ զերկիւղ ինչ յումեքէ:

Վասն զի գնալն իմ առ պարսիկն` յիրաւի է, որպէս եւ լուեալ է ձերդ բարձրութիւն, բայց յերեւիլ յանկարծակի չարաթոյն թշնամւոյ հաւատոյ եւ անձանց` որդւոյ չահին յերկիր մեր, ամենայն մահմետականք գաւառիս մերոյ ապստամբեալք, յօժարութեամբ մատնեցին զգօրսն ռուսաց որ ի Գորիս` եւ գերի վարեալ[7], ընտանիք մեր եղեն մեզ թշնամիք, յաղագս որոյ` հայք գաւառացս ոչ կարողացեալ տակալ յոխորդ յարձակմանց բազմաթիւ զօրաց նորին առ հասարակ առ երկիւղի, ի փրկութիւն անձանց իւրեանց ակամայ դիմեցին առ նոսա անճար եւ անհովիւ մնացեալ: Այլ ես մերձ ամրոցին Ջերմուկայ ամրացայ հանդերձ ժողովրդեամբ իմով: Իսկ մեծ վտանգ մեզ այն եղեւ, ամենայն անցից եւ ճանապարհաց յանկարծ կալեալ, ուստի անկարացաք մեզ հաց եւ գիւլլայ պարութ պատրաստել, որովք կարէաք ընդդիմանալ նոցա ցկատարած իւրին: Թողում ասել զգօրսն ռուսաց, որք ի Գանձակայ եկեալ գնացին փախստեամբ: Թողում եւս զգնալն իշխանաւորաց եւ սոսկանաց առ նոսա` յառաջ քան զիս: Մտաբերեալ եմ զայս, եթէ ոչ գնացից եւ ես առ նոսա, ժողովուրդ իմ առ հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ: Զայս միայն զմտաւ ածեալ` թէ ես միայն մատնեցայց, որով ժողովուրդ ապրեցուցից ի գերութենէ անօրինաց: Զիս եւ եթ կորուսից գնալով առ նոսա, զի զհազարաւոր անձինս ժողովրդոց իմոց զերծ եւ կեցուցից. աշխարհն ամենայն գնաց, ապա եւ ես ընդ նոսա: Վերջապէս գնալն իմ առ պարսիկն, եղեւ առ օգտի հասարակ ժողովրդոց ինձ յանձնեալ հայոց:

Իսկ ո՛վ գորովագութ սրբազնասուրբ հայր հասարակաց` եւ իմ յատուկ` թշնամիք իմ բազումք են, որպէս եւ բարձր սրբազնութիւն ձեր տեսանէ եւ գիտէ, գրեթէ համայն Արցախ, թէ հայք եւ թէ տաճիկք, ոչ են իմ բարեկամ եւ ոչ մի, այլ ես ձեօք եւ եթ պարծիմ, եւ յուսամ թէ կարող իցէք յաղթող գտանել աղօթիւք առ Աստուած, եւ բանիւք առ պայծառափայլ կուսակալն:

Այժմ ամենայն ոք հաւատարիմ երեւելի տէրութեանն ռուսաց` ես, որ նովիմբ եմ տիրացեալ կտոր միոյ հացի, երեւիմ թշնամի:

Ամենքն, որք ապստամբք էին ի նմանէ, յանմեղութեան կացուցին զանձինս, իսկ ես յառաջագոյն ջատագով և հաւատարիմ եղեալ նորին տէրութեանն, ի սաստիկս զնորին թշնամիսն և հեղոյ զարիւն իմ վասն Նորին Կայսերական Բարձրութեան, գտանիմ այժմ թշնամի և ապստամբ յայնմանէ:

Վասն որոյ և եմ տխրեալ և տրտմեալ բոլոր անձամբ իմով վստահանամ և դիմեմ առ ամենաբարձր սրբազնութիւն ձեր, և միայն զվտանգս և զանցս անձին իմոյ խոնարհաբար յայտնեմ ի ձեռն գրութեանս, և յուսով սպասեալ մնամ շնորհի ստացման պատճենի կրկին նամակիս:

Ձերդ բարձր սրբազնութեան ամենախոնարհ ծառայ
Մէլիք Վանի Յարութիւնեան Աթաբեկեանց

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, վավ. 248, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 8

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ-ՎԱՆԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

4 դեկտեմբերի 1826 թ.
Թիֆլիս

Բարեպաշտութեամբ հռչակեալ Մէլիք Յովհաննէս Յարութիւնեան
Ի Քրիստոս Յիսուս սիրեցեալ որդոյ

Գիր ձեր առ իս յերկուցն հոկտեմբերի ընկալայ ի 19 ամսոյս և ծանուցեալ վասն առողջութեան ձեր գոհացայ զԱստուծոյ:

Գանկատ ձեր ի բերելոյ ժամանակին՝ չեն առանց իրաւանց, այլ զի կանգուն չափուն գտանի յինքեան իրեն խակութեամբ միշտ, իսկ ի նկատօղսն ամենեցին առանց խակութեան և զանազանեալ բազմօք, ա՛յն է՝ զի որքան անձինք են աշխարհի, այնքան և իւրաքանչիւրոց նոցա կանգուն առանձին առանձին՝ զանազանեալ ի

միմյանց. յորոց յառաջանան բողոքք և գանկատք անհամաձայնք, որպէս և յայտ է՝ զի հակառակորդք ձեր զատեն զձեզ այլապէս, և դուք բողոքէք զնոցունց այլապէս, իսկ ունկնդիրք հետևօղք լրոյ մի ումն կամ միւս ումն, և դատաւորք ըստ այլայլութեանց լրոյ և զօրութեան կարծեաց իւրաքանչիւրոց:

Գիտելով և իմ զայս ամենայն, իմ ևս դատողութիւնք մնան դարձեալ ի նմին անհամաձայնութեան, այն զի լաւ էր ձեզ տառապանք առ ժամանակեայ՝ ըստ այլոցն հակառակամարտից թշնամեաց տոկացելոց յիւրաքանչիւր անձկութեան իւրեանց ի յամրոցն և յայլ ուր, քան խառնիլ կամաւ ի թիւս թշնամեաց: Իսկ զի ահագին էր վտանգն վերահասեալ, և ակնկալութիւն հեռացեալ յամենայն մտաց յաղագս վերադարձի զօրաց ռուսաց յամենայն կողմանց, քաջայայտ է՝ թէ աւելի քան զայն՝ անմարթ էր տկար ազգաց լինել ձեռնամուխ յայլս պատկանեալս հաւատարմութեանց:

Ապաքէն ի վերայ այսր ամենայնի իրաւունք առ ժամանակաւս ի մասին ձեր ընկալարուք դուք ձեզ բազում երկայնմտութեամբ, և յոյս ձեր եղիցի ի ձեզ աններկուանալի՝ զի Կայսր Մեր ամէնողորմած է, և գթութիւն նորա առաւել է քան զվրէժխնդրութիւն ըստ մարդկութեան, և հաւատարմութիւնք ձեր վկայեալ վաղագոյն՝ գործովք և արդեամբք, ոչ թողացուցանեն զձեզ առանց արժանաւորացն ինքեանց, և մեք գիտեմք զձեզ և հասարակեալ հաւատարմութիւնն ազգական զօրէ արդարացուցանել զձեզ կանուխ կանուխ և անագան:

Ողջ լեր և ողջոյն տուր մօրդ, իգպաշի ազայ եղբօրդ և ամենայն մեծի և փոքու տան ձերոյ և ես եմ և մնամ խնկական հարանայն մեծի և փոքու տան ձերոյ և ես եմ և մնամ խնկական հարաբերականաց միշտ ձեզ ի սրտէ բարեգատութեամբ հոգւոյ և մտաց և կամաց միշտ ձեզ ի սրտէ բարեցակամ

և մեծանձնութեան ձեր
խոնարհ ծառայ

Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 571, թ. 182բ-183: Բնագիր: Ձեռագիր:

N 9

ԻՇԽԱՆ Վ. ՄԱԴԱԹՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒՆ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՆՐԱ ՄՈՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 դեկտեմբերի 1826 թ.
Շուշի

Ваше Высокопреосвященство

Милостивый Архипастырь!

Во исполнение воли Главноуправляющаго въ здешнемъ крае г. Генерала отъ Инфантерии и Кавалера Ермолова, имею честь при семъ препроводить къ Вашему Высокопреосвященству Архиепископа Саркиса. О поступкахъ его за которыя онъ препровождается къ Вамъ, г. Главноуправляющий принялъ на себя уведомить Ваше Высокопреосвященство. Я же вменяю себе въ обязанность доложить, что поведение его столько было непозволительно, что Его Высокопревосходительство приказалъ мне въ препровождении иметь за нимъ строгий присмотръ съ сохранениемъ впрочемъ всего должнаго уважения къ его высокому сану, что мною въ точности и исполнено.

Поручая себя Святымъ молитвамъ Вашимъ, съ достодолжнымъ уваженiемъ имею честь быть

N 790

Милостивый Архипастырь!
Вашего Высокопреосвященства
Всепокорнейший слуга
Князь В. Мадатовъ.

Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 113, թ. 1: Պատճեն: Ձեռագիր:

N 10

ԳՆԴԱՊԵՏ Ի. ՌԵՈՒՏԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԹԻՖԼԻՍ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԾԱՆԱՊԱՐՀԻՆ ՆՐԱ ՎՐԱ ՍԱՀՄԱՆՎԵԼԻՔ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 1826 թ.
Շուշի

Приказъ

По воле Его Высокопревосходительства Главноуправляющаго въ Грузии господина Генерала отъ Инфантерии и Кавалера Ермолова, отправляющагося съ симъ вместе въ Тифлисъ посредствомъ Казачьихъ постовъ къ Первенствующему надъ Армянскимъ Духовенствомъ Архиепископу Нерсесу Архиепископа же Саркиза, имеютъ казачьи посты по тракту къ Тифлису находящиеся, препровождать отъ одного до другого съ приличнымъ и безопаснымъ конвоемъ, наблюдая строгий присмотръ и вместе съ темъ храня все должное уважение къ Высокому Его сану, по прибытии же въ Тифлисъ доставить его къ Архиепископу Нерсесу съ конвертомъ за N 790^{мъ} на имя Его Высокопреосвященства при семъ прилагаемымъ.

N 225^{й}

Командиръ 42го Егерьскаго Полка и
управляющий Карабахскою
Провинциею Полковник Реуттъ.

Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 114, թ. 1: Պատճեն: Ձեռագիր:

N 11
ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ՀԱԿՈԲ ԱԹԱՐԵԿՅԱՆԻՆ

24 Հունվարի 1827 թ.
Թիֆլիս

Մեծարու ազայ Յակոբ Յարութիւնեան
եւ որք ընդ յարկաւ ձեր են ընտանիք եւ ժառանգաւորք
